

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

2 (11)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2017

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

Ավագյան Ա. Ա.

Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)

Ավետիսյան Հ. Գ.

Ավետիսյան Յու. Ս.

Բայրամյան Հ. Ս.

Բարդակչյան Գ. (ՄՄՆ)

Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)

Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.
(Գերմանիա)

Չաքարյան Ս. Ա.

Հայրունի Ա. Ն.

Հովհաննիսյան Ս. Ս.

Հովսեփյան Լ. Ս.

Ղարիբյան Ա. Ա.

Մարգարյան Հ. Գ.

Մինասյան Է. Գ.

Մուրադյան Ս. Պ.

Պողոսյան Վ. Ա. (պատասխանատու քարտուղար)

Սայադով Ս. Ս. (Ռուսաստան)

Սաֆարյան Ա. Վ.

Տազեյան Ա. (Լիբանան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

Avagyan A.

Avetisyan H.

Avetisyan L. (Deputy editor-in-chief)

Avetisyan Y.

Bardakchian G. (USA)

Bayramyan H.

Dakessian A. (Lebanon)

Dedeyan G. (France)

Drost-Abgaryan A. (Germany)

Gharibyan A.

Hayruni A.

Hovhannisyan M.

Hovsepyan L.

Margaryan H.

Minasyan E.

Muradyan S.

Poghosyan V. (Executive Secretary)

Safaryan A.

Sayadov S. (Russia)

Zakaryan S.

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (2008-2016 թթ.)

Բանալի բառեր – Հայկական սփյուռք, պետական քաղաքականություն, համահայկական առաջնահերթություններ, Հայրենիք-Սփյուռք գործակցություն, հայկական կառույցներ, մայրենի լեզու, հայապահպանություն, հայ ինքնություն

Ա. Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնական սկզբունքները

Հայաստան-Սփյուռք գործակցությունը սկսվել է 1915 թվականից անմիջապես հետո, երբ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հազարավոր գաղթականներ հայտնվել էին Հայաստանում՝ աղքատության, սովի, համաճարակի ծանր պայմաններում, և անհրաժեշտ էր տարրական օգնություն ու բարոյական և նյութական աջակցություն ցուցաբերել մեր հայրենակիցներին: Այս ամենին անտարբեր չմնաց հայ մտավորականությունը, և Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ 1921 թ. ստեղծվեց Հայաստանի օգնության կոմիտեն: Հայրենիքի կողքին անմիջապես կանգնեց հատկապես Հայկական բարեգործական ընդհանուր միությունը՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ: Սակայն ստալինյան ճգնաժամից մեքենան 30-ական թվականներին արգելեց շարունակել օգնությունը Հայաստանին:

1946-1948 թթ. տեղի ունեցավ մեծ հայրենադարձություն, և աշխարհի մոտ տասնհինգ երկրներից հայրենիք վերադարձան շուրջ 100 հազար հայեր¹, ովքեր իրենց գիտելիքները, փորձն ու հմտությունները դրեցին Հայաստանի կառուցման գործում: Քանի որ Հայկական սփյուռքը հսկայածավալ ուժ էր, խորհրդային պետությունը նպատակահարմար գտավ այն օգտագործելու ճամփաներ գտնել: Պատահական չէ, որ 1964 թ. ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն, որի հիմնադիրներ դարձան

¹ Տե՛ս **Ստեփանյան Ա.**, XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում (պատ. խմբ.՝ Հ. Տ. Մարության), Երևան, 2010, էջ 82: Չանգվածային հայրենադարձության արդյունքում հայրենիք է ներգաղթել 89.750 մարդ (տե՛ս **Մելիքսեթյան Հ. Ու.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985, էջ 240):

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը և ժամանակի հայտնի մտավորականներ, գիտության ու մշակույթի գործիչներ: Կոմիտեի ղեկավարները եղել են հասարակության շրջանում մեծ հեղինակություն վայելող այնպիսի անձինք, ինչպիսիք էին պատմաբան Վարդգես Համագասայանը (1964-1985), բանասեր Կարլեն Դավաթյանը (1985-1991) ու անվանի պատմաբան Հրաչիկ Սիմոնյանը (1991-1993):

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն առանցքային նշանակություն ունեցավ Սփյուռքը Հայաստանի հետ կապելու, մերձեցնելու, Հայրենիք-Սփյուռք կապերը ընդլայնելու և զարգացնելու գործում: Դրան նպաստում էր նաև այն, որ Կոմիտեի ղեկավարությունն իրավունք ուներ կուսակցության ու պետության որոշ մարմինների հսկողությամբ ազատ կապեր հաստատել սփյուռքահայ կազմակերպությունների հետ՝ հաշվի առնելով նաև քաղաքական գործոնները:

Այդ տարիներին էր, որ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները կազմակերպական ձև ստացան, հայաստանյան և սփյուռքյան մտավորականությունը ոգեշնչված ողջունեց համայն հայության համագործակցության փաստը, իսկ անվանի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը գրեց. «Հայրենիք-Սփյուռք կապերը թևակոխում են մի նոր շրջան, երբ կողմերը պետք է ավելի թափանցեն մեկմեկու կյանքի մեջ ու հասկանան իրար, ընդհանրական համարեն մեկմեկու ցավերն ու ուրախությունները, համատեղ մտածեն դարմանումի ձևերի ու միջոցների մասին...»

Ինչ խոսք, որ Սփյուռքի առաջ ծառայած հարցերի այս ծանրության մեջ էական բեռ ունի կրելու Հայաստանը, որտեղ, բացի Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեից, գործում են ակադեմիայի Պատմության ինստիտուտին կից սփյուռքահայ մասնաճյուղը, ինչպես և պետական համալսարանի վերջերս ստեղծած հայագիտական կենտրոնը:

...Անժխտելի է, որ վերջին տարիներին, առավել ևս Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե ստեղծելուց հետո, հսկայական աշխատանք է կատարվել՝ ամրապնդելու համար հայրենիքի և արտերկրի մերձեցումը: ...Առանց այդ մերձեցման, առանց հայրենիքից ձգվող բյուրավոր նյութական ու աննյութական թելերի, Սփյուռքը մայր երակից կտրված հյուսվածքի կնամանվեր»¹:

1991 թ. Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակմամբ որակապես նոր փուլ սկզբնավորվեց Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում: Անկախության տարիներին ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմում ստեղծվեց գործակալություն, գործադիր քարտուղարություն, ապա պետական կոմիտե: Կառույցներ, որոնք փորձեցին նոր ժամանակաշրջանում

¹ Կապուտիկյան Ս., Իմ ժամանակը, Երևան, 1979, էջ 244-247, 255-256:

ստեղծել գործակցության նոր կառուցակարգեր, սակայն ժամանակը ցույց տվեց, որ դրանք այնքան էլ արդյունավետ չկարողացան գործել:

Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությանը նոր ազդակ հաղորդվեց ՀՀ երրորդ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից, որը գործակցության զարգացման հիմնախնդիրը ներառեց իր քաղաքական ծրագրում: Մասնավորապես, ՀՀ Նախագահը երդման արարողության ժամանակ (2008 թ. ապրիլի 9) հայտարարեց. «Կառուցելու ենք այն Հայաստանը, որը կմիավորի համայն հայությանը, այնպիսի Հայաստան, որը կլինի բոլոր հայերի հայրենիքը: Կառուցելու ենք այն Հայաստանը, որտեղ կտիրի փոխադարձ հարգանքի, սիրո և հանդուրժողականության մթնոլորտ...

Ես համագործակցության եզրեր եմ փնտրելու բոլոր քաղաքական ուժերի հետ: Իմ ջանքերն ուղղված են լինելու համազգային նպատակների իրագործմանը, սերունդների միջև կապն առավել ամրապնդելուն, տարբեր սոցիալական խմբերի շահերը համատեղելուն, ազգային փոքրամասնությունների ու հայապահպանության խնդիրներին»¹: Այս դրույթը քայլ առ քայլ արտացոլվեց օրենքներում, որոշումներում, տարբեր ծրագրերում:

Հայաստան-Մփյուռք պետական քաղաքականության արդյունավետ մշակմանն ու կիրառմանը նպաստեցին նաև երկրի Նախագահի տարբեր երկրներ այցելի ընթացքում պարբերական դարձած հանդիպումները Մփյուռքի հայկական համայնքների հետ: Իր բնույթով աննախադեպ իրողություն էր հատկապես ՀՀ Նախագահի 2009 թ. մեկշաբաթյա համահայկական ուղևորությունը սփյուռքահայ համայնքներ², որի նպատակը հայթորքական հարաբերությունների կարգավորման գործընթացի ու նախաստորագրված արձանագրությունների վերաբերյալ Մփյուռքի մեր հայրենակիցների կարծիքներն ու մտտեցումները լսելն էր, առկա մտահոգությունները փարատելը, գործընթացի հաջորդ փուլերում աշխարհասփյուռ հայության ու նրա տարբեր հատվածների անելիքների վերաբերյալ մտքերի փոխանակումը: Նախագահի նախաձեռնությամբ ձևավորվեց Մփյուռքի հետ երկխոսելու նոր մշակույթ:

Պետականորեն ամրագրված սկզբունքները քաղաքական հստակ ձևակերպում են ստացել Հայաստան-Մփյուռք գործակցությանը վերաբերող պետական քաղաքականության մեջ, որում հաշվի են առնվում նախ և առաջ Մփյուռքի մարտահրավերները և հնարավորությունները:

¹ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ, 09.04.2008, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/04/09/news-15/>.

² ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի համահայկական ուղևորությունը սփյուռքահայ գաղթօջախներ, 01.10.2009 - 07.10.2009, <http://www.president.am/hy/foreign-visits/item/2009/10/01/news-69/>.

Եթե փորձենք բնութագրել Հայկական սփյուռքը, ապա պետք է նշենք, որ այն

- պատմական հայրենիքից և Հայաստանից դուրս ապրող հայությունն է՝ մարդիկ, ովքեր ունեն պատմական հիշողություն և գիտակցական կապ հայրենիքի հետ,
- գոյացել է հիմնականում ողբերգության, տեղահանությունների արդյունքում, Հայոց ցեղասպանության հետևանքով, ինչպես նաև անկախությունից հետո Հայաստանից արտագաղթած և նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայերի համախմբմամբ,
- գորավիզ է հայ ինքնությանը, հայ արմատի, պատմության, անցյալի մասին հավաքական հիշողության պահպանմանը, ունի պատմական հայրենիքի հետ ֆիզիկական, գիտակցական, զգայական կապեր, նրա նկատմամբ նվիրվածություն,
- ձգտում է պահպանել իր լեզուն, մշակույթը, պատմամշակութային ժառանգությունը, հավատքը,
- աշխատանքներ է տանում հայ ընտանիքում հայկական ավանդույթների, սովորույթների, կենցաղավարության պահպանման և զարգացման ուղղությամբ,
- աջակցում է Հայ Եկեղեցու գործունեությանը, եկեղեցաշինությանը, հավատքին նվիրվածության և քույր եկեղեցիների հետ համագործակցության ծրագրերին,
- առանձնանում է հայկական ավանդական կուսակցությունների, համահայկական, մասնագիտական 44 կառույցների դերակատարությամբ, որոնք էական գործունեություն են ծավալում հայապահպանության, հայ ինքնության պահպանման, հայոց իրավունքների վերականգնման ասպարեզներում,
- զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրներում հաստատված հայկական համայնքների, կառույցների միջև պահպանում է կապեր, ձևավորում հարաբերություններ,
- ստեղծում է հայկական ցանցեր, ընկերակցություններ, եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային օջախներ, բարեսիրական, երիտասարդական, կանանց, մարզական կառույցներ, գիտահետազոտական հաստատություններ, որոնց թիվը հասնում է 30 հազարի:

Սփյուռքը համաշխարհային բավականին բարդ և բազմաբնույթ երևույթ է, հավաքական իրողություն, որի առջև բազում համայնքային և համազգային մարտահրավերներ են ծառայել, դրանցից են՝

- համաշխարհայնացման հետ կապված խնդիրներ, տեղաշարժեր, հակամարտություններ, համայնքների փոքրացում, խոշորացում,
- այլ ազգերի լեզուներին, մշակույթներին ձուլման վտանգի զգալի ավելացում,

- ազգային ինքնագիտակցության թուլացում, հեռացում ազգային, համայնքային կյանքից,
- ուժացման գործընթացի արագացում, խառնամուսնությունների թվի աճ,
- հայոց լեզվի վատ իմացություն, լեզվի կորստի սպառնալիք, արևմտահայերենի ուսուցման հետ կապված խնդիրների ավելացում, ուսուցիչների սերնդափոխության դժվարություններ,
- հայկական կրթական հաստատությունների, դպրոցների, հատկապես ամենօրյա դպրոցների թվի պակասում, հայկական դպրոցներում աշակերտների թվաքանակի նվազում,
- նոր ձևավորված համայնքների ինքնակազմակերպման դժվարություններ,
- Սփյուռքի ազգային հաստատությունների գործունեության վերակառուցման դանդաղում,
- ավանդական և նոր սփյուռքների միջև տարաձայնությունների առաջացում,
- համայնքային կյանքում չընդգրկված մեծ թվով հայերի առկայություն (80%-ից ավելին),
- գոյություն ունեցող կարծրատիպերի ոչ արագ հաղթահարում,
- համերաշխության և հանդուրժողականության պակաս, հիմնախնդիրների լուծմանը չմասնակցելու, համայնքային ձեռնարկներից խուսափելու բազում պատճառներ:

Նշված մարտահրավերներից շատերը բնորոշ են նաև այլ սփյուռքների: Սակայն պետք է արձանագրել, որ Հայկական սփյուռքը մեկ դարից ավելի համառ պայքար է մղում իր տեսակի, իր որակների, ինքնության և իր իրավունքների վերականգնման համար:

Բոլոր դժվարություններով հանդերձ՝ Հայկական սփյուռքը դարձել է հուսալի կամուրջ, որը նպաստում է այլ պետությունների հետ Հայաստան պետության երկկողմ հարաբերությունների զարգացմանը, բարեկամության հաստատմանն ու խորացմանը, ինքնության պահպանմանը, ինչպես նաև աջակցում հայրենիքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը:

Հիմք ընդունելով ներկա իրողությունները՝ Հայաստանը, Սփյուռքի կառույցների, կազմակերպությունների հետ գործակցելով, մշակել է և շարունակում է զարգացնել պետական քաղաքականության սկզբունքները և ուղղությունները, որոնցից կարելի է առանձնացնել՝

ա) Հայկական Մփյուռքի սահմանադրական ձևակերպումը

Արժևորելով Մփյուռքի դերն ու նշանակությունը՝ Հայոց պետությունը Հայկական սփյուռքի հետ աշխատանքները դեռևս 2005 թ. Բարձրագրել է սահմանադրական նորմի աստիճանի: 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով փոփոխված ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը՝ վերնագրված «Հայկական սփյուռքի հետ կապերը», ամրագրում է.

«Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը:

Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»¹:

բ) ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը

Ընդհանուր բարեփոխումների շրջանակներում Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության մշակման, դրա ամբողջական և արդյունավետ իրականացման, այն շարունակաբար բարելավելու, պետական մարմինների գործունեությունը համակարգելու նպատակով 2008 թ. հոկտեմբերի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության կազմում սկսեց գործել Մփյուռքի նախարարությունը², որի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ³: Այն ՀՀ Նախագահի ընդհանուր ղեկավարությամբ մշակում և իրականացնում է Հայաստանի և Մփյուռքի միջև կապերի ամրապնդման, հասարակական կառույցների հետ գործակցության զարգացման, հայապահպանության, Մփյուռքի ներուժի բացահայտման, հայրենադարձության ծրագրերի մշակման և նախարարության իրավասությանը վերապահված այլ բնագավառներ-

¹ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2016, էջ 7:

² ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին, 17.06.2008, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44544>: Օրենքը վերահաստատվեց 27.09.2016 թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից, երբ ընդունվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրինագիծը:

³ ՀՀ կառավարության թիվ 1049-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին, 11.09.2008, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78354>.

րում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Հանրապետության Նախագահը ՀՀ սփյուռքի նախարարությանն առաջադրեց երեք ռազմավարական խնդիր.

- ա) նպաստել հայապահպանությանը Սփյուռքում, մշակել հատուկ ծրագրեր հայ ինքնության պահպանման, Սփյուռքի ուժացման դեմ պայքարին օժանդակելու համար,
- բ) բացահայտել և համախմբել Սփյուռքի ներուժը և օգտագործել Հայաստանի տնտեսության զարգացման համար,
- գ) մշակել ծրագրեր, որոնք կարող են խթանել հայրենադարձությունը:

Ռազմավարական խնդիրներն իրականացնելու համար մշակվեց Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգը (2009 թ.)¹: Ուղենիշային դարձան ՀՀ Նախագահի՝ «Հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին» հրամանագիրը (2013 թ.)², նշված հայեցակարգը, ինչպես նաև ՀՀ սփյուռքի նախարարության կանոնադրության պահանջները:

ՀՀ սփյուռքի նախարարությունը՝ որպես պետական կառավարման մարմին, Սփյուռքի հետ աշխատելով, ունի առանձնահատկություններ՝ այլ նախարարությունների հետ համեմատած: ՀՀ սփյուռքի նախարարությունը.

- չի դեկավարում Սփյուռքը,
- Սփյուռքի հետ չի աշխատում հրամանների, հրահանգների միջոցով,
- չի կարող պահանջներ առաջադրել Սփյուռքին կամ հանձնարարություններ տալ սփյուռքյան որևէ կառույցի, անհատի,
- չի կարող վերահսկել որևէ գործունեություն:

Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքականությունը գլխավորապես հիմնված է հետևյալ արդյունավետ մոտեցումների վրա.

- գործընկերային հարաբերությունների կառուցում և զարգացում,
- փոխադարձ վստահության և փոխըմբռնման ամրապնդման աշխատանքների կատարում,
- հարցերի քննարկումներ ու լուծումների համատեղ որոնում, ինչն իրականացվում է երկխոսության, փոխադարձ հարգանքի, փոխ-

¹ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ, ՀՀ սփյուռքի նախարարություն, Երևան, 2010: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի թիվ 34 որոշման (հավելված)՝ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ, http://www.mindiaspora.am/am/Gov_desicions.

² ՀՀ Նախագահի հրամանագիրը Հայկական սփյուռքի հետ ՀՀ կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին, 22.10.2013, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86167>.

գիջումների և փոխհամաձայնության ճանապարհով՝ զարգացման նոր հեռանկարների ուղենշմամբ,

- Մփյուռքի նախարարության ծրագրերը Հայաստանում իրականացվում են հիմնականում պետական բյուջեի միջոցների հաշվին:

Հայաստանը հռչակվել է բոլոր հայերի հայրենիքը

Հայաստանը, չնայած իր փոքր տարածքին, պատկանում է 10 միլիոնից ավելի աշխարհասփյուռ հայությանը: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր հայ ունի և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ իր հայրենիքի նկատմամբ: Բոլորինն են հայրենիքի և՛ ձեռքբերումները, և՛ դժվարությունները: Եվ իզուր չէ ասված, որ հայրենիքը չեն սիրում նրա համար, որ լավն է, հայրենիքը սիրում են նրա համար, որ քոնն է: Հետևաբար հայ ժողովրդի յուրաքանչյուր զավակ պետք է ելնի քենեղիական հարցադրումից. «Ոչ թե ի՞նչ է արել պետությունն ինձ համար, այլ ես ի՞նչ եմ արել և ի՞նչ կարող եմ անել հայրենիքիս համար»:

«Ո՞վ է հայրը»՝ Մփյուռքում հնչող և մտահոգող հարց. ըստ պետության՝ հայ է այն անձը, ով իրեն հայ է զգում՝ անկախ կրոնական, կուսակցական պատկանելությունից, մայրենի իմացությունից:

Կան շատ տեսակետներ, կարծիքներ, մոտեցումներ, թե ով է հայր: Շատ կարևոր են հատկապես մայրենի իմացությունը, քրիստոնեական հավատքը, քաղաքացիությունը, սակայն այսօր պետական քաղաքականությունը ելնում է այն դրույթից, որ եթե մարդն իրեն հայ է զգում՝ անկախ լեզվի իմացությունից, կրոնից, դավանանքից, սոցիալական ծագումից, ապրելու վայրից, ուրեմն նրան պետք է որպես հայ ընդունել: Զգացողությունը, հայ ազգին պատկանելության գիտակցումը պետք է գերակայեն: Հայ ինքնության տարրերի պակաս, բայց հայ լինելու զգացողություն ունեցող մարդիկ քիչ չեն մեր իրականությունում, նրանց պետք է ներգրավել հայկական աշխարհի մեջ, այլ ոչ թե վանել:

Անհրաժեշտ է մշակել ծրագրեր՝ նման ազգակիցների հետ աշխատանքներ կազմակերպելու, հայրենիքի հետ կապերն ամրապնդելու համար: Գործակցության կարևոր սկզբունքը պետք է լինի այլալեզու և այլակրոն հայերի շրջանում ազգային ինքնության արթնացմանը նպաստելը: Բոլոր հնարավոր քայլերը պետք է ձեռնարկել՝ հայրենիքում և Մփյուռքում «հայադարձության» ծրագիրն իրականացնելու համար:

Աջակցություն հայ մարդու ինտեգրմանը այն հասարակությանը, որտեղ ապրում է

Հայաստանը ողջունում, խրախուսում և հորդորում է հայրենիքից դուրս ապրող բոլոր հայերին՝ դառնալ այն երկրի սոցիալական օրինապաշտ և օրինակելի քաղաքացիներ, որտեղ ապրում են, բարձրանալ այդ երկրի

քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի աստիճաններով, մրցունակ և պահանջված լինել տվյալ հասարակության մեջ, դառնալ նաև կենդանի կամուրջ տվյալ երկրի և հայրենիքի միջև: Միաժամանակ, պետությունը հորդորում է բոլոր հայերին՝ շարունակել հայ մնալ, հավատարիմ լինել ինքնությանը, լեզվին, պատմությանը, մշակույթին, կրոնին, արմատին, գենին: Ինտեգրումը տվյալ հասարակությանը երբեք չպետք է արգելք հանդիսանա հայապահպանության համար, իսկ վերջինս էլ, իր հերթին, երբեք չպետք է հանգեցնի մեկուսացման: Այսինքն՝ ինտեգրվելով բնակության երկրում՝ չպետք է ուժանալ, ձուլվել:

Սփյուռքահայր հայրենիքում պետք է շահ ստանա, դրամ վաստակի

Հայաստանի անկախության ողջ ժամանակահատվածում բարեգործական ծրագրերը, Սփյուռքի օգնությունը որոշակիորեն թեթևացրին երկրաշարժի, էներգետիկ ճգնաժամի ծանր հետևանքները, օգնեցին աղքատության կրճատմանը, սփյուռքահայերը դրամական փոխանցումների միջոցով էական աջակցություն ցուցաբերեցին Հայաստանին և Ղարաբաղին: Հանրապետության Նախագահին իր բազմաթիվ ելույթներում սփյուռքահայերին առաջարկել է մասնակցել երկրի զարգացման ծրագրերին, տնտեսության առաջընթացին: Նա նշել է, որ պետք է կոտրել այն կարծրատիպը, թե իբր հայրենիքում պետք է միայն բարեգործությամբ զբաղվել, առաջարկել սփյուռքահայերին՝ ներդրումներ կատարել Հայաստանում և շահ ստանալ, եկամուտ ունենալ¹: Սփյուռքահայի շահը նաև հայաստանցիների շահն է:

Աշխատատեղերի ստեղծումը, ներդրումների ավելացումը կրճատում են

¹ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպված հանդիսավոր ընդունելությանը, 24.09.2008, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24/news-18/>; ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհրդի կողմից կազմակերպված ընդունելության ժամանակ, 28.07.2012, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2012/07/28/London-Serzh-Sargsyan-speech-amenian-community/>; ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը երդմնակալության արարողության ժամանակ, 09.04.2013, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/04/09/Statement-by-Serzh-Sargsyan-at-the-Ceremony-of-Inauguration/>; ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթն արգենտինահայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, 07.07.2014, http://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/07/07/President_Serzh-Sargsyan-meeting-with-Armenian-diaspora-of-Argentina-speech/; ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողովում, 20.09.2014, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/09/20/President-Serzh-Sargsyan-Armenia-Diaspora-conference/>; ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ Արևելյան ափի հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը, 30.03.2016, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/03/30/President-Serzh-Sargsyan-meeting-with-Armenian-community-in-USA-speech/>.

գործագուրկների թիվը՝ համապատասխանաբար նվազեցնելով և՛ աղքատությունը, և՛ արտագաղթը: Աշխատանք ունեցող, իր ընտանիքի սոցիալական խնդիրները հոգացող մարդը չի բռնի գաղթի ճամփան: Հայաստանը դիմում է սփյուռքահայերին և հորդորում. «Եկե՛ք Հայաստան, ներդրո՛ւմ արեք, եկամու՛տ ստացեք»: Հատկապես որ Եվրասիական տնտեսական միության հնարավորությունները շուկաների առումով շատ մեծ են, և բիզնեսը Հայաստանում կարող է արդյունավետ ուղիներ հարթել դեպի այլ տարածքներ:

Դեռևս 2008 թ. Ջերմուկում «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի ընթացքում Հանրապետության Նախագահը ուղերձ հղեց ՀՀ քաղաքացիներին և բոլոր հայորդիներին՝ նշելով. «Ես դիմում եմ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներին, դիմում եմ նաև բոլոր նրանց, ովքեր Հայաստանն իրենց հայրենիքն են համարում, բոլոր նրանց, ովքեր դեռ օրորոցից իրենց զավակներին ու թոռներին հպարտորեն բացատրում են, որ իրենք հայ են, որ հեռավոր Արարատի փեշերին հայրենիք ունեն, Հայաստան ունեն:

...Հայաստանը՝ նրա քաղաքացիների և աշխարհասփյուռ հայերի հայրենիքն է: Ավելի քան ակնհայտ այս ճշմարտությունը մեզ մի բան է պարտադրում՝ համատեղ ուժերով ծաղկեցնել հայրենիքը: Խոսքս մասնավորապես ուզում եմ ուղղել մեր գործարարներին և բոլոր մեծահարուստ հայերին: Ավելի ակտիվ ու նախաձեռնող եղեք հայրենիքի շենացման ձեր նախաձեռնություններում...»¹:

Սփյուռքահայերի տնտեսական նախաձեռնություններին զարկ տալու նպատակով ՀՀ կառավարության օժանդակությամբ 2016 թ. նախատեսվեց ստեղծել «Մեկ պատուհանի սկզբունքով» գործող կառույց²: Նորաստեղծ կառույցը խորհրդատվական ծառայություններ է տրամադրում սփյուռքահայերին, առաջարկում բիզնես ծրագրեր, օգնում ներդրումների սահուն իրականացմանը:

Սփյուռքի մեր հայրենակիցները ևս տարբեր նախաձեռնություններով փորձում են սատարել հայրենիքին, լինել նրա կողքին: Այդ առումով ուշագրավ է 2016 թ. հոկտեմբերի 28-ին IDeA հիմնադրամի նախաձեռնությամբ ՀԲԸՄ-ի 110-րդ տարեդարձի առթիվ «Գլոբալ հայերի ապագան այսօր է» վերտառությամբ հրապարակված բաց նամակը, որը ստորագրած տարբեր երկրներում բնակվող անվանի հայերը կոչ են անում օգտվել հայերի միավորման և Հայաստանի ապագան միասնաբար կերտելու համար ընձեռված պատմական հնարավորությունից և մասնակցել վաղվա առավել հզոր

¹ ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի ուղերձը ՀՀ քաղաքացիներին և բոլոր հայորդիներին, 14.07.2008, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/07/14/news-7/>.

² Հավելված ՀՀ կառավարության 2016 թ. հոկտեմբերի 18-ի թիվ 1060-Ս որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր, Երևան, 2016, հոկտեմբեր, էջ 18, www.parliament.am/draft_docs5/K-1103.pdf.

Հայաստանի կերտմանը: Կոչում մասնավորապես ասվում է. «Անհատական ջանքերից բացի, մենք ցանկանում ենք բոլոր հայորդիների և հայկական կազմակերպությունների միջև համագործակցության և համախմբման աննախադեպ ոգի ստեղծել: Կոչ ենք անում հայերին ազգի սոցիալական, տնտեսական, մշակութային և տեխնոլոգիական ուժը վերականգնելու ուղղությամբ երկարաժամկետ ներդրումներ իրականացնել՝ առանցքում ունենալով Հայաստանը: Միննույն ժամանակ, մենք Հայաստանի կառավարությանը զարգացման նոր, համատեղ ջանքերի վրա հիմնված ռազմավարություններ ներդնելու միջոցով այս ուղերձին արձագանքելու կոչ ենք անում:

Միասին մենք «Գլոբալ հայերն» ենք: Եկել է ժամանակը, որ գլոբալ հայերը հանդես գան համարձակ նախաձեռնությամբ ...»¹:

Միյուոքի հետ գործակցության իրականացում ըստ տարածաշրջանների

Հայաստան-Միյուոք գործակցության քաղաքական հիմքերից է տարածաշրջանային ռազմավարական ծրագրերի մշակումը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Միյուոքը բազմաշերտ է, բազմադեմ, բազմալեզու, բազմակարծիք և բազմակարիք: Հնարավոր չէ այն դիտարկել որպես մի ամբողջություն և աշխատանքները կազմակերպել՝ առանց հաշվի առնելու տարածաշրջանային յուրահատկությունները: Մոլորակի տարբեր մասերում ապրելով՝ սիյուոքահայերը, պայմանավորված տվյալ տարածքի զարգացման մակարդակով, քաղաքական և տնտեսական իրավիճակներով, ժողովրդավարության աստիճանով, սովորության ին տարբերություններով, հայրենիքի հետ ունեցած կապերի մակարդակով, ուժացման աստիճանով, ունեն միմյանցից էականորեն տարբերվող խնդիրներ ու մոտեցումներ, հետևաբար մենք գործ ունենք ոչ թե Միյուոքի, այլ սիյուոքների հետ, և այս առումով օգտագործելի է «հայկական համայնք» եզրույթը: Համայնքները և՛ նման են միմյանց, և՛ խիստ տարբեր են իրարից: Այս ամենը հաշվի առնելով՝ պետականորեն մշակվում և իրականացվում են ծրագրեր ըստ տարածաշրջանների («Կրթամշակութային աջակցություն Ամերիկայի և Ավստրալիայի հայ համայնքներին», «Եվրասիական տնտեսական միության երկրների հայ համայնքների կրթամշակութային զարգացմանն աջակցության ծրագիր», «Աջակցություն Մերձավոր Միյուոքին» և այլն)²:

¹ «Գլոբալ հայերի ապագան այսօր է», 28.10.2016, http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20161028_19&flag=am: «Գլոբալ հայերի ապագան այսօր է» բաց նամակը ստորագրել են 23 ականավոր հայեր, ներառյալ Նուբար Աֆեյանը, Ռուբեն Վարդանյանը, Աբել Ադանբեկյանը, Շառլ Ազնավուրը, Լորդ Արա Դարզին, Էդվարդ Ջերեջյանը, Վարդան Գրեգորյանը, Արթուր Ջանիբեկյանը, Մամվել Կարապետյանը, Սեմ Սիմոնյանը և այլք:

² ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության 2016 թ. պետական բյուջեի մասին, 09.12.2015, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=102555> (Ցանկ «Հայաստանի Հանրա-

Երկքաղաքացիության ինստիտուտի ներդրում, ՀՀ օրենսդրության կատարելագործում

Միջուրքահայերի պահանջով և առաջարկությամբ՝ 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրությունից հանվեց երկքաղաքացիության արգելքը, և կատարվեցին համապատասխան օրենսդրական փոփոխություններ «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքում¹: Բազմաթիվ հայեր հնարավորություն ունեցան իրականացնել իրենց ցանկությունը՝ լինել նաև ՀՀ քաղաքացի: 2008-2016 թթ. ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել 97.974 մարդ² (տե՛ս Հավելված 16): Եթե 2008 թ. ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել 1554 մարդ, ապա 2013 թ.՝ 21.142 մարդ:

Նման խոշոր Միջուրք ունեցող պետությունը պարտավոր է պայմաններ ստեղծել, որպեսզի ցանկություն ունեցողներն անարգել դառնան Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրավական կապ ունենան պետության հետ: Սակայն կան երկրներ, որոնց քաղաքացիները չեն շտապում ՀՀ քաղաքացի դառնալ, որովհետև դրանցում կան արգելքներ երկքաղաքացիության վերաբերյալ (Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, Գերմանիա, Իրան): Միաժամանակ նկատվում են նաև մեր կառույցների անտարբեր վերաբերմունքը և հստակ քաղաքականության բացակայությունը: Ժամանակն է վերանայել մոտեցումները և հայ լինելու ևս մեկ կարևոր ապացույց դարձնել հայկական անձնագիրը:

Պետական քաղաքականության էական բաղադրիչներ են Հայաստան-Միջուրք գործակցության առանձին խնդիրների օրենսդրական կարգավորումը, համապատասխան ընթացակարգերի, կառուցակարգերի ներդնումը, կիրառումը, դրանց կատարելագործումը:

«Օտարերկրացիների մասին»³, «Բնակչության պետական ռեգիստրի մասին»⁴, «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական

պետության 2016 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված այն ծրագրերի, որոնց գծով հատկացումների գլխավոր կարգադրիչ հանդիսացող համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից այդ հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվելու են դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի, հավելված թիվ 1, աղյուսակ թիվ 16, http://www.arlis.am/Annexes/4/PT87.1_2015page967-992.pdf).

¹ ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին, 06.11.1995, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1731#2>:

² ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած օտարերկրյա քաղաքացիների մասին վիճակագրությունը ներկայացվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ՀՀ սփյուռքի նախարարությանը տրամադրված տվյալների հիման վրա:

³ Հայաստանի Հանրապետության օրենքը օտարերկրացիների մասին, 25.12.2006, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=73272>.

⁴ Հայաստանի Հանրապետության օրենքը բնակչության պետական ռեգիստրի մասին, 24.09.2002, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=75963>.

ծառայություն չանցած քաղաքացիների մասին»¹ և ՀՀ այլ օրենքների ընդունմամբ սփյուռքահայերի իրավունքներն ընդլայնվել, իսկ ընթացակարգերը պարզեցվել են: Հայաստանում ապաստանած սիրիահայերի համար ամբողջությամբ պարզեցվել և մատչելի են դարձել տարբեր ընթացակարգեր՝ ՀՀ կառավարության որոշումներով, օրենսդրական ու ենթաօրենսդրական բազմաթիվ այլ ակտերով:

«Ճանաչել, վստահել և գործակցել» բանաձևի կիրառումը

Մեր խնդիրն է Սփյուռքի հետ աշխատանքները կազմակերպել «Ճանաչել, վստահել և գործակցել» սկզբունքով: 21-րդ դարում աշխարհասփյուռ հայության առջև ծառայած մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև և բովանդակություն հաղորդել Սփյուռքի հետ տարվող աշխատանքներին՝ հենվելով մարդկային, մշակութային և սոցիալական կապիտալի, մրցունակության կրթականների վրա:

Պետական քաղաքականության կարևոր սկզբունքն է Սփյուռքի հետ աշխատանքների ճիշտ կազմակերպումը: Սփյուռքի հետ պահանջների լեզվով խոսելն անընդունելի է, և անցնող տարիներին հրամաններ, հանձնարարություններ և նման այլ գործիքակազմ չի կիրառվել: Ցանկացած սփյուռքահայ, կառույց կամ կազմակերպություն կարող է չհամագործակցել, չաշխատել պետական կառույցների հետ, եթե Հայաստանից ղեկավարելու կամ կառավարելու միտում զգա, հատկապես որ նա իր աշխատանքն անում է կամավորության սկզբունքով, հայրենասիրությունից դրդված, իր հանգիստը, ազատ ժամանակը, նյութական միջոցները ներդնում է հանուն հայության և Հայաստանի:

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ հարաբերությունները կառուցելիս լավագույն արդյունք կարելի է գրանցել, եթե երկու կողմերը միմյանց լավ են ճանաչում: Շփումները, երկխոսությունը, բանավեճերը, փոխադարձ այցելությունները ընդլայնում են ճանաչողության սահմանները, թույլ են տալիս հաղթահարել շատ բարդություններ՝ հոգեբանական, սոցիալական, մշակութային և այլն:

Ճանաչումը մեծ դրական լիցք ունի, քանի որ լավ ճանաչելը, միմյանց մասին տեղեկացված լինելը հանգեցնում է վստահության ավելացմանը: Վստահությունն է այն բանալին, այն կարևոր միջոցը, որը ստեղծում է գործակցության հնարավորություն: Միայն գործակցությամբ է հնարավոր հարստացնել Հայաստանն ու Սփյուռքը, գորացնել միմյանց:

Հետևաբար բանաձևը, որով պետական քաղաքականությունն առաջնորդվում է Սփյուռքի հետ հարաբերություններ կառուցելիս՝ հետևյալն է՝

¹ Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին», 17.12.2003, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80145>.

«Ճանաչել, վստահել, գործակցել հավասար գործընկերային պայմաններում»¹: Այս սկզբունքներն ընկած են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության հիմքում:

Այսօր Հայաստան-Սփյուռք հարաբերությունները թևակոխել են որակապետ նոր փուլ: Այդ գործակցությունը չի կարող զարգանալ, եթե չլինեն փոխըմբռնում, գործունեության թափանցիկություն, փոխադարձ վստահություն, երկխոսություն, խտրականության բացառում, մարդասիրություն, ազգասիրություն, հայրենասիրություն և այլն: Հարկ է արձանագրել, որ նախկինում առկա կարծրատիպային առնչությունները հետևողականորեն իրենց տեղը զիջում են հավասար գործընկերային հարաբերություններին:

Երիտասարդների հայեցի դաստիարակություն, ուժացման դեմ պայքար

Սփյուռքն իր գոյության առաջին օրերից նվիրվել է հայապահպանության, նոր սերնդի ազգային նկարագրի ձևավորման, ինքնության, մայրենի լեզվի, հայկական ավանդույթների, սովորույթների, մշակույթի, հավատքի, հոգևոր արժեքների պահպանման և փոխանցման շարունակականության ապահովման աշխատանքներին:

Համաշխարհայնացման, ազատականացման, տարբեր մշակույթների ու քաղաքակրթությունների փոխներթափանցման պայմաններում հայ ինքնության կերտումը, ազգային ինքնագիտակցության ապահովումն ու խորացումը ենթադրում են ջանքերի ամենօրյա լարում, նպատակամղում, որը պետք է արմատավորել հենց երիտասարդության մեջ:

Սփյուռքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական, բարեգործական, կրոնական, կանանց, երիտասարդական, լրատվական, մարզական և այլ կազմակերպությունների գործունեության մշտական օրակարգում գտնվող այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերին իր գորակցությունն է բերում Հայաստանի Հանրապետությունը՝ պետականության գործիքների ողջ զինանոցով:

Այդ ջանքերի կիզակետում հայ երիտասարդությունն է՝ ազգային ինքնության շարունակականության ապահովման հիմնական երաշխավորը: Պետական գրեթե բոլոր ծրագրերը նպատակաուղղված են հայ երիտասարդությանը հայրենիքի հետ կապելուն, հայրենաճանաչությանը, ազգային արժեքների նկատմամբ սեր և պատասխանատվություն սերմանն էլուն, մայրենի լեզվի իմացությանը: Դեռևս 2007 թ. հանդես գալով Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից կազմակերպված «21-րդ դարի մարտահրավերները և հայ երիտասարդությունը» համահայկական երիտասարդական միջազգային

¹ **Հակոբյան Հ.**, Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականության հիմնախնդիրները // Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով. համաժողովի նյութեր, էջ 55:

խորհրդաժողովում՝ մեր կողմից արվեց հետևյալ կոչ-հորդորը. «Հայաստանից դուրս ապրող երիտասարդների համար միակ հանգստյան վայրը պետք է լինի մեր ընդհանուր հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը: Կարելի է տարին մեկ անգամ հնարավորություն գտնել թե՛ միայնակ, թե՛ ընտանիքով, թե՛ ընկերներով հանգստանալ հայրենի հողի վրա, ուժ առնել, լեզուն կատարելագործել, հասկանալ այս հողի վրա ապրող մարդկանց հոգեբանությունը, ծանոթանալ հայրենակիցների հետ, մշակութային արժեքներին, զբաղվել սպորտով: ... Երիտասարդությունը ոչ միայն կարող է փայլուն հանգստանալ, այլև ճանաչելի դարձնել հային ու Հայաստանն ամբողջ աշխարհին:

... Այսուհետ Ձեր հանգստի կազմակերպման այնպիսի ձևեր պետք է ընտրեք, որոնք առնչվեն հայրենիքի հետ, հայապահպանության հետ: Ձեր յուրաքանչյուր օրը պետք է շնչի, ապրի հայությամբ»¹:

Մեր գործունեության շահառուն այսուհետ ևս պետք է լինի երիտասարդությունը, իսկ նպատակը՝ մրցունակ հայ երիտասարդության հայեցի դաստիարակությունը: Կարևոր է երիտասարդության հետ աշխատանքները, սփյուռքյան կառույցների հետ միասին, դարձնել գերխնդիր և մշակել արդյունավետ ու նպատակաուղղված ծրագրեր այս ուղղությամբ: Այդ առումով զգալի փորձ արդեն առկա է, իրականացվում են «Բմ Հայաստան» համահայկական փառատոնը, Համահայկական խաղերը², «Արի տուն», «Բազե»³ և այլ ծրագրերը:

«Մեր բոլորիս պարտքն է միավորել մեր ուժերը հանուն ապագայի: Եվ, հատկապես, մեր երիտասարդ սերունդներին պետք է ներգրավենք մեր ապագայի կերտման գործում: Նրանք երիտասարդ են, համարձակ, ավյուճում լի, եթե մենք նրանց ճիշտ գաղափարներով սնենք, ճշմարիտ արժեքներով դաստիարակենք, ազատության ու ժողովրդավարության բերկրանքը հրամցնենք, ձերբազատենք նախապաշարումներից՝ մեր հասարակությունները կունենան լավ ապագա»⁴:

¹ **Հակոբյան Հ.** (ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ), XXI դարի մարտահրավերները գլոբալացվող աշխարհում: Հայ երիտասարդությունը և նոր հարյուրամյակի մարտահրավերները, էջ 23-24:

² <http://panarmeniangames.am/>.

³ <http://heh.am/>: «Բազե» համահայկական երիտասարդական հավաքը կազմակերպվել է 2001 թվականից սկսած՝ ՀՀ Կառավարության որոշմամբ: Հավաքին մասնակցել է ավելի քան 8 հազար երիտասարդ՝ ՀՀ-ից, ԼՂՀ-ից, Ջավախքից և Սփյուռքից: Հավաքի արդյունքում հիմնադրվել է «Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոնը», որը 2010 թ. ՀՀ Նախագահի որոշումով վերանվանվել է «Համահայկական երիտասարդական հիմնադրամ» և շարունակել նրա ծրագրերը՝ ավելի ընդլայնելով գործառնությունների շրջանակներն ու գործունեության աշխարհագրությունը: Այդ հիմնադրամի կազմում գործում է «Բազե» ակումբը, որի նպատակն է երիտասարդների ներուժը ուղղորդել երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը, նպաստել նրանց մասնագիտական աճին, կազմակերպել երիտասարդների ակտիվ հանգիստը:

⁴ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում, 02.10.2013, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/10/02/President-Serzh-Sargsyan-participated-at-the-session-of-the-PACE-speech/>.

Հայերենի պահպանումն ու տարածումը

Աշխարհում հայերենի կրողը, պահպանողը, զարգացնողը միայն հայ ազգն է, Հայոց պետությունը: Հետևաբար, մեր լեզվի վիճակի համար մենք ենք պատասխանատու: Հայոց լեզուն անմասն չի մնացել ազգի ճակատագրի վայրիվերումներից: Եվ թեև ցեղասպանությամբ իր բնօրրանից արմատախիլ արվեց նաև հայերենը, կորստի մատնվեցին շատ բարբառներ, մեծ հարված հասցվեց լեզվամտածողությանն ու լեզվի միասնությանը, սակայն հայերենը շարունակեց հազարամյակների իր ճամփան, և այսօր պետք է օգտագործենք բոլոր հնարավորությունները՝ Մայրենին հարստացնելու և սերունդներին անաղարտ փոխանցելու համար:

Արդեն նշել ենք, որ այսօր արևմտահայերենը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ստացել է «հաստատապես վտանգված» լեզվի կարգավիճակ, աճում է այն հայերի թիվը, որոնց համար հայերենը այլևս որպես մայրենի լեզու չի ընկալվում:

«Լեզուն ազգային ինքնության հաստատման և ինքնապահպանման հիմնական, անմրցակից և անփոխարինելի գործոնն է հատկապես փոքր ազգերի կյանքում»¹, ուստի համալիր ծրագիր է անհրաժեշտ մայրենի լեզվի պահպանման, լեզվամտածողության զարգացման, ազգային կրթական հաստատությունների ընդլայնման, մեկօրյա դպրոցների ցանցի ավելացման, հայագիտական կենտրոնների, ամբիոնների հզորացման, դասագրքերի և մասնագետների պատրաստման ուղղությամբ: Պետության կողմից ձեռնարկվում են միջոցներ՝ մասնագետների պատրաստման և վերապատրաստման, դասագրքերը Հայաստանում տպագրելու և Սփյուռքի համայնքներ առաքելու, արագացված դասընթացներ կազմակերպելու, մեկօրյա դպրոցների ստեղծմանն աջակցելու ուղղությամբ:

Լեզվի պահպանման համար զորաշարժի պետք է ենթարկել ամբողջ Սփյուռքը, բոլոր կառույցներն ու կազմակերպությունները, Հայ Եկեղեցին և հատկապես հայ ընտանիքը:

Աջակցություն նոր ձևավորվող համայնքների ինքնակազմակերպմանը

Նոր ձևավորված հայկական համայնքները չափազանց խոցելի են: Համայնքային կառույցները շատ քիչ են, մեծ թիվ են կազմում համայնքային կյանքում չընդգրկված անձինք: Շատ երկրներում համայնքների հին ու նոր հատվածների միջև նկատվում են հակասություններ: Իհարկե, արդեն կայացած համայնքները նախաձեռնում են նոր կառույցների ստեղծում, կապեր հաստատում նախարարության հետ:

¹ **Հակոբյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները և հայագիտության հիմնախնդիրները // Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», լիազումար նիստի զեկուցումներ, էջ 79:

Հայաստան-Մփյուռք գործակցության առանցքային խնդիրներից է համայնքների ինքնակազմակերպմանը, եկեղեցու, դպրոցի կառուցմանը, համայնքային ինքնակառավարման մարմինների ձևավորմանը և Հայաստանի հետ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը օժանդակելը: Այդ նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությունը յուրաքանչյուր ամառ Հայաստանում կազմակերպում է համայնքային գործի կազմակերպիչների ուսուցում, նրանց տրամադրում համայնքի կազմակերպիչների և ղեկավարների համար մշակված մեթոդական ձեռնարկներ, կազմակերպվում են հավաք-հանդիպումներ (նաև՝ Երևանում) փորձի փոխանակման նպատակով: Նախարարությունը մշակել է նաև համապատասխան մեթոդական ցուցումներ համայնքի ղեկավարների գործունեությանը օգնելու համար¹:

Հայ ներուժի համախմբումը և դրա օգտագործումը Հայաստանի զարգացման համար

Վերջին տարիներին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված մասնագիտական համաժողովները սկիզբ են դրել այն մեծ գործին, որը կոչվում է Մփյուռքի կազմակերպում նաև ըստ մասնագիտությունների: Այսօր արդյունավետ գործում են իրավաբանների, ճարտարապետների, գրողների, լրագրողների, բժիշկների, բիզնեսմենների, ոսկերիչների, գիտնականների (ըստ տարբեր ուղղությունների) մասնագիտական ընկերակցությունները:

Մփյուռքի ներուժի համախմբումը պետական գործունեության կիզակետում է: Միայն Հայաստանի և Մփյուռքի գիտական, կրթական, մշակութային, ինժեներական, բիզնես ներուժի հնարավորությունների ներգրավմամբ և մեկտեղմամբ է հնարավոր երկիրը տանել դեպի առաջընթաց և զարգացում, ուստի հարկավոր է ստեղծել համահայկական ցանցեր, մասնագիտական հանձնախմբեր, ամրապնդել կապերը հայաստանյան մասնագետների հետ, միասնական ծրագրեր մշակել ու ներդնել և բոլոր հնարավորություններն օգտագործել Հայաստանի հզորացման համար:

Հայրենադարձությանը նպաստող ծրագրերի մշակում և հայրենադարձության խթանում

Հայաստանը եղել և մնում է համայն հայության հայրենիքը և գլխավոր հանգրվանը:

Հայաստանի ուժեղացումը պայմանավորված է նաև նրա ժողովրդագրական իրավիճակի փոփոխությամբ, հայրենադարձների թվի ավելաց-

¹ Առաջարկություններ համայնքային կառույցների գործունեությունը կազմակերպելու համար, մեթոդական ձեռնարկ (ա. տ. և ա. թ.), <http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2013/uxecujc-by%20Vahe.pdf>.

մամբ, հայրենիքի շենացման գործում առավել շատ հայերի ներգրավմամբ: Իրականացվող բոլոր ծրագրերը՝ տնտեսական զարգացումից մինչև զբոսաշրջության ընդլայնում, պետք է նպաստեն հայրենադարձությանը:

ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգը»¹, որում սահմանվող դրույթները վերաբերում են այն հայերին, որոնք ցանկություն կհայտնեն բնակություն հաստատել Հայաստանի Հանրապետությունում: Միյուրքի նախարարությունը մշակել է նաև «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծ² և իրականացվող բոլոր ծրագրերով ձգտում է նպաստել հայրենադարձությանը: Հայրենադարձությունը հայրենիքի հետ օտարաբնակ հայի կենսական և հոգևոր կապի դրսևորումն է, որը ներկա փուլում չի ընկալվում միայն իբրև հայրենիքում մշտապես բնակության հաստատում: Հայրենադարձության դրսևորումներ են նաև Հայաստանում գործունեություն ծավալելը, կարճաժամկետ աշխատանքներ կատարելը, բիզնես ծրագրեր իրականացնելը, բնակարան գնելը, տարեկան մի քանի անգամ Հայաստան ժամանելը, նաև տևական ժամանակով հայրենիքում ապրելը: Այսօր նման հայրենադարձ հայրենակիցներ շատ ունենք, և պետք է ջանալ, որ հայրենիքում իր անկյունն ու գործը ունենալու գաղափարը դառնա Միյուրքի գործարար շրջանակներում ամենատարածվածներից մեկը: Պետք է առաջնորդվել Հանրապետության Նախագահ պարոն Մերժ Սարգսյանի այն ուղերձով, որ հյուրանոցը հյուրի համար է, իսկ հայը Հայաստանում պետք է ապրի իր տանը և ոչ թե հյուրանոցում:

Համահայկական առաջնահերթությունների ձևակերպում

Հայերը Հայաստանում, թե Միյուրքում ունեն ընդհանրական նպատակներ, որոնք լուծելու համար է, որ պետք է համախմբվել, հստակեցնել համահայկական օրակարգը, համազգային առաջնահերթությունները, եղած բազում հիմնախնդիրներից ընտրել առավել կարևորները:

ՀՀ անկախության տարիներին համատեղ ուժերով, միմյանց օգնելով, պետություն է կառուցվել, ՀՀ-ն միջազգային իրավունքի սուբյեկտ է դարձել, Արցախում ժողովուրդն իր անկախ պետականությունն է կերտում: Հայաստանն անդամակցում է տասնյակ միջազգային կազմակերպությունների, որպես զարգացման ուղի է ընտրել ժողովրդավարությունը, սահմանադրորեն մարդուն ճանաչել է որպես բարձրագույն արժեք, ձևավորում է քաղաքա-

¹ Քաղվածք Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից (9 դեկտեմբերի 2010 թ., թիվ 48), Հայեցակարգ հայրենադարձության գործընթացի կազմակերպման, www.mindiaspora.am/res/3.../0.../HayecakargHayren.Nor.doc.

² Հայաստանի Հանրապետության օրենքը հայրենադարձության մասին, նախագիծ, <http://www.mindiaspora.am/am/Projects>.

ցիական հասարակություն: Փորձ է արվել այս գործընթացներում որքան հնարավոր է նպատակային և արդյունավետ օգտագործել սփյուռքահայության ուժերը: Սփյուռքն այսօր առավել մոտեցել է հայրենիքին, դարձել նրա առօրյայի մասը և փորձում է տարբեր ձևերով՝ նյութապես, բարոյապես սատարել Հայաստանին: Սակայն ԼՂՀ հիմնախնդիրը, շրջափակումը, արդարության, հանդուրժողականության պակասը, կոռուպցիայի հաղթահարման դանդաղ ընթացքը, կառավարման համակարգի անկատարությունը, մարզերի անհամաչափ տնտեսական զարգացումները էական խոչընդոտներ են Հայաստանի զարգացման համար:

Բ. Համահայկական առաջնահերթություններ, համազգային օրակարգ

Անկախության 25 տարիներին ավելի են բյուրեղացել համահայկական նպատակներն ու համազգային առաջնահերթությունները, որոնք ձևակերպման, հստակ բնորոշման կարիք ունեն: Հայաստան-Սփյուռք 4-րդ (2011 թ., սեպտեմբեր)¹ և 5-րդ (2014 թ., սեպտեմբեր)² համաժողովների ընթացքում (որոնց մասնակցում էին 1000-ից ավելի հայկական կառույցների ներկայացուցիչներ, բոլոր համահայկական կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև Հայաստանի և ԼՂՀ նախագահները, վարչապետները, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Հայ Կաթողիկե Պատրիարքը, Հայ Ավետարանական Եկեղեցու հովվապետը) մասնակիցները, ելնելով ժամանակի իրողություններից, միաձայն սահմանել են համահայկական առաջնահերթությունները, որոնք համազգային օրակարգի քննարկման նյութեր են, և հայ ժողովուրդն ու հայկական պետությունները գործակցաբար և ներդաշնակորեն պետք է իրականացնեն:

Հգոր և ապահով Հայաստանի կառուցումը

Մեր հայրենիքի առջև այսօր ծառացած են բազում ներքին, տարածաշրջանային և համաշխարհային մարտահրավերներ: Ակնհայտ է, որ դրանց հաղթահարման համար միասնաբար պետք է համախմբենք համայն հայության մտավոր, նյութական և կազմակերպական կարողություններն ու հնարավորությունները:

Հայաստանում արտագաղթի և աղքատության կրճատման կարևոր միջոցներ են ներդրումների ծավալների ավելացումը, գործարար միջավայրի

¹ Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով, 05.10.2011, <http://www.mindiaspora.am/am/Conferences/1652>: Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով. համաժողովի նյութեր, Երևան, 2011:

² Հայաստան-Սփյուռք 5-րդ համաժողով, 19.09.2014, <http://www.mindiaspora.am/am/Conferences/3418>.

բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը, գյուղատնտեսության, զբոսաշրջության, առևտրի, սպասարկման, տեղեկատվական տեխնոլոգիաների, սննդարդյունաբերության, հանքարդյունաբերության և այլ ոլորտներում ավելի մեծ թվով սփյուռքահայերի ներգրավումը և նրանց համար շահավետ գործունեության պայմանների ապահովումը: Բհարկե, Հայաստանի տնտեսական զարգացման ծրագիրը 2017-2022 թթ. կհաստատվի ՀՀ Ազգային ժողովում, որի մշակմանը, առաջնահերթությունների ճշգրտմանը պետք է ձեռնամուխ լինել այսօրվանից: Այդ անչափ կարևոր փաստաթղթի մշակման աշխատանքներում ճիշտ կլինի ներգրավել Սփյուռքի հայտնի մասնագետների, տնտեսագետների, խոշոր ընկերությունների ղեկավարների: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, որ մի խումբ հայրենասեր անձինք մշակեցին 2020 ծրագիրը, սակայն այն չդարձավ Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության հիմք: ՀՀ տնտեսական օրենսդրությունն ընդունելիս դեռևս չի կիրառվում Սփյուռքի փորձագիտական հնարավորություններից օգտվելու պրակտիկան, որը կարող էր մեծապես օգնել միջազգային չափանիշներին համապատասխան օրենսդրության մշակմանը՝ այդպիսով հայաստանյան տնտեսությունը առավել գրավիչ դարձնելով սփյուռքահայ ներդրողների համար: Սփյուռքի տնտեսագիտական մտքի օգտագործումը կարող է առաջնիչ ուժ դառնալ՝ Հայաստանում տնտեսական խնդիրների լուծման համար: Հետևաբար, սփյուռքյան կառույցները կարող են խնդիր դնել՝

- ամբողջովին հաշվառել հայկական ներուժը և այն ներգրավել հայրենիքի տնտեսության զարգացման ծրագրերում,
- խրախուսել, որ հայերն իրենց բանկային հաշիվները բացեն, տներ ունենան Հայաստանում,
- սկսել Մայր Հայրենիք այցելությունները իմաստավորելու և խրախուսելու հետևողական շարժում, նպաստել, որպեսզի օտարաբնակ հայերը, հատկապես երիտասարդները, առնվազն 2-3 տարին մեկ անգամ իրենց հանգիստն անցկացնեն Հայաստանում: «Այցելություն քրիստոնեական առաջին պետություն» կարգախոսով սկսել շարժում օտարների շրջանում՝ մեծացնելով հետաքրքրությունը Հայաստանի, նրա պատմության նկատմամբ և զարկ տալ զբոսաշրջությանը:

Հարկ է, որ համահայկական և համայնքային կազմակերպությունները վերանայեն իրենց ծրագրերն ու գործունեության ուղղությունները, շարունակեն ոչ միայն պատշաճ ձևով ներկայացնել Հայաստանը տվյալ երկրում՝ մշտապես ամրապնդելով նրա վարկն ու հեղինակությունը, պայքարեն հայապահպանության և Հայ դատի համար, այլև ակտիվացնեն Հայաստանի շուրջ հայության համախմբման աշխատանքները. հայկական ամեն մի կառույց կարող է հայրենիք բերել առնվազն մեկ ներդրումային ծրագիր: Միայն ներդրումների անընդհատ աճով, աշխատուժի ճիշտ օգտագործմամբ, շարունակաբար տնտեսապես հզորանալով է հնարավոր կառուցել ազատ և ապահով Հայաստան:

Արցախի անկախության և անվտանգության ապահովումը

Ակնհայտ է, որ հայ հանրությունը լիովին գիտակցում է իր պատասխանատվությունը Արցախի ժողովրդի ճակատագրի համար: Հայաստանում և Սփյուռքում հպարտանալով արցախցիների, մեր բանակի խիզախությամբ և տոկունությամբ՝ մեր բոլոր ջանքերը պետք է համախմբենք՝ նպաստելու Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հաստատման, Արցախի Հանրապետության ճանաչման և միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալու գործընթացին: Եղած մարտահրավերներին ավելացել է նաև տեղեկատվական պատերազմը: Թուրք-ադրբեջանական քարոզչամեքենան, լիովին անտեսելով բանականությունն ու տրամաբանությունը, տարածում է ապատեղեկատվություն, կեղծում և նենգափոխում է պատմությունը, սերմանում թշնամանք ու ատելություն, հասարակությանը պատրաստում պատերազմի՝ ապակայունացնելով իրավիճակը տարածաշրջանում: 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ Արցախի հարցում ժողովուրդը միշտ բռունցքված է, սատար է իր հզոր բանակին, զինվորագրված հերոս հայորդիներին:

Ողջունելի է, որ ՀՀ դիվանագիտական կառույցների և հայ լոբբիստների ջանքերով մի շարք երկրների նահանգային, քաղաքային իշխանություններ ճանաչել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը: Այդուամենայնիվ, այս գործընթացին պետք է նոր թափ հաղորդել, հասնել նրան, որ միջազգային հանրությունը հասցեական դատապարտի ադրբեջանական ագրեսիան և զսպի նրա ռազմատենչ նկրտումները:

Կազմակերպված Սփյուռք

Դարեր ի վեր Սփյուռքն ինքնակազմակերպվել է, և այդ գործում անգնահատելի դեր են կատարել նրա ավանդական կառույցները: Սակայն Սփյուռքն այսօր կարիք ունի առավել լուրջ կազմակերպման: Արդի շրջանում Սփյուռքի առավել արդյունավետ կազմակերպման հիմքում ևս անհրաժեշտ է դնել Հայ դատի խնդիրը, սակայն առավել ընդլայնված ձևաչափով: Այսօր Հայ դատի տարրերն են դարձել Արցախի անվտանգության և միջազգայնորեն ճանաչման ու անկախության հասնելու հիմնախնդիրները, Հայաստանի հզորացման ու ապահովության և, իհարկե, Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման համար պայքարը:

Հայաստանը պետք է աջակից դառնա չկազմակերպված համայնքների, նրա հատվածների կազմակերպման աշխատանքներին, նպաստի համայնքի ամրապնդման ջանքերին, որոնց կիզակետում պետք է լինեն կրթված հայերի տասարդությունը և մասնագետների համախմբումը համայնքային, մասնագիտական կառույցների շուրջ:

- Մփյուռքն առավել կազմակերպված դարձնելու համար անհրաժեշտ է՝
- Մփյուռքի կառույցներն ու կազմակերպություններն ավելի նպատակային դարձնեն իրենց ծրագրերը, դրանք փոփոխությունների ենթարկեն՝ ներկա իրողություններից ելնելով,
 - առավել մեծ թվով հայեր, նորեկներ և հատկապես երիտասարդներ ներգրավվեն կառույցների աշխատանքներում՝ թարմ շունչ հաղորդելով դրանց,
 - աշխատանքը համայնքի անդամների հետ լինի թիրախավորված՝ ըստ «հաջողակ» և «խոցելի» խմբերի, ըստ «հների» և «նորերի»,
 - հայկական կառույցները Հայաստանի, Արցախի պետական և ոչ պետական հաստատությունների հետ միասին առաջադրեն նոր ծրագրային մոտեցումներ՝ վերանայելու Հայաստան-Մփյուռք գործակցության ռազմավարությունը:

Հայոց լեզուն՝ որպես հայապահպանության կռվան

Հայոց լեզուն և հայ ազգային ինքնագիտակցությունը մեր ժողովրդի հավերժ գոյության ապահովման անհրաժեշտ պայմաններն են: Հայրենի կառավարությունը որոշակի աշխատանքներ է կատարում՝ Մփյուռքի հայկական դպրոցներին ու մշակութային օջախներին, հայկական կառույցների ներկայացուցիչներին գրականություն տրամադրելով, վերապատրաստման ծրագրեր իրականացնելով, հիմնախնդրին նվիրված գիտական քննարկումներ կազմակերպելով: Պատահական չէ, որ ՀՀ Նախագահը, դիմելով Մփյուռքին, առաջարկեց. «Տանը խոսենք հայերեն»: Ինչպես մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը կասեր. «Լեզուն մեր հայրենիքն է», Մուշեղ Բշխանը կավելացներ՝ «Հայոց լեզուն տունն է հայու աշխարհի չորս ծագերուն», իսկ մեծն անգլիացին՝ Ջորջ Բայրոնը, կգնահատեր. «Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է»¹: Այսինքն՝ մենք պետք է նաև հպարտանանք, որ ունենք նման բացառիկ լեզու, և՛ սերունդներին սովորեցնենք մեր ոսկեդենիկը:

Հայ Տունը կանգուն է իր չորս սյուներով՝ մայրենի լեզվով, հավատքով, մշակույթով և ընտանիքով: Պահպանենք, սրբացնենք հայոց լեզուն հայրենիքին հավասարազոր՝ որպես աստվածային լեզու, որպես ազգի ամբողջականության ու հավերժության երաշխավոր:

Հայոց ցեղասպանության համար պայքար. 100 տարի անց

Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման հարցը հստակ ամրագրված է Հայաստանի երրորդ Հանրապե-

¹ Մեր լեզուն. պատմություն, ասույթներ, բանաստեղծություններ, հղումներ, Երևան, 2013, [http://gradaran.mskh.am/sites/default/files/mer%20lezun%20\(2\).pdf](http://gradaran.mskh.am/sites/default/files/mer%20lezun%20(2).pdf).

տության արտաքին քաղաքականության օրակարգում: Ցեղասպանության 100-րդ տարելիցը պետականորեն նշելու, Մփյուռքը միավորելու ջանքերն ունեցան հսկայական նշանակություն:

Երբևէ այս հարցի շուրջ այդքան համակարգված և համակողմանի, այդքան նպատակային և միասնական աշխատանքներ չէին իրականացվել, որքան վերջին 2-3 տարում, և արդյունքում՝ Հայաստանի, Արցախի և Մփյուռքի ջանքերով ձևավորվեց հսկայածավալ շարժում՝ «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով:

ՀՀ Նախագահի գլխավորած՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի պետական, համահայկական հանձնաժողովի և 60-ից ավելի տարածաշրջանային հանձնախմբերի գործունեությունը նոր որակ հաղորդեցին Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացմանն ուղղված գործընթացներին: Այս ամենն ամփոփվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Համահայկական հռչակագրում¹:

Որպես քաղաքակիրթ ազգ՝ հայ ժողովուրդը հռչակագրում խորին երախտագիտություն հայտնեց բոլոր պետություններին, հասարակական-քաղաքական գործիչներին, բարեգործներին, միսիոներներին, որոնք մեր ժողովրդի բնաջնջման փորձից հետո ապահով տանիք և խաղաղ պայմաններ ստեղծեցին հայության համար, և ազգը վերընձյուղվեց, որոնք քաղաքական խիզախություն ունեցան ասելու ճշմարտությունը հայ ժողովրդի ցեղասպանության մասին:

Հայ ժողովուրդն առանձնակի շնորհակալ է նաև այն երկրներին ու միջազգային կազմակերպություններին, որոնք ճանաչել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված ամենատեսակի ոճրագործություն, և պահանջում են Թուրքիայից՝ ազատվել այդ ծանր բեռից, առերեսվել իր պատմությանը և ճանաչել ցեղասպանությունը:

Հիմք ընդունելով միջազգային փաստաթղթերը՝ այսուհետ ևս շարունակվելու է պայքարը յուրաքանչյուր հայի անհատական, համայնքային և, իհարկե, համազգային իրավունքների վերականգնման համար:

Հաշվի առնելով, որ Հայոց ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված միջազգային հանցագործություն է, որի ճանաչումն ու դատապարտումը չունի վաղեմության ժամկետ, ոչ միայն ջանքերն ուղղվում են արդարության վերականգնման, հայրենագրված ժողովրդի իրավունքների ճանաչման համար, այլև նպատակ է դրվում պայքարելու, որպեսզի

- այլևս երբեք և ոչ մի տեղ ոչ մի ժողովուրդ ցեղասպանության չենթարկվի,
- Թուրքիան ճանաչի և կրի ոճրի ողջ պատասխանատվությունը,

¹ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր, 29.01.2015, <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>.

- ցանկացած հայ՝ ծպտյալ կամ բռնի կրոնափոխված, կարողանա իրեն հայ հայտարարել՝ վերջ դնելով հոգեկան տառապանքներին, որոնց մինչ օրս շարունակումը ևս յուրօրինակ ցեղասպանություն է:

Հայոց ցեղասպանության ճանաչումը, դատապարտումը և հետևանքների վերացումը Հայաստանի և Սփյուռքի քաղաքական պայքարի օրակարգում են լինելու՝ այն հստակ գիտակցությամբ, որ համազգային դատի վերջնական լուծմանը հնարավոր է հասնել հայության բոլոր հատվածների միասնական ջանքերով՝ հիշելով և պահանջելով:

Հայ Եկեղեցու շուրջ համախմբում

Հայ Եկեղեցին դարեր շարունակ եղել և մնում է հայոց ոգու, հայ հավատքի, ազգային ինքնության պահպանման գրավականը, դարձել է մնայուն միջնաբերդ պետականությունը կորցրած ազգին հայ պահելու համար: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի բացառիկ առաքելություն հայ ժողովրդի կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և տարածման, ինքնության պահպանման գործում:

Մեր ժողովրդի համար անչափ կարևորվում է Հայ Եկեղեցու ամրապնդումն ու հետագա զորացումը՝ հանուն հայ ոգու և ազգային ինքնության հարատևման:

Արտակարգ իրավիճակներում հայտնված հայերի անվտանգության ապահովումը

Մեզ անհրաժեշտ են ոչ միայն Հայաստանում և տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում խաղաղություն և կայունություն, քանզի ամենուր ապրում են հայեր, և նրանց անվտանգության ապահովման խնդիրը լուրջ մարտահրավեր է Հայաստանի համար: Այսօր սիրիահայ համայնքի վիճակը դարձել է չամոքվող ցավ, բաց վերք: Երբեմնի հզոր, կազմակերպված մայր գաղութը արնահոսում է, քայքայվում: Այսօր Սիրիայում մնացել է շուրջ 25 հազար մարդ, իսկ Լիբանան, Հորդանան տեղափոխվել են 10-15 հազար հոգի, մի հատվածն էլ տեղափոխվել է Արևմուտք: Սիրիահայության 70 %-ից ավելին փախստական է դարձել, իսկ մնացածներն էլ պատերազմական իրավիճակում ամեն օր կորուստներ են կրում: Երախտագիտության են արժանի Հայ Եկեղեցու թեմերը, նրանց հովվապետերը, ինչպես նաև ավանդական կուսակցությունների ղեկավարություններն ու ՀԲԸՄ-ն, որոնց ջանքերով Սիրիայում գործում է «Շտապօգնություն» համախմբող կառույցը: Այն իր հովանու տակ է վերցրել բզկտվող ու քայքայվող համայնքի անդամներին՝ դառնալով հայերի նեցուկն ու օգնականը:

Շուրջ 22 հազար սիրիահայ տեղափոխվել է հայրենիք: Հայաստանի Հանրապետության իշխանության քաղաքական կամքի շնորհիվ ստեղծվել

են պայմաններ հայրենիքում հաստատված սիրիահայերի մատչելի կրթության, առողջապահության, զբաղվածության ապահովման, վերապատրաստման համար: Միրիայում և Հայաստանում ապրող մարդկանց հետևողական օգնություն են ցուցաբերում և լուրջ դերակատարություն ունեն Հայ Եկեղեցին, Մփյուռքը, միջազգային կառույցները: Ցավոք, տարբեր երկրներում (Իրաք, Ուկրաինա, Իրան) իրավիճակի սրումը տեղահան է անում մեր հայրենակիցներին, ուստի պետությունն ու Մփյուռքը հատկապես արտակարգ իրավիճակներում հայտնված հայերի պաշտպանն ու օգնականը պետք է դառնան: Մասնավորապես, ըստ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի՝ «Հայաստանը աղետի մեջ հայտնված յուրաքանչյուր հայորդու կողքին պետք է լինի աշխարհի բոլոր անկյուններում: Եթե նույնիսկ մեր հնարավորությունները չհերիքեն բոլորին ձեռք մեկնելու, մեր ջերմությունն ու սրտացավությունը պետք է տեղ հասնեն և նեցուկ դառնան նրանց»¹:

Աշխարհի տարբեր կողմերում հայի անվտանգության խնդիրն ամբողջ հայության խնդիրն է: Այսուհետ էլ պետք է շարունակել համակարգված օգնություն, նյութական և բարոյական օժանդակություն հասցնել Մփյուռքում և Հայաստանում ապրող սիրիահայերին, իրաքահայերին: Բոլոր հնարավոր միջոցները պետք է կիրառել մեր հայրենակիցներին Հայաստանում ինտեգրելու համար:

Այսօր սրանք են այն յոթ առաջնահերթությունները, որոնք ծառայած են Հայաստանի և հայ ժողովրդի առջև:

Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման հեռանկարները և անելիքները պահանջում են բազմավեկտոր գործունեության հստակ համակարգում:

Գործունեության 8 տարիների ընթացքում Մփյուռքի նախարարությունը կազմակերպել է 100-ից ավելի մասնագիտական համաժողով, գիտաժողով, հավաք-հանդիպում և կլոր սեղան-քննարկում, ստեղծել 13 համահայկական մասնագիտական ընկերակցություն, միություն և կազմակերպություն, որպեսզի ուժեղացնի մասնագետների կապերը միմյանց հետ, դրա արդյունքում ստեղծվեն Հայաստանի համար օգտակար ծրագրեր, կատարվեն ներդրումներ:

Հայաստան-Մփյուռք գործակցության հետագա զարգացումը պայմանավորված է այսօրվա հրամայականներով, դրանց ճիշտ ըմբռնմամբ, համադրմամբ և լուծմանն ուղղված գործողությունների հստակ և նպատակային իրականացմամբ: Գործունեության հեռանկարի գլխավոր ուղենիշը բոլոր կազմակերպությունների համար պետք է դառնա համազգային առաջնահերթություններին համապատասխան գործողությունների ծրագրի մշակումը,

¹ Նախագահ Սերժ Սարգսյանի բացման խոսքը ՀՀ Կառավարությունում հրավիրած խորհրդակցության ժամանակ, 15.09.2012, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2012/09/15/President-Serzh-Sargsyan-Government-meeting/>.

դրանց իրագործման համար աշխատանքի ճիշտ բաշխումը և յուրաքանչյուրի անելիքի հստակեցումը:

Հավելենք, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը, այլ գերատեսչություններ Հայաստան-Սփյուռք գործակցության պետական քաղաքականությունն իրականացնելու և ռազմավարական խնդիրներն առաջ տանելու նպատակով, խորհրդակցելով սփյուռքյան խոշոր կառույցների և կազմակերպությունների հետ, մշակում են ծրագրեր, իրականացնում ձեռնարկներ, որոնց աշխարհագրությունը, մասնակիցների թիվը, նպատակները տարեցտարի ընդլայնվում են:

Տարիների ընթացքում Սփյուռքում քննություն են բռնել տասնյակ ծրագրեր («Արի տուն» ծրագիր, «Իմ Հայաստան» համահայկական փառատոն, «Սփյուռք» ամառային դպրոց, «Մեր մեծերը» ծրագիր, Համայնքային դպրոցները դասագրքերով ապահովման ծրագիր, տարածաշրջանային ծրագրեր, Հայաստան տեղափոխված սիրիահայերի աջակցության ծրագիր և այլն)¹, որոնց բոլորի նպատակը հայապահպանությունն է և Սփյուռքի ներուժի օգտագործումը՝ ի նպաստ Հայաստանի հզորացման ու համահայկական օրակարգային խնդիրների լուծման:

Грануш Акопян – Развитие партнерства Армения-Диаспора: государственная политика (2008-2016)

В статье обобщенно представлена деятельность организаций, сформировавшихся после Геноцида армян и действующих во Второй Республике Армения в рамках сотрудничества с армянской Диаспорой. Подробно анализируется роль Третьей Республики Армения, представлены основные направления и принципы государственной политики в рамках сотрудничества Армения-Диаспора, а также панармянские цели и общенациональные приоритеты.

Hranush Hakobyan – Armenia-Diaspora partnership development: State policy (2008-2016)

The article briefly presents the activities of different organizations and structures established in the Second Armenian Republic that are carried out with the Armenian Diaspora formed after the Armenian Genocide. In this respect a thorough reference is made to the role of the Third Armenian Republic. It also presents the main directions and principles of the Armenia-Diaspora State policy, as well as the Panamanian objectives and national priorities.

¹ Ավելի մանրամասն տե՛ս <http://www.mindiaspora.am/am/Progams>.

ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ «ՏԱՐԵԳՐՔԻ» ԺԱՆՐԱՅԻՆ
ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր – տարեգիրք, ժամանակագրություն, տարեգրություն, Սմբատ Սպարապետ, ժանրային օրենքներ, ինքնատիպություն, ժամանակագրական հաջորդականություն, կառուցվածք, ոճ

Միջնադարյան պատմական երկերի ժանրային պատկանելության պարզաբանումը ժամանակակից միջնադարագիտության բարդ և վիճահարույց խնդիրներից է: Հայտնի է, որ միջնադարյան մատենագրության մեջ պատումային (նարատիվ) աշխատությունները գրի էին առնվում ըստ որոշակի ժանրային սկզբունքների¹, սակայն ժանրերի հստակ սահմանազատում, որպես այդպիսին, միշտ չէ, որ կատարվում էր: Արդյունքում ժանրերի փոխադեցության հետևանքով մեկ ժանրի տարրերն ու հատկանիշները կարող էին բնութագրական դառնալ նաև մեկ այլ ժանրի համար: Մյուս կողմից՝ բավականին բարդ է բացորոշել ստեղծագործության այն առանձնահատկությունները, որոնք թելադրված են երկի ժանրային օրենքներով, և այնպիսիք, որոնք պայմանավորված են հեղինակի մտակերտվածքով: Ուստի երկի ժանրային պատկանելության պարզաբանումը կարևորվում է թե՛ աշխատության համապարփակ ուսումնասիրության և թե՛ միջնադարյան հայ պատմագրության մեջ ժանրերի զարգացման ընթացքը ճիշտ գնահատելու տեսանկյունից:

Այս առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի ժամանակագրությունների ժանրային քննությունը: Ժամանակագրությունների ժանրը յուրօրինակ կապող օղակ է պատմությունների ու տարեգրությունների միջև և պարունակում է դրանց հատուկ որոշ ժանրային բնութագրիչներ, ինչը հաճախ շփոթի տեղիք է տալիս երկերի ժանրային դասակարգման հարցում: Նման շփոթի դասական օրինակներից է Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը», որի ժանրային առանձնահատկությունը ճիշտ ընկալելու համար հատուկ ուշադրության է արժանանում հատկապես երկի՝ ժանրային բնույթով կանխորոշված տիպաբանական առանձնահատկությունների լուսաբանման խնդիրը:

Ինչպես նշվեց, միջնադարյան հայ մատենագրության մեջ պատմական երկերը ստեղծվում էին ըստ որոշակի ժանրային օրենքների, որոնք, օրինակ, թելադրում էին կառուցվածքը: Շարադրանքը տրվում էր՝ հետևելով թեմա-

¹ Տե՛ս **Вайнштейн О.**, Западноевропейская средневековая историография, М., 1964, с. 103-110. Տե՛ս նաև «Словарь историка», ответственный редактор Н. Оффенштадт, составители Г. Дюфо, Э. Мазюреля, Н. Оффенштадт, М., 2011.

տիկ կամ ժամանակագրական մոտեցումներին: «Տարեգրքի» վերլուծությունը վկայում է, որ այն իր կառուցվածքային և ոճական լուծումներով անկասկած հարում է ժամանակագրությունների ժանրին:

Այսպես, երկի քննությունը ցույց է տալիս, որ իրադարձությունները գրի են առնված ժամանակագրական հաջորդականության սկզբունքով, ուր յուրաքանչյուր նոր հաղորդում սկսվում է «Ի թուին Հայոց ...» կամ «Ի թուին ...» բանաձևով: Տարեթվերի ներքո ներկայացվում են մեկ կամ մի քանի հաղորդումներ, որոնք առանձնանում են «Ի սոյն ամի», «Յայսմ ամի» մուտքերով: Այս նշումները «Տարեգրքում» ծառայում են ոչ միայն որպես ժամանակի ցուցիչներ, այլև՝ անցում մի հաղորդումից մյուսին: Ժանրի ընտրության հարցում հեղինակի նախապատվությունը նկատելի է աշխատության կառուցվածքային այլ հատկանիշներից նույնպես: Երկի «ենթաբաժինները» կրում են ոչ թե թեմատիկ, այլ ժամանակագրական բնույթի խորագրեր¹, ինչը ցույց է տալիս նաև, որ իրադարձությունների ներկայացման ժամանակագրական համակարգը գտնվել է հեղինակի հատուկ ուշադրության կենտրոնում:

Ինչ վերաբերում է «Տարեգրքի» բովանդակությանը, ապա այնտեղ հիմնականում ներկայացված են թագավորների, կաթողիկոսների, իշխանների մահվան, նոր կաթողիկոսների ձեռնադրման, թագավորների գահակալման, թագաժառանգների ու արքայազների ծննդյան, երկրաշարժերի, սովի, երաշտի, արևի խավարման, գիսաստղի հայտնվելու, իսկ ավելի հաճախ՝ պատերազմների, արշավանքների, ապստամբությունների, դաշինքների և քաղաքական ու ռազմական բնույթի այլ դեպքերի մասին պատմող հաղորդումներ:

Սկատենք, որ «Տարեգրքի» կառուցվածքային և թեմատիկ հատկանիշները բնորոշ են ոչ միայն ժամանակագրություններին, այլև տարեգրություններին: Դրանցում արձանագրված դրվագները, կախված ներկայացվող դեմքերից, ժամանակից և վայրից, թեև տարբեր են, սակայն հաղորդումների բնույթն ու կազմության ձևը նույնական են: Բանն այն է, որ կառուցվածքի և բովանդակության ընտրության հարցում ժամանակագիրներն ու տարեգիրները գործում են մեկընդմիջտ ընդունված եղանակով՝ ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնելով այս կամ այն պատմական դեմքի մահվանը կամ ծննդյանը, բնական աղետներին, երկնային երևույթներին, քաղաքական և ռազմական իրադարձություններին առնչվող դրվագներ: Ուստի այս ժանրերի նմանությունը առաջին հերթին պայմանավորված պետք է համարել դրանցում պատմական իրականությունը ներկայացնելու համար կիրառվող եղանակի ընդհանրությամբ: Սակայն, չնայած ժամանակագրությունների և տարեգրությունների միջև առկա կառուցվածքային և թեմատիկ անվիճելի նմանություններին, «Տարեգրքի» քննությունը թույլ է տալիս վեր հանել մի շարք քանակական և որակական հատկանիշներ, որոնք բացորոշում են նրա ժանրային ինքնատիպությունը:

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 48, 170, 229:

Սկսենք «Տարեգրքի» ձեռագրերի խորագրերից: Բրիտանական թանգարանում պահվող թիվ 5458 ձեռագրում Սմբատ Սպարապետի «Տարեգիրքը» վերնագրված է՝ «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպոլիս: Եւ Հայոց Մեծաց յայնմ ժամանակի ժամանակագրութիւն»¹: Մերոյ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 4584 ձեռագրում այն նույնպես կրում է «Պատմութիւն յունաց ի Կոստանդինուպոլիս եւ Հայոց Մեծաց յայնմ ժամանակի ժամանակագրութիւն»² խորագիրը, թիվ 1900 ձեռագրում՝ «Սմբատ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լևոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդոյ Աշոտայ Բագրատունոյ. շարակարգելով հասուցանէ մինչև ցթուականն ՉՇԸ ցօծումն նոյն Լևոնի Դ, որոյ էր սպարապետ»³, թիվ 4337 ձեռագրում՝ «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր սպարապետ Լևոն Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդոյ Աշոտայ Բագրատունոյ. շարակարգելով հասուցանէ մինչև ցթուականն ՉՇԸ ցօծումն նոյն Լևոնի Դ, որոյ էր սպարապետ»⁴: Հաջորդ՝ ՌԴ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Սանկտ Պետերբուրգի մասնաճյուղում պահվող Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» թիվ 40 ձեռագիրը կրում է «Պատմագրութիւն Հայոց, աշխատասիրեալ ի Սմբատայ սպարապետէ Լևոնի Դ արքայի Կիլիկիոյ Հայոց, որ առնու զսկիզբն ի չորս հարիւր թուականէն Հայոց՝ ի Գագկայ թագաւորէ որդոյ Աշոտայ Բագրատունոյ և շարակարգեալ հասուցանէ զթուականն ՉՇԸ, այն է ամ Տեառն 1329» խորագիրը⁵: Վենետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող թիվ 1261 ձեռագրում «Տարեգրքի» վերնագիրն է՝ «Սմբատ Սպարապետ, Պատմագիրք: Սոյն այս Սմբատ էր Սպարապետ Լևոնի Դ, արքայի տանն Կիլիկիոյ, գունդուստապլ անուանեալ: Սկիզբն առնէ սա ի չորս հարիւր թուականէն Հայոց ի Գագկայ թագաւորէն, որդոյ Աշոտայ Բագրատունոյ. շարակարգելով հասուցանէ մինչև ցթուականն ՉՇԸ ցօծումն նոյն Լևոն Դ, որոյ էր սպարապետ»⁶: Նմանատիպ խորագրեր ունեն նաև «Տարեգրքի»՝ Վիեննայի թիվ 104 (հին թիվ՝ 54 Ա)⁷, Չմմառի թիվ 469 (հին թիվ՝ ԾԶ)⁸, Երուսաղեմի թիվ 521¹, Փարիզի թիվ 229 (հին թիվ՝ 102)² ձեռագրերը:

¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, միկրոթապավեն թիվ 360, էջ 3:

² Նույն տեղում, ձեռագիր թիվ 4584, թ. 365բ:

³ Նույն տեղում, ձեռագիր թիվ 1900, թ. 2ա:

⁴ Նույն տեղում, ձեռագիր թիվ 4337, թ. 2ա:

⁵ Православный Палестинский сборник, вып. 104, Юзбашян К. Н., Армянские рукописи в Петербургских собраниях, Каталог, СПб., 2005, с. 138.

⁶ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, յօրինեց՝ Ն. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1996, էջ 291-294:

⁷ Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 376-377:

⁸ Ցուցակ հայերեն ձեռագրաց Չմմառի վանքի մատենադարանին, հատոր Բ, կազմեցին Ն. Ակինեան, Ն. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 66:

Դժվար չէ նկատել, որ վերնագիր ունեցող բոլոր ձեռագրերը, առանց բացառության, գրիչների (խմբագիրների) կողմից բնութագրվել են որպես «Ժամանակագրություն», «Պատմություն», «Պատմագիրք» կամ «Պատմագրություն», ինչը ինքնին վկայում է Սմբատ Սպարապետի երկին տրված ժանրային բնութագրման մասին: Ինչ վերաբերում է աշխատության ներկայիս անվանմանը, ապա այն ձեռագրական ավանդույթից իսպառ զուրկ է: Նախ Կ. Շահնագարյանը «Տարեգրքի»՝ իր ձեռքի տակ եղած ձեռագրերը հրատարակեց «Տարեգիրք Սմբատայ Սպարապետի» վերնագրով (1859 թ.)³, ապա շուրջ մեկ դար անց նրան հետևեց Ս. Ազյանը⁴: Նշենք, որ վերջինիս հիմքում դրված բնագիրը սկզբնապես եղել է անխորագիր, և միայն 1876 թ.՝ ձեռագիրը Վենետիկի Մխիթարյանների գրադարան տեղափոխվելուց հետո է այն ստացել 1308 թվահամարը և ձեռագրերի ցուցակում արձանագրվել՝ «Տարեգիրք Մատթ. Ուռհայեցույ եւ Կիլիկեցուց, ըստ Սմբատայ. ընտիր գրութիւն յելս ԺԳ դարու, պակաս ի սկզբան եւ ի վերջոյ ...»⁵ անվանումով: Ուստի միայն հրատարակիչների կողմից երկը որպես «Տարեգիրք» խորագրելը հիմք է դարձել վերջին վեց տասնամյակների ընթացքում հենց այդ անվանումով ճանաչում ձեռք բերելու համար: Հետագայում «Տարեգրքի» օտարալեզու՝ ֆրանսերեն և անգլերեն թարգմանություններում երկը ստացավ համապատասխանաբար «chronique» և «chronicle» (ժամանակագրություն) բնութագրումը⁶, ինչը միանգամայն համապատասխանում է «Տարեգրքի» ժանրային իրական նկարագրին: Երկի միայն ռուսերեն հրատարակությունները վերնագրվեցին «Летопись»⁷ (տարեգրություն): Նշենք, որ ռուսական պատմագրության մեջ այս ժանրի ստեղծագործությունները ընկալվում և բնութագրվում են որպես կոլեկտիվ բնույթի աշխատություններ, որոնք բաղկացած են յուրաքանչյուր տարվա «կարևոր» դեպքի կամ դեպքերի պարզ արձանագրումից, ուր հաղորդումների միջև բացակայում է տրամաբանական թեմատիկ կապվածությունը⁸: Ուստի «Տարեգրքի»

¹ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. երկրորդ, կազմեց՝ Ն. Պողարեան, Երուսաղեմ, 1967, էջ 522-527:

² Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, R. Kévorkian, A. Ter-Stépanian, Paris, 1998, p. 794.

³ Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859 (հրատարակիչ՝ Կ. Շահնագարեանց):

⁴ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956 (հրատարակիչ՝ Ս. Ազյան):

⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Զ, էջ 9-12: Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ Ժ:

⁶ La chronique attribuée au Connétable Smbat. Introduction, traduction et notes par Gérard Dédéyan, Paris, 1980. Smbat Sparapet's Chronicle, translated from classical Armenian by Robert Bedrosian, Long Branch, New Jersey, 2005.

⁷ **Смбат Спарпет**, Летопись, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Г. Галстяна, Ереван, 1974. История монголов по армянским источникам, заключающий в себе извлечения из трудов Вардана, Стефана Орбелиана и Конетабля Сембата, перевод и объяснения К. П. Патканова, вып. I, СПб., 1873.

⁸ Տե՛ս **Гимон Т. В.**, Ведение погодных записей в средневековой анналистике. (Сравнительно-историческое исследование). Автореф. канд. дисс., М., 2001.

ռուսերեն հրատարակությամբ, որպես հայերեն տարբերակի բառացի թարգմանության արդյունք, ռուսալեզու ուսումնասիրողին մեկ ժանրային բնութագրման ներքո ներկայացվել է մեկ այլ ժանրի ստեղծագործություն, թեև «Տարեգիրքը» էապես տարբերվում է տարեգրությունների ժանրի երկերից:

Տարեգրությունները, որպես կանոն, աչքի են ընկնում հաղորդումների հակիրճությամբ¹, որը նրանց՝ ժամանակագրություններից տարբերակող, թերևս, ամենաբնութագրական արտաքին հատկանիշն է: Մինչդեռ «Տարեգրքում» նկարագրվող իրադարձությունները բավական ընդարձակ են: Ստույգ տարեթվերի ու փաստերի պարզ արձանագրումից զատ, այն պարունակում է դեպքերի և դեմքերի նկարագրություններ ու գնահատականներ: Բերենք մեկ օրինակ. ԶԺԲ (1263) թվականի ներքո հեղինակը շուրջ երեք էջի սահմանում պատմում է թուրքմեն-կարամանների պետության և Կիլիկիայի հայկական թագավորության զորքերի միջև ընդհարումների մասին²: Սմբատ Սպարապետը նշում է, որ «անօրէն այն Խարաման» (Կարաման Իբն-Նուրա-Սուֆի, 1256-1261 թթ.), դարանակալելով մի «մացառուտ և դժնեայ, քարակոյտ և անձուկ որպէս խողովակ» տեղում, նետաձգությամբ սկսեց խոցել հավատացյալներին: Երբ այս լուրը հասավ արքային (Հեթում Ա), «արիագոյնքն» հասան կռվի վայր և փախուստի մատնեցին «զանօրէնսն»: Ապա հեղինակը հավելում է, որ կարաման ամիրան հետ դարձավ ամոթով, իսկ մի քանի օր անց «սատակեցաւ ի խոցուածէն անօրէնս այն»: Ընդարձակ շարադրանքով և նկարագրողական տարրերով են ներկայացված «Տարեգրքի» քաղաքական պատմությանն առնչվող բազմաթիվ այլ դրվագները ևս³: Ծավալային առումով հաղորդումները «Տարեգրքում», անշուշտ, տարբեր են: Դրանում կան նաև համառոտ բնույթի տեղեկություններ: Հեղինակը հատկապես հակիրճ է ներկայացնում բնական աղետների, երկնային երևույթների, ինչպես նաև կրոնաբարոյական բնույթի հաստատումները: Սակայն նման օրինակները փոքրաթիվ են և որպես կանոն՝ պայմանավորված հեղինակի նվազ հետաքրքրությամբ:

Իրադարձությունների ծավալային և նկարագրողական բնութագրիչներից զատ «Տարեգրքում» առկա է իրադարձությունների թեմատիկ ընդհանրությունը: Հաղորդումների միջև թեմատիկ հետևողականությունը բնորոշ է «Տարեգրքի» հատկապես այն հատվածներին, որտեղ դրվագները հյուսվում են մեկ հերոսի կամ մեկ իրադարձության շուրջ: Նման օրինակներից են 1212-1219 թթ. ներքո արձանագրված տեղեկությունները. *«Եւ յորժամ եղև թուական հայոց ՈԿԱ եղև կատարեալ սէր ընդ թագաւորն Լեւոն և ընդ կա-*

¹ Տե՛ս **Մարգարեան Հ.**, Միջնադարեան հայ պատմագրութեան բնութագրական գծերը եւ պարբերացումը // «Հանդէս ամսօրէայ» (այսուհետև՝ «ՀԱ»), 2014, էջ 271-316:

² Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 238-240:

³ Նույն տեղում, էջ 220-221, 222-223, 232-233, 234-235, 235-237, 245-249, 249-251 և այլն:

թողիկոսն տէր Յոհանէս...»¹, «Ի թուին ՈԿԳ ետ թագաւորն Լեւոն գրուստրն իւր զԸնդիթայն թագաւորին Երուսաղէմի Ընէճուանին...»², «Ի թուին ՈԿԵ յամսեանն փետրուարի ժդ Տեանն ընդառաջին, էառ թագաւորն Լեւոն զԱնտիոք արուեստիւ և իմաստութեամբ...»³, «Չայսու ժամանակաւ եղել թագաւորին Լեւոնի դուստր, և...»⁴, «Իսկ յորժամ էառ (Լևոն Մեծագործը) զԱնտիոք Քայքաուզ սուլտանն յԻկոնիոյ խոռվեցաւ ընդ նմա, և...»⁵, «Իսկ ի թուին ՈԿԸ ետ թագաւորն Լեւոն զբերդն Լուլուա և Լօզատի...»⁶, «Ի սոյն ամի եկն կաթողիկոսն տէր Յոհանէս առ թագաւորն Լեւոն և զՀռոմկլայն ետ ի ձեռն նորա...»⁷, «Եւ մինչդէռ էր թուական ՈԿԸ պատահեաց ախտ հիւանդութեան թագաւորին Լեւոնի...»⁸ և այլն: Դժվար չէ նկատել, որ նշված բոլոր հաղորդումները վերաբերում են Լևոն Մեծագործի գործունեությանը: Կամ՝ 1261-1269 թթ. ներքո հեղինակը անբաժան շղթայով ներկայացնում է Հեթում արքայի ծավալած քաղաքական և ռազմական գործունեությունը⁹, մեկ տարեթվի տակ գրի առնելով մեկից ավելի տեղեկություններ. «Ի թուին ՉԺԲ թագաւորն Հայոց Հեթում գնաց յԱնտիոք սիրոյ աղագաւ առ ի տես քաղաքին...»¹⁰, «Ի սոյն ամի յամսեանն յունիսի, ճանապարհ արարեալ թագաւորն Հեթում գնաց յարեւելս առ Հուլայուն իսանն...»¹¹, «Ի թուին ՉԺԳ թագաւորն Հեթում զօրածողով արար զգօրս իւր և բազում ռամիկ հետեւակօք արշաւեաց ի գաւառն Հալպայ...»¹², «Ի սոյն ամի դարձեալ ժողով արար Հեթում և գնաց ի վերայ բերդին Անթփայ...»¹³ և այլն:

Այս հաղորդումները, պայմանավորված թեմայի ընդհանրությամբ, միավորվելով որոշակի ընդհանուր առանցքի շուրջ, ձեռք են բերում հաջորդական և կապակցված շարադրանքի բնույթ: «Տարեգրքի» այս հատվածների թեմատիկ ընտրությունը, անշուշտ, բացատրվում է հեղինակի անհատական մոտեցմամբ և ինքնատիպ է յուրաքանչյուր երկի համար, սակայն նյութի ներկայացման եղանակը որպէս այդպիսին տիպական է ժամանակագրությունների ժանրի համար¹⁴:

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 218:

² Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 218:

³ Նույն տեղում, էջ 219:

⁴ Նույն տեղում, էջ 220:

⁵ Նույն տեղում, էջ 221:

⁶ Նույն տեղում, էջ 222:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, էջ 237-251:

¹⁰ Նույն տեղում, էջ 241:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 242:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տե՛ս օրինակ, **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 260-262, 306-309, 312-315, 335-341 և այլն:

«Տարեգրքի» ժանրային ինքնատիպության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև հեղինակային գնահատման համակարգը: Հեղինակը թեև իր բնութագրումներում, ի տարբերություն իր գլխավոր սկզբնաղբյուր Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրության», ցուցաբերում է «զսպվածություն» և «չեզոքություն», սակայն հերոսների նկարագիրը կառուցում է ժանրին բնորոշ միևնույն՝ հակադրության եղանակով: «Տարեգրքի» քննությունը ցույց է տալիս, որ այնտեղ բնութագրումներն ու գնահատականները տրված են հերոսներին մեղադրելու և կամ ընդհակառակը՝ առաքինությունները ներբողելու հակվածությամբ: Այս սկզբունքով են կառուցված, օրինակ, Թորոս Բ իշխանի և Մանուել Ա Կոմնենոս կայսեր¹, Մլեհի և Թորոս Բ-ի², Ռուբեն Գ-ի և Լևոն Մեծագործի³ և այլ հերոսների և նրանց ծավալած գործունեության նկարագրերը: Այս հակադրությունը, որը, ըստ էության, բխում է միջնադարյան մտածողությանը բնորոշ չարի ու բարու վերաբերյալ անփոփոխ հայացքներից, թերևս պայմանավորված ժամանակի հոգևոր, բարոյական պատկերացումներով, ի սկզբանե ներդրված է ժամանակագրություններում: Նկատենք, որ այս տեսանկյունից ժամանակագրությունները նմանվում են պատմությունների ժանրին: Պատմիչները նույնպես դիմում են նկարագրման և գնահատման նույն եղանակին և հատկապես այն դեպքերում, երբ ցանկանում են ընդգծել իրենց համակրանքն ու հակակրանքը այս կամ այն պատմական դեմքի նկատմամբ: Ժամանակագրություններում ևս դեպքերն ու դեմքերը նկարագրելու և գնահատելու այս եղանակն է, որ հնարավորություն է ընձեռում անսխալ եզրակացություններ անել հեղինակի հայացքների և քաղաքական ու գաղափարական դիրքորոշման մասին:

«Տարեգրքի» ժանրային հատկանիշներից է նաև հերոսների ճառերի և երկխոսությունների մեջբերումը: Պատմական իրականությունը ներկայացնելու այս եղանակը, որը նույնպես բնորոշ է պատմությունների ժանրին, աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ: Եթե պատմություններում որպես կանոն դա հեղինակների կողմից հաճախ կիրառվող գրական հորինվածք է⁴, որն ունի շարադրանքը հարստացնելու և ընթերցողին հետաքրքիր դարձնելու նպատակ, ապա «Տարեգրքին» բնորոշ է նաև հերոսների խոսքի բառացի վերարտադրման հակվածությունը: Օրինակ՝ Սմբատ Սպարապետը, պատմելով կարամանների ասպատակությունների մասին, մեջբերում է Կոստանդին Պալլի՝ Հեթում արքային ուղղված խոսքերը. «...*յարուցեալ գնասցես վաղվադակի ի վերայ այդր պատուիրանաց, զի յառաջ լուայ զհամբաւ վերանալոյ նորա, և երկրորդ զգորացն քոց կոտորումն որ ի Սաւրիա, և*

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 164-182:

² Նույն տեղում, էջ 186-187:

³ Նույն տեղում, էջ 192-223:

⁴ **Մարգարեան Հ.**, նշվ. աշխ., էջ 271-316:

երկնչէի թէ գուցէ երկրորդ Սալահատին յայտնեցաւ, բայց երբ զայդ պատուէր լուայ գոր յղեաց առ քեզ՝ գնա համարձակ, զի Աստուած տալոց է գնա ի ձեռս քո»¹: Կամ՝ ներկայացնելով Հեթում արքայի կողմից Այնթափի գրավման անհաջող փորձը՝ հեղինակը գրում է. «Որ և անդ ուն ֆռանկ Սարդին անուն, բժիշկ վիրաց, որ էր պատուած ի թագաւորէն, խօսեցաւ առ արքայն և մեծամեծսն որք ժողովեալ էին և խորհէին, ... ով արքայ և իշխանք, յայսմ զիշերի արտաքոյ օթեցարուք ի խորանացոյ և ապա խորհեցարուք զդառնալն յետս և զկալն»² և այլն: Այս, ինչպէս նաև երկի ինքնուրույն հատվածում տեղ գտած այլ օրինակներ դժվար է գրական հորինվածք համարել: Նախ՝ հեղինակը այս դեպքերի մասնակիցն է ու ակնատեսը, ով անմիջական կապ է ունեցել արքայի և նրա ձեռնարկած ռազմական գործողությունների հետ: Մյուս կողմից՝ նկատենք, որ հեղինակը հերոսների խոսքերը գրի է առնում հստակ, առանց պատկերավոր այլևայլ ընդմիջարկումների՝ կարևորելով նրանց փաստական կողմը, ինչն իր հերթին բնութագրական է ժամանակագրությունների համար և պայմանավորված է տվյալ ժանրի կանոններով:

«Տարեգրքի» ժանրային առանձնահատկություններից հարկ է նշել նաև հեղինակային «անանունությունը»: Երկի բովանդակության քննությունը ցույց է տալիս, որ հեղինակը չի ձգտում ինքնադրսևորման. նա նախընտրում է տալ գնահատականներ դեպքերին և դեմքերին, սակայն՝ լռել իր խնդիրների, նպատակի և սկզբնաղբյուրների մասին: Արդյունքում այս կամ այն իրադարձության և հերոսի բնութագրումներում նկատելի են դառնում հեղինակի անձն ու ներկայությունը, բայց ոչ նրա ինքնագնահատականը: Հեղինակի այս վարքագիծը անխոս իր անհատական մոտեցման և ոճի ինքնատիպության դրսևորումներից է, սակայն այստեղ որոշակի ազդեցություն ունեն նաև երկի ժանրային օրենքները: Հայտնի է, որ ժամանակագիրները, ժանրի ավանդույթի համաձայն, առաջնորդվում էին հետևյալ սկզբունքով՝ նախորդի աշխատությունը յուրօրինակ հենք էր ծառայում հաջորդի համար՝ շարունակելու և գրի առնելու իրեն ժամանակակից դեպքերի և դեմքերի պատմությունը³: Իսկ շարադրման այս եղանակի կիրառման դեպքում հեղինակի ներկայությունը դառնում էր նվազ նկատելի: Բացի այդ, արտագրելով սկզբնաղբյուրի հաղորդումները՝ ժամանակագիրը ձգտում էր նաև հնարավորինս բառացի փոխանցել այն: Արդյունքում հեղինակային «ես»-ը ժամանակագրության սկզբից իսկ հայտնվում էր հետին պլանում: Ուստի «Տարեգրքին» հատուկ «անանունությունը» բխում է ոչ միայն հեղինակի անհատական դիրքորոշումից, այլև պայմանավորված է ժամանակագրությունների շարադրման ինքնատիպ ավանդույթով:

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 239:

² Նույն տեղում, էջ 243:

³ **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, Աղամից մինչև 1176 թ., աշխատասիրությամբ Կ. Մաթեոսեանի, Երևան, 2014:

Սակայն նկատենք, որ ժամանակագրությունները, որպես կանոն, նյութի կառուցվածքի հարցում լինելով համանման, միանգամայն տարբեր են իրենց նպատակադրումներով ու գործառնություններով: Ուստի օրինաչափ է այն հարցը, թե ինչու է ստեղծվել Սմբատ Սպարապետի ժամանակագրությունը: «Տարեգրքի» բովանդակային վերլուծությունը վկայում է, որ այն անպայման նախատեսված է եղել ընթերցողների որոշակի շրջանակի համար: Հեղինակի մտահղացման շատ թե քիչ միտումնավոր լինելը նկատելի է նախ և առաջ աշխատության քաղաքական հատվածում, ուր, փոխանցելով իր սկզբնաղբյուրի հաղորդումները, հեղինակը թեև աննկատ, սակայն որոշակի «հավելում-հապավումների» միջոցով իրագործում է այն խնդիրը, որը հետապնդում է:

Այսպես, «Տարեգրքի» գլխավոր սկզբնաղբյուրի, ինչպես նաև ժանրային պատկանելության տեսանկյունից խոշոր ժամանակագրության հեղինակ Մատթեոս Ուռհայեցին նշում է, որ իր աշխատությունը կարծես թե գրի է առնում աստծո հրամանով¹, որպեսզի մարդիկ մտածեն և հիշեն ամենաբարձրյալի սոսկալի պատժի մասին «յորժամ տացէ Տէր Աստուած զխոստացեալսն յետին ժամանակին» և «յորժամ տացէ Աստուած հաւատացելոց զժամանակն՝ որ լի իսկ իցէ ամենայն ուրախությամբ»²: Մինչդեռ Սմբատ Սպարապետին միանգամայն օտար են Մատթեոս Ուռհայեցու՝ երկի ստեղծման աստվածային նախախնամության, մարդկանց մեղքերին ու աստծո պատժին առանցքային դեր հատկացնելու շարժառիթները: Նրա ուշադրության կենտրոնում են քաղաքական անցուդարձերը: Նա միտումնավոր հապավում է սկզբնաղբյուրի կրոնաբարոյական հաղորդումները և հակառակը՝ ամբողջությամբ և գրեթե բառացի փոխանցում նրա՝ քաղաքական պատմությանը վերաբերող դրվագները: Այս ամենը վկայում է այն մասին, որ հեղինակը երկը շարադրելիս ղեկավարվում է հենց քաղաքական բնույթի հաղորդումների ներկայացման առաջնահերթությամբ: Սակայն նկատենք, որ այստեղ նույնպես ընտրողական մոտեցում ցուցաբերելով՝ հեղինակը գրեթե բառացի փոխանցումներով և հավելումներով առանձնացնում է իր հերոսների՝ Գագիկ Բ Բագրատունու, Թորոս կյուրոպաղատի, Թորոս Բ իշխանի և այլոց ինքնատիպ բնութագրումներն ու նրանց շուրջ ծավալված իրադարձությունների նկարագրությունը: Ինչ վերաբերում է աշխատության ինքնուրույն հատվածին, ապա այստեղ հեղինակն իր հաղորդումների առանցքում դնում է Ռուբինյան, ապա նաև Հեթումյան գահակալների քաղաքական պատմությունը, որով իսկ նկատելի է դարձնում երկի նպատակը: Այն, որ հեղինակը առաջին հերթին շարադրում է հենց նրանց պատմությունը, նկատելի է ոչ միայն երկի ինքնուրույն հատվածի բովանդակությունից, որում ընդգրկված դրվագները գրեթե բացառապես վերաբերում են Լևոն Մեծագործ, Հեթում Ա

¹ **Մատթեոս Ուռհայեցի**, նշվ. աշխ., էջ 278: Վենետիկի Մխիթարյան գրադարան, ձեռագիր թիվ 887, թ. 136 Բ:

² Նույն տեղում, էջ 277-278:

և Լևոն Գ (1269-1289) արքաներին և նրանց ծավալած գործունեությանը, այլև հաղորդումների կառուցվածքից: Երկի քննությունը ցույց է տալիս, որ հաղորդումները հիմնականում սկսվում են «Ի թուին... թագաւորն Լեւոն...»¹, «Ի թուին... Հեթում արքայն...»² կամ «Ի թուին... արքայն Հայոց Հեթում...»³ և նմանատիպ այլ ներածականներով⁴: Արդյունքում «Տարեգիրքը» ձեռք է բերում պաշտոնական թագավորական ժամանակագրությունների բնորոշ հատկանիշներ: Ուստի կարելի է ենթադրել, որ ամենին պատահական չէ երկի քաղաքական մասում թե՛ որոշակի անհատների նկատմամբ հեղինակի հատուկ վերաբերմունքը և թե՛ աշխատությունը Աշոտ Գ Բագրատունու թագադրումից սկսելու նրա ընտրությունը:

Այսպիսով, եթե Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» յուրօրինակ զեկույց է ահեղ դատաստանի օրվա համար, ապա Սմբատ Սպարապետի «Տարեգիրքն» իր հորինվածքով, բովանդակությամբ և քաղաքական ու գաղափարական ուղղվածությամբ պաշտոնական ժամանակագրություն է, որը միջնադարյան ընթերցողը պետք է ընկալեր և հիշեր հեղինակի իր հերոսների և նրանց շուրջ ծավալված իրադարձությունների համապատասխան բնութագրումներով:

Татевик Атаян – О жанровой принадлежности “Летописи” Смбага Спарапета

«Летопись» Смбага Спарапета, в отличие от своего названия, стоящего вне рукописной традиции, однозначно относится к произведениям жанра хроники. Основой для такого вывода послужил анализ структурных и стилистических особенностей содержания «Летописи». Анализ, выявив некоторые своеобразия, характерные для жанра хроники, решает проблему жанровой принадлежности произведения. Более того, как показала экспертиза композиции, политической и идейной направленности «Летописи», она является официальной хроникой истории Киликийского армянского царства в XIII в.

Tatevik Atayan – On the Genre of Smbat Sparapet's “Almanac”

Smbat Sparapet's “Almanac”, as opposed to its rubric devoid of manuscript tradition, is ranked among the series of works of chronicle genre. This conclusion is based on the investigation of the structural and stylistic features of the content of the “Almanac”. Revealing the idiosyncrasies of the chronicle genre, the analysis of the “Almanac” uncovers the problem of the genre of the work of art. Moreover, as the study of the political and ideological orientation of the “Almanac” shows it is an official chronology of the history of the XIII century Armenian Kingdom of Cilicia.

¹ Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 208, 213, 218:

² Նույն տեղում, էջ 229:

³ Նույն տեղում, էջ 231:

⁴ Նույն տեղում, էջ 234, 237, 241, 242, 249:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՕՍՄԱՆԵՐԵՆ ԵՐԿԼԵԶՈՒ
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
(ԸՍՏ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐԱԲԱՏԱՌ ԶԵՌԱԳՐԱՖՈՆԴԻ ՈՒՇ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՕՍՄԱՆԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ)

Բանալի բառեր – պարսկերեն-օսմաներեն բառարաններ, *Ֆարհանգ*, *ձեռագիր*, *կրթական գործիք*, *Մատենադարան*, «*Լուդաթ-ի Նի՛մաթուլլահ*», «*Դակայեկ ալ-հակայեկ*», «*Թուհֆե-յի Շահիդի*», «*Թուհֆե-յի Վեհբի*»

Միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանները¹ (*Ֆարհանգները*) երևան են եկել մշակութային ու ուսումնական նպատակներով և եղել են ուսումնական-կրթական, թարգմանական-բացատրական բնույթի երկեր: *Ֆարհանգները* գրվել են XIII-XIV դարերից սկսած և միտված էին Օսմանյան կայսրությունում ուսուցանելու պարսկերեն և այդ լեզվի հասկապես այն քերականական կարգերը, որոնք կիրարկելի էին նաև օսմաներենի քերականության համար: Այս երկերը միջնադարյան կրթական համակարգում յուրահատուկ գործիքներ էին, որոնցով ոչ միայն ուսուցանվել է պարսկերենը, այլև օսմաներենում արմատավորված պարսկերեն ու դրա միջոցով օսմաներեն մուտք գործած արաբերեն բառապաշարը: *Ֆարհանգների* միջոցով, մասնավորապես այն աշխատությունների, որոնք ներառում էին նաև քերականական մաս, սկիզբ դրվեց թուրքերեն քերականական եզրույթների ստեղծման ու մասամբ գիտական լեզվի առաջացման գործընթացին:

Պարսկերենի իմացությունը եղել է թուրքական միջնադարյան կրթության ու գրագիտության անբաժանելի և, նույնիսկ կարելի է ասել, պարտադիր նախապայմանը: Հին անատոլիական թուրքերենը պարսկերենի ազդեցությամբ տարրական շփման լեզվից վերաճեց գրական լեզվի մակարդակի: Սկսած Մամանյանների շրջանից՝ նոր պարսկերենը դարձել էր միջտարածաշրջանային շփման լեզու՝ *lingua franca*, իսլամական մշակույթն ընդգրկող մի տարածքի համար: Այն մշակութային յուրահատուկ շփման միջոց էր և շարունակվեց մինչև XIX դար: Պարսկերենի և պարսից պոեզիայի ազդեցության սկիզբը թուրքերենի և թուրքական գրականության վրա ժամանակագրորեն համընկնում է պարսից վերածննդի ժամանակաշրջանին՝ XI դար,

¹ Ուսումնասիրվող ձեռագիր-բառարաններում հեղինակները *օսմաներենը* անվանում են *թուրքերեն* (türki):

իսկ XIII դարը փոքրասիական թյուրքական պետությունների պատմության մեջ հայտնի է որպես մշակութային իրանականացման շրջան: XVI դարում օսմաներենը Օսմանյան կայսրության վարչական լեզուն էր, գրական և հայեցակարգային դրսևորման միջոցը, սակայն պարսկերենն ու պարսից պոեզիան շարունակում էին մնալ առաջատար դիրքերում: Շարունակվում և բուռն զարգացում էր ապրում պարսկերենի ուսուցման ու պարսից պոեզիայի տարածման ու արժևորման գործընթացը, որի հետ սերտորեն կապված էր պարսկերեն-թուրքերեն բառարանագրությունը: XVI-XVII դդ. Օսմանյան կայսրության տարածքում պարսկերենի իմացությունը բնութագրվում է հետևյալ կերպ. թուրք բնակչությունը շատ հաճախ չէր տիրապետում պարսկերենին կամ պարսկերեն գիտեր միայն խոսակցական մակարդակով, ուստի այն որպես գրականության լեզու անհասկանալի էր:

Երկու դեպքում անհրաժեշտ էին այնպիսի աշխատանքներ, որոնք պետք է օգնեին հասկանալ պարսից պոեզիան, խոսել ու ճիշտ գրել պարսկերենով: Այդ իսկ պատճառով *Ֆարհանգներն* օտագործվում էին *մեղրեսեներում*, նաև ձեռնարկներ էին ստեղծագործող, գիտության ու կրթության մարդկանց համար. մասնավորապես, սկսնակ պոետները պետք է տիրապետեին պարսկերենի բառային ու քերականական նրբություններին՝ պարսից պոեզիան ճիշտ ըմբռնելու և իրենց ստեղծագործություններում օգտագործելու համար: Օսմաներենում արմատավորված էր պարսկական մեծածավալ բառապաշար, բառակազմական երևույթներ, որոնք բացատրելու և հասկանալու համար անհրաժեշտ էին թուրքերենով գրվող բանասիրական աշխատություններ: Պարսկերենը այնքան էր հագեցրել օսմաներենը, որ Բ. Գ. Ֆրագները այն բնութագրել է «կառուցվածքային առումով նոր պարսկերենի դուստր լեզու»¹:

Պարսկերեն-թուրքերեն բառարանների գրչության վայրը եղել է գլխավորապես Օսմանյան կայսրությունը: Սկսած վաղ շրջանից՝ 1279 թ., երբ կազմվեց առաջին «Սըհահ ուլ-‘աջամ» («*Şihāhu'l-‘Ajam*») բառարանը², մինչև Իբրահիմ Օլգունի և Ջեմշիդ Դրահսանի պարսկերեն-թուրքերեն բառարանը («*Farhang-e fārsī-torkī*», 1967 թ.)՝ դրանց երկու երրորդը գրվել է Թուրքիայում³: Սույն հոդվածում ներկայացվող Մատենադարանի ձեռագիր երկլեզու բառարանները ևս գրվել են ներկայիս Թուրքիայի տարածքում:

¹ Stéu **Fragner B. G.**, *Das Persische als Hegemonialsprache in der islamischen Geschichte: Überlegungen zur Definition eines innerislamischen Kulturraums // "Turcologica" (Turkic-Iranian Contact Areas: Historical and Linguistic Aspects)*, Bd. 62, Wiesbaden, 2006, S. 47.

² Առաջին պարսկերեն-օսմաներեն բառարանը՝ արաբերենով և թուրքերենով գրված պարսկերենի քերականությանը վերաբերող հատվածով, տե՛ս **Turan F.**, *Adventures of a mediaeval language book into modern times: Persistence of Şihāhu'l-‘Ajam in Ottoman language learning and its textual problems // "Turcology and Linguistics"*, Éva Ágnes Csató Festschrift, Ankara, 2014, p. 431-441.

³ Stéu **Sāme'i H.**, *Dictionaries // EIr.*, vol. VII, fasc. III, p. 395.

Միջնադարյան երկլեզու բառարանները գրելու մեթոդաբանությունը

Միջնադարյան պարսկերեն-թուրքերեն բառարանները գրվում էին արդեն ձևավորված և հարուստ ավանդույթ ունեցող պարսից բառարանագրության սկզբունքներն օգտագործելով¹: Միջնադարյան պարսից բառարաններն ունեին մեթոդաբանական առանձնահատկություններ. դրանք ոչ միայն բացատրական, թարգմանական, հանրագիտարանային բնույթի էին, այլև հատկանունների, հոմանիշների ու հակահիշների, ինչպես նաև տաղաչափական բառարաններ էին: Մրանով են հիմնավորվում նաև *Ֆարհանգները* գրման կարևորությունն ու դրանց պահանջարկը միջնադարյան հասարակությունում. դրանք տեղեկատու և ուսումնական ձեռնարկներ էին, գրական գործերի մեկնություններ: *Ֆարհանգները*, թերևս շատ քիչ բացառությամբ, չէին բավարարվում միայն բառի բացատրությունը ներկայացնելով. անպայման տրվում էին բառօգտագործման դեպքերը գրական ստեղծագործություններում՝ մեջբերելով հատվածներ: Դրանց ներառած գեղարվեստական կտորների ամբողջությունը յուրօրինակ անթուղգիաներ են²:

Երկլեզու ուսումնական բառարանագրության մեթոդաբանության մեջ ընդունված էր նաև բացատրվող բառերը առանձնացնել ըստ խոսքիմասային պատկանելության՝ անվանական (*asāmī*) և անորոշ դերբայական (*mašādir*): Բառարանները, որոնք ընդգրկում էին թե՛ բացատրական այս բառացանկերը և թե՛ քերականական բացատրությունները, կոչվում էին համընդհանուր՝ *jāme*³:

Քերականական նյութի ընդգրկումը *Ֆարհանգներում* վկայում էր դրանց ուսումնական նշանակության մասին³: Պարսկերեն-թուրքերեն *Ֆարհանգներում* դրանք տարբեր կերպ էին ընդգրկվում՝ առանձին բաժիններով կամ բառահոդվածներում: Հեղինակները քերականական բաժնում քննարկում էին նաև արտասանական խնդիրներ՝ հնչյունների գրության ու արտասանության ձևերը: XVI դ. արդեն օսմաներեն մուտք գործած պարսկերեն և արաբերեն բառապաշարը ենթարկվում էր թուրքական արտասանական հարմարեցման՝ քմայնացման և ետնաքմայնացման⁴:

¹ Տե՛ս **Baevskii S. I. and Perry J. R.**, Early Persian Lexicography *Farhangs* of the Eleventh to the Fifteenth centuries, tr. by N. Killian, Global Oriental LTD, 2007, p. 151:

² Միջնադարյան *Ֆարհանգներում* գրական ստեղծագործությունների օրինակներով բառերի բացատրությունների հիմնավորումը ձևավորված ավանդույթ էր. օր.՝ *Sams-i Faxrī* -ն իր *Mi'yār-i Jamālī* բառարանում բառերի վկայաբերումներ տալիս է հենց իր քասիդներից, *Sihāh al-furs*-ի հեղինակը օրինակներ է բերում իր հոր ստեղծագործություններից: Բառարաններում առավել հղված պարսից դասական հեղինակներն են՝ Նիզամի, Ռուդաքի, Ֆիրդոսի, Ունսուրի, Աբու Շաքիր, Հաֆեզ, Սաադի և այլք: Տե՛ս **Baevskii S. I. and Perry J. R.**, նշվ. աշխ., էջ 127-134:

³ Քերականական նյութի ընդգրկումը պարսկական *Ֆարհանգներում* սկզբնավորվել է XI դարից: Դրա առաջին նմուշն է *Farhang-i Ja'farī*-ն (1040/1630-31 թթ.):

⁴ Տե՛ս **Stein H.**, Palatal-velar vocalism of Arabic-Persian loanwords in 16-th century Ottoman Turkish // “Turcologica”, 2006, Bd. 62, S. 144-145:

Կառուցվածքային առումով միջնադարյան բառարաններին հատուկ առաջաբանների կառուցվածքը՝ աստծուն ուղղված փառաբանությունները, *Ֆարհանգը* գրելու դրդապատճառներն ու շարժառիթները՝ ո՞վ և ինչու՞ պատվիրեց կամ առաջարկեց գրել այդ աշխատությունը, *Ֆարհանգների* ցանկը, օրինակ են դարձել տվյալ գործը գրելու համար: Որոշ դեպքերում նշվում էին նաև աշխատանքի բովանդակությանը վերաբերող հարցեր:

Ուշմիջնադարյան բառարանները գրվում էին արձակ և չափածո (nisāb): Չափածո բառարանագրությունը երկու նպատակ էր հետապնդում՝ ուսուցողական և գեղարվեստական: Դրանք գործածվում էին հիմնականում *մեղրեսեններում*՝ անգիր սերտելու միջոցով օտար բառապաշարը, չափածո խոսքի հանգավորումը սովորելու համար: Տաղաչափորեն չափածո բառարանները պոեմներ՝ *մեսնեվիներ* էին՝ բաժանված «քրթաների» ու «բահիրների» (ոտանավորի չափեր): Այս բառարանների առաջացումը պայմանավորված է եղել պարսից դասական գրականության տարածվածությամբ, որի նմուշներին, մեկնությանն ու բացատրությանն են նվիրվել չափածո բառարանները: Միջնադարյան գրքի ձևաչափը թույլ չի տվել գրքում արձանագրել այդ բացատրություններն ու մեկնաբանությունները, և այդ հանգամանքը նպաստել է կազմելու ձեռագիր-բառարանների առանձին հատորներ: Պարսկերեն-թուրքերեն նման բառարանները, որոնք բանաստեղծությունների միջոցով բացատրում և ուսուցանում են պարսկական որևէ գրական ստեղծագործության բառապաշարը և ի ցույց դնում տաղաչափական օրենքներ, արժևորվել են նաև որպես բանասիրական աշխատություններ և ունեն մեկնություններ, որոնք հայտնի են *serh* (մեկնություն) անվամբ: Այս երկերը ուսուցողական նշանակության հետ մեկտեղ ունեին գրական-գեղարվեստական մեծ արժեք և սովորաբար ընդգրկվում էին գրական ստեղծագործությունների հետ նույն ձեռագիր ժողովածուներում (*mejmu'a*):

Բառարանների ընդօրինակումների սեղմ հիշատակարանները հազեցած էին կարևոր տեղեկություններով, ինչպես են՝ գրչի, կազմողի (երբեմն նաև՝ նորոգողի) կենսագրական տվյալները, ընդօրինակման գրչության, նորոգման կամ գնման հանգամանքները, ընդօրինակումը կատարելու ժամանակին առնչվող տվյալները: Մակայն պարսկերեն-թուրքերեն բառարանների ընդօրինակումներից շատերը չունեն նման հազեցվածությամբ հիշատակարաններ, և դա բացատրվում է դրանց դասագրքային ու ուսուցողական նշանակությամբ: Հաճախ բառարաններն արտագրվել են գրագետների, *մեղրեսենների* ուսուցիչների կողմից սեփական օրինակն ունենալու և դրանով դասավանդալու համար, որոնք հարկ չեն համարել ընդօրինակման հիշատակարանում թողնել իրենց անունը: Սրանով է պայմանավորված նաև միջնադարյան երկլեզու բառարանների բազմաթիվ ընդօրինակումների առկայությունը, որոնք այսօր պահվում են նաև աշխարհի տարբեր ձեռագրաֆոնդերում:

Մատենադարանի միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանները

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում (այսուհետ՝ ՄՄ) պահվող պարսկերեն-օսմաներեն երկլեզու *ֆարհանգները* XVI-XVIII դարերի ընդօրինակումներ են: Դրանք այս ժամանակաշրջանն արտացոլող մշակութային միջավայրի վկաներ են: Կառուցվածքային առումով արձակ ու չափածո երկեր են և հավաքված են առանձին հատորներում ու ժողովածուներում: Երկերի ընդօրինակումների լուսանցքներում սեփականատերերի կողմից արված նշումները, լրացումները, գրչափորձերը փաստում են դրանց կիրառական նշանակությունը, որն առաջին հերթին ուսումնական-կրթական է: Այդ ձեռագրերից մի քանիսը, մասնավորապես չափածոները, որոնք կարևոր են գրական, գեղարվեստական տեսակետներից, ընդօրինակվել են գեղանկարչական հարդարանքով՝ մանրանկարներով, խորաններով, կաշեպատ կազմով և ամենայն հավանականությամբ ունեցել են նաև «*առևտրային*» նշանակություն:

1. Արձակ բառարաններ

1.1 ՄՄ արաբատառ ձեռագրերի հավաքածուի հ^ա133 ձեռագիրը Նի՛միթուլլահ իբն Ահմադ իբն Ղազի Մուբարաք ալ-Ռումիի (մահ. հիջրայի 969/1561-2 թ.) պարսկերեն-թուրքերեն (գրված 947 /1540-1 թ.) հայտնի «Լուդաթ-ի Նի՛մաթուլլահ» (“*Luḡat-i Ne‘ematullah*”, «Նիմաթուլլահի բառարան») բառարանի ընդօրինակումն է¹: Այն ունի հիշատակարան, որից հայտնի է դառնում, որ գրիչը Ջաբար իբն Փիր Ահմադ ալ-Ռազ Ռումին է, իսկ ընդօրինակումը կատարվել է 1105/1693 թ.: Հիշատակարանը (էջ 237բ)²

قد تمت الكتاب بعون الله الملك الوهاب هذه العنة الشريفة نعمت الله بن احمد بن مبارك الرومي رحمة الله عليه عن يداضعف الضعيف جهابر بن پيراحمدالارض رومي غفر له ولوالديه في يوم الثلاثاءى وقت العشاء و ماه جمادى الاولى لسنة خمس و مائة بعدالالف من هجرة النبوية صلى الله عليه و سلم سنة ١١٠٥ .

Ձեռագիրը 238 թերթ է²: Արձակ բառարան է՝ միասյուն գրությամբ, գրված մասի ձեռագրատեսակով: Ընդօրինակման 003բ-004բ էջերում առաջաբանն է՝ վերը նշված կառուցվածքով, որտեղ հիշվել են երկը կազմելիս օգտագործված «Օքնում-ի ‘Աջեմ» (*Oqnum-i ‘Ajem*) (որից պատճենվել է կառուցվածքը), «Սըհահ ուլ-‘աջամ» (“*Shihāhu’l-‘Ajam*”) և Լութֆուլլահ Հալիմիի (*Luṭfullāh*

¹ Բառարանի մասին տե՛ս **Paul de Lagarde**, *Persische Studien*, Dieterische Verlags-Buchhandlung, 1884, S. 53-55; **Öz, Y.**, *Tarih boyunca Farsça-Türkçe Sözlükler*, Ankara, 2010, s. 156-160: Հնագույն ընդօրինակումներից տե՛ս *Catalogue des manuscrits persans* (Ancien fonds persan de la B. N.; par **Francis Richard**) Paris, 1989, Persan n° 195, 196, 197, 200, 205, 206; Suppl: turc 265 à 272, 561, 568 et 1347; **Flügel G.**, *Die arabischen, persischen, türkischen Handschriften, der k. u. k. Hofbibliothek zu Wien, v. 1* Georg Olms, Hildesheim-New York, 1977, S. 132, n° 128; S. 137 n° 134-5 և այլն:

² Տե՛ս **Kostikyan K.**, *Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran*, Yerevan, 2017, p. 69:

Ḥalīmī) ու Հասան Իբն Հուսեյն Իբն ‘Օմադ Քարահիսարիի (Hasan Ibn Huseyn Ibn ‘Omād Qarahisāri) բառարանները (004ա):

«Լուղաթ-ի Նի‘մաթուլլահ» բառարանը միջնադարյան բառարանագրության տեսակները՝ *asāmī*, *maṣādir*, ներառող աշխատություն է՝ *jāme‘*: Բացատրական հատվածը բաժանված է ըստ խոսքի մասերի և միջարկված քերականական հատվածով: 020ա - 026բ էջերում ձևաբանությանը նվիրված բաժինն է՝ «Ղա‘եդե-ի զաբան-ե ֆարսի»/«*Qā‘ede-i zabān-i fārsī*», «Պարսից լեզվի քերականություն»)՝ ուղղախոսական, բառակազմական, ձևաբանական բացատրություններով, որոնք հիմնավորվում են գեղարվեստական գրականությունից չափածո օրինակներով: Բառերի դասավորությունն ըստ հաջորդող ձայնավորի է՝ երկար *u*, կարճ *u*, *ē*, *o*՝ առանձնացված ենթավերնագրերով:

1.2 ՄՄ արաբատառ ձեռագրերի հավաքածուի հ^տ196 ձեռագիր-ժողովածուն ընդգրկում է Քեմալ Փաշազադեի (մահ. 1533 թ.) երկու աշխատությունները՝ օսմաներեն «Ռեսալե-ի Յա-յի ֆի լիսան ալ-ֆարսի» (“*Risāle-i yā-yi fi lisān al-fārsi*” «Տրակտատ պարսկերենի յա-ի մասին») և «Դակայեկ ալ-հակայեկ» (“*Daqāiq al-ḥaqāiq*”, «Ճշմարտության մանրամասները») գլոսարիան¹: Առաջին երկը բառարանային բնույթի չէ, սակայն նվիրված է պարսկերենի -ī բառակազմական ձևային քննությանը և փաստորեն իր նյութով փաստում է XVI դարում պարսկերենի և դրա ուսուցման ու ուսումնասիրման կարևորությունը:

«Դակայեկ ալ-հակայեկ» գլոսարիան ընդգրկված է ժողովածուի 027ա – 174ա էջերում: 174 ա էջում հիշատակարանն է՝

٩٧٢ هـ

որից պարզ է դառնում, որ բանասիրական այդ երկը ընդօրինակվել է 1564/5 թ., սակայն ընդօրինակողի անունը չի նշվում:

«Դակայեկ ալ-հակայեկը» պարսկերեն հոմանիշ և նույնանուն բառերի գլոսարիա է՝ օսմաներեն բացատրություններով և հիմնավորված պարսից դասական գրականությունից մեջբերված բեյթերով, քրթաներով՝ Ֆիրդուսի, Սաադի, Հաֆեզ, Նիզամի և այլք²: Իր տեսակով այն համապատասխանում է հայ բառարանագրության մեջ «Բառք գովասականք» բառարանատեսակներին, որոնք քննել են գովասանական բառեր ու դարձվածներ՝ քաղված ճարտասանական, քերթողական ու խոսքի բարձրարվեստ երկերից: «Դակայեկ ալ-հակայեկը» բաղկացած է հազեցած բառահոդվածներից, որտեղ քննարկվող բառերի հետ զուգահեռ անդրադարձ կա դրանց ածանցավոր ու բարդ ձևերին, բառակազմական առանձնահատկություններին, բերված գեղար-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 87-88: Բառարանի ընդօրինակումներից տե՛ս **Flügel G.**, նշվ. աշխ., էջ 130-132, n° 127, n° 128, **Rieu Ch.**, Catalogue of Persian Manuscripts in British Museum, Vol. II, publ. by the Trustees of the British Museum, 1966, p. 514ab (Add.7887), **Дмитриева Л. В.**, Каталог тюркских рукописей Института Востоковедения Российской Академии Наук, М., 2002, № 846, с. 229 և այլն:

² Տե՛ս **Paul de Lagarde**, նշվ. աշխ., էջ 37-38; **Öz** 2010, նշվ. աշխ., էջ 148-153:

վեստական հատվածում հանդիպող այլ միավորների և այլն: Առանձին բառահոդվածներում քննարկվում են, օրինակ, պարսկերեն՝ *bozorgdašt li donīd* «ողջույն», *nīk o nīkū* «լավ, բարի», *angešt li axgar li ātaš li āzar* «կայծ, կրակ», *deh li dehqān li kand li rustā* «գյուղ, բնակավայր», *xāme li kelk* «գրիչ», *abraš* «խալերով ձի» և *šabdīz* «սևաթույր ձի» և այլ բառամիավորներ, մոտ 400 բառ:

Այս աշխատության բնույթն ու կառուցվածքը վկայում են, որ այն կատարել է ուսումնական ձեռնարկի դեր, գործածվել է *մեղրեսեներում* և սկսնակ բանաստեղծների կողմից, որոնք ուսումնասիրել են պարսից պոեզիան և դրա նրբությունները իրենց ստեղծագործական գործընթացում:

Գլոսարիան հրատարակված չէ՝ չնայած ձեռագրերի բազմաթիվությանը, սակայն դրա տրամադրած նյութը աղբյուրագիտական ու պատմական նշանակություն ունի պարսկերեն և թուրքերեն բառագիտության ոլորտում (գլոսարիայի գիտական ուսումնասիրությունը՝ հիմնված այս ընդօրինակման նյութի վրա, ընթացքի մեջ է):

2. Չափածո բառարաններ

2.1 «Թուհֆե-յի Շահիդի» («*Tuhfe-i Šahidi*» «*Շահիդի ընծան*») պարսկերեն-օսմաներեն բառարանը (921 թ./1514 թ.), որը Ջալալ ադ-դին Մուհամմադ Բալխիի (XIII դար) «*Մասնավիյե մա'նավի*» ստեղծագործության բառապաշարն ընդգրկող երկ է, թուրքագիտության մեջ թերևս ամենաշատ ուսումնասիրված և պատճենված աշխատանքներից է¹: Այն ընդգրկված է ՄՄ արաբատառ ձեռագրերի ֆոնդի երկու ժողովածուների՝ հ^մ 741, հ^մ 937 և մեկ հատորի՝ հ^մ325 մեջ²: Հ^մ741 եռալեզու՝ պարսկերեն-թուրքերեն-արաբերեն ձեռագիր ժողովածուի 108բ – 127ա էջերը զբաղեցնում է «Թուհֆե-յի Շահիդի» բառարանը՝ բաղկացած 22 քրթաներից: Ժողովածուն կազմվել է 1196-7 թ./1781-2 թ. Անկարայում, գրիչը Մուհամմադ ալ-Մա'րաշին է: Հ^մ937 ժողովածուն, ըստ հիշատակարանի (047բ), գրվել է ավելի շուտ՝ 1033 թ./1623-4 թ., գրիչն է Ամիդ ալ-Հուսեյնը: Այս ձեռագիր-ժողովածուում գրիչը Ֆարիդ ադ-դին Աթթարի «Փանդնամ» ստեղծագործությունից հետո՝ 027բ – 047ա էջերում, զետեղել է բառարանը՝ բաղկացած 21 քրթայից: Հիշագրերը հուշում են, որ ձեռագրում կան հավելյալ բեյթեր՝ *almalhaq*: Ընդօրինակումն առանձնանում է աշխատան-

¹ Տե՛ս **Paul de Lagarde**, նշվ. աշխ., էջ 8-9; 29-30, **Kılıç A.**, Türkçe-Farsça Manzum Sözlüklerden Tuhfe-i Şahidi (Metin) // “Turkish Studies International Periodical For the Languages”, “Literature and History of Turkish or Turkic”, vol. 2/4, Fall 2007, s. 516-548: Բազմաթիվ ընդօրինակումներից տե՛ս **Flügel G.**, նշվ. աշխ., էջ 135, n° 131, S. 136, n° 132: Տե՛ս նաև **Rieu Ch.**, նշվ. աշխ., էջ 513b-514a (Harl. 5494) և այլն:

² ՄՄ-ում պահվող հ^մ937, 741, 55, 983 ընդօրինակումների մասին տե՛ս **Ավետիսյան Ա.**, Մատենադարանի պարսկերեն-թուրքերեն բառարանները // Հայագիտական և իրանագիտական երկրորդ միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2011, էջ 148-167:

քային տեսքով. լուսանցքներում հավելված են պակասավոր բեյթերը, տրված են բացատրություններ ու մեկնաբանություններ, որոնց վերջում, ըստ ամենայնի, հավելողի անունն է (?): «Թուհֆե-յի Շահիդի» բառարանի ամբողջական ընդօրինակումն է հ^մ325 ձեռագիրը, որի գրիչն է Մուսթաֆա Նաթիֆը: Բաղկացած է 24 թերթից՝ գրված նասիխ ձեռագրատեսակով: Ձեռագրի գեղարվեստական ձևավորումը վկայում է, որ այն ունեցել է գեղագիտական նշանակություն, գուցե նաև՝ «սոնետրային» նպատակ: Ձեռագիրն ունի առավել լիակատար տեսք՝ նախաբան, 27 քրթա, *աբջադուլ*/հաշվարկված թվական¹:

2.2 Պարսկերեն-օսմաներեն մյուս չափածո բառարանը, որը պահվում է Երևանի Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդում, XVIII դ. գրված «Թուհֆե-յի Վեհբի» («Tuhfe-i Vehbi», «Վեհբիի ընծան») բառարանն է²: Այն ներառված է հ^մ55 ձեռագիր ժողովածուի մեջ, իսկ հ^մ 983-ն առանձին ընդօրինակում է³:

Հ^մ55 ձեռագիր ժողովածուում (073բ-096ա էջերում) բառարանը գետեղված է XVII դարի իրանցի բանաստեղծ Սաիբ Թաբրիզիի դիվանից հետո: Բառարանն ունի 57 քրթա, 201 բեյթանոց մեկ մասնավի և 5 բեյթանոց *թարիհ*, ըստ որի՝ հեղինակը այն գրել է 1196/1781-2 թ.: Հայտնի է հ^մ55 ժողովածուի գրիչի անունը՝ Մայիդ Մուհամմեդ Լաթիֆի (096ա), սակայն ընդօրինակման ժամանակը տրված չէ: Մյուս ընդօրինակումը հ^մ 983 առանձին հատորն է, որն ունի 57 քրթա: Ժամանակի և գրչի մասին տեղեկություն չկա:

Կարելի է հավաստել, որ XVIII դարում գրված այս բառարանով ավարտվում է պարսկերեն-օսմաներեն երկլեզու միջնադարյան չափածո բառարանագրության պատմությունը:

Միջնադարյան պարսկերեն-օսմաներեն երկլեզու բառարանների նյութի քննությունը և ժամանակի լեզվական փոխառնչությունների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ պարսկերենը բավականին մեծ ազդեցություն ուներ օսմաներենի վրա պարսկական բազմաթիվ միավորներ ու նաև դրա միջոցով միջնորդավորված արաբերեն բառեր մուտք էին գործել թուրքերեն և դարձել դրա բառապաշարի մի մասը: Այս բառարաններն ու բանասիրական բնույթի աշխատությունները ուղղված էին պարսկերենի, պարսից պոեզիայի և օսմաներենի պարսկական բառաշերտի ուսումնասիրմանն ու յուրացմանը: Մատենադարանում պահվող ձեռագիր բառարանները այս ոլորտն ուսումնասիրելու աղբյուրագիտական նյութ են ապահովում:

¹ Տե՛ս նկարագրությունները **Kostikyan K.**, նշվ. աշխ., հ^մ 741-էջ 237, հ^մ 937-էջ 243, հ^մ 325-էջ 134-135:

² Այս բառարանի մասին տե՛ս նաև՝ **Kılıç A.**, Türkçe-Farsça Manzum Sözlüklerden Tuhfe-i Vehbi (Metin) // Turkish Studies International Periodical For the Languages, “Literature and History of Turkish or Turkic”, vol. 2/2, Spring 2007, s. 410-475; **Öz Y.**, Tuhfe-i Vehbi Şerhleri // İlmî Araştırmalar S. 5, İstanbul 1997, s. 219-232; **Paul de Lagarde**, նշվ. աշխ., էջ 33: Ընդօրինակումները տե՛ս **Flügel G.**, նշվ աշխ., էջ 143-44, n° 141; **Rieu Ch.**, նշվ. աշխ., էջ 515b (Add. 7687):

³ Տե՛ս նկարագրությունները **Kostikyan K.**, նշվ. աշխ., հ^մ 55-էջ 30-31, հ^մ 983-էջ 249:

Асмик Киракосян, Ани Саркисян – *Средневековые двуязычные персидско-османские словари как инструменты образования (на основе персидско-османских словарей рукописного арабоязычного фонда Матенадарана)*

Средневековые двуязычные персидско-османские рукописные словари – памятники, имеющие важное историко-культурное значение. Они представляют значительную ценность с точки зрения изучения истории сферы образования и школы, учебной литературы, научных принципов и восприятия времени, связи персидского и турецкого языков, культурных связей персидского и турецкого народов. Словари отражают картину образовательных и научных исследований того времени, методологии, языковых изменений. Представленные словари и филологические труды, копии которых находятся в арабоязычном фонде Ереванского Матенадарана им. М. Маштоца, выполняли функцию средневекового учебника по изучению персидского языка и литературы. Они обобщают такие исторические и культурные реалии, которые не сохранились в других источниковедческих работах. Данные работы – источники, представляющие сферы средневекового естествознания и образования.

Hasmik Kirakosyan, Ani Sargsyan – *Medieval Persian-Ottoman Bilingual Dictionaries as Educational Tools (According to Persian-Ottoman Dictionaries of Matenadaran's Arabic Script Codices)*

The Medieval Bilingual Persian-Ottoman dictionaries are considered to be monuments of historical and cultural importance. They are of considerable value in terms of school education, academic literature, scientific principles and perceptions of the period, as well as in the sphere of research of historical and cultural ties between the two nations and the two languages. The dictionaries reflect the image of educational and scientific research of the period, methodology and changes in the language structure. The analysed dictionaries and philological works which are kept in the Depository of the Arabic Script codices in the Institute of Ancient Manuscripts – the Matenadaran, are of great importance and function as medieval textbooks for the study of the Persian and Turkish languages and literature. They summarize historical, cultural realia which are not preserved in other sources and are considered to be sources of medieval lexicology and education.

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԿՐՈՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI ԴԱՐՈՒՄ

Բանալի քառեր – ժողովրդագրական քաղաքականություն, էթնոկրոնական քաղաքականություն, Օսմանյան կայսրություն, Արևմտյան Հայաստան, միլլեթների համակարգ, սյուրգյուն, գլխահարկ, դեշիրմե, փենչիք, բռնի կրոնափոխություն

Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում XVI դարում և XVII դարի առաջին կեսին աչքի են ընկել մի շարք առանձնահատկություններով, որոնք պայմանավորված են եղել հիմնականում Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև մղվող պատերազմներով, ինչպես նաև նրանց կողմից վարվող ժողովրդագրական քաղաքականությամբ: Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանում ժողովրդագրական գործընթացների տարբեր դրսևորումների արդեն իսկ անդրադարձել ենք մեր մի քանի հոդվածներում¹ և սույն ուսումնասիրության մեջ ներկայացնում ենք Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականության² հիմնական առանձնահատկություններն Արևմտյան Հայաստանում:

Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականությունը Հայաստանում ի սկզբանե ունեցել է որոշակի առանձնահատկություններ, քանի որ հայերին դիտում էին իբրև այլադավանների, որոնք հայրենի հողում

¹ Տե՛ս **Մալխասյան Մ.**, Օսմանյան կայսրության և Սեֆյան տերության առաջացումն ու հզորացումը. ժողովրդագրական գործընթացների ազդեցությունը XVII դարի հայ ազատագրական մտքի վրա // «Պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ», Երևան, 2015, էջ 9-33, *նույնի՝* Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2016, թիվ 1, էջ 94-104, *նույնի՝* Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺՁ դարում // «Էջմիածին», 2016, թիվ Դ, էջ 52-72, *նույնի՝* Օտար էթնիկական ներթափանցումները Հայաստան XVI դարում // «Պատմություն և մշակույթ», 2016, էջ 140-149:

² Ներկայումս ժողովրդավարական երկրների կրոնադավանական ազատությունների պայմաններում կրոնական քաղաքականությունը ժողովրդագրական քաղաքականության բաղադրիչը չէ, սակայն Օսմանյան կայսրության կրոնական քաղաքականությունն ուներ էթնիկ պատկանելությունն ընդգծող դրսևորումներ, և միաժամանակ ազգային հարցերի հիմքում շեշտվում էր կրոնադավանական պատկանելությունը, ուստի «կրոնական քաղաքականություն» եզրույթի փոխարեն նախընտրել ենք օգտագործել «էթնոկրոնական քաղաքականություն» եզրույթը:

ակնհայտ մեծամասնություն էին կազմում: Սուլթան Մեհմեդ Բ Ֆաթիհի (1444-1446, 1451-1481) օրոք Օսմանյան կայսրությունում կազմակերպվել է կրոնադավանական համայնքների՝ միլլեթների համակարգ¹, որը թուրքամետ ուսումնասիրողները ներկայացնում են որպես «դրական» երևույթ²: Դրա անհրաժեշտությունը բխում էր նրանից, որ անգամ էգեյան և Մարմարա ծովերի առափնյա քաղաքներից շատերում քրիստոնյաները կազմում էին բնակչության մեծամասնությունը: Նշենք նաև, որ XVI դարում ևս բոլոր խոշոր քաղաքներում կային հույների, հայերի, հրեաների և այլ ժողովուրդների խոշոր համայնքներ³: Միլլեթների համակարգը կրոնամշակութային ներհամայնքային սահմանափակ ազատություն ունենալու հնարավորություն էր ընձեռում⁴: Այդ համակարգի տրամաբանությունից էր բխում նաև 1461 թ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության ստեղծումը, որը բնականաբար ուներ նաև այլ պատճառներ, որոնք մեր ուսումնասիրության առարկան չեն: Առաջին հայացքից թվում է, թե այս ամենը կարող էր նպաստել Օսմանյան կայսրության կողմից աստիճանաբար նվաճվող Արևմտյան Հայաստանում հայ բնակչության իրավունքները հաշվի առնելուն, սակայն օսմանյան իշխանությունների գործադրած մանկահավաքչության և բռնագաղթերի քաղաքականությունը վկայում է բոլորովին այլ դիրքորոշման մասին:

XV դարում Օսմանյան կայսրությունում արմատավորվեց «սյուրգյունային» (բռնագաղթերի) քաղաքականությունը: Այն կրում էր մե՛րթ զանգվածային, մե՛րթ նպատակային բնույթ: XV դարի երկրորդ կեսին բալկանյան տարբեր քաղաքներից և Կեսարիայից հայ արհեստավորներ են տարվել Կոստանդնուպոլիս, իսկ սյուրգյունի համակարգը վերածվել է օսմանյան պետական զանգվածային վերաբնակեցման քաղաքականության⁵: 1473 թ. Դերջանում Ուզուն Հասանի նկատմամբ տարած հաղթանակից հետո Մեհմեդ Ֆաթիհն Էրզրումի, Երզնկայի, Բաբերդի, Տըրքիկի, Սեբաստիայի, Դիարբեքիի և այլ վայրերի հայ արհեստավորների բռնի տեղափոխել է Կոստանդնուպոլիս⁶: 1573 թ. Կեսարիայի Ադրնաս, Մեծ և Փոքր Բուռունգյուզ (Պուրունկյուզ), Ուրկյուպ գյուղերը Մելիմ Բ-ի հրամանով բռնագաղթեցվել

¹ Տե՛ս Handbook of Ethnic Conflict: International Perspectives, editors D. Landis & R. Albert, New York-Dordrecht-Heidelberg-London, 2012, p. 266:

² Տե՛ս օրինակ՝ **Shaw S.**, Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire (1280-1808), History of the Ottoman Empire and modern Turkey, v. 1, London, 1976, p. 59:

³ Տե՛ս **Barrington M. Jr.**, Ethnic and Religious Hostilities in Early Modern Port Cities, International Journal of Politics, Culture and Society, vol. 14, 2001, № 4, p. 710:

⁴ Տե՛ս **Խառատյան Ա.**, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007, էջ 59:

⁵ Տե՛ս **Agoston G.**, The Ottoman Empire and the Technological Dialogue Between Europe and Asia: The Case of Military Technology and Know-How in the Gunpowder Age, in Science between Europe and Asia; Historical Studies on the Transmission, Adoption and Adaptation of Knowledge, edited by F. Günergun & D. Raina, Dordrecht, 2011, p. 35:

⁶ Տե՛ս **Çark Y.**, Türk devleti hizmetinde Ermeniler, İstanbul, 1953, s. 10-11:

են դեպի Կիպրոս¹: XVII դարի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին մինչև իսկ թվարկում է Կոստանդնուպոլսի այն թաղամասերի անունները, որտեղ բնակվում էին Արևմտյան Հայաստանից և Փոքր Ասիայից բռնագաղթված հայ արհեստավորները²: XVI դարում թուրք-պարսկական պատերազմները մշտապես ուղեկցվել են հայ բնակչության բռնագաղթերով, ընդ որում՝ XVI դարում դրանց հիմնական կազմակերպիչն Օսմանյան կայսրությունն էր, իսկ XVII դարում՝ Սեֆյանները:

Ռ. Սաֆրաստյանն իրավացիորեն նկատում է, որ Օսմանյան կայսրությունը միակ դազիական բեյությունն էր, որ վերաճեց կայսրության, ուստիև քրիստոնյա ժողովուրդներին պատկանող տարածքների աստիճանական նվաճումն ուղեկցվում էր դազիական բեյության էթնիկական միատարր կառավարման հոգեբանությամբ, որի փայլուն արտահայտությունն էին դեշիրմեն (մանկահավաքությունը) և փենչիքը (Մուրադ Ա-ի ժամանակվանից քրիստոնյա գերիների մեկ հինգերորդի հարկադիր աշխատանք, մուսուլմանացում և ենիչերիների մեջ ընդգրկում)³: Ըստ թուրք պատմաբան Մ. Գյոքքիլգինի՝ իրենց թվապես գերազանցող հպատակ քրիստոնյաներին ենթակայության մեջ պահելու հիմնական մեթոդը օսմանյան իշխանությունների կողմից ենիչերական գորաբանակում զինվորական ծառայությունն ու մուսուլմանացումն էր⁴: Նմանօրինակ բացատրություն է ներկայացնում նաև ռուս նշանավոր արևելագետ Վլ. Մինորսկին⁵:

Թուրք պատմիչ Կոչի-բեյը Օսմանյան կայսրությունում մանկահավաքի ենթակա ազգերի ցուցակում հիշատակում է հայերին⁶: Հայկական սկզբնաղբյուրներում քանիցս հանդիպում են մանկահավաքի մասին հիշատակումներ: Կայսրության փոքրասիական շրջանների հայ բնակչությունից մանկահավաք կատարվել է դեռևս 1457, 1464, 1472 թթ.⁷: Ն. Ակինյանն այն տեսակետն է առաջ քաշել, որ հայկական սկզբնաղբյուրներում բուն Հայաս-

¹ Տե՛ս Ալլայոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 633, 804, 889:

² Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 4, Թուրքական աղբյուրներ, հ. Գ. Էվլիյա Չելեբի, կազմ.՝ Ա. Սաֆրաստյան, Երևան, 1967, էջ 35, **Զուլայան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995, էջ 111:

³ Տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Ցեղասպանության ակունքները միջնադարյան Թուրքիայում // «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետ՝ «ՊԲՀ»), 1998, թիվ 1-2, էջ 105-112:

⁴ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Դեշիրմեն համակարգի սկզբնավորման հարցերի շուրջ // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 23, Երևան, 2004, էջ 444, 449:

⁵ Տե՛ս **Minorsky VI.**, Shaykh Bālī-Efendi on the Safavids, Bulletin of the School of Oriental and African Studies, University of London, vol. 20, 1957, № 1/3, p. 437:

⁶ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմեն»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների // «ՊԲՀ», 1959, թիվ 2-3, էջ 250:

⁷ Տե՛ս **Խատաստյան Ա.**, նշվ. աշխ., էջ 341-342:

տանում հիշատակվող առաջին մանկահավաքը եղել է 1531 թ.¹, մինչդեռ Մ. Զուլայյանը, վկայակոչելով Անանուն Սեբաստացու ժամանակագրությունը², կարծում է, որ առաջին մանկահավաքը եղել է 1519 թ.³ և հետագայում կրկնվել է նաև 1531, 1536, 1543, 1547, 1550, 1567, 1585, 1589, 1590 և 1622 թթ.⁴: Վարդան Բաղիշեցին (XVII դար) և մի քանի այլ հեղինակներ ևս հիշատակում են, որ առաջին դեղիքներն սահմանել է Սելիմ Ահեղը 1519 թ.⁵: Ա. Շաքարյանը սա համարում է ոչ թե դեղիք, այլ ընտրողաբար արված փենչիք, քանի որ Հայաստանն այդ ժամանակ դեռևս ռազմադաշտ էր, իսկ հայերը նվաճված գերի ժողովուրդ էին, որի մեկ հինգերորդը պատկանում էր սուլթանին⁶: Նման տարակարծության պատճառները հասկանալու համար դիմել ենք սկզբնաղբյուրների օգնությանը: Այսպես, Անանուն Սեբաստացին (XVI դար) գրում է, որ 1519 թ. «բարկությունն աստուծոյ սաստկաւ և սուլդան (սուլթան – Մ. Մ.) Սելիմն տղայ ժողւեց ի քրիստոնէից»՝ մի քանի տող ներքև շարունակելով՝ 1531 թ. «տղայ ժողւեցին ի քրիստոնէից, ահ և փախ, լաց և աղաղակ և խեղճ բաներ շատ եղև»⁷: Այստեղից հնարավոր չէ եզրակացնել, թե երկրորդը պետք է փենչիք լիներ, ուստի երևույթի մասին տեղեկությունները դիտարկել ենք նաև այլ աղբյուրներում: XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին ներկայացնում է, որ 1519 թ. «սուլթան Սելիմն արար գմանչ ժողովելն: ... սուլթան Սելիմն չարացավ՝ տղայ ժողովեաց ի քրիստոնէից»⁸: Անդրեաս սրկ. Եվրոկացու ժամանակագրության (XVI դար) մեջ նշվում է, որ 1531 թ. «եղաւ սկիզբն տղայ ժողովի»⁹: Անանուն ժամանակագրության (XVIII դար) համաձայն՝ Սելիմը «արար տղայ ժողով ի քրիստոնէից», իսկ 1533 թ.

¹ Տե՛ս **Ալիինեան Ն.**, Մադաքիա վ. Դերջանցի. տաղասաց, շինարար եւ բարեգործ // «ՀԱ», 1952, թիվ 11-12, էջ 591:

² Տե՛ս Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց Վ. Հակոբյանը, հ. 1, Երևան, 1951, էջ 169:

³ Տե՛ս **Զուլայյան Մ.**, «Դեղիքներ»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 250, **Փափազյան Ա.**, Արևմտահայության վիճակը ըստ օսմանյան սուլթանական ֆերմանների (XVI-XVIII դդ.) // «ՈՒՅ», 1988, թիվ 2, էջ 131:

⁴ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 169, 170, 171, 172, **Զուլայյան Մ.**, «Դեղիքներ»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 250, *նույնի*՝ Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980, էջ 329-331: 1585 թ. Հովհաննես Սեբաստացին գրում է, որ Սեբաստիայից սուլթանի կողմից առաքված մի պաշտոնյա ժողովել է 300 մանուկ և «արձակեալ ընդ ամենայն տեղիս գնոյն առնէր ի վերա քրիստոնէական տոհմից...» (ՄՄ, ձեռ. թիվ 1868, էջ 232բ-233ա, հղումը տե՛ս՝ Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց Վ. Հակոբյանը, հ. 2, Երևան, 1956, էջ 254):

⁵ Տե՛ս Դիւան Հայոց պատմութեան, կազմեց՝ Գ. Ադանեանց, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 71, **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, գլ. ԾԶ, էջ 474, Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 355:

⁶ Տե՛ս **Շաքարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 445:

⁷ Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 169-170:

⁸ **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԶ, էջ 474:

⁹ Նույն տեղում, էջ 156:

«սկիզբն եղև տղայ ժողովելոյ»¹: Ինչպես տեսնում ենք, առկա հիշատակություններով հնարավոր չէ վերջնական եզրահանգման գալ ընտրողաբար արված փենչիքի հարցում:

Հետաքրքրություն է ներկայացնում մանկահավաքների աշխարհագրությունը: 1531 թ. մանկահավաքն «ի հայոց ազգես» ընդգրկել է Տրապիզոնը, Համշենը, Սպերը, Բաբերդը, Դերջանը, Երզնկան, Կամախը, Տերիկը²: Ընդգրկում էր հատկապես 1550 թ. մանկահավաքը³:

Մանկահավաքի կազմակերպման սկզբունքները Մ. Զուլայանն ուսումնասիրել է թուրք հետազոտող Ի. Ուզունչարշըլիի՝ սուլթանական հրովարտակների և հրամանների հիման վրա 1943 թ. հրատարակած աշխատության միջոցով: Ըստ այդմ, մանկահավաքը կազմակերպվում էր 2-3 կամ 5 տարին մեկ անգամ՝ 8-20 տարեկան քրիստոնյաներից՝ 40 տնից մեկ կամ ավելի շատ մարդ վերցնելով⁴: Բալկանյան աղբյուրները վկայում են 7-12 տարեկանների, իսկ սուլթանական հրովարտակները՝ 15-20 տարեկան պատանիների հավաքագրման մասին, ինչը փաստում է գործնականում կամայական հավաքագրումը⁵: Ա. Խառատյանն իրավացիորեն մեջբերում է Ն. Իցկովիչի այն դիտարկումը, որ Օսմանյան կայսրությունում սոցիալական շարժունությունը՝ ռայայից ասկյարի անցումը, հնարավոր էր իսլամ ընդունելու և դեշիրմեի ուղիով, որոնք, փաստորեն, բռնի մեթոդներով էին կիրառվում: Դեշիրմեով հավաքվածների մի մասն ուղղվում էր ենիչերական գործառնաբեր, մյուս մասը՝ հարկադիր աշխատանքի: Նոր նվաճված տարածքների բնակչությունն առհասարակ ռազմագերի էր համարվում, ուստի նրանցից վերցվողների քանակը որոշվում էր սուլթանի կամ ռազմական գործողությունը ղեկավարած փաշայի կողմից: Հանքարդյունաբերական շրջաններում, վակֆային հողերում և մայրաքաղաքում երբեմն մանկահավաքներ չէին իրականացվում՝ վերագործարկվելով պատերազմական իրադրության պայմաններում⁶: Ենիչերի վերածվածները ստանում էին մուսուլմանական դաստիարակություն և կտրվում իրենց ազգային համայնքից: XVI դարի վերջին և XVII դարում Օսմանյան կայսրության ռազմատնտեսական հզորության անկումը պայմանավորեց գերության համակարգի քայքայման գործընթացը⁷: 1637 թ. օսմանյան աղբյուրներում հիշատակվող վերջին պաշտոնական դեշիրմեից հետո իրականացվող դրվագային դեշիրմեները քրիստոնյաների նկատմամբ

¹ Նույն տեղում, էջ 321, 322:

² Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 251:

³ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 172:

⁴ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 251-252:

⁵ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում որպես աշխատուժի վերակազմակերպման միջոց // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 24, Երևան, 2005, էջ 431:

⁶ Տե՛ս **Խառատյան Ա.**, նշվ. աշխ., էջ 341-344:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 345:

տիրապետության պահպանման մեխանիզմներից մեկն էին դարձել, իսկ ենիչերական զորքերի համալրումն արդեն բուն օսմանյան տարրից էր կատարվում¹:

Դեշիրմեով հավաքված քրիստոնյա երեխաների մեծ մասը, փաստորեն, ոչ թե համալրում է ենիչերիների զորաբանակը, որ XVI դարի վերջին առավելագույնը կարող էր հասնել 48 հազարի, այլ, ըստ ֆրանսիացի ճանապարհորդ դ'Արամոնի, օգտագործվում էր գյուղատնտեսական աշխատանքներում՝ էժան գներով վաճառվելով փոքրասիական թյուրքալեզու գյուղացիությանը²: Ա. Շաքարյանը կարծում է, որ դեշիրմեի համակարգի մասնակի վերաճումը ստրկավաճառության բխում էր մարդկային ռեսուրսների խիստ կարիքից և մարդուժով առավել հարուստ տարածքների հաշվին մարդկային նվազ ռեսուրսներ, հետևաբար և թույլ գյուղատնտեսությունն ունեցող վայրերի զարգացման քաղաքականության մեջ էր տեղավորվում³:

Մկզբնադրյուններում առկա վկայությունները փաստում են, որ մանկահավաքը կատարվել է միայն բռնի եղանակներով⁴: Պատահական չէ, որ սլավոնական ժողովուրդների մոտ դեշիրմեն ստացել է «արյան հարկ» անվանումը⁵: Ինչպես եզրակացնում է Մ. Զուլայանը, մանկահավաքը Օսմանյան կայսրության քրիստոնյաների ազգային ճնշման և ուժացման քաղաքականության բաղադրիչներից էր⁶: Ի մի բերելով մեջբերված տեսակետները՝ հարկ է նկատել, որ մանկահավաքը քրիստոնյաների մուսուլմանացման ճանապարհով մարդկային ռեսուրսների բավարարման քաղաքականություն էր, ուստի, ինչպես նկատել է Մ. Զուլայանը, այն պետք է անպայման դիտարկել Օսմանյան կայսրության ազգային-կրոնական քաղաքականության համատեքստում: Ընդհանուր առմամբ, 3 դարերի ընթացքում ավելի քան 500 հազար քրիստոնյա մանուկներ վերածվել են ենիչերիների⁷, իսկ այլ աշխատանքներում ընդգրկվածների թիվը մի քանի անգամ ավելին պետք է լիներ:

Երբեմն պետական կարևորություն ունեցող աշխատանքներում ընդգրկված քրիստոնյաներն օգտվել են արտոնություններից, օրինակ՝ 1569 թ.

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 347:

² Տե՛ս **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում..., էջ 434-436:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 430, 439-440:

⁴ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 252-254, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 169-170, Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանաղցույ, Երուսաղեմ, 1915, էջ 304-311, **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, սյ. 2608-2610, **Չամչեան Մ.**, Պատմություն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 513: 1543 թ. մանկաժողովի ժամանակ, ըստ Հովհաննես Մեքաստացի ժամանակագրի և Մ. Չամչյանի, նույնիսկ հայկական ութ եկեղեցիներ են այրվել (տե՛ս **Չամչեան Մ.**, նշվ. աշխ., էջ 513, **Ալպոյաճեան Ա.**, Պատմություն Եվդոկիոյ Հայոց, Գահիրե, 1952, էջ 598):

⁵ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Օսմանյան կայսրության բնակչության խուսափումը դեշիրմեից (համաձայն օսմանյան փաստաթղթերի) // «Մերձավոր Արևելք», հ. III, Երևան, 2006, էջ 32:

⁶ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 255:

⁷ Տե՛ս Ուղեգրություններ, կազմեց՝ Հ. Հակոբյան, հ. Զ, Երևան, 1934, էջ 294:

Շապին-Գարահիսարի մոտակա 4 հանքերում աշխատող 23 գյուղերի բնակիչներ ազատվել են դեշիրմեից¹: Այդուհանդերձ, հրովարտականերից մեկում ակնհայտ է, որ որոշ դեպքերում մանկահավաքի են ենթարկվել անգամ արտոնություններ վայելող Կամախի, Գյումուշխանեի, Շապին-Գարահիսարի հանքերում աշխատող հայ և հույն հանքավորների ընտանիքները²:

Հետաքրքիր է մանկահավաքների նկատմամբ Հայ առաքելական եկեղեցու մոտեցումը: Սկզբնաղբյուրներում քանիցս ներկայացված է, որ 1543 թ. դերջանցի Մաղաքիա վարդապետը գնաց սուլթան Սուլեյմանի մոտ և վերջինիս հրամանով չեղարկեց մանկահավաքը Դերջանում և Բաբերդում³: Սուլեյման Ա-ի կողմից Կեսարիայի բեյին ուղղված 1564 թ. մի հրամանագրում նշվում է մանկահավաքի ենթարկված մի քանի տղաների՝ Կոստանդնուպոլսից հայրենի բնակավայր փախչելու և վերստին քրիստոնյա դառնալու մասին⁴: Ըստ նույն փաստաթղթի՝ եկեղեցում հայրենի դավանանքին վերադառնալու ծես է կատարվել⁵: Սա նշանակում է, որ այդ ժամանակաշրջանում բռնի իսլամացած մանուկը կամ պատանին քրիստոնեական համայնքի կողմից անմիջապես մերժված չէր համարվում, այլ հնարավոր էր նրա վերադարձը հարազատ համայնք: Սա լիովին բացատրելի է Հայ Առաքելական եկեղեցու 7 խորհուրդների նշանակությամբ, քանի որ մկրտության խորհուրդն անջինջ է համարվում:

Թուրքական սկզբնաղբյուրները վկայում են նաև Արևելյան Հայաստանից մանուկների և պատանիների հավաքման մասին: 1589 թ. մանկահավաքը, ըստ Սելանիկիի, ընդգրկել է նաև Սեֆյաններից գրավված հողերը: Բնութագրելով դեշիրմեի կատարման ընթացքը՝ նա հետևյալ կերպ է մեկնաբանում այն. «Ժամանակի իշխողները տղաների դեշիրմեի գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել. ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ազահորեն հարձակվել են երկրի ռայաների վրա: Հարուստ ռայաներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ռայաներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը»⁶:

¹ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Մանկահավաքն Օսմանյան կայսրությունում..., էջ 433:

² Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 253:

³ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԱ, էջ 439: Մաղաքիա Դերջանցու գործունեության մասին տե՛ս նաև՝ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, խմբ. Գ. Տեր-Վարդանեսանի, Երևան, 2012, ձեռ. թիվ 2145, սյ. 194:

⁴ Տե՛ս **Փափազյան Ա.**, Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող թուրքական մի շարք վավերագրեր // «ՊԲՀ», 1983, թիվ 4, էջ 202:

⁵ Տե՛ս **Շաքարյան Ա.**, Օսմանյան կայսրության բնակչության խուսափումը դեշիրմեից, էջ 31:

⁶ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1964, էջ 136-137:

Տղայաժողովներից զատ սկզբնաղբյուրներում կան նաև աղջիկների հավաքման փաստեր, ինչպես օրինակ՝ 1569 թ. «աղջիկ ժողովեցին ի քրիստոնէից»¹: Աղջկաժողովների մասին հանդիպել ենք վկայության ևս երեք սկզբնաղբյուրներում, սակայն այս երևույթի քննությունը նախատեսել ենք մեկ այլ հոդվածում ներկայացնելու համար:

Հայաստանի տարածքում մանկահավաքների ծավալների վերաբերյալ հայագիտության մեջ տարբեր կարծիքներ կան: Մ. Օրմանյանն իր «Ազգապատում» աշխատության մեջ այն հետևյալ կերպ է ներկայացնում. «Մանկաժողովը աւելի Ասիական գաւառներու մէջ կը կատարուէր, եւ քրիստոնէայ տարրերուն մէջ աւելի հարստահարուողը Հայը կըլլար»²: Ի հակառակ այս տեսակետի՝ Մ. Ջուլայանը պնդում է, որ օսմանյան իշխանությունները քրիստոնյա երեխաներին Բալկաններում ավելի շատ էին հավաքում, քան Արևմտյան Հայաստանում, որովհետև այստեղ որպես իրենց ռազմական հենարան օգտագործվում էին քուրդ ցեղապետները, իսկ Բալկաններում այդպիսի տարրը բացակայում էր, ուստի պետք էր հնարավորինս արագ ամրապնդվել: Նրա կարծիքով՝ հայերից մանկահավաքն առավել մեծ չափերով դրսևորվել է ոչ թե բուն Հայաստանում, այլ Եփրատից արևմուտք ընկած շրջաններում, որոնք XVI դարում խիստ հայահոծ էին³: Մեր կարծիքով՝ Մ. Ջուլայանի դիտարկումը միայն մասամբ է հաստատվում սկզբնաղբյուրների տվյալներով, քանի որ բազմաթիվ են մանկահավաքների մասին տեղեկություններն Էրզրումի նահանգում, որտեղ XVI դարում քրդական տարրի առկայությունն առանձնապես նկատելի չէր:

Բացի դեշիրմեից, հայ բնակչության աճի դինամիկայի վրա բացասաբար էր անդրադառնում նաև հարկային քաղաքականությունը: Օսմանյան կայսրության ու Սեֆյան Պարսկաստանի ազգային և հարկային քաղաքականության՝ կրոնականացված լինելու վառ վկայությունն է այլադավաններից զինվորական ծառայության փոխարեն գլխահարկի (ջիզիե կամ ջիզյա) գանձումը: Զիզիեն 1528 թ. Օսմանյան կայսրության եկամտի 8%-ն էր, ընդ որում՝ այն հաճախ գանձվում էր ոչ միասնական սկզբունքով: Միայն 1691 թ. այն միօրինակացվեց՝ գանձվելով 14-75 տարեկան ոչ մուսուլման տղամարդկանցից⁴: XVII դարի թուրք պատմագիր Կոչի բեյի «Ռիսալե»-ում նկարագրվում է

¹ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 355:

² Օրմանեան Մ., նշվ. աշխ., սյ. 2608:

³ Տե՛ս Зулалаян М., Армения в первой половине XVI в., М., 1971, с. 49:

⁴ Տե՛ս Մարտիրոսյան Ա., Գլխահարկն Օսմանյան կայսրությունում // «Մերձավոր Արևելք», հ. VI, Երևան, 2009, էջ 168-174: Քրիստոնյաների նկատմամբ Օսմանյան կայսրությունում գործադրված հարկային քաղաքականությանը մանրամասնությամբ չենք անդրադառնում, քանի որ դա ավելի շատ առնչվում է սոցիալ-տնտեսական պատմությանը: Օսմանյան հարկային քաղաքականության մասին տե՛ս նաև «Հայոց պատմություն», հ. III, գ. I, Երևան, 2010, Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1961, Ջուլայան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Մահակյան Լ.,

1582 թ. և դրան հաջորդող տարիներին աղքատ ոչ մուսուլման հպատակներից ջիզիեի հարկման գործընթացը, հավելյալ ապօրինությունները, օրինակ՝ սահմանված 240 ակչեի փոխարեն հաճախ 700-800 ակչե էր գանձվում¹:

Միտումնավոր անտեսելով հենց օսմանյան սկզբնաղբյուրների հաղորդած տվյալները՝ արդի թուրք պատմաբանները փորձում են առաջ քաշել այն տեսակետը, թե իբր Օսմանյան կայսրությունում հարկերն անհատական չեն եղել, իսկ հարկային քաղաքականության հիմքում կրոնադավանական տարանջատում չի եղել: Նույնիսկ նման տեսակետն ամերիկյան թուրքագիտության մեջ առաջ տանող թուրք պատմաբան Մ. Ջոզգելը ստիպված է խոստովանել, որ ջիզիեն ոչ մուսուլման բոլոր չափահաս տղամարդ հպատակներից անհատապես գանձվող հարկատեսակ էր²: Այս փաստն ընդունելով՝ թուրք պատմաբանն ակամայից հաստատում է այն փաստը, որ օսմանյան հարկային համակարգը կրոնական խտրականության սկզբունքի վրա է հիմնված եղել:

«Արյան հարկից» և գլխահարկից զատ ակնհայտ բռնի գործողություններ են իրականացվել քրիստոնյա բնակչության նկատմամբ՝ ընդհուպ մինչև զանգվածային կամ մասնակի իսլամացման դեպքերը: Հաճախ է քննարկման թեմա դառնում Համշենի հայության իսլամացման ժամանակաշրջանի հարցը: Այսպես, Լ. Սահակյանը կարծում է, որ համշենահայության բռնի իսլամացման քաղաքականությունն ակտիվացել է XVI դարի վերջից³, Լ. Խա-

Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, **Փափագյան Ա.**, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999, Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դարերի կանուն-նամեններ), թարգմ. և ծանոթ. Ա. Սաֆրաստյանի և Մ. Ջուլայանի, Երևան, 1964, **Саркисян Е.**, Административная и демографическая политика османского правительства в Западной Армении // «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 5, Երևան, 1970, էջ 357-380, Аграрный строй Османской империи XV-XVII вв.: документы и материалы, сост., пер. и ком. А. Тверитиновой, М., 1963; **Darling L.**, Revenue Raising and Legitimacy: Tax Collection and Finance Administration in the Ottoman Empire, 1560-1660, New York, 1996; **Gerber H.**, Muslims and Zimmis in Ottoman Economy and Society: Encounters, Culture, and Knowledge // Studies in Ottoman Social and Economic Life, edited by R. Motika, Ch. Herzog, M. Ursinus, Heidelberg, 1999, p. 141-169; **Balla E., Johnson N.**, Fiscal Crisis and Institutional Change in the Ottoman Empire and France // The Journal of Economic History, 69 (3), 2009, p. 809-845: Թուրքական մեկնաբանությունները տե՛ս օրինակ՝ **Tuncer H.**, Osmanlı imparatorluğunda toprak hukuku, arazi kanunları ve kanun açıklamaları, Ankara, 1962; **Çizakça M.**, A Comparative Evolution of Business Partnerships: The Islamic World and Europe, with Specific Reference to the Ottoman Archives, Leiden – New York, 1996.

¹ Տե՛ս Թուրքական աղբյուրներ, հ. Բ, էջ 230-231:

² Տե՛ս **Coşgel M.**, The Fiscal Regime of an Expanding State: Political Economy of Ottoman Taxation, University of Connecticut Department of Economics Working Paper Series, Working Paper 2013-28, p. 20, *նույնի*՝ Efficiency and Continuity in Public Finance: The Ottoman System of Taxation, University of Connecticut Department of Economics Working Paper Series, Working Paper 2004-02R, p. 20:

³ Տե՛ս **Սահակյան Լ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները // «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Երևան, 2006, էջ 207-218:

չիկյանը և Մ. Աբրահամյանը՝ XVII դարից¹, Ն. Տաշյանը՝ XVII դարի վերջից²: Մ. Զուլայանն իրավացիորեն նկատում է, որ մանկահավաքի ենթարկված հայության համար սկզբնաղբյուրներում հաճախ նշվում են Տրապիզոնը, Համշենը և Էրզրումի նահանգը³, ուստի այդ տեղում բնակչության գերակշիռ մեծամասնությունը պետք է կազմեին քրիստոնյաները: Բացի այդ, Լ. Մահակյանն իր վերջին ուսումնասիրություններից մեկում հստակ ցույց է տվել, որ Համշենը XVI դարի առաջին երեսնամյակին եղել է հայ գրչության կարևոր կենտրոններից մեկը⁴: Փաստորեն, Համշենի բնակչության զանգվածային իսլամացումը չպետք է դիտարկել XVI դարում:

Զանգվածային իսլամացման դեպք գրանցվել է 1578 թ., երբ Արևմտյան Հայաստանում օսմանյան վարչամեքենան հաստատելու և տեղի բնակչությանը հարկման ենթարկելու խնդրով Բաբեդդի, Սպերի, Թորթումի և այլ գավառներ է ուղարկվել Լալա փաշան: Նա կարճ ժամանակում ավերակների է վերածել Բարձր Հայքի և Տայքի հայկական բազմաթիվ բնակավայրեր, սրի քաշել տասնյակ հազարավոր մարդկանց, և ավելի քան 50 հազար հայեր ֆիզիկական ոչնչացումից փրկվելու համար իսլամ են ընդունել⁵: Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Կեսարիայում ևս տեղ են գտել զանգվածային մուսուլմանացման դեպքեր⁶:

Զգալի թիվ են կազմում իսլամացման մասին մասնավոր դեպքերի, կրոնական հողի վրա սպանությունների և եկեղեցիների՝ մզկիթի վերածման մասին հիշատակությունները սկզբնաղբյուրներում: Անհատական կամ մասնակի իսլամացման դեպքերը տեղ են գտել առանձնաշնորհումների և որոշ հարկերից ազատման պատճառով: Շարիաթի համաձայն՝ մուսուլմանն իրավունք ունի իր քրիստոնյա ազգականի ժառանգածը ստանալ: XVII դարում Ռումելիի հույն, ալբանացի, բուլղար, սերբ մեծ թվով բնակչություն իսլամ ընդունեց, իսկ հայ բնակչության շրջանում այդ գործընթացն ավելի դանդաղ էր ընթանում⁷: Եկեղեցիների բռնազավթման դեպքերից առանձնապես նշում են 1518 թ. Ամիդում Կաթողիկե Ս. Թեոդորոսի վերածումը մզկիթի⁸,

¹ Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Էջեր համշինահայ պատմությունից // «Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 1969, թիվ 2, էջ 136, **Աբրահամյան Մ.**, Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի իսլամացման խնդրի շուրջ // «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. VII, Երևան, 2011, էջ 180-184:

² Տե՛ս **Տաշեան Յ.**, Հայ բնակչությունը Մեծ ծովին մինչև Կարին. պատմական-ազգագրական հարեւանցի ակնարկ մը, Վիեննա, 1921, էջ 30:

³ Տե՛ս **Զուլայան Մ.**, «Դեշիրմե»-ն Օսմանյան կայսրության մեջ, էջ 251:

⁴ Տե՛ս **Մահակյան Լ.**, Համշենը հայկական ձեռագրերում // «Արևելագիտության հարցեր», հ. 12, Երևան, 2016, էջ 86-95:

⁵ Տե՛ս **Տաշեան Յ.**, նշվ. աշխ., էջ 3-20:

⁶ Տե՛ս **Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 638-640:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 640-643:

⁸ Տե՛ս **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԱ, էջ 428:

1565 թ. Մեքաստիայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ժամատան քանդումը¹ և 1592 թ. վերջինիս ու Ս. Աստվածածին եկեղեցու վերածումը մզկիթի²: Բազմաթիվ են հավատի համար նահատակությունների հիշատակումները: 1550 և 1590 թթ. էրզրումում հիշատակվում են քրիստոնյաների՝ մեկօրյա զանգվածային սպանություններ³: Ահա նահատակված մարդկանց անուններ՝ 1517 թ. Ամիդում՝ Խաչատուր Կողբացի, 1519 թ. Աստվածատուր, 1524 թ. Բարունակ Ամդեցի, 1524 թ. Մալաթիայի եկեղեցու լուսարար Կարապետ, 1528 թ. Եղեսիայում Թորոս, 1533 թ. Մեքաստիայի նահանգի Տևու (Տևոն) վանքի աբեղա Հայրապետ, 1534 թ. Թադեոս քահանա Մեքաստացի, 1535 թ. Մեքաստիայի Շանքուռակ (Շնքուռակ) գյուղում երիտասարդ քահանա, 1536 թ. Մեքաստիայում խոջա Կոզջան և այլք⁴:

Ինչպես Օսմանյան կայսրությունում, Մեֆյան Պարսկաստանում ևս XVI դարում գործադրվել է ջիզիեն, սակայն չեն հիշատակվում զանգվածային մուսուլմանացման դեպքեր, իսկ դեշիրմեի ինստիտուտը չի գործել: Պատերազմների ժամանակ մանուկների գերեվարումների հիշատակումն ավելի շատ համադրելի է փենչիքի հետ: Հավատի համար XVI դարում նահատակությունների դեպքերի հիշատակություններն Արևելյան Հայաստանում հազվադեպ են, օրինակ՝ Գեղարքունիքի Ադամխան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցում 1576 թ. թվագրվող տապանաքարի վրա գրված է. «Այս է հանգիստ Զաւիրային որ մարտիրոսաճաւ (մարտիրոսացաւ – Մ. Մ.) ի սէր Քրիստոսի»⁵, ուստի սա հավատի համար նահատակված անձ է: Արևելյան Հայաստանում նահատակությունների մասին դեպքերի և դեպի Պարսկաստան բռնագաղթի ենթարկվածների զանգվածային մուսուլմանացման հիշատակումներ սկզբնաղբյուրներում ավելի շատ հայտնվում են XVII դարում շահ Աբաս Ա-ի (1587-1629) գործունեության և հաջորդող շրջաններում⁶:

Այսպիսով, XVI դարում Օսմանյան կայսրության էթնոկրոնական քաղաքականությունը Հայաստանում արտահայտվում էր այնպիսի բացասական երևույթներով, ինչպիսիք էին մանկահավաքները և գլխահարկի գանձումը, իսկ բռնի զանգվածային մուսուլմանացման դեպքերը թեև հազվադեպ են հիշատակվում, սակայն նախադեպ էին դառնում հաջորդ դարերի ընթացքում դրանց հաճախակի գործադրման համար: Այս ամենը կազմակերպված բնույթ ուներ, Հայաստանի տարածքում ուղղակիորեն վերաբերում էր տեղա-

¹ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 172:

² Տե՛ս նույն տեղում, էջ 173, հ. 2, էջ 268, 518: Հմտ. **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԶ, էջ 475:

³ Տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 267, 518, 531:

⁴ Տե՛ս **Օրմանեան Մ.**, նշվ. աշխ., սյ. 2591-2592, 2597-2599, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ 62, 499, **Առաքել Դավրիժեցի**, գլ. ԾԶ, էջ 474, Մանր ժամանակագրություններ, հ. 1, էջ 170, հ. 2, էջ 266, 284, 382, **Չամչեան Մ.**, նշվ. աշխ., էջ 516:

⁵ Դիվան հայ վիմագրության, պր. IV, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1973, էջ 203:

⁶ Էթնոքաղաքական ընդհանուր խճանկարը տե՛ս **Galichian R.**, A Glance into the History of Armenia through Cartographic Records, London, 2015, p. 42-43:

բնիկ հայ բնակչությանը և սերտաճած էր պետական ժողովրդագրական քաղաքականությանը՝ բացասաբար անդրադառնալով հայ բնակչության թվաքանակի շարժընթացի և հասարակական կյանքի վրա:

Микаэл Малхасян – *Основные особенности этнорелигиозной политики Османской империи в Западной Армении в XVI веке*

Турецко-персидские войны в XVI веке и в первой половине XVII века отрицательно повлияли на демографические процессы в Армении. Религиозная политика Османской империи, в составе которой была Западная Армения, была неотъемлемой от демографической политики, поскольку в основе национальных вопросов стояла принадлежность религиозному направлению, и поэтому армянское население часто подвергалось социально-экономическому, общественному и культурно-религиозному угнетению в XVI веке. Очевидными признаками этой политики были сюртюны (массовые депортации населения), девширме (система принудительного набора мальчиков из немусульманских семей), налоговая политика (в частности, уплата джизии – подушной подати с иноверцев) и т.д. Многочисленные турецкие, армянские и европейские источники подтверждают, что эта политика проводилась в отношении армянского населения Османской империи и, в частности, имела место в Западной Армении. Таким образом, этнорелигиозная политика Османской империи отрицательно влияла на динамику роста численности армянского населения и его общественной жизни.

Michael Malkhasyan – *The Main Features of the Ethno-Religious Policy of the Ottoman Empire in Western Armenia in the 16th Century*

The Turkish-Persian wars affected negatively the demographic processes in Armenia in the 16th century and in the first half of the 17th century. The religious policy of the Ottoman Empire, a part of which was Western Armenia, was inseparable from the demographic policy of the Empire, since national issues were based on religious affiliation; thus, the Armenian population was often subjected to socio-economic, social and cultural-religious oppression in the 16th century. Obvious signs of the above mentioned policy were sürgün (mass deportations of the population), devşirme (the system of forced recruitment of boys from non-Muslim families), tax policy (in particular, payment of jizya - a per capita tax from non-Muslim population), etc. Numerous Turkish, Armenian and European sources confirm that this policy was carried out against the Armenian population of the Ottoman Empire and, in particular, took place in Western Armenia. Thus, the ethno-religious policy of the Ottoman Empire adversely affected the dynamics of the growth of the Armenian population and its social life.

ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1720-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր – Արևելյան Այսրկովկաս, Պետրոս Առաջին, Եսայի Հասան-Ջալալյան, Բվան Կարապետ, Օսմանյան կայսրություն, ազատագրական պայքար, մերձկասպյան շրջաններ, լեզգիներ

Հայ ժողովրդի արևելյան հատվածը, որ XVIII դարի սկզբին դեռևս Սեֆյան Իրանի տիրապետության ներքո էր, քայլեր էր ձեռնարկում պարսկական լուծը թոթափելու ուղղությամբ: Իրանի թուլացման հետևանքով երկրի տարբեր հատվածներում ծայր առած ապստամբությունները¹ 1720-ական թվականներին վերաճեցին ազատագրական պայքարի: Ստեղծված իրավիճակում հայերը ստիպված էին ապավինել ռուսների աջակցությանը, որոնք Հյուսիսային պատերազմից հետո, օգտվելով Իրանի ծանր կացությունից, որոշել էին զբաղեցնել մետաքսով հարուստ մերձկասպյան տարածաշրջանները՝ գրավելով նաև Շամախին: Նման հեռանկարի համար փայլուն առիթ էր 1721 թ. Դաղստանի լեռնականների՝ Դաուդ բեկի և Սուրհայի հարձակումն այդ քաղաքի վրա, որի հետևանքով տուժել էին ռուս առևտրականները²:

Ռուսների նախապատրաստվող արշավանքը տարածաշրջան ոգևորություն էր առաջացրել հայ և վրացի ժողովուրդների շրջանում, որոնք մեծ հույսեր էին տածում սպասվող օգնությունից: Հայ ժողովրդի անունից ազատագրական պայքարին միտված քայլերն Իսրայել Օրու մահից հետո համակարգում էին գլխավորապես Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը և Մինաս վարդապետ Տիգրանյանը, ովքեր առիթը բաց չէին թողնում նամակներ հղելու Պետրոս Առաջինին (1696-1725): Այսպես, Ե. Հասան-Ջալալյանը 1718 թ. համայն հայության անունից հպատակություն էր հայտնում ռուս ցարին և խնդրում օգնել հայերին³: Միննույն բովանդակությունն ուներ Մինաս վարդապետի հղած խնդրագիրը, որտեղ ներկայացվում էին նաև տեղի ունեցած որոշ իրողություններ⁴:

¹ Տե՛ս **Newman J. A.**, Safavid Iran: Rebirth of a Persian Iran, London, New York, 2006, p. 107:

² Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. II, ч. I, Ереван, 1964, с. XIII:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 373-374:

⁴ Տե՛ս Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, с. 329-332:

Ինչ վերաբերում է վրացիներին, ապա Վախթանգ VI-ի գլխավորությամբ նրանք նույնպես ունեին ռուսամետ դիրքորոշում և կապ էին պահպանում ռուս ներկայացուցիչների հետ: Ավելին՝ վերջինս, 1719 թ. Սպահանից վերադառնալով Թիֆլիս, սկսել էր Մեֆյան Իրանի դեմ նախապատրաստական աշխատանքներ իրականացնել և ըստ Ե. Հասան-Ջալալյանի վկայության, նրա հրահանգների համաձայն, հայերը նույնպես զբաղված էին զինված ուժերի կենտրոնացմամբ¹, որը փաստում է, որ հայերն ու վրացիները սերտորեն համաձայնեցնում էին իրենց քայլերը:

Ծրագրերի իրականացման տեսանկյունից Պետրոս Առաջինը ուներ Այսրկովկասի ժողովուրդների՝ հայերի և վրացիների աջակցության կարիքը: Բանն այն է, որ նրանցով բնակեցված տարածքները ռազմավարական առումով անչափ կարևոր էին՝ հատկապես վաղեմի հակառակորդ օսմանցիների գործոնը հաշվի առնելու պարագայում, որոնց համար դրանք ամենակարճ ճանապարհն էին՝ կասպյան տարածաշրջանները թիրախավորելու առումով: Մասնավորապես վրացական թագավորանիստ Քարթլին և Հայաստանի Արցախն ու Ուտիքը օսմանցիների համար դարպաս էին Արևելյան Այսրկովկաս ներթափանցելու համար: Վերահսկողություն սահմանելով Այսրկովկասում՝ ռուսները կապահովագրեին կասպյան տարածաշրջանների անվտանգությունը և այդտեղ շոշափելի առավելություն կստանային: Դրան կնպաստեր նաև այն, որ Ռուսաստանը շատ լավ տեղեկացված էր հայերի և վրացիների ծանր կացությանը ու նրանց ռուսամետ տրամադրություններին, ուստի շատ կարևոր էր օգտագործել այդ գործոնը, ինչը հիմք էր տալիս առավել ակտիվ լինել տարածաշրջանի քրիստոնյա ժողովուրդների հետ հարաբերություններում:

Ռուսական զորքերի առաջխաղացումը Այսրկովկաս Պետրոս Առաջինը նախատեսում էր իրականացնել Շամախիի ուղղությամբ, քանի որ Դերբենտն ու Բաքուն գրավելուց հետո աշխարհագրական տեսակետից այն նպաստավոր էր: Ըստ նրա ծրագրերի՝ երկու ժողովուրդները պետք է համատեղ հանդես գային և ռուսների Դերբենտ մտնելուն պես պայքարեին Դաուդ բեկի դեմ ու մտնեին Շամախի², որից հետո տեղի կունենար ռուս-հայ-վրացական զինված ուժերի հանդիպումը: Այդ մասին ռուս առաջնորդը Վախթանգին հրահանգեց 1722 թ. հուլիսին, իսկ օգոստոսին վերջինս տեղեկացվեց Դերբենտ և Բաքու արշավանքի մասին³: Օգտագործելով ռուսների Դերբենտ առաջխաղացումը՝ Վախթանգ VI-ն ուղղվեց Գանձակ: Միաժամանակ, Եսայի կաթողիկոսի ակտիվ մասնակցությամբ և Ղարաբաղի հրամանատարների (Ավան, Շրուան, Շահնի, Սարուխան) հավաքած շուրջ 12000

¹ Տե՛ս Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի յօրինեալ Ի Տ. Եսայի Աղուանից Կաթողիկոսէ Հասան Ջալալեանց, Յերուսաղէմ, 1868, էջ 46-48 (այսուհետև՝ **Հասան Ջալալեանց**):

² Տե՛ս **Лысов В. П.**, Персидский поход Петра I. 1722-1723, [М.], 1951, с. 208:

³ Տե՛ս **Цагарели А. А.**, Сношения России с Кавказом, СПб., 1891, с. 29:

մարտիկները¹ վերջինիս հրահանգով պետք է միավորվեին 30000-ից բաղկացած վրացական զինված ուժերին, որոնք, սեպտեմբերին մուտք գործելով Գանձակ, պարտության էին մատնել լեզգիներին²:

Ռուսները Դերբենտը գրավեցին 1722 թ. օգոստոսին, և սպասվում էր, որ հաջորդ քայլը պետք է լիներ Բաքվի և Շամախիի գրավումը, սակայն ռուսական կողմն անսպասելի հետաձգեց արշավանքը հաջորդ տարվան, քանի որ, բացի բնակլիմայական դժվարին պայմաններից, նաև ծովային փոթորկի պատճառով պարենամթերքի պակաս էր առաջացել: Այդ պատճառով ծրագիրը կյանքի չկոչվեց, ուստի հայ-վրացական ուժերը ստիպված էին վերադառնալ իրենց ելակետային դիրքերը³: Հետագայում ռուս կայսրուհի Եկատերինա I-ը (1725-1727) Վախթանգին խոստովանել էր, որ Պետրոս Մեծը ցանկանում էր Դերբենտի գրավումից հետո արշավել Շամախի⁴: Ռուսաստանի ներկայությունը տարածաշրջանում խիստ անհանգստացրեց Օսմանյան կայսրությանը, որը սկսեց գործնական քայլերի դիմել և արդեն հոկտեմբերին ընդունեց լեզգի ֆեոդալների հովանավորության խնդրանք-առաջարկը՝ Դաուդ բեկին կարգելով Շիրվանի խան⁵: Այդ լուրջ վտանգ էր Ռուսաստանի համար, քանի որ դրանով օսմանցիները հաստատում էին Այսրկովկասի նկատմամբ իրենց տարածքային հավակնությունները:

Ռուսաստանի շահերից էին բխում Շամախիի շուտափույթ գրավումը և հայ-վրացական զինված ուժերի հետ համատեղ առաջխաղացումը՝ նախքան օսմանցիների մուտքը տարածաշրջան: Այն կօզներ, որ ռուսական կողմը ունենար շահավետ աշխարհաքաղաքական դիրք, ինչը էականորեն կդժվարացներ օսմանյան զորքերի առաջխաղացումն Այսրկովկաս, քանի որ, ի դեմս հայերի և վրացիների, անմիջական կապ կստեղծվեր ռուսական ուժերի հետ: Բացի այդ, Շամախիի գրավումը միացյալ ուժերի համար ազատագրական պայքարի լուրջ խթան կդառնար: Դրանով հայերը զուցե բացառիկ հնարավորություն կստանային թոթափելու սեֆյան լուծը: Սակայն ռազմական հաջողությունների գերակշիռ մասը 1723 թ. թողնելը հարվածի տակ դրեց դրա իրագործումը: Հետագայում, ինչպես ակնհայտ դարձավ, նախքան դեպի Այսրկովկաս առաջանալը Պետրոս Մեծը պետք է լուծեր մերձկասպյան շրջանների ամրապնդման խնդիրը, ինչը հրատապ էր հաշվի առնելով օր օրի ահագնացող թուրքական վտանգը: Այդ մասին է վկայում 1722-1723 թթ. ձմռան ամիսներին նրա պատասխանը Քարթլի զորք ուղարկելու Վախթանգի խնդրանքին առ այն, որ առանց Բաքվի գրավման և

¹ Տե՛ս **Հասան Ջալալեանց**, էջ 47:

² Տե՛ս **Эзов Г. А.**, նշվ. աշխ., էջ 332:

³ Տե՛ս **Հասան Ջալալեանց**, էջ 50-51:

⁴ Տե՛ս **Лысов В. П.**, նշվ. աշխ., էջ 209:

⁵ Տե՛ս **Буткова Н. Г.**, Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 год, часть первая, СПб., 1869, с. 10:

այդ տարածաշրջաններում ամուր դիրքեր ունենալու նա չի կարող որևէ գործողության դիմել¹: Այդպիսով կարող ենք արձանագրել, որ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, 1722 թ. ռուսների առաջխաղացման դադարեցումը ճակատագրական եղավ Այսրկովկասի ժողովուրդների (ի դեմս հայերի և վրացիների) համար, որոնք հաջորդ տարի ստիպված էին մաքառել գլխավորապես օսմանյան զորքերի դեմ:

Օսմանյան արշավանքի վտանգը շատ լուրջ փոփոխությունների հանգեցրեց, ինչը մեծապես ազդեց Ռուսաստանի ծրագրերի վրա: Եթե նախկինում, հաշվի առնելով լեզգիների հարձակումը, ռուսների գլխավոր նպատակը Շամախի գրավումն էր, ապա աստիճանաբար նկատում ենք, որ Պետրոս Առաջինը առաջնահերթ ցանկանում էր ամրապնդել մերձկասպյան տարածաշրջանները և պատրաստ էր հրաժարվել Շամախի մուտք գործելուց: Այն տեղ գտավ 1723 թ. փետրվարի 16-ին սուլթան Ահմեդ III-ին (1703-1730) ուղղված առաջարկում, որով ռուսական կողմը պատրաստ էր ընդունել օսմանյան հովանավորչությունը Դաղստանի լեռնականների նկատմամբ պայմանով, որ օսմանցիները զորքեր չեն մտցնի Շամախի, Լեզգիստան, Ստորին Դաղստան: Փոխարենը ռուսները հաստատում էին իրենց հավակնությունները Վերին Դաղստանի, ինչպես նաև՝ Շիրվանի մերձկասպյան տարածքների նկատմամբ: Բացի այդ, նրանք հորդորում էին երկուստեք գերծ մնալ Վրաստան արշավելու մտքից²: Փաստորեն, օսմանյան վտանգը ստիպում էր ռուսներին վերանայել իրենց մտադրությունը առաջնալ Շիրվանի խորքերը և հրաժարվել Շամախին և հարակից երկրամասերը գրավելուց, սակայն ոչ ի հաշիվ մերձկասպյան տարածաշրջանների, որոնք Ռուսաստանի համար արդեն առաջնահերթ նշանակություն ունեին: Սակայն սա չէր նշանակում, որ ռուսներն անտարբեր էին դառնում Շամախի քաղաքի ճակատագրի հանդեպ, քանի որ այն կարևոր էր ոչ միայն Այսրկովկասը, այլև ամբողջ կասպյան տարածաշրջանը վերահսկելու առումով:

Շամախիի առանցքային նշանակությունը հստակ էր նաև Օսմանյան կայսրության համար, որը պատրաստվում էր շուտափույթ զորքեր մտցնել այնտեղ: Այն, բացի այսրկովկասյան ազդեցությունից, ընդհանուր առմամբ ամուր հենարան էր Սեֆյան Իրանի նկատմամբ ռուսական հավակնությունների դեմ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ 1725 թ. Ղարաբաղի հայերի կողմից գերեվարված օսմանցի փաշաներից մեկը հայտնել է, որ ռուսների մուտքը տարածաշրջան ծովային ճանապարհով իրենց ստիպել է հարձակվել այդ տարածքների վրա: Հետևաբար այդ միջակայքում ապրող ժողովուրդները՝ ներառյալ հայերը, պետք է ոչնչացվեն, ապա հավելել է, որ եթե հայերը չլինեին, ապա օսմանյան բանակը կգրավեր Դերբենտը և Բաքուն³:

¹ Տե՛ս Լысов В. П., նշվ. աշխ., էջ 213:

² Տե՛ս Նույն տեղում, էջ 136-137:

³ Տե՛ս Эзов Г. А., նշվ. աշխ., էջ 422:

Օսմանյան նկրտումների առաջին քայլը 1723 թ. ամռանը Թիֆլիսը գրավելն էր¹, որից հետո թիրախ էր դարձել Շամախին: Սակայն աշնանը, 80000 զորաբանակով² շարժվելով այդ ուղղությամբ, նրանց չհաջողվեց կոտրել Գանձակի դիմադրությունը, որի պաշարումը տևեց 20 օր³:

Օսմանյան հարձակումը Թիֆլիսի վրա լուրջ ահազանգ էր Ռուսաստանի համար, ինչը ստիպեց հատուկ վերահսկողություն սահմանել գրավված Դերբենտում, Գիլանում, իսկ հուլիսից՝ նաև Բաքվում⁴: Պետրոս Մեծը միաժամանակ շարունակում էր աշխատանքներ իրականացնել հայերի դիմադրությունը համակարգելու ուղղությամբ և ի դեմս հայազգի Իվան Կարապետի՝ ներկայացուցիչ ուղարկեց Ղարաբաղ, որն այնտեղ հասավ միայն դեկտեմբերին⁵: Վերջինս 1723 թ. հունիսի 3-ին թվագրված նամակով պետք է դիմեր հայ մեծամեծներին հավաստիացնելու, որ հայերի ազատագրման խնդիրը մեծապես կախված է մերձկասպյան շրջաններում ռուսական զորքերի տեղակայումից, և կոչ էր անում հնարավորինս դիմադրել օսմանցիներին: Այնուհետև հավելում էր, որ հայերը վայելում են Ռուսաստանի հովանավորությունը, և եթե դիմադրությունն անհնարին լինի շարունակել, ապա կարող են տեղափոխվել մերձկասպյան տարածաշրջաններ⁶: Արձանագրենք, որ տեղափոխության առաջարկն աննախադեպ էր, ինչը փաստում է, որ ռուսները, հաշվի առնելով օսմանցիների ներխուժումն Այսրկովկաս, փորձում էին համակարգել տեղի ուժերը Օսմանյան կայսրության զորքերի դեմ և այդպես առնվազն խոչընդոտել հակառակորդի առաջխաղացումն առանց իրենց անմիջական մասնակցության, իսկ անհաջողության դեպքում համակերպվել այդ տարածքների կորստի հետ:

Չնայած Գանձակի մոտ սուլթանական բանակի կրած անհաջողությանը՝ օսմանցիները լի էին շուտափույթ հաջողություններ գրանցելու վճռականությամբ: Դեռևս 1723 թ. հոկտեմբերի 27-ին Կ. Պոլսի ռուս ռեզիդենտ Իվան Նեպլուևը հայտնում էր, որ օսմանցիները սպառնացել են, թե ձմռանը կգրավեն Երևանն ու Թավրիզը⁷: Ռուսները գիտակցում էին, որ առանց իրենց օգնության հայերը չէին կարող երկար ժամանակ դիմագրավել հակառակորդին, որը սպառնում էր ցարական ձեռքբերումներին, ուստի ռուսական կողմի՝ օսմանցիներին ուղղված դիմում-առաջարկով հորդորում էին զերծ

¹ Տե՛ս Լысов В. П., նշվ. աշխ., էջ 135:

² Տե՛ս Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. II, ч. II, Ереван, 1967, с. 51:

³ Տե՛ս Арутюнян П. Т., Освободительные движения армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 167:

⁴ 1723 թ. հուլիսին գեներալ Մատյուշկինի գլխավորությամբ ռուսները գրավեցին Բաքուն:

⁵ Տե՛ս Աբրահամյան Ա. Գ., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 31:

⁶ Տե՛ս Эзов Г. А., նշվ. աշխ., էջ 355-356:

⁷ Տե՛ս Армяно-русские отношения..., т. II, ч. II, с. 153:

մնալ հետագա առաջխաղացումից¹: Օսմանցիների համար այն բարենպաստ էր այնքանով, որ առիթ էր վերանայելու իրենց քաղաքականությունը տարածաշրջանում: Եթե նախկինում նրանք տեսչում էին ամեն գնով տիրելու ամբողջ Իրանը և սպառնում էին պատերազմով, ապա արդեն բացահայտորեն նկատում էին ռուսական հաջողությունները: Հետևաբար տրամաբանական է, որ 1723 թ. վերջին կողմերը պայմանավորվեցին, որ Կովկասում դեմ դիմաց հայտնվելու դեպքում պետք է զերծ մնային պատերազմական գործողություններից²: Նման համաձայնությունը միտում ուներ առաջին հերթին ժամանակ շահելու և խուսափելու միմյանց դեմ հնարավոր պատերազմից: Սակայն դա չէր նշանակում, որ օսմանցիները պետք է բավարարվեին միայն Թիֆլիսի գրավումով: Նրանք փորձեցին որքան հնարավոր է շատ տարածքներ գրավել՝ հակադրվելով ռուսական ձեռքբերումներին: Ուստի սուլթանական բանակը 1724 թ. Թիֆլիսից ուղղվեց Երևան՝ նպատակադրվելով գրավել այն: Կարբիի 40 օրյա դիմադրությունը կոտրելուց հետո (սկիզբը՝ 1724 թ. ապրիլի 25-ից)³, օսմանցիները ձեռնամուխ եղան Երևանի գրավմանը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 23-ին, թեև պաշարումը սկսվել էր հունիսի 24-ին⁴:

Ռուս-օսմանյան տևական բանակցություններից հետո 1724 թ. հունիսի 12-ին ֆրանսիական միջնորդությամբ կնքվեց ռուս-օսմանյան հաշտության պայմանագիրը, որով Ռուսաստանին էին անցնում Դերբենտից Մազանդարան ընկած մերձկասպյան տարածքները, իսկ Օսմանյան կայսրությանը՝ Այսրկովկասը, ինչպես նաև՝ Թավրիզն ու Քերմանշահը⁵: Ինչ վերաբերում է Շամախիին, ապա այն դրվեց օսմանյան հովանավորչության ներքո, սակայն այնտեղ նա չէր կարող գործ ուղարկել, իսկ մնացյալ տարածքները ճանաչվում էին Իրանի անբաժանելի մաս, եթե շահ Թահմասպյն այդ պայմաններն ընդուներ⁶: Այդ պայմանագրով օսմանյան և ռուսական կողմերը խուսափեցին հնարավոր բախումից, ինչը ձեռնտու էր նրանց անգամ այն պարագայում, որ դրանով Օսմանյան կայսրությունը գրկվեց մերձկասպյան տարածաշրջաններ արշավելու հեռանկարից, իսկ Ռուսաստանը՝ Այսրկովկասում հաստատվելու մտքից:

Այսպիսով, անասելի ծանրանում էր տարածաշրջանի ժողովուրդների, գլխավորապես հայերի կացությունը, իսկ դժվարանում էր զինված պայքարը հակառակորդի դեմ, քանի որ այն մեծապես կախված էր Ռուսաստանի առաջխաղացումից դեպի Շամախի: Դրա կարևորության մասին հանդիպում

¹ Տե՛ս **Лысов В. П.**, նշվ. աշխ., էջ 146:

² Տե՛ս նույն տեղում, էջ 147:

³ Տե՛ս **Այվազյան Ա. Մ.**, Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին // «ՊԲՀ», 1991, թիվ 1, էջ 100:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 93-100:

⁵ Տե՛ս *Армяно-русские отношения в первой трети XVIII века*, т. II, ч. I, с. LXXV:

⁶ Տե՛ս **Лысов В. П.**, նշվ. աշխ., էջ 238:

ենք նաև դեռևս 1722 թ. դեկտեմբերի 12-ին Մինաս արքեպիսկոպոս Փերվազյանի՝ Մինաս վարդապետին ուղղված նամակում, որտեղ նա հորդորում էր հնարավորինս շուտ միջնորդել, որպեսզի ռուս զինվորները Շամախի մուտք գործեն¹: Վերոհիշյալ իրադարձությունները թույլ են տալիս հավաստելու, որ ռուսների գործնական քայլերն այդ ուղղությամբ հնարավոր էր ակնկալել Դերբենտի գրավումից հետո, սակայն 1722 թ. հոկտեմբերին՝ օսմանցիների կողմից Դադստանի լեռնականների հովանավորությունը ստանձնելուց և Այսրկովկաս ներխուժումից ի վեր, դրա իրագործման իրատեսական քայլերը կարելի է դատապարտված համարել: Դրանից հետո ռուսական կողմի առաջխաղացումը դեպի Շամախի բացառված էր. Պետրոս Առաջինը, չունենալով ամուր հենարան, չէր ցանկանա պատերազմել Օսմանյան կայսրության դեմ: Դրա փոխարեն ամրապնդելով վերահսկելի շրջանները՝ նա միաժամանակ տեղի ռուսամետ ուժերին հույս ներշնչող կոչեր էր անում՝ ձգտելով միասնական պատնեշ ստեղծել: Դրա իրագործման համար հույժ կարևոր էր չքույլատրել օսմանյան գորքերի մուտքը Շամախի, որի դիմաց ստեղծված իրավիճակում կարելի էր զիջել պայմանագրով նախատեսված տարածքները, որի հետևանքով Շամախին չեզոք գոտի դարձավ ռուս և օսմանցի զինվորների համար՝ զերծ մնալով կողմերի անմիջական ներկայությունից:

Բարձր Դուռն իր հերթին էր խուսափում պատերազմից, քանի որ հակառակորդն ամենին թույլ չէր, և նկատի ունենալով մերձկասպյան շրջաններում ամրապնդվելու հանգամանքը՝ հաղթանակի հասնելու որևէ երաշխիք չունեիր: Այդ գործում նշանակալի էր այն հանգամանքը, որ օսմանցիները, տեղյակ լինելով Իվան Կարապետի ներկայությանը և գործունեությանը, զգուշանում էին, որ իրենց գորքերի առաջացման դեպքում տարածաշրջանի ռուսամետ ուժերը, որոնք արժանի դիմադրություն էին ցուցաբերում, կարող էին շատ մեծ հարված հասցնել թիկունքից, ուստի ռիսկի դիմելու կարիք չկար: Անխոս, հետագայում երկու երկրները տեսականորեն պահպանում էին միմյանց դեմ պատերազմելու հնարավորությունը, ինչը մեծ լարվածություն էր առաջացնում, սակայն կողմերը մինչև 1720-ականների վերջը խուսափեցին միմյանց դեմ առճակատումից:

Պետրոս Մեծի մահից հետո Ռուսաստանը, ելնելով զանազան դժվարություններից, իր ներկայությունը կասպյան տարածաշրջաններում անշահավետ համարեց, ուստի և Թահմասպ II-ին սիրաշահելու համար կայսրուհի Եկատերինա I-ը պատրաստվում էր հրաժարվել Գիլանից, Մազանդարանից, Աստրաբադից²: Սա նշանակում էր, որ այդ ժամանակ ևս որևէ խոսք չէր կարող լինել հայերին աջակցելու մասին: Ավելին՝ տարածաշրջանի ռուս ներկայացուցիչ Դոլգորուկովի 1726-1727 թթ. խնդրանք-նամակները, որոն-

¹ Ст' у Армяно-русские отношения..., т. II, ч. II, с. 17-20:

² Ст' у Соловьев С., История России в царствования Императора Петра 2 и Анны Иоанновны, т. 1, М., 1868, с. 7:

ցով նա կոչում էր իշխանությանը զինված ուժերով սատարել օգնություն խնդրող հայերին¹, որևէ դրական արձագանքի չէին արժանանում: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությանը, ապա, ի թիվս այլ երկրամասերի, մինչև 1728 թ. այն կարողացել էր մեծ պայքարի գնով գրավել պայմանագրով նախատեսված ամբողջ Արևելյան Հայաստանը:

Георгий Мирзабекян – *Об оценке политической ситуации 1720-х гг. на Южном Кавказе*

Армянский народ в 20-х годах XVIII века в интересах освободительного движения в Карабахе и Сюнике надеялся на помощь России, и армянское духовенство неоднократно отправляло письма в Петербург. Главной целью заинтересованности России в Закавказье в начале Персидского похода было занятие Шамахи, что обеспечило бы крепкую связь между русскими войсками и христианскими народами региона. Вторжение османских войск в Тифлис в 1723 г. повлияло на планы России в Восточном Закавказье, что позволило османцам осуществить захват Восточной Армении до 1728 г.

Georgi Mirzabekyan – *On the Assessment of the Political Situation in Transcaucasia in the 20s of the XVIII century*

In the 20s of the XVIII century coming out of the interests of the liberation movement in Karabakh and Syunik the Armenian people relied on the aid from Russia, and the Armenian clergy repeatedly sent letters to Petersburg. The main goal of Russia's interest in Transcaucasia at the beginning of the Persian campaign was the occupation of Shamakhi, which would ensure a strong connection between the Russian troops and the Christian peoples of the region. The invasion of Ottoman troops in Tiflis in 1723 influenced Russia's plans in the Eastern Transcaucasia, which allowed the Ottomans to seize Eastern Armenia until 1728.

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 16:

**ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԵՎ «ԿՈՂՄՆԱԿԻ ՎՆԱՍՆԵՐԻ» ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ.
ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈՐԲԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ԽՆԴՐԻ ՇՈՒՐԶ**

Բանալի բառեր – որբ, որբախնամ գործունեություն, ինքնություն, ուժացում, կազմակերպված բարեգործություն

Մինչ Հայոց Մեծ եղեռնի ողբերգական դեպքերը որբացած երեխաների խնամքը կազմակերպելու նպատակով հայերը հիմնականում ապավինել են համայնքային ներքին ուժերին՝ նրանց տեղավորելով հարազատների կամ համայնքում հարզանք վայելող ընտանիքներում: Երեխաներին անվանում էին հոգեզավակներ, իսկ խնամող ծնողներին՝ հոգեծնողներ՝ դրանով իսկ շեշտելով նման առաքելության բացառիկ հոգևոր արժեքը: Երեխային՝ հարազատների կամ համայնքի մեկ այլ հարզված ընտանիքի խնամքին հանձնելու սովորույթը հայերն ամրագրել են եկեղեցական կանոնագրքերում և որդեգրության, խնամատարության ու խնամակալության հատուկ ծիսակատարությամբ¹: Պետականություն չունենալու պայմաններում եկեղեցին գրեթե տասը դար շարունակ կանոնակարգել է որբ երեխաների հանդեպ համայնքային նման հոգածությունը՝ ընդգծված հարզանքի արժանացնելով «որբին տիրություն անող» օտար ընտանիքին: Վերջինս իր հերթին, չգրված օրենքներով, հանձն էր առնում պարտականություններ, որոնք երաշխավորում էին հոգեզավակի՝ մերօրյա տերմինաբանությամբ՝ լեզվի, կրոնի, ավանդույթների, ինքնության պահպանումն ու ընտանիքում մեծանալու իրավունքի գործնական պաշտպանությունը:

Սոցիալական այս պրակտիկայի սովորական դիթմը խախտվել է այն դեպքերում, երբ երկիրը ենթարկվել է հարձակման, ինչի հետևանքով որբ մնացած հարյուրավոր երեխաների խնամքը կազմակերպելու համար եկեղեցին ստիպված էր կացարաններ ստեղծել, որոնք հետագայում վերածվեցին որբանոցների, որոնց կարիքը հատկապես մեծ էր Եղեռնի ընթացքում և դրան հաջորդած տարիներին: Որբացած երեխաների աննախադեպ մեծ թի-

¹ Որբախնամության հանձնելու ծեսն ավելի քան խոսուն է. քահանան եկեղեցի է հրավիրում ապագա ծնողներին, մորը խաչի ներքո լայն, ձյունաճերմակ մեծ շապիկ է հագցնում, երեխան անկախ տարիքից, շապիկի ներսն է անցնում՝ մոր մարմնին մոտ, շապիկը իջնում է, ապագա հայրը բարձրացնում է շապիկը և գրկում երեխային, և այս ամենը քահանայի երգեցողության և խաչակնքման ուղեկցությամբ:

վը ստեղծված քառտիկ պայմաններում մեծ մարտահրավեր էր եկեղեցու համար: Այդ շրջանում, եկեղեցուց բացի, որբերին սատարելու առաքելություն էին ստանձնել նաև բարեսիրական ու միսիոներական որոշ կազմակերպություններ՝ հիմնելով բազմաթիվ որբանոցներ: Թեև որբերի ֆիզիկական գոյության խնդիրը ինքնին շատ սուր էր, իսկ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը անկանխատեսելի և բարդ, այնուամենայնիվ նրանց ինքնության, լեզվի ու կրոնի պահպանումը եկեղեցին փորձում էր պահել որպես օրակարգային խնդիր՝ անկախ որբախնամ կազմակերպության միսիոներական առաքելությունից: Չնայած գործադրվող ջանքերին, բուն Եղեռնի ընթացքում և հետադարձ հայ որբերի ինքնության պահպանումը գրեթե անհնարին դարձավ հատկապես Թուրքիայի տարածքում՝ որբ երեխաների նկատմամբ կիրառվող բռնի իսլամացման պետական քաղաքականության պատճառով:

Օսմանյան կառավարության ու նրա առանձին ղեկավարների «որբախնամ գործունեությունը» իրականացվել է երկու միջոցով՝ տեղավորում թուրքական որբանոցներում և բաշխում տեղի մուսուլմանական ընտանիքներում¹: Այս «բարեգթության նպատակը» նախ և առաջ տնտեսական շահն էր՝ ողջ մնացածների՝ որպես «անվճար ապրանքի» հնարավորինս արդյունավետ «օգտագործումը» թուրք հասարակության շահերի համար: Այսպես, թեև Թուրքիայում արդեն իսկ բավականաչափ թվով միսիոներական քրիստոնեական որբանոցներ կային, կառավարությունը որբերին տեղավորում էր պետական որբանոցներում՝ բռնի իսլամացման հանձնարարականներով և դրա դիմաց հավելյալ ֆինանսավորման խայծով²: Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվերի՝ 1916 թ. մայիսի 9-ին ներքին գործերի նախարար Թալեաթին ուղղած նամակում նշվում էր. «Կրոնափոխ և ոչ կրոնափոխ հայ որբերին եթե վերցնենք մեր որբանոցները, ես պատրաստ եմ ռազմական բյուջեից հոգալու դրա համար անհրաժեշտ ծախսերը»³:

Զեմալ փաշան ևս անդրադարձել է իր «որբախնամ» գործունեությանը. «Բռնագաղթի ենթարկված երեխաներին մահից և բարոյական վտանգներից

¹ Մեծ հայասեր Արմին Վեգների՝ իբրև ականատեսի վկայությունը. «Շարք մը երեխաներ ազատեցան այս ձևով, բայց իբրև սոսկական թուրքեր մեծցան, և իրենց ծագումին հավետ անտեղյակ մնացին»: Տե՛ս **Ազատեան Լ.**, Հայ որբերը մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, էջ 67:

² Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեայի Դևիսը այդ առիթով գրում է. «Բացահայտ է, որ կառավարությունը որոշել է ամեն կերպ թույլ չտալ, որ այստեղ մնացած արտասահմանյան միսիոներները կրթական կամ կրոնական գործունեություն ծավալեն: Որոշ հայուհիների ամուսնացնում են մահմեդականների հետ, որոշ հայ երեխաների էլ մահմեդականացնում են, բայց ոչ ոքի թույլ չեն տալիս ուրիշ, օտար ազդեցությունների ենթարկվել»: Տե՛ս **Դևիս Լ.**, Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ. (թարգմանությունը՝ Գրիգոր Զանիկյանի), Երևան, 2001, էջ 279-280:

³ **Atnur İ.**, Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 56-57 (մեջբերումը՝ Ռուբեն Մելքոնյանի թարգմանությունից):

փրկելու համար Միրիայում պահեցի: Նրանց համար որբանոցներ բացեցի. մեկ հատը Լիբանանում՝ Ային Թուրա մենաստանում, երկրորդը՝ Դամասկոսում, երրորդն էլ՝ Հալեպում: Այս որբանոցները, որտեղ կային 3000-4000 երեխաներ, անձամբ իմ պաշտպանության տակ վերցրեցի և երեխաներին ուտելիք, հագուստ և դաս տալու համար ամբողջ ծախսերը բանակի բյուջեից վճարեցի»¹:

Թուրք կառավարիչների կողմից հայ որբերի հանդեպ նման «հումանիտարական» մոտեցման հաջորդ նպատակը հայ աղջիկ որբերի նպատակադրված իսլամացման միջոցով թուրքական գենոֆոնդի հարստացումն էր², ավելին՝ դա շատ «հարմար» լուծում էր, քանի որ անգամ փրկագին վճարելու անհրաժեշտություն այլևս չկար³: Տղա որբերը շատ հարմար էին հոմոսեքսուալ պահանջումների բավարարման համար: Ցեղասպանագետ Վահագն Դադրյանը նշում է. «Թուրքերի համար ապրանքի վերածված այդ երեխաները դիտվում էին որպես թուրք ժողովրդի էթնիկ գենային նկարագիրը հարստացնելու համար փնտրված աղբյուր»⁴:

Ի լրումն որբանոցների միջոցով հայ որբերի իսլամացման նպատակադրված գործունեությանը՝ օսմանյան կառավարությունը դրամական խրախուսանքների միջոցով քաջալերում էր իր քաղաքացիներին՝ հայ որբերին իբրև «սև գործ կատարող տան ծառա» ընդունել՝ մուսուլմանացնելու պայմանով: Թալեաթի 1915 թ. հուլիսի 10-ի ներքին նամակագրությունը վկայակոչում է. «Երեխաներին իսլամական սովորույթներին համապատասխան ձևով բաժանել բարեկեցիկ ընտանիքներին այն գյուղերում և գյուղաքաղաքներում, որտեղ չկան հայեր: Եթե երեխաների թիվը շատ է, նրանց տալ մաքուր և պատվարժան ընտանիքներին, որոնք ապրուստը դժվար են հոգում. այդ նպատակով ամեն երեխայի համար ընտանիքներին վճարել ամսական 30 քուրուշ, կազմել ստույգ աղյուսակներ, թե ում են տրվել այդ երեխաները և մեկ օրինակ ուղարկել կենտրոն»⁵: Նրա՝ հայ երեխաների նկատմամբ

¹ Հղումը ըստ՝ **Մելքոնյան Ռ.**, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010, էջ 30:

² Լայնորեն հայտնի են հավատափոխ հրեական ընտանիքից սերած՝ Խալիտե Էտիպի և նրա համախոհներ Պելքիս Շեքերե ու Նիկար հանրմների տխրահեջակ անունները՝ հայ երեխաներին թուրքացնելու, մուսուլմանացնելու ուղղությամբ գործադրած ջանքերի շնորհիվ: Խալիտե Էտիպ հանրմը չի թաքցրել իր նպատակը՝ հայերի միջոցով գեղեցկացնել թուրք ազգի տեսակը: Վերոհիշյալ հանրմների գործունեությունը եզակի չէ. պետական քաղաքականության դրսևորումներից մեկն էր, որի վերաբերյալ գոյություն ունեն փաստեր ու փաստաթղթեր: Տե՛ս **Ազատեան Լ.**, Հայ որբերը մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, էջ 62:

³ Իսլամաթուրքական ամուսնության սովորույթների համաձայն՝ տղայի կողմն ուղղակի գնում է հարսին՝ նրա ծնողներին վճարելով որոշակի գումար:

⁴ Տե՛ս **Dadrian V.**, Türk kaynaklarında Ermeni soykırımı (Toplu Makaleler 2), İstanbul, 2005, s. 313 (մեջբերումը Ռուբեն Մելքոնյանի թարգմանությունից):

⁵ Տե՛ս **Անտոնեան Ա.**, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 180:

իրական «մտահոգության» բուն պատճառը կրկին բացահայտվում է 1915 թ. դեկտեմբերի 12-ին Հալեպ ուղարկած հաջորդ ծածկագիր հրահանգից. «Հաւաքեցէք և սնուցէք այն որբերը միայն որոնք չեն կրնար յիշել զուլումը որուն ենթարկուեցան իրենց ծնողները: Մնացածները կարաւաններուն ընկերացնելով դրկեցէք»¹:

Բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ թե՛ տղաները և թե՛ աղջիկները ձրի աշխատուժ էին թուրք ընտանիքներում, առիթ՝ ստանալու կառավարությունից դրամական նպաստ: Ավելին, ուժացման ու իսլամացման ճակատագրին արժանացել են ոչ միայն որբացած երեխաները: «Մարզվանի, Ամասիայի և Թոքատի (Եվդոկիա) տարագիր հայության քստրի ժամանակ պետական պաշտոնյաները քարավաններից առանձնացրել են երեխաներին, իսկ նրանց տարագիր ծնողներին հրամայել շարունակել ճանապարհը: Այնուհետև հայտարարություններ են տարածել շրջակա գյուղերի մուսուլման բնակչության շրջանում, որպեսզի գան և վերցնեն իրենց նախընտրած հայ երեխային»²:

Իսլամացմանը զուգահեռ՝ ստրկացված երեխաների անունները նույնպես թրքացվում էին, նրանց արգելում էին խոսել մայրենի լեզվով. անգամ ցավ զգալուց երեխան չէր կարող մայրենի լեզվով ճչալ, այլապես կկորցնէր կյանքը³:

Հայ որբերի հանդեպ նման «գթասրտության» հաջորդ շարժառիթը պայմանավորված էր պատերազմի ելքի հետ կապված մտահոգությամբ: Ռուսաստանի հետ սահմանամերձ պատերազմական գոտում բնակվող ընտանիքները հատկապես շահագրգիռ էին վերցնելու հայ որբերին այն հաշվար-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 187:

² Տե՛ս **Ջավէն Արքեպիսկոպոս**, Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 138:

³ «Մեզ տեղ հասցնելուց անմիջապէս հետո թուրքացրին, անուններս փոխեցին, դասարանների բաժանեցին, Կ. Պոլսից հրավիրված դասատուները սկսեցին մեզ հետ պարապել: Խստիվ արգելեցին հայերեն խոսել: Հատուկ դասարանների ավագներ նշանակեցին մեծահասակներից, որոնց պատվիրել էին հայերեն խոսողներին ցուցակագրել պատժելու համար: Այս ավագները հավատարմությամբ կատարում էին իրենց պարտականությունները: Ամեն երեկո, երբ ամբողջ երեխաներին հավաքում էին աշխատողների հետ մասին ՋԱՌՅԱ-ի և բոլորը միատեղ երեք անգամ թագավորը երկար ապրի էին գոչում, այդ հանդիսավոր ժամին կարդում էին օրվա հայերեն (գլավուրջա) խոսողների ցուցակը և թուրքավարի պատժում ամեն օր, մինչև որ բոլոր երեխաները վերջ տվեցին հայերեն խոսելուն: Պատժի ձևը հետևյալն էր. մեջքի վրա պառկեցնում էին, երկու ոտքերը վերև բարձրացրած երկու հոգի բռնում, իսկ ինքը՝ որբանոցի ղեկավարը, անձամբ գավազանով 100-200 հարված հասցնում ոտքերին: Վայ այն երեխային, որն այդ ծեծի ժամանակ կանչեր «մայրիկ», «մամա ջան». գազանը առավել կգազազեր և կշարունակեր իր հարվածները՝ մինչև քիչ հանդարտվեին կրքերը: Ծեծի այդ ձևը թուրքերեն ֆալախա քաշել էին անվանում: Շատ տղաներ ոտքերից վնասվածքներ ստացան և կաղ մնացին» («Ային Թուրա» որբանոցի սաներից մեկի նամակը՝ ուղղված Ջոն Կիրակոսյանին): Տե՛ս **Անտոնեան Ա.**, նշվ. աշխ., էջ 180:

կով, որ էթե պատերազմն իրենց համար անցանկալի էլք ունենա, ապա «Բարեգործությունը» կօզնի ազատվել հնարավոր պատիժներից: «Ռուսական գորքի հաղթանակների ժամանակ թուրքերը ձգտել են իրենց տներում հայ երեխա պահել, որպեսզի բարերարի հանգամանքով պատասխանատու-թինից ազատին»¹:

Այսպիսով, հայ որբերին իսլամացնելու և ուժացնելու նպատակով Թուրքիայում օգտագործվում էին հավասարապես թե՛ պետական լծակները և թե՛ հանրության հնարավորությունները՝ շրջանառելով «հայերի վտանգավորու-թյունը չեզոքացնելու» շինծու հիմնավորումը՝ երեխաների բռնի իսլամա-ցումը ներկայացնելով որպես հետագա ռիսկերի կանխարգելման անհրա-ժեշտություն: Ի դեպ, հանրության ուղեղի նման վացումները և հետագայում եղեռնի փաստի վերաբերյալ նրա համար ստեղծված արհեստական տեղե-կատվական մշուշն իրենց ազդեցությունն են թողել նրա ներկա պատկե-րացումների վրա: Թուրքիայի սոցիալական ոլորտի ներկայիս որոշ պա-տասխանատուների շուրթերով տեղի ունեցածը ներկայացվում է որպես թուրք ժողովրդի ու կառավարության գթասիրտ վերաբերմունքի առհա-վատյալ, թեև ստիպված են խոստովանել բռնի իսլամացման փաստը: Այս-պես, նրանք համոզված են, որ «հայերը, 1912-15 թթ. հեռանալով Թուրքիայի տարածքից, իրենց հետևում թողեցին բազմաթիվ երեխաների, որոնք ան-խնամ էին, սոված ու որբ: Բազմաթիվ թուրք ընտանիքներ, բարի կամքի դրսևորման միջոցով, իրենց խնամքի ներքո վերցրեցին այդ «հետևում մո-ռացված երեխաներին» և, ապա խոստովանեցին, որ բնականաբար, այդ երե-խաները հետագայում մահմեդականացվել են»²:

Զբացառելով, որ առանձին դրական դեպքեր կարող էին լինել, երբ երե-խաներին դրկից թուրքերը ապաստանել են նաև անշահախնդիր (այդպիսով փորձ անելով փրկել նրանց կյանքը)³, այնուամենայնիվ դժվար է պնդել, որ դրանք ծանրակշիռ տվյալներ են՝ հարուցած «կողմնակի վնասների» համե-մատ: Թուրքական այս կեղծ գթասրտությանը հակադրվում են թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստանում որբերի փրկությանն ուղղված մի շարք հա-խուռն նախաձեռնություններ, որոնց նպատակը նրանց ֆիզիկական փրկու-թյունն ու «հետզնումն» էր: Այսպես, Արևելյան Հայաստանում հայերը դրսևո-րեցին ինքնակազմակերպման գրեթե անհավանական զոհողություն՝ գյուղա-կան ընտանիքներում պարզապես հյուրընկալելով գաղթականներին ու

¹ Տե՛ս Սինախորեան Վ., 1915 թականը. Արհալիրքի օրեր, Թեհրան, 2006, էջ 327:

² Վալիդողլի Դ., «Խնամատարությունը անցյալում և ներկայում. թուրքական իրողու-թյուններ» գեկույց, «Խնամատարությունը անցյալում և ներկայում» միջազգային համաժողով, Մալթա, 2005:

³ Դատելով Թուրքիայում ներկայումս ապրող ծպտյալ հայերի աստիճանաբար ինքնաբա-ցահայտվելու փաստից՝ կարելի է ենթադրել, որ իսլամացումը, այնուամենայնիվ, ոմանց հնա-րավորություն է տվել խուսափել աքսորից ու ջարդերից:

հատկապես որբերին: Այս ամենի համար մի շարք գործոններ կային՝ ընդհանուր վիշտը, ցարական իշխանությունների անհասկանալի լռությունը, վիրավորանքը «աշխարհի անտարբեր աչքի առջև տեղի ունեցածի հանդեպ»: Այստեղ որբերի փրկությանն ուղղված ջանքերն ավելի շատ ինքնաբերաբար էին և հախուռն: Մյուս կողմից, Արևմտյան Հայաստանում ամերիկյան և եվրոպական առանձին երկրների աջակցությունն առավել կազմակերպված էր (ստեղծվեցին մանկատներ, ապաստարաններ): Դրան գուգահեռ, Կ. Պոլսում և Կահիրեում հայերի ուժերով ստեղծված միավորումները (որոնց գործունեությունը ցարական Ռուսաստանի տարածքում արգելված էր)¹, հանձնառան որբախնամության հոգսը: Չնայած այն հանգամանքին, որ հայկական կազմակերպությունների ու միավորումների գործունեությունն այդ շրջանում արգելված էր, այնուամենայնիվ առանձին անհատների գործունեությունը բարեսիրական նպատակով ոչ միայն չէր արգելվում, այլև քաջալերվում էր²:

Բուն Արևելյան Հայաստանում գաղթականների առաջին մեծ ալիքի հյուրընկալումից հետո պարզ դարձավ, որ հավաքական ուժերով կազմակերպված հանրաշահ գործեր կատարելու համար լավագույն միջոցը մարդկության փորձից հայտնի ընկերությունների հիմնումն է (այստեղ նույնպես ստեղծվեցին միավորումներ): Որբերին օգնելու առաքելությամբ այդ միություններն արագորեն տարածվեցին Ռուսաստանում, Երևանում, Էջմիածնում, Թիֆլիսում և այլուր³:

Հարկ է նշել, որ ցարական իշխանությունները սկզբնական շրջանում առանձնապես չջանացին միջամտել Ռուսական կայսրության տարածք տե-

¹ Բաբվի մարդասիրական օգնության կոմիտեն (ստեղծված 1864 թ.), Կովկասի հայոց մարդասիրական օգնության կոմիտեն (ստեղծված 1881 թ. Թիֆլիսում) և մյուսները կրթական-լուսավորչական գործունեություն ծավալելու առաքելությամբ էին ստեղծված, մի բան, որը ցարական իշխանությունների վարած քաղաքականությանը չէր համապատասխանում:

² Գ. Ջանշյանը 1897 թ. Մոսկվայում ռուսերեն լույս ընծայեց «Եղբայրական օգնություն Թուրքիայում տառապյալ եղբայրներին» խորագրով մի բարձրարժեք ժողովածու: Վերջինիս հաջողությունն այնքան մեծ էր, որ այն 1898 թ. կրկին տպագրվեց: Գրքերի վաճառքից ստացված միջոցներով Գ. Ջանշյանը որբանոցներ բացեց Արևմտյան Հայաստանում: Պետրոգրադի քաղաքագլուխ, կոմս Իվան Իվանովիչ Տոլստոյի նախաձեռնությամբ բարեգործական նպատակով թողարկված մեղալը հայերի և ռուսների եղբայրության, համերաշխության և բարեկամական օգնության խորհրդանիշն էր: Մեղալի դիմերեսին պատկերված է Ռուսական կայսրության զինանշանի երկգլխանի արծիվը՝ հետևյալ գրությամբ. «Ռուսք առ հայս ի ժամու փորձանացս», ինչպես նաև մեղալի թողարկման տարեթիվը՝ 1915: Դարձերեսին հայկական ավանդական խաչն է՝ «Տէր կեցո զհայս» գրությամբ: Հայտնի է, որ այդ մեղալով պարզևատրվել են որբահավաքագրության մեջ աչքի ընկած անհատներ:

Տե՛ս Իրապատում // [Էլեկտրոնային աղբյուր] // URL: imyerevan.com/hy/culture/view/10526

³ Տե՛ս Մելքոնյան. Ռ., Հայկական բարեգործական ընդհանուր միության գործունեությունը 1910-1930 թթ., Երևան, 2001:

ղափոխված բազմահազար գաղթականներին ու որբ երեխաներին ապաստանելու, նրանց կարիքները հոգալու հարցում՝ առաջ բերելով հատկապես մտավորական հայերի ցասումն ու դժգոհությունները: Պաշտոնական աջակցությունը ցարական իշխանություններից հնարավոր եղավ ստանալ միայն այն բանից հետո, երբ 1915 թ. օգոստոսի 30-ին ասպարեզ եկավ «Գաղթականների վիճակի ապահովման միջոցառումների վերաբերյալ» օրինագիծը, ինչը կանոնակարգեց պաշտոնական օգնությունը՝ հիմնելով հատուկ խորհուրդ և հատուկ գրասենյակ Կովկասի փոխարքայությունում¹: Այդ խորհրդի ջանքերով Արևելյան Հայաստանում որբ երեխաները կենտրոնացվեցին հատկապես Ալեքսանդրապոլում, որն այդ տարիներին համարվում էր որբերի քաղաք² և հովանավորվում էր Ամերկումի կողմից³, ինչպես նաև Էջմիածնում, Աշտարակում, Դիլիջանում և այլուր:

Որբախնամ գործունեությունը համակարգելու համար Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից հիմնվեց Հայկական կենտրոնական կոմիտեն, որն իր հերթին ստեղծեց Որբանոցների կառավարման խորհուրդ⁴: Որբերի և գաղթականների չդադարող հոսքը դեպի խորհուրդ, որը հետագայում կոչվեց «Խնամատարության խորհուրդ», ստիպեց մի կողմից զբաղվել որբահավաքությամբ, մյուս կողմից՝ հիմնել ապաստարաններ, կացարաններ, որբանոցներ՝ համատարած սովի ու զրկանքի, ինչպես նաև աստիճանաբար նվազող միջազգային օգնության պայմաններում:

Որբախնամության գործի կազմակերպումն իրապես գրեթե անհաղթահարելի խնդիր էր. եթե աշխարհով մեկ սփռված որբերի հետքերի պահպանումը աշխարհագրական մասշտաբայնությանն էր բախվում, իսկ տարիքով փոքր որբերի պարագայում՝ ծագումը պարզելու դժվարությունների, ապա բուն Թուրքիայում քրդերի, թուրքերի ընտանիքներում ծվարած և որբանոցներում գերեվարված որբերի հավաքագրումը կապված էր մեծ ռիսկերի հետ: Թուրքիայում և մուսուլմանական այլ երկրներում որբերի հավա-

¹ Եթե չլինեք Կովկասի հայ բնակչության անմնացորդ նվիրումը, ցեղասպանությունից փրկված հայերի մեծ մասը դատապարտված կլինեք մահվան: Տե՛ս «Հորիզոն», 1917, հունվարի 26:

² Ցարական Ռուսաստանը Թուրքիայի սահմանի մոտ՝ Կարսում և Ալեքսանդրապոլում, իր գործերի տեղակայման համար մեծածավալ քարե շինություններ էր կառուցել՝ վարչական, սանիտարաբժշկական, ոստիկանական շենքեր, գորանոցներ, վառելիքի և զինամթերքի հսկայածավալ պահեստներ, լվացքատներ, բաղնիքներ, ճաշարաններ ու հացաթխման փուռեր, էլեկտրամատակարարման կայաններ: Հենց այդ շենքերն էլ դարձան ապաստարաններ հազարավոր որբ մանուկների համար:

³ Ամերիկյան որբանոցների գոյությունը շարունակվեց մինչև 1929 թ.: Շուրջ 50.000 որբերից 30.000-ը տեղավորված էին ամերիկյան որբանոցներում: Տարածաշրջանի հանդեպ հետաքրքրության անկման և ֆինանսական մուտքերի կրճատման հետևանքով (սկզբում ամսական 150.000 դոլար, իսկ 1924 թվականից՝ մինչև 100.000 դոլար) 1924 թվականից աստիճանաբար նեղանում են «ամերկումի» գործունեության շրջանակները:

⁴ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, գ. 618, թ. 9, ց. 28:

քազրումը պաշտոնական գործընթացներով հնարավոր չէր իրագործել, իսկ ոչ պաշտոնականներով՝ միայն փրկագին առաջարկելու միջոցով:

1920-ական թվականներին Ազգերի լիգայի, հայկական և միջազգային մարդասիրական տարբեր կազմակերպությունների ու անհատների ջանքերով հնարավոր եղավ գերությունից ազատել բռնի իսլամացած հազարավոր հայ կանանց ու երեխաների՝ բացառապես փրկագին վճարելու միջոցով: Մասնավորապես, նրանց փրկելու հիմնական ձևը օսմանյան ոսկեդրամով մեկ կամ մի քանի հայի գնելն էր: Որբերին հավաքելու աշխատանքներում ներգրավված Փառնակ Շիշիկյանը յուրաքանչյուր հայի դիմաց արաբներին որպես փրկագին վճարում էր «կաթի փողը»՝ հինգ կարմիր ոսկի: Այդպես փրկվեց շուրջ 500 անձ: Հայ կանանց ու որբերի փրկության գործում մեծ ավանդ է ունեցել նաև դանիացի միսիոներուհի Կարեն Եփփեն: Իսլամական գերության մեջ գտնվող մեկ հոգու դիմաց վճարելով մեկ ոսկի՝ նա 1922-1928 թթ. ազատագրել է 1792 հայի:

1926 թ. հայկական Կարմիր խաչի կենտրոնական վարչությունը սկսեց բանակցություններ վարել Սիրիայի մասնաճյուղերի հետ և ձեռնարկեց «Մեկ որբ՝ մեկ ոսկի» նշանաբանով առաքելությունը՝ փրկելու արաբական անապատներում ապաստանած հայ որբերին: Այս ուղղությամբ կատարված աշխատանքների շնորհիվ փրկագնված երեխաների թիվը հասավ մի քանի հազարի: Թե՛ արևմտահայերի և թե՛ արևելահայերի նախաձեռնությամբ ստեղծվեցին բազմաթիվ որոնողական խմբեր, որոնք հետևում էին «Մեկ հայ՝ մեկ ոսկի»՝ միևնույն նշանաբանին: Մասնավորապես, Մոսկվայի Կոմիտեի ջոկատների ջանքերով (դրանք չորսն էին՝ Էրզրումի, Երզնկայի, Սարիղամիշի, Ալեքսանդրապոլի) միայն Դերսիմի լեռներում հայտնաբերվեցին շուրջ 450, իսկ Մամախաթունի և Բայբուրդի շրջաններում՝ 800 որբ երեխաներ: Նրանց մեծ մասը ապաստանել էր քրդերի և մուսուլմանների ընտանիքներում: Հայտնի է, որ Երզնկայի գրավումից հետո այդտեղ գտնվող ջոկատը թուրքական ընտանիքներում հայտնաբերեց և ազատեց մինչև 12 տարեկան շուրջ 500՝ կրոնափոխ հայ երեխաների¹:

Վահան Տերյանը նույն առաքելությամբ շրջել է Արևմտյան Հայաստանի գավառներում, ինչպես նաև կազակների բնակատեղիներում, որտեղ կազակ զինվորականների ընտանիքները ապաստանում էին հայ որբերին, և կարողացել է հետ գնել ուժացվող որբերին:

Ռուբեն Հերյանը, կաշառելով արաբ շեյխերին, ծպտված անզլիացի պաշտոնյայի կամ ամերիկյան միսիոների հագուստներով, Դեր Ջորի անապատներից և թուրքական հարեմներից կարողացել է խիստ վտանգավոր պայմաններում փրկել հարյուրավոր հայ որբերի: Կ. Եփփեն, համագործակցելով արաբական աշիրեթների առաջնորդների հետ, մինչև 1928 թ. փրկել է 2000

¹ Տե՛ս ՀՄԱ, ֆ. 240, ց. 1, գ. 1, թ. 22:

հայ կանանց և երեխաների¹: Սակայն շուրջ 50.000 որբեր դեռևս մնում էին թուրքական հարեմներում և անապատներում, որոնց հայտնաբերել չհաջողվեց²: Հարկ է նշել, որ կազմակերպված որբախնամությանը զուգընթաց առանձին անհատների նախաձեռնությամբ նույնպես իրականացվում էին որբահավաքներ:

Որբահավաք գործունեությանը զուգահեռ, մտահոգության լուրջ առարկա էր ընտանիքների հետ հնարավոր վերամիավորման նպատակով որբերի հետքերի պահպանումը. մի բան, որն ինքնաբույս գործընթացների և որբերի տեղակայման ընդգրկուն աշխարհագրության պատճառով գրեթե անկառավարելի խնդիր էր դարձել: Երեխաները տեղավորվում էին ցարական Ռուսաստանի տարբեր, այդ թվում՝ հեռավոր գավառներում, ինչպես նաև Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հյուսիսային Աֆրիկայի, Եվրոպայի ու Ամերիկայի քաղաքներում ու գյուղերում: Արևելյան Հայաստանի օրինակով՝ այդ տեղավորումները երկու տիպի էին՝ կազմակերպված-կենտրոնացված՝ հընթացս ստեղծված կամ գոյություն ունեցող որբանոցներում, և ընտանիքներում, ինչը, ըստ որոշ սկզբնաղբյուրների, ավելի մեծ ծավալի էր:

Թե՛ խորհրդի և թե՛ հայկական բարեսիրական կազմակերպությունների և մտավորականության մտահոգությունը միայն թուրքական որբանոցներն ու երեխաների ուժացման վտանգը չէր: Պակաս կարևոր չէին նաև կազմակերպչական և այլ թերացումների պատճառով Արևելյան Հայաստանի որբանոցներում առկա վտանգները: Այսպես, Անդրկովկասի շուրջ 60 որբանոցներ այցելած, Հայկական կենտրոնական կոմիտեի լիագոր ներկայացուցիչ Գ. Էդիյանի կարծիքով՝ որբանոցային կառավարիչների միայն 20%-ն էր մոտավորապես համապատասխանում իր կոչմանը³, իսկ դաստիարակչական մեթոդները, որոնք կիրառվում էին երեխաների նկատմամբ, շատ դեպքերում դաժանության էին հասնում և պարզապես աններելի էին: Շատ որբանոցներում ամենամեծ թերությունն այն էր, որ կառավարիչների և դաստիարակների մի մասը հայերեն նույնիսկ չի խոսել (օրինակ՝ Էջմիածնի որբանոցներից մեկում), իսկ Թայիրովի անվան որբանոցում կառավարիչը հայերենն արգելված լեզու է դիտել և երեխաներին ստիպել է խոսել միայն ռուսերեն⁴:

Որբանոցներից շատերը չեն ունեցել անգամ երեխաների շարժի մատյաններ (տեղեկություններ նրանց տեղափոխությունների, մահացության և

¹ Տե՛ս 1915-1965 Յուշամատեան Մեծ Եղեռնի, այս հատորը պատրաստեց՝ Գ. Ահարոնեան, Պէյրուք, 1965, էջ 100:

² Տե՛ս նույն տեղում, էջ 101:

³ Տե՛ս «Արև», 1916, դեկտեմբերի 30, թիվ 290:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ, 472, ց. 1, գ. 86, թ. 14:

այնի վերաբերյալ) և հաշվեմատյաններ՝ ծախսերի և ստացված գումարների մասին¹:

Նման ծանրակշիռ փաստարկների համատեքստում ըստ արժանվույն գնահատելով միսիոներների, Ամերկումի, ռուսական և այլ ծագում ունեցող բարեսիրական կազմակերպությունների որբախնամ գործունեությունը՝ այնուամենայնիվ ժամանակ առ ժամանակ ինքնության կորստի կամ «կողմնակի վնասների», հայեցի դաստիարակության վտանգվածության վերաբերյալ մտահոգության ալիք էր վեր հանում բուն Հայաստանում հատկապես մտավորականների շրջանում: Օրինակ, Հովհ. Թումանյանը, ով անձամբ իր զավակների հետ² ներգրավված էր որբախնամ գործունեության մեջ, մտահոգված էր որբ երեխաների հայեցի դաստիարակության և նրանց ինքնության պահպանման հարցերով՝ անգամ ֆիզիկական հաշվեհարդարի պայմաններում: Նրա մտահոգությունը կապված էր, մասնավորապես, այդ շրջանում Հայաստանում Ամերկումի գործունեության հետ³. մի կողմից այն անհրաժեշտ էր, մյուս կողմից առկա էին «կողմնակի վնասներ». «Լուրջ մտահոգություն կար, որ որբերի խնամքին զուգահեռ՝ օտար ափերից ժամանած մարդկանց էր վերապահվում նաև փոքրիկների կրթության, նրանց հոգևոր դաստիարակության ոլորտը, որը հղի էր ապագայում հայրենիքի, սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի նկատմամբ ոչ լիարժեք պատկերացումներ ունեցող քաղաքացիներ կրթելու և դաստիարակելու վտանգով»⁴: Ակնառու էր նաև հայ եկեղեցուց հեռանալու, բողոքական հայացքներով տոգորվելու վերաբերյալ անհանգստությունը: Մտեղծված իրավիճակում, «թաց ու չորի» միախառնման պայմաններում, հակադրության մեջ դրվեցին «ողբալի ամերիկյան և լուսավոր խորհրդային մանկատները»:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո բարեգործական կազմակերպությունների հիմնած մանկատների անձնակազմի հանդեպ սկսվեց մեծածավալ հալածանք՝ ազգակործան գործունեության մեջ մեղադրանքներ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Ավագ որդին՝ Մուշեղն էլ ահագանգում էր Բգդիբից, որտեղ ընթանում էին պատերազմական գործողություններ: Նա նամակներից մեկում գրում է, որ որբ հայ մանուկներին կազակներն իրենց մեջ էին բաժանում, և դա կարծես արդեն սովորական երևույթ էր դարձել: Նա սրտի ցավով գրում է. «Երեխաներին որդեգրում են և ռուսացնում... Հայ ազգը ուրիշ տեսակ զոհաբերության առաջ է կանգնած, մի նոր տեսակի թալանի առաջ է կանգնած, երեխաների թալան...»: Տե՛ս Հովհ. Թումանյանը և որբախնամ գործը // [Էլեկտրոնային աղբյուր] // URL: <http://www.toumanian.am/toumanian/html/kens/vorbangor.html>

³ Թեև ամերիկյան որբանոցներն իրենց հնարավորություններով, մեթոդներով ու միջոցներով շահեկանորեն տարբերվել են պետության խնամքի տակ գտնվողներից, այնուամենայնիվ այդ որբանոցների շուրջ լարվածություն կար. «Ամերիկացիները նրանց պատրաստում են ամերիկյան կյանքի համար և հայ որբերին տանում են իրենց երկիր...»: Տե՛ս Ալեքսանդրապոլի որբանոցները // [Էլեկտրոնային աղբյուր] // URL: hetq.am/arm/news/44812/aleqsandra-poli-orbanocnery.html

⁴ Տե՛ս նույն տեղում:

րով, և ի վերջո գործի դրվեց գաղափարախոսական մեքենան: Թեև մուսուլմանացման վտանգը չեզոքացված էր, այդուհանդերձ խորհրդայնացմամբ պայմանավորված «կողմնակի այլ վնասների» հարցը նոր ռիսկերի համատեքստում արդիական դարձավ: Այսպիսով, որբերի խնամքի կենտրոնացված և ընտանիքներում տեղավորելու երկու պարագաներում հիմնական մարտահրավերը որբ երեխաների ֆիզիկական գոյության ապահովման «սոցիալական զինն էր»՝ ինքնության կորստի մարտահրավերը՝ այս կամ այն չափով:

Եղեռնի որբերի՝ քառսի վերածված սոցիալական կյանքը բազմագործոնային ու բազմատարր գործընթացների խաչմերուկում է: Դրանք գենետիկ հիշողության միջոցով փոխանցվում են սերնդից սերունդ: Դա սեփական ինքնության փնտրտուքն է անձի մակարդակով, որը, սակայն, իրականում ուղղված է սոցիալական ցավալի իրողությունների հնարավոր վերարտադրման միանգամայն բնական մերժմանը:

Եղեռնից մազապուրծ հայ գաղթականներին և որբերին օգնելու գործընթացն ասպարեզ եկավ և ծավալվեց երկու հիմնական ուղղություններով՝ ինքնակազմակերպում (եկեղեցու շուրջ և առանց եկեղեցու) և արտաքին միջամտություն: Վերջինս ներառում է միջազգային հումանիտար կազմակերպությունների և առանձին պետական իշխանությունների աջակցությունը: Հարյուրամյա հեռավորությունից դատելով՝ այդ գործընթացների մասին ակնհայտ են դառնում մի շարք իրողություններ: Թերևս գլխավոր հետևությունն այն է, որ թե՛ մեկ և թե՛ մյուս ուղղությունը զարգանում էր անհավանական ճգնաժամի, անորոշությունների, պարզապես քառսի պայմաններում, ուստի որբերին օգնելու գործողություններն ընթանում էին հախուռն, հընթացս, հետևաբար՝ անկազմակերպ ու ինքնաբերիկ՝ որոշակի կողմնակի վնասներով՝ ուժացում, ինքնության կորուստ, արմատներից կտրում, զրկանքներով լի «որբի ճակատագիր»:

Վերաբժնորելով հումանիստական պոռթկումների իրապես անժխտելի փրկարար նշանակությունը եղեռնի որբերի կյանքում՝ այնուամենայնիվ ակնհայտ է դառնում դրա բազմաշերտայնությունը՝ գաղափարական, կազմակերպչական և գործառական հոլովույթներում: Որբախնամության անգամ մերօրյա դրսևորումներում շարունակում են տեղ գտնել «կողմնակի վնասներով» ուղեկցվող գործընթացներ: Հայոց Մեծ եղեռնի պատճառով որբացած մանուկների փրկության, նրանց հանդեպ հումանիզմի դրսևորման և միաժամանակ այս կամ այն չափով ուժացման «կողմնակի վնասներով» ընթացած սոցիալական փորձի հանգամանակից ուսումնասիրությունից քաղած դասերը հարյուր տարի անց անգամ արդիական են՝ կարոտ կարևոր հետևությունների:

Мира Антонян – *На пересечении гуманизма и “побочных последствий”*: о вопросе организации опеки сирот во время Геноцида армян

В статье рассматриваются особенности организации опеки детей-сирот во время Геноцида армян. Изучив практику и стимулы действий основных участников процесса (правительство Турции, население Восточной и Западной Армении, общественные деятели Армении, миссионеры, благотворительные организации и т. д.), автор обсуждает вопросы, касающиеся основных проблем: физическое существование, сохранение идентичности и защита детей. Организация ухода за сиротами во время Геноцида армян имела два основных направления: первое – самоорганизация (церковь, отдельные лица), а вторая – внешнее вмешательство (иностранные делегации и международные гуманитарные организации). В то же время, уход за детьми обеспечивался как в детдомах, так и в семьях. Несмотря на эти различия, главной проблемой была «социальная стоимость» физического существования, которая была непосредственно связана с неопределенностью, отсутствием контроля и профессионализмом в организации ухода. В последних аргументах основное внимание уделяется вопросу использования сегодня предыдущего опыта для минимизации возможных «побочных эффектов» в организации опеки сирот.

Mira Antonyan – *At the Intersection of Humanism and “Side Effects”*: on the Issue of Organizing the Custody of Orphans During the Armenian Genocide

The article studies the peculiarities of the organization of the care of orphans during the Armenian Genocide. Studying the practice and incentives of the actions of the main participants in the process (the Government of Turkey, the population of Eastern and Western Armenia, public figures of Armenia, missionaries, charitable organizations, etc.) the paper raises questions concerning the main challenges in the face of physical existence, identity preservation and protecting children's rights. Organization of care for orphans during the Genocide had two main directions: first - self-organization (churches, individuals), and the second - external intervention (foreign delegations and international humanitarian organizations). At the same time, care for children was provided both in orphanages and in families. Despite these differences, the main challenge was the “social value” of physical existence, which was directly related to the uncertainty, lack of control and professionalism in the organization of care. The final arguments focus on the use of previous experience to minimize the possible failures and “side effects” in the organization of care for orphans.

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԱՐՏԱԿԱՐԳ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ԱՆԿԱԽԱՑՈՒՄԸ (1918 Թ. ԱՊՐԻԼ)**

Բանալի բառեր – Ռուսաստան, Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիր, Բաթումի անկումը, Անդրկովկասյան սեյմ, Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցությունը, Կարսի անկումը, Թիֆլիսի Հայոց ազգային ժողով, Հայոց ազգային խորհուրդ

Մեր նախորդ հոդվածում¹ ներկայացրել էինք Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում (1918 թ. մարտ-ապրիլ) դիվանագիտական բանակցային գործընթացներում առանցքային տեղ գրաված՝ Թուրքիային տարածքային զիջումների հարցը:

Մարտի 24-ին (ապրիլի 6) հաշտության խորհրդաժողովում Ադրկովկասյան խաղաղարար պատվիրակության ներկայացրած տարածքային զիջումների ծրագրին թուրքական կողմը պատասխանեց վերջնագրով²: Դրանով նրանք պահանջում էին անվերապահորեն ճանաչել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և անհապաղ ազատել Օսմանյան կայսրությանը տրվելիք բոլոր շրջանները: Դաշնագիրը չընդունելու պարագայում պատերազմական գործողությունները ավելի էին սաստկանալու, և Թուրքիան բռնազավթելու էր Անդրկովկասը:

Ստեղծված չափազանց բարդ և լարված ռազմաքաղաքական նոր իրադրության պայմաններում խաղաղարար պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, Տրապիզոնում ժամանակին չստանալով Անդրկովկասյան սեյմի և կառավարության վերջնական պատասխանը, մարտի 28-ին (ապրիլի 10) ընդունեց թուրքական վերջնագրի պահանջները և գրավոր պատասխանեց, որ պատրաստ է նոր բանակցություններ սկսել հաշտության դաշնագիր կնքելու համար: Ի պատասխան Ա. Չխենկելիին՝ թուրքական կողմը հայտնեց, որ անհրաժեշտ է համարում իր դաշնակիցներ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի հետ մասնակցել թուրք-անդրկովկասյան բանակցություններին, իսկ որպես անառարկելի պայման առաջադրեց Անդրկովկասը հռչակել անկախ, այսինքն՝ Ռուսաստանի³ ազդեցության գոտուց դուրս:

¹ Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Թուրքիային տարածքային զիջումների հարցը Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովում (1918 թ. մարտ-ապրիլ) // «ՀՀ», 2017, թիվ 1, էջ 29-41:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152: Տե՛ս նաև *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 155-156:*

³ Տե՛ս նույն տեղում, էջ 162:

Սակայն բուրքովին այլ էր Անդրկովկասյան սեյմի և կառավարության դիրքորոշումը թուրքական վերջնագրի նկատմամբ: Մարտի 31-ի (ապրիլի 13) երեկոյան Թիֆլիսում Անդրկովկասյան սեյմը հայտարարություն տարածեց, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջներն անընդունելի են, հետևաբար այլ որոշում չի կարող լինել, քան պատերազմը Թուրքիայի հետ: Հենց դրանով էլ պայմանավորված՝ ապրիլի 1-ին (14) Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը իր կառավարության հրահանգով անմիջապես ետ կանչվեց Թիֆլիս: Փաստորեն Անդրկովկասյան սեյմը ընդհատեց Տրապիզոնի դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ և պատերազմ հայտարարեց նրան այն դեպքում, երբ թուրքերը փաստացի դեռ շարունակում էին իրենց ռազմական առաջխաղացումը Անդրկովկասի սահմաններում՝ զենքի ուժով լուծելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները: «Նույն միջոցին,– գրում է Ա. Խաչատրյանը,– մեր սահմաններու վրայ կը շարունակուէր արիւնհեղութիւնը և օսմանեան բանակը կը շարունակէր իր յառաջ խաղացումը»¹: Նույն օրն Անդրկովկասյան սեյմին և կառավարությանը հայտնի դարձավ, որ Բաթումը հանձնվել է թուրքական զորամասերին:

Բաթումի անկումը ճակատագրական նշանակություն ունեցավ Անդրկովկասի ռազմաքաղաքական հետագա զարգացումների վրա. վրացիների համար պատերազմը դարձավ անիմաստ: Սկսվեց վրացական զորամիավորումների անկանոն նահանջը: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Վրաց իշխող կուսակցութեան մէջ ծայր էին տուած լուրջ տարակարծութիւններ պատերազմը շարունակելու մասին: Անոնք կը զգային որ իրենց ժողովուրդը չուզէր կռիլ Պաթումի անկումէն յետոյ: Միւս կողմէ, գտած էին միջոց մը ինքզինքնին ապահովելու համար թուրքերէն: Եվ այդ միջոցը համաձայնութիւնն էր Գերմանիոյ հետ: Այս պարագան բախտորոշ ազդեցութիւն մը ունեցաւ դէպքերու ընթացին վրայ»²:

Իսկ Անդրկովկասի պաշտպանության ու ժողովուրդների փոխհարաբերությունների տեսակետից չափազանց աննպաստ էր հատկապես կովկասյան թաթարների խաղացած դերը. նրանք թուրքերի հաղթանակն ու ռազմական ներխուժումը համարում էին իրենց ազգային-քաղաքական ձգտումների իրականացում: Թաթարները դեռևս մարտի 31-ին (ապրիլի 13) Անդրկովկասյան սեյմի նիստում հայտարարել էին, որ այդ պատերազմում իրենցից օգնություն և աջակցություն թող չսպասեն, որ իրենք չեն կովելու ցեղակից թուրքերի դեմ³: Փաստորեն թուրք-անդրկովկասյան պատերազմի

¹ **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 77:

² **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 39:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 14:

հիմնական ծանրությունն ընկավ հայկական ուժերի վրա. այն վերածվեց թուրք-հայկական պատերազմի:

Այսպիսով, հայերը մնում էին միայնակ թուրքերի դեմ՝ զրկված քաղաքական տարբեր կողմնորոշումներ և ազգային նեղ շահեր հետապնդող երկու հարևանների աջակցությունից, կտրված արտաքին աշխարհից և ներքին ու արտաքին հակառակորդներով շրջապատված: Ստեղծված բարդ ու լարված իրադրության պայմաններում անհրաժեշտ էր անհապաղ քննարկել հետագա քայլերը Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ պատերազմի և հաշտության նկատմամբ: Անհրաժեշտ էր նաև ստուգել հայկական գորամիավորումների մարտունակությունը և ինքնապաշտպանական գործի կազմակերպման վիճակը: Այդ նպատակով Անդրկովկասյան սեյմի դաշնակցական խմբակցության և ՀՅԴ Արևելյան բյուրոյի նախաձեռնությամբ 1918 թ. ապրիլի 6-ից 8-ը (19-21) Ալեքսանդրապոլում հրավիրվեց արտակարգ խորհրդակցություն¹: Բազմամարդ հավաքին մասնակցում էին Անդրկովկասյան սեյմի և կառավարության բոլոր հայ անդամները, Հայոց ազգային խորհրդի անդամները, կուսակցությունների ներկայացուցիչները, Երևանի, Կարսի մարզային կոմիսարները և Ալեքսանդրապոլի մի քանի ազգային գործիչներ (խորհրդակցությունը նախագահում էր Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը)²:

Արտակարգ խորհրդակցությունը լսեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամներ Ալ. Խատիսյանի և Հ. Քաջազնունու զեկուցումները Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովի դիվանագիտական բանակցային գործընթացների արդյունքների մասին³: Այնուհետև քննարկման դրվեց Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն անվերապահորեն ընդունելու թուրքերի պահանջը: Քննարկվող հարցի շուրջ հնչեցին երկու իրարամերժ կարծիքներ: Մի մասը գտնում էր, որ պետք է ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, քանի որ այլընտրանք չկա, իսկ մյուս մասը՝ ամեն գնով շարունակել պատերազմը և ոչ մի դեպքում չընդունել այն: Առաջին կարծիքին կողմնակից էին Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը և Ս. Պապաջանյանը (Պապաջանով): Հ. Քաջազնունին մանրամասն ներկայացրեց իր գրավոր հիմնավորումը (ռուսերեն), թե ինչու է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը հայերի համար չարիքի փոքրագույնը, և թե ինչու Թուրքիան բնավ չի հրաժարվի դրանից⁴: Նա գտնում էր, որ Թուրքիան երբեք կամավոր չի հրաժարվի իրեն շահավետ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրից. «Հետևաբար չճանաչել դաշնագիրը, նշանակում է պատերազմ հայտարարել նրան կամ ավելի շուտ շարունակել պատերազմը, որ փաստա-

¹ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 307-332:

² Տե՛ս նույն տեղում, էջ 307:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 310-311:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 113-120:

ցի մենք շարունակում ենք հիմա: Մենք ի գորու չենք և չենք կարող կռվել թուրքերի դեմ»¹: Մ. Պապաջանյանը, պաշտպանելով Հ. Քաջագունու կարծիքը, իր ելույթում վստահեցնում էր, որ այս պատերազմում հայերը այլևս չպետք է իրենց հույսը կապեն հարևան վրացիների հետ. նրանք չեն կռվելու: Այնուհետև, անդրադառնալով հայկական զինուժի ու ռազմաճակատի անմխիթար վիճակին, նա կոչ էր անում ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը. «Եթե ես համոզված լինեի, որ 2 ամիս կդիմանա Կարսը, այլ կերպ կխոսեի: Եթե չենք կարող պահել, պետք է լավ գնով զիջել»²:

Այնուհետև ապրիլի 7-ի (20) արտակարգ խորհրդացության երրորդ նիստում ընթերցվում է Ալեքսանդրապոլ չժամանած Խ. Կարճիկյանի գրավոր կարծիքը քննարկվող հարցի շուրջ, որը նա ուղարկել էր Թիֆլիսից³: Հ. Քաջագունու և Մ. Պապաջանյանի դիրքորոշմանն ու ներկայացրած գրեթե բոլոր փաստարկներին միանգամայն հակառակ կարծիք ուներ Խ. Կարճիկյանը: Նա ընդգծում էր. «Պատմական ամենախոր և ճակատագրական սխալը կատարած պիտի լինենք, եթե հիմա ընդունելու լինենք Բրեստի դաշնագիրը ու այդպիսով դադարեցնենք պատերազմը»⁴, քանի որ այն չի ապահովելու Անդրկովկասը թուրքական առաջխաղացումից ու դառնալու է հայ և վրացի ժողովուրդների բնաջնջման պատճառ: Խ. Կարճիկյանը չէր ընդունում և այն, որ հաշտությունը հնարավորություն կընձեռի ժամանակ շահելու և զորքն ուժեղացնելու, քանի որ այն համոզմանն էր, որ Կարսը հանձնելուց հետո ժողովուրդն ու բանակը այնպես կբարոյալքվեն, որ «ոչ մի զինվոր չի մնալ զենքի տակ»⁵: Վրացիների հետ զինակցության հարցում ևս Խ. Կարճիկյանի կարծիքը զանազանվում էր: Նա խորհուրդ էր տալիս հռոտտես չլինել վրացական ուժերի նկատմամբ և ի դեմս նրանց՝ տեսնում էր դաշնակիցների: Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը, Խ. Կարճիկյանը եթե չէր սխալվում թուրքերի ռազմական առաջխաղացման հարցում, ապա սխալվում էր վրացիների՝ հայերին դաշնակից լինելու հարցում:

Խ. Կարճիկյանը ընդգծում էր, որ Ռուսաստանը չի հաշտվի Անդրկովկասը կորցնելու հետ, իսկ եթե անգամ մտադրություն չունենա Կովկաս վերադառնալու, «և նա վերջնականապես հաշտվի Անդրկովկասի անջատման մտքի հետ, դրա հետ չի հաշտվելու հայությունը, որը միշտ պիտի զգա իր գլխեն տեղական թրքության ու Տաջկաստանի կախված թուրք ու իր հայացքը հառելով դեպի հյուսիս, առիթներ պիտի փնտրե Ռուսաստանին ներս բերելու ու ազատագրելու:

... Եթե իսկապես Ռուսաստանը փորձե ներս գալու, բնական է որ Կովկա-

¹ Նույն տեղում, թ. 115:

² Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 321:

³ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 1-4:

⁴ Նույն տեղում, թ. 1:

⁵ Նույն տեղում, թ. 3:

սի քրիստոնէա ժողովուրդները չեն դուրս գալու ու զենքով դիմադրելու նրան»¹:

Խ. Կարճիկյանը, ընդհանրացնելով իր նկատառումները, ներկայացնում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրն ընդունելուց հետո ուրվագծվող հնարավոր երեք իրավիճակ.

1. կամ դաշնագրին ոչ մի նշանակություն չտալով՝ Թուրքիան անմիջապես առաջ է շարժվելու և գրավելու է Անդրկովկասը, 2. կամ կանգ է առնելու որոշված սահմաններում և հարկադրելու Անդրկովկասն անկախ հայտարարել, ապա փաստորեն այն իր կազմի մեջ ներառել որպես Թուրքիայի նահանգ, 3. կամ Թուրքիան գրավում է երկրամասը, եթե հայերը հրաժարվում են անկախություն հայտարարելուց ու մնում են որպես Ռուսաստանի մի մասը: Ըստ Խ. Կարճիկյանի՝ երրորդ իրավիճակն անխուսափելի է, քանի որ կովկասյան թաթարների համար դեռևս հանդուրժելի էր անկախ Անդրկովկասը, իսկ երբ խնդիրը հանգի Ռուսաստանի կազմում մնալուն, տարակույս չկա, որ կովկասյան թաթարները ամեն միջոց ձեռք են առնելու, որպեսզի Թուրքիային հրավիրեն՝ միացնելու իրենց ազգակից պետությանը²:

Եզրափակելով իր խոսքը՝ Խ. Կարճիկյանը հանգում է հետևյալ եզրակացության. «Ես գտնում եմ, որ պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի: Իսկ մեր անվերջ տատանումները և հասարակական զանազան խմբակցությունների ու օրգանների ազիտացիան հօգուտ Բրեստի դաշնագրի, մեծապես թուլացնում է մեր դիմադրական ուժը, անվստահություն ներշնչում կովոդներին և կազմալուծում առաջ բերում թիկունքում: Վճռականապես պետք է որոշել ու ցուցադրել, որ կռիվը շարունակվելու է և որ անհույս մի կռիվ չէ, որը անվիճելի կերպով տանում է մեզ դեպի կորուստ»³:

Չնայած քննարկվող հարցի նկատմամբ եղած լուրջ տարաձայնություններին՝ ապրիլի 8-ի (21) հինգերորդ՝ վերջին նիստում Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցության ճնշող մեծամասնությունը որոշեց մերժել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և շարունակել պատերազմը ու ամրապնդել հայկական զինված ուժերն ու ինքնապաշտպանական գործը: Սակայն իմաստազրկվեց խորհրդակցության ընդունած որոշումը, երբ նույն օրը Թիֆլիսից ստացվեց հաղորդագրություն այն մասին, որ Վրաց ազգային խորհուրդը որոշել է անկախություն հայտարարել⁴: Իսկ Անդրկովկասյան կառավարության թաթար նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և կնքել հաշտություն Թուրքիայի հետ, այլապես իրենք և Սեյմի մյուս թաթար անդամները դուրս կգան սեյմից ու կառավարությունից և կհայտարարեն թաթարների անկախությունը⁵:

¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 122, թ. 2:

² Տե՛ս նույն տեղում, թ. 4:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.), էջ 331:

⁵ Տե՛ս Վրացեան Ա., Անկախ ու Միացեալ Հայաստան (Ուրագիծ), Երևան, 1920, էջ 10:

Այս հանգամանքները ստիպեցին խորհրդակցության մասնակիցներին շտապել Թիֆլիս և այնտեղ քննարկել ու որոշել անկախության և իշխանության հարցերը: Նրանք վերադարձան Թիֆլիս, «ուր հայերի համար,– գրում է Ս. Վրացյանը,– ստեղծել էր չափազանց փափուկ դրություն. կամ նրանք պիտի հանաձայնեին թուրքերի և վրացիների հետ և հրաժարվեին ո՛չ միայն Տաճկահայաստանից (Արևմտյան Հայաստան – *Գ. Պ.*), այլ և ամբողջ Կարսի նահանգից, առանց անգամ երաշխիք ունենալու գեթ յետագա ապահովության և կամ պիտի մերժեին տաճկական վերջնագիրը. այն ժամանակ վրացիներն ու թուրքերը անջատ հաշտություն պիտի կնքեին, Անդրկովկասի միութիւնը պիտի վերանար, և հայ ժողովուրդը պիտի մնար մենակ, կտրուած ամբողջ աշխարհից, շրջապատուած թշնամիներով...»¹:

Ինչպես վերը նշվեց, Բաթումի անկումից հետո երկրամասում ստեղծվել էր չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական նոր իրադրություն: Այդ պայմաններում Անդրկովկասյան սեյմը որոշեց վերսկսել ընդհատված դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ՝ հաշտության դաշնագիր կնքելու համար: Իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ հոչակել Անդրկովկասի անկախությունը և նրա անջատումը Ռուսաստանից, որը Թուրքիայի անվերապահ պահանջն էր: Թուրքիան ցանկանում էր Անդրկովկասն անկախ հոչակելով վերջնականապես փաստացի և իրավականորեն այն կտրել Ռուսաստանից և զավթելով այդ թույլ, անօգնական երկրամասը՝ այն ներառել իր ազդեցության ոլորտը և այդպիսով ապահովել իր անվտանգությունը Ռուսաստանից, որը ոչ հեռավոր ապագայում կարող էր իրական սպառնալիք դառնալ իր համար²:

Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախություն հոչակելու թուրքական ծրագրի նկատմամբ վրացիների շրջանում ձևավորվել էին քաղաքական երկու տարբեր կողմնորոշումներ՝ ռուսական և գերմանա-թուրքական: Առաջինի կողմնակիցները՝ Ն. Ժորդանիան, Ե. Գեգեչկորին և այլք, ցանկանում էին շարունակել պատերազմը և դեմ էին Անդրկովկասի՝ Ռուսաստանից վերջնականապես անջատմանը: Երկրորդ՝ հաղթող հոսանքը (Ա. Չիենկելի, Ն. Ռամիշվիլի) գտնում էր, որ Վրաստանի անկախությանը ռուսական վտանգն ավելի մեծ է, քան թուրքականը³:

Թաթարները Անդրկովկասյան սեյմում այլևս չէին թաքցնում, որ ամբողջովին Թուրքիայի կողմն են: Նրանք, պաշտպանելով ու զարգացնելով թուրքերի տեսակետը, պահանջում էին Անդրկովկասը անհապաղ հոչակել անկախ և դադարեցնել պատերազմը: Նրանք հայտարարեցին. «Մուսուլմանական դեմօկրատիայի կրօնական զգացումը թոյլ չի տալիս նրան գործուն

¹ Նույն տեղում:

² Տե՛ս **Պետրոսյան Գ.**, 1918 թ. Տրապիզոնի հաշտության խորհրդածրոյվը. Հայկական հարցի արծարծումները // «ՀՀ», 2016, թիվ 3, էջ 46-67:

³ Տե՛ս **Քաջազունի Յովհ.**, շ. 3. Դաշնակցությունն անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, էջ 27:

մասնակցութիւն ունենալու Թիւրքիայի դէմ մղուող պատերազմի մէջ»¹:

Թաթարների համար Անդրկովկասի անկախությունը նշանակում էր երկրամասի անջատում Ռուսաստանից: «Այս գործը, – գրում է Ա. Խոնդկարյանը, – նրանք (թաթարները – Գ. Պ.)՝ այդ հեռուն նայող ու վերին աստիճանի զգուշաւոր քաղաքագետները՝ ուզում էին անպատճառ գլուխ հանել վրացիների ու հայերի մեղսակցութեամբ, որից յետո դէպքերի ընթացքը նրանց համար պարզ էր՝ Թիւրքիան գալու է Անդրկովկաս»²:

Սեյմի վրաց ղեկավարները Անդրկովկասի անկախության ծրագիրն առաջ քաշեցին այն համոզմամբ, որ նախ՝ այն կոչուրացնի հաշտությունը Թուրքիայի հետ՝ թիկունքում ապահովելով Գերմանիայի հովանավորությունը, որի հետ վաղուց գաղտնի բանակցությունների մեջ էր, և երկրորդ՝ վերջ կտա հայերի՝ ռուսական և թաթարների՝ թուրքական քաղաքական կողմնորոշումներին, ու Անդրկովկասի երեք գլխավոր ազգերին կմիացնեն սեփական, անդրկովկասյան հայրենիքի սին գաղափարով:

Անշուշտ հայերի համար անընդունելի էին թաթարների հեռահար ծրագրերը, և մյուս կողմից նրանք չէին բաժանում նաև վրաց մենջևիկ ղեկավարների «միամիտ» ակնկալիքները, որովհետև շատ լավ գիտեին, որ թաթարների նպատակը ոչ թե անկախ հայրենիքն է, այն էլ՝ հայերի ու վրացիների հետ, այլ ընդամենը Թուրքիայի գերիշխանությունը: Բացի այդ, առաջնորդվելով ինքնապաշտպանական բնագործով՝ հայ ժողովուրդը չէր ուզում բաժանվել Ռուսաստանից:

Սեյմի հայ անդամներին միանգամայն հասկանալի էր, թե ինչպիսի ծանր հետևանքներ կունենա Անդրկովկասի անկախությունը հայ ժողովրդի համար, բայց և ընդդիմանալ վրացիներին և թաթարներին չէին կարող, քանի որ կհայտնվեին խիստ մեկուսացված վիճակում: Իսկ «Պատերազմի ամբողջ պատասխանատուութիւնը թուրքերուն հետ, – գրում է Ալ. Խատիսյանը, – Հ. Յ. Դաշնակցութիւնը իր վրա չէր կրնալ վերցնել, իսկ այդպէս, պիտի ըլլար, եթե ան գործէր հակառակ վրացիներուն»³: Այդ հիմնական պատճառներն էին, որ Անդրկովկասյան սեյմի ՀՅԴ խմբակցությունը ստիպված էր համաձայնել անկախությանը: Եվ պատահական չէր, որ թե՛ խմբակցությունը և թե՛ Թիֆլիսի Հայոց ազգային (կենտրոնական) խորհուրդը չեն ողջունել Ռուսաստանից Անդրկովկասի անջատումը և նրա անկախությունը:

Այդ առնչությամբ ուշագրավ է Հ. Քաջագնունու ընդհանրական գնահատականը. «Մենք չէինք դրութեան տէրը, ոչ իսկ մեր սեփական բախտի տէրը: ... Հեշտ սրտով չէր, որ մենք արինք այդ: Բայց չանել չէինք կարող: Եթե հակառակ արտահայտուէինք, Անդրկովկասեան դաշնակցական (դաշնային – Գ. Պ.) Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդուէր, վրացիներն ու ազրբեյջան-

¹ Նույն տեղում, էջ 26-27:

² «Վէմ», 1933, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 73:

³ Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 40:

ցիներն իսկոյն պիտի հաշուէին թուրքերի հետ ու թողնէին մեզ մենակ երես առ երես Վէհիպ փաշայի բանակի դէմ՝ - մենակ, որովհետեւ Ռուսաստանը (ոչ բոլշեիկեանը, ոչ հակաբոլշեիկեանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթէ նոյն իսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգուած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ ազրբէյջանցիները (ո՞վ գիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալակը, Լոռին ու Փամբակը ամբողջովին գրավելու համար):

Մենք ամենքից աւելի կարիք ունէինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուզում՝ որ նա քանդուի, իսկ եթէ քանդուելու է – որքան կարելի է ուշ քանդուի: Ահա թէ ինչու հարկադրուած էինք հետեւելու մեր դաշնակից դրացիների քայլերին»¹:

Կարճ ժամանակ անց Անդրկովկասյան սեյմում հաղթեց վրացիների գերմանա-թուրքական քաղաքական կողմնորոշում ունեցող թեր²: Ապրիլի 9-ին (22) Սեյմը հանդիսավորութամբ հայտարարեց, որ Անդրկովկասն անջատվում է Ռուսաստանից և կազմում է անկախ պետություն՝ Անդրկովկասի Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետություն³ (այն գոյատևեց ընդամենը մեկ ամիս չորս օր և լուծարվեց մայիսի 26-ին):

Սեյմի 22-րդ նիստում ՀՅԴ խմբակցությունը, ինչպես վերը նշվեց, թեև ներուստ դժգոհ, բայց ստիպված հանդես եկավ Անդրկովկասի անկախության օգտին: Սեյմի անդամ Հ. Քաջագունին խմբակցության անունից նիստում հայտարարեց. «Քաղաքացիներ, Սեյմի անդամներ. դաշնակցության ֆրակցիան, միանգամայն որոշակի կերպով գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ նա իր վրա է առնում ներկա պատմական մոմենտին, միանում է Անդրկովկասի ինքնուրույն պետության հայտարարմանը»⁴:

Սեյմում հնչեցին նաև հայտարարություններ Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելու և նրա անկախության դեմ: Բանախոսներից ձախ էսէր Լ. Թումանովը (Թումանյան) հայտարարեց. «Պետք է անկեղծորեն խոստովանել, որ Անդրկովկասի անկախության գաղափարը գալիս է թուրք իմպերիալիստներից... այդ հարցը Անդրկովկասի կենաց ու մահվան հարցն էր: Ինչու՞ դուք չեք դիմում հանրաքվեի օգնությանը: Հավատացա՞՞ծ եք արդյոք դուք, որ եթէ այդ հարցը վճռվեր ազատ քվեարկության ճանապարհով, ժողովուրդը չէր ասի՝ չեմ ցանկանում այն անկախությունը, որ գալիս է թուրքական սուլթանի մահակի տակից ... անկախություն, որը հռչակված է այն-

¹ Քաջագունի Յովհ., նշվ. աշխ., էջ 28:

² Տե՛ս Մելիքյան Վ., Անդրկովկասյան Սեյմի քաղաքական կողմնորոշման փոփոխման հիմնահարցը և երկրամասի անկախության հռչակումը // «ՀՀ», 2014, թիվ 3, էջ 105-125:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 28: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 221:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 20: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 215:

պիսի պայմաններում, ինչպիսին ներկայումս գոյություն ունի Անդրկովկասում, դա նշանակում է անցում դեպի Թուրքիայի կողմից լրիվ ստրկացմանը: Անդրկովկասը չափազանց թույլ տնտեսական ուժեր ունի ներկայումս իր սեփական կողմնորոշումն ունենալու համար: Անդրկովկասի անկախ հոչակելը ոչ այլ ինչ է, եթե ոչ կողմնորոշում դեպի Թուրքիան, և այդ փաստը դուք ոչ ոքից չեք կարողանա թաքցնել»¹:

Խորհրդային կառավարությունը արձագանքեց և նոտա հղեց Անդրկովկասյան սեյմի որոշման դեմ: Մոսկվայում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչի և Ստամբուլում Ռուսաստանի ներկայացուցչի բացակայության պատճառով ՌԽՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը Մոսկվայում գերմանական դեսպան Միրբախին ուղղված 1918 թվականի մայիսի 15-ի նոտայում իր բողոքը հայտնեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեմ²:

Հարկ է նշել, որ իմաստազրկվեցին Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ընդունել-չընդունելու բոլոր քննարկումները, երբ հայտնի դարձավ, որ դեռևս Անդրկովկասյան սեյմի վստահությանը չարժանացած³ կառավարության նոր նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելիին առանց կառավարության և հայկական կողմի իմացության ապրիլի 10-ին

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 19, թ. 11-12: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 207:

² Տե՛ս **Սարգսյան Ե.**, Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1994, էջ 39:

³ Երբ ապրիլի 9-ին (22) Սեյմը հայտարարեց Անդրկովկասյան հանրապետության անկախությունը և որոշեց վերսկսել հաշտության դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ, կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին, նկատելով այն որպես անվստահության դրսևորում, հրաժարական տվեց և հեռացավ քաղաքական հարթակից: Անդրկովկասյան Սեյմի նախագահ Ա. Չխենկելին նույն օրը երեկոյան գրավոր դիմեց Ա. Չխենկելիին՝ ձևավորելու կառավարության նոր կազմ: Իրականում ապրիլի 9-ից (22) մինչև 13-ը (26) Ա. Չխենկելին Անդրկովկասը ղեկավարեց առանց Սեյմի վստահության: Միայն ապրիլի 13-ին (26) Սեյմը վստահություն հայտնեց Ա. Չխենկելիին և նրա կազմած կառավարությանը, որի ծրագիրն էր՝ անկախություն և հաշտություն: Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը կազմվեցին երեք գլխավոր ազգերի (հայեր, վրացիներ և կովկասյան թաթարներ) քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից՝ գրեթե հավասար:

Կառավարության կազմում հայերից ընդգրկվեցին Ալ. Խատիսյանը (ֆինանսների նախարար), Հ. Քաջագունին (պետական խնամատարության նախարար), Ա. Երզնկյանը (աշխատանքի նախարար) և Ա. Սահակյանը (պարենավորման նախարար): Իսկ երբ ապրիլի 11-ին (24) կառավարության հայ նախարարները տեղեկացան Կարսը թուրքերին հանձնելու Ա. Չխենկելիի կարգադրությունը, հայտարարեցին, որ իրենք անկարող են մնալ կառավարության մեջ: Ստեղծված կառավարական ճգնաժամը լուծվեց փոխադարձ համաձայնությամբ. հայ նախարարները վերադառնում են կառավարություն՝ պայմանով, որ գեներալ Բ. Օդիշիլիձեն հեռացվում է պաշտոնից, Մ. Հարությունյանը նշանակվում է արտաքին գործերի նախարարի օգնական, սակայն վերջինս առանց Ա. Չխենկելիի (միաժամանակ արտաքին գործերի նախարար) գիտության ոչ մի կարգադրություն չպետք է աներ:

(23) հրաման էր արձակել կարճ ժամկետում Կարսը դատարկելու ու առանց ռազմական դիմադրության այն անհապաղ Թուրքիային հանձնելու մասին¹:

Ինչպես վերը նշվեց, ապրիլի 1-ին (14) Տրապիզոնում ընդհատվել էր դիվանագիտական բանակցային գործընթացները Թուրքիայի հետ, սակայն Ա. Չխենկելին Թիֆլիսից շարունակում էր պահպանել հարաբերությունները և վերսկսել էր հաշտության բանակցությունները թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի հետ: Ապրիլի 10-ի (23) երեկոյան նա հեռագրեց Վեհիբ փաշային, որ Անդրկովկասյան կառավարությունը ընդունում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և խնդրում դադարեցնել ռազմական գործողությունները, վերսկսել դիվանագիտական բանակցությունները Թուրքիայի հետ ամենաարագ ժամկետում հաշտություն կնքելու համար²: «Մասնաւորապէս հայկական շրջանակները,- գրում է Ալ. Խատիսյանը,- վրդովուած էին այդ գաղտնի եւ ինքնագլուխ բանակցութիւններէն. Այդ վրդովմունքը կատաղութեան հասաւ, երբ Չխենկելին ինքնագլուխ կերպով կարգադրած էր յանձնել Կարսը թուրքերուն»³: Հայկական կողմը հերթական անգամ կանգնեց կատարված փաստի առջև: Ապրիլի 12-ին (25) թուրքական զորքերը գրեթե առանց կռվի գրավեցին ռազմական ամենակարևոր կետը՝ հայկական ճակատը պաշտպանող միակ ամուր հենարանը՝ Կարսը: Այդ առնչությամբ Յ. Իրազեկը գրում է. «Կարսի անկումը աղէտներից ահաւորագոյնն էր ամբողջ Անդրկովկասի և առաւելապէս հայերի համար: Ուստի, մասնաւորապէս հայոց մէջ, վրդովմունքն ընդհանուր ու աննկարագրելի էր, իսկ առաջացրած յուսալքումն ու խուճապը հսկայական – թէ՛ բովանդակ հայութեան, թէ՛ մանաւանդ, զօրքի շարքերում: Առանձնապէս յանձնման ամբողջ արարարողութիւնը, իր ստոր ու դաւադրական բնույթով, չափազանց վիրաւորական»⁴:

Փաստորեն Թուրքիան, խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի 4-րդ հոդվածի պայմանները, ռազմական ուժով գրավեց Բաթումը, Արդահանը, Կարսը: «Եվ միաժամանակ,- գրում է Ջ. Ավալովը,- ապացուցված էր, որ դեռ չկազմակերպված, ցնցված Անդրկովկասը զուրկ է ամենապարզ պատերազմական գործողություններ կատարելու կարողությունից»⁵: Անդրկովկասյան սեյմը և կառավարությունը վերջնականապես համոզվեցին, որ այլևս ի վիճակի չեն համախմբելու երկրամասի բոլոր ուժերը պատերազմը շարունակելու համար:

Փաստորեն Բաթումի անկումից հետո երկրամասում արագորեն իրար

¹ Տե՛ս ՀՍՍ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109:

² Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 224:

³ Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 39:

⁴ Իրազեկ Յ., Մոտիկ անցեալից, պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէյրուք, 1956, էջ 22:

⁵ **Авалов З.**, Независимость Грузии в международной политике 1918-1921 гг., воспоминания. Очерки, Paris, 1924, с. 33.

հաջորդեցին մի շարք բախտորոշ քաղաքական իրադարձություններ. Անդրկովկասն անջատվեց Ռուսաստանից և հայտարարեց անկախ պետություն, Կարսը հանձնվեց թուրքերին, և նրանց հետ հաշտության բանակցությունների վերսկսման հարցը կրկին դարձավ օրակարգային:

Այսպիսով, Անդրկովկասյան սեյմի ռազմաշունչ տրամադրությամբ հայտարարված պատերազմն ավարտվեց պարտությամբ, որի պատճառները, անշուշտ, երկրամասի երեք գլխավոր ազգերի միջև առկա ներքին և արտաքին խոր հակասությունները և հակամարտություններն էին, քաղաքական տարբեր կողմնորոշումներն ու ազգային-տարածքային (սահմանային) վեճերը, միմյանց նկատմամբ անվստահությունը և անհանդուրժողականությունը, որոնք հնարավորություն չտվեցին երկրամասում ստեղծելու միացյալ ճակատ՝ թուրքական ռազմական սպառնալիքին դիմակայելու համար:

Պատմական դեպքերը, դիվանագիտական բանակցային գործընթացներն ու ռազմաքաղաքական իրադարձությունները ցույց տվեցին նաև, որ Մեյմը և կառավարությունը ժամանակին չկարողացան ապահովել Անդրկովկասյան երեք գլխավոր ազգերի շահերի ներդաշնակությունը և չէին կարող ձևավորել նաև Անդրկովկասյան միասնական արտաքին քաղաքականություն և ճկուն դիվանագիտություն: Դրա հիմնական պատճառներից էին երեք գլխավոր ազգերի քաղաքական տարբեր կողմնորոշումները և դրանից բխող լուրջ հետևանքները: Յուրաքանչյուրը գործում էր իր ազգային շահերից ելնելով: Այդ իրողությունները մեկ անգամ ևս համոզեցին Անդրկովկասյան երեք հիմնական ազգերի պետական հետագա համակեցության անհնարինությունը:

Անդրկովկասում վերջին օրերին իրար հաջորդած քաղաքական իրադարձությունների բերումով Հայոց ազգային ժողով¹ գումարվեց ընդամենը մեկ անգամ՝ 1918 թ. ապրիլի 15-ից (28)-18-ը (մայիսի 1)* Թիֆլիսում²: Հայոց ազգային ժողովի բազմամարդ արտակարգ նիստերին մասնակցում էին Հայոց ազգային խորհրդի բոլոր անդամները և հայկական կուսակցություններն ու արևմտահայ ներկայացուցիչներ: Նիստերը նախագահում էր Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը:

Արտակարգ նիստերում քննարկվեց Անդրկովկասի անկախությունից (ապրիլի 22-ին), Կարսի անկումից հետո Մեյմի ՀՅԴ խմբակցության և Հայոց ազգային խորհրդի փոխհարաբերությունների հարցը: Ա. Ահարոնյանը ապրիլի 15-ի (28) առաջին նիստի բացման խոսքում մտահոգություն հայտնեց.

¹ Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից (1917 թ. փետրվար-հոկտեմբեր), էջ 51-58:

* Անդրկովկասի կառավարությունը ընդունել է որոշում՝ մտցնել Նոր Գրիգորյան տոմար՝ ապրիլի 17-18 զիջելով ժամը 12-ին հաջորդ չորեքշաբթին համարելով մայիսի 1-ը: (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109): Ապրիլի 18-ից հետո տեղի ունեցած դեպքերը կներկայացնենք նոր տոմարով:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, թ. 1-22:

«Ազգային քաղաքականությունը վարում է Մեյմի հայ անդամների ֆրակցիան՝ առանց Ազգային խորհրդի որևէ մասնակցության», սակայն եղած ձախողումների համար լայն հասարակայնության կողմից «պատասխանատու են ճանաչվում» Հայոց ազգային խորհրդի անդամները¹:

Այս խնդիրն ավելի սուր բնույթ ընդունեց Կարսի անկումից հետո: Ազգային խորհրդի անդամ Ս. Մամիկոնյանը իր ելույթում փաստեց, որ Անդրկովկասյան սեյմի ձևավորումից հետո «Ազգային օրենսդիր մարմինը» իր իրավասությունից փաստացի սահմանափակել է Ազգային խորհրդի նշանակությունը, հեղինակությունն ու հայությանը վերաբերող առանցքային որոշումների կայացման հարցում իրավունքները, քանի որ կառավարության առջև հայության շահերը ներկայացնում էր Մեյմի Հայ հեղափոխական դաշնակցության խմբակցությունը, ինչը հանգեցրեց Հայոց ազգային խորհրդի դերակատարության նվազմանը²:

Հայոց ազգային ժողովը արձանագրեց, որ Մեյմի Հայ հեղափոխական դաշնակցության խմբակցությունը շրջանցել է Հայոց ազգային խորհրդի դիրքորոշումը՝ ապրիլի 9-ի (22) Անդրկովկասի անկախության հայտարարության մասին: Մեյմի որոշումից հետո՝ ապրիլի 12-ին (24), Հայոց ազգային խորհուրդը հայտարարել էր, որ դեմ է Անդրկովկասի անկախությանը. Մեյմը ոտնահարել է ժողովրդի իրավունքը, որ նման ակտի համար անհրաժեշտ էր հանրաքվե, և խորհուրդը անհրաժեշտ է համարել այդ մասին բարձրաձայնել մամուլում: Սակայն Ա. Ահարոնյանը նպատակահարմար չհամարեց մամուլում հրապարակել, այլ սպասել Հայոց ազգային ժողովի որոշմանը³: Բուռն քննարկումների արդյունքում Ազգային ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ որոշեց. «Ազգային խորհրդի որոշումը հայտարարել մամուլի մեջ, որ ինքը (Ազգային ժողովը – Գ. Պ.) դեմ է Արդրկովկասի անկախ հայտարարելուն՝ համարել չեղյալ»⁴: Ապրիլի 16-ի (29) երկրորդ նիստում Ա. Ահարոնյանը իր կարծիքը հայտնեց Անդրկովկասի անկախության մասին. «Անկախության հարցը ինձ թվում է, որ ավելի ադետաբեր պիտի լինի մեզ համար, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունելը: Ահա՛ թե ինչու Թուրքիան պահանջ է դրել Անդրկովկասն անկախ հայտարարել և այդ պահանջը նա բանակցություններ սկսելու պայման է հայտարարել»⁵:

Ապրիլի 18-ի (մայիսի 1) վերջին՝ երրորդ նիստում Ազգային ժողովը քննարկեց Մեյմի ՀՀԴ խմբակցության և Հայոց ազգային խորհրդի փոխհարաբերությունների հարցը: Այդ խնդրի շուրջ քննարկումն այնքան բուռն ու լարված էր, որ անգամ Հայոց ազգային խորհրդի շատ անդամներ հրաժարակա-

¹ Նույն տեղում, թ. 2:

² Տե՛ս նույն տեղում, թ. 2-3:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 4:

⁴ Նույն տեղում, թ. 8:

⁵ Նույն տեղում:

նի դիմում ներկայացրին: Բանն այն էր, որ Հայոց ազգային խորհուրդը Անդրկովկասի վերջին օրերի քաղաքական բախտորոշ իրադարձություններին (Անդրկովկասի անկախությունը, Թուրքիայի հետ դիվանագիտական բանակցային գործընթացի վերսկսումը, Կարսի անկումը) ոչ միայն չի մասնակցել, այլև անգամ տեղեկացված չի եղել: Քննարկումների արդյունքում Ազգային ժողովը որոշեց. «Բոլոր քաղաքական բնույթ ունեցող խնդիրները նախապես քննության առնել Ազգային խորհրդի մեջ՝ համաձայն Ազգային համագումարի տված որոշումների»¹: Որոշման ընդունումից հետո Հայոց ազգային ժողովին ներկայացված Ազգային խորհրդի անդամները հետ վերցրին իրենց հրաժարականի դիմումները²:

Այսպիսով, Ալեքսանդրապոլի և Թիֆլիսի (Հայոց ազգային ժողովի) արտակարգ նիստերի քննարկումները մեկ անգամ ևս համոզեցին, որ երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական աննպաստ իրադրության պայմաններում հայ քաղաքական ուժերը ուշացումով էին արձագանքում քաղաքական իրադարձություններին և ներկուսակցական, միջկուսակցական շահերի և տարաձայնությունների հետևանքով չկարողացան ժամանակին գործունեության ճկուն, միասնական տեսակետ մշակել, որը, անշուշտ, բացասաբար ազդեց քաղաքական, դիվանագիտական բանակցային գործընթացների վրա:

Гегам Петросян – *Вопрос о войне и мире на Александропольском экстренном совещании: независимость Закавказья (апрель 1918 г.)*

Закавказский сейм прервал турецко-закавказские дипломатические переговоры в Трапезоне и объявил войну Турции. В сложившихся сложных и напряженных условиях было необходимо обсудить вопрос о войне и мире. С этой целью 6-8 (19-21) апреля 1918 г. в Александрополе было создано экстренное совещание. Несмотря на имеющиеся серьезные разногласия относительно обсуждаемого вопроса, подавляющее большинство решило расторгнуть Брест-Литовский мирный договор и продолжить войну. Однако обсуждение потеряло смысл, когда стало известно, что Грузинский национальный совет решил провозгласить независимость. 9 (22) апреля Сейм объявил, что Закавказье является независимым государством. А. Чхенкели 10 (23) апреля телеграфировал Вахибпаше о том, что признает Брест-Литовский мирный договор и просит прекратить военные действия и возобновить турецко-закавказские переговоры. В тот же день Карс был передан туркам. В связи с последующими событиями в Закавказье с 15 (28) апреля по 18 апреля (1 мая) в Тифлисе было создано экстренное национальное собрание, на котором был обсужден вопрос о взаимоотношениях дашнакской фракции Сейма РА и Армянского национального совета.

¹ Նույն տեղում, թ. 21:

² Տե՛ս նույն տեղում, թ. 22:

Gegham Petrosyan – *The Issue of War and Peace in Alexandrapol Emergency Meeting. Gaining the Independence of Transcaucasia (April 1918)*

Transcaucasian Sejm interrupted Turkish-Caucasian diplomatic negotiations in Trabzon and declared war on Turkey. Under the current complex and tense conditions it was necessary to discuss the issue of war and peace. To this end, an emergency meeting was convened in Alexandropole on April 6-8 (19-21), 1918. Despite the serious differences on the issue under discussion, the vast majority decided to reject the Treaty of Brest-Litovsk and continue the war. But discussions proved useless when it became known that the Georgian National Council had decided to declare independence. On April 9 (22) the Sejm declared the Transcaucasus an independent state. On April 10 (23) A. Chkhenkeli telegraphed Vehib Pasha informing that it accepted the Treaty of Brest-Litovsk and asking to stop military actions and resume negotiations between Turkey and the Transcaucasus. On the same day Kars was surrendered to the Turks. Due to the political events following one another in the region an emergency meeting was convened in Tiflis from April 15 (28) to 18 (May 1) 1918, where it was discussed the relationship between the Dashnaksutyun faction of the Sejm and Armenian National Council after the independence of Transcaucasus.

**ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՀՄՆԱԶԱՏՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ
ՇՈՒՐՁ (1921 Թ. ՓԵՏՐՎԱՐ-1922 Թ. ՄԿԻՉԲ)**

Բանալի բառեր – ՀԽՍՀ, ՎԽՍՀ, Խորհրդային Ռուսաստան, Պ. Բնգորոկվա, Ա. Սվանիձե, Չեգոք գոտի, Ախալքալաք, Բորչալու, Ա. Մյաննիկյան, Ա. Մոսավյան, ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրո, տարածքային սահմանազատում, Վորոնցովկա, Պրիվոլնոյե

1921-1922 թթ. հայ-վրացական սահմանատարածքային անզիջում վեճում առաջացավ նոր իրավիճակ: Դա տարածաշրջանում աշխարհաքաղաքական ուժերի վերադասավորման և ռազմաքաղաքական վճիռները խորհրդային ձևով լուծելու արդյունք էր: Մինչ խորհրդային կարգերի հաստատումը հայկական կողմին չհաջողվեց հանգուցալուծում գտնել Լոռու չեգոք գոտու և առհասարակ հայ-վրացական վիճելի հողատարածքների սահմանազատման խնդրում, քանզի վրացական իշխանությունները համառորեն կառչել էին ինչպես 1920 թ. նոյեմբերի 13-ի հայ-վրացական երեք ամսով կնքված մեզ համար ոչ շահավետ համաձայնագրից, այնպես էլ մայիսի 7-ին ստորագրված վրաց-ռուսական պայմանագրից, որոնք նրանց ձեռնտու էին: Նրանք սկսել էին հասկանալ, որ վերջինս համապատասխանում էր Խորհրդային Ռուսաստանի ռազմավարական շահերին, այն է՝ այդ պահին հարկը չկար վերջնական հանգուցալուծում տալու տարածքային-սահմանային բնույթի վեճերին: Խորհրդային Ռուսաստանի քայլերն այդ պահին բխում էին իր ռազմավարությունից, այսինքն՝ նոր իրողությունների պայմաններում հայ-վրացական տարածքավեճը դարձել էր հարևան երկրների միջև լարվածությունը պահպանելու միջոց:

Վրաստանում խորհրդային կարգերի հաստատման և Լոռու հայ բնակչության ապստամբության և մի շարք հաղթանակների շնորհիվ հայկական Լոռին փաստացի վերամիավորվեց մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին, սակայն հայ-վրացական սահմանավեճը դարձյալ չլուծվեց և դարձավ ՌԽՖՍՀ-ի, ՀԽՍՀ-ի և ՎՍԽՀ-ի միջև լարված փոխհարաբերությունների պատճառներից մեկը: ՌԿ(Բ)Կ Կովբյուրոն դարձյալ բախվեց անդրկովկասյան երեք հանրապետությունների տարածքային վեճերի թնջուկին: 1921 թ. մայիսի 2-ին ՌԿ(Բ)Կ Կովբյուրոն որոշում ընդունեց Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով ստեղծելու մասին, որը պետք է գլխավորեր Ս. Մ. Կիրովը: Վերջինիս հանձնարարվեց Անդրկովկասի հանրապետությունների միջպետական սահմաններ

րի մասին առաջարկություններ ներկայացնել Կովբյուրոյի պլենումի հաստատմանը¹:

Այդ հանձնաժողովին Խորհրդային Հայաստանի դիրքորոշումը և առաջարկները ներկայացնելու համար մայիսի 9-ին հրավիրվեց խորհրդակցություն՝ ՀԽՍՀ Ռազմհեղկոմի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի ղեկավարությամբ: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցեցին Ասք. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Ս. Լուկաշինը (Սրապիոնյան), Գ. Խոջամիրյանը, որոնց տրամադրության տակ դրվեցին սահմանային-տարածքային ճշգրտումների համար անհրաժեշտ նյութեր: Լսելով «Ադրբեջանի և Վրաստանի հետ ներքին սահմանների հաստատման հարցի մասին» ՀԽՍՀ Արտգործոժողովում Ասք. Մռավյանի զեկուցումը՝ որոշվեց նրա նախագահությամբ ստեղծել համապատասխան աշխատանքային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվեցին Ս. Համբարձումյանը, Հ. Լազյանը, Ա. Ղարաբյոկյանը և մի շարք բնագավառների մասնագետներ², որոնք պետք է համապատասխան տեղեկանքներ ներկայացնեին անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև վիճարկելի համարվող տարածքների, այդ թվում Լոռու, Ախալքալաքի և Խրամի (Շավկա) վերաբերյալ: Ընդ որում Ախալքալաքի վերաբերյալ զեկուցագիրը կազմելու էր Ալ. Մյասնիկյանի բարեկամ Պողոս Աբեյանը³:

1921 թ. հունիսի 25-27-ին Թիֆլիսում տեղի ունեցավ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի՝ սահմանային հարցերին նվիրված հանձնաժողովի առաջին նիստը, որի կազմում ընդգրկված էին Ս. Կիրովը (նախագահ), Վրաստանից՝ Ա. Ս. Սվանիձեն, Թողրիան, Ադրբեջանից՝ Միրզա Դավուդ Բադիր օղլի Հուսեյնովը, Մահմեդ Հասան Ջաֆարօղլի Հաջինսկին և Էմին Ռասուլ-զադեն, Խորհրդային Հայաստանից՝ Ալ. Բեկզադյանը և որպես պատվիրակության քարտուղար՝ Վ. Մուրադյանը⁴: Առաջին իսկ նիստում Ալ. Բեկզադյանը հանձնաժողովի անդամներին առաջարկեց հաշվի առնել Խորհրդային Հայաստանի բացառիկ ծանր իրավիճակը և «հանուն ընդհանուր համերաշխության, մեկընդմիջտ, հանուն ամենաանկեղծ, բարեկամական փոխհարաբերությունների՝ հաստատել տարածքային զիջումների վերաբերյալ մինչ այդ ձեռք բերված համաձայնությունը, ընդ որում դա անել այն շրջաններում, որոնք համահավաք բնակեցված են հայկական բնակչությամբ»: Խորհրդային Հայաստանի Արտգործնախարար Ալեքսանդր Բեկզադյանը, դատապարտելով ցարական կառավարության օրոք կայացված վարչաքաղաքական բա-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 85, ց. 1, գ. 58, թ. 2-3:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 15-17:

³ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 333-335:

⁴ Վահագն Գալուստի Մուրադյան – Հայաստանի առաջին հանրապետության Չինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական և Հակահետախուզական բաժանմունքի նախկին պետ (1920 թ. ապրիլ-հունիսի վերջ):

ժանումները և ընդգծելով Հայոց Մեծ եղեռնից տուժած հայության խնդիրներն ու Խորհրդային Հայաստանի համար ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, սահմանազատիչ հանձնաժողովին խնդրեց գերազանցապես հայկական բնակչությամբ Ախալքալաքի գավառը զիջել Հայաստանին: Հայտնի է, որ այդ գավառը դեռևս 1921 թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին թուրք-վրացական գաղտնի համաձայնության և թուրք-բոլշևիկյան բանակցությունների արդյունքում ապօրինաբար զիջվել էր քեմալական Թուրքիային, որտեղից նրանք դուրս եկան միայն 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերի պարտադրանքից հետո: Սակայն հանձնաժողովի աղբյուրներից և վրացի անդամների պնդմամբ և Ս. Մ. Կիրովի գորակցությամբ հարցի վերջնական հանգուցալուծումը տեղափոխվեց ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրո:

Հունիսի 26-ին Կովբյուրոյի հերթական նիստին, որին մասնակցել են Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ի. Դ. Օրախելաշվիլին և Շ. Ջ. Էլիավան, Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների տարածքային սահմանազատման մասին հարցը հերթական անգամ փակուղի մտավ, և ստեղծված վիճակում Ալ. Բեկզադյանին ոչինչ չէր մնալու, քան պնդել, որ հարցը դարձյալ դրվի ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի նիստի քննարկմանը¹:

Պողոս Աբելյանը, կատարելով Ասք. Մոավյանի հանձնարարականը, 1921 թ. հուլիսին ներկայացրեց խնամքով պատրաստված փաստաթուղթ Ախալքալաքի գավառի մասին, որտեղ ժողովրդագրական և վիճակագրական հարուստ փաստեր կային, որոնք հիմնավորում էին Ախալքալաքը Խորհրդային Հայաստանին միավորելու տնտեսական-քաղաքական անհրաժեշտությունը՝ միաժամանակ անընդունելի համարելով Վրաստանի Հանրապետության շրջանակներում Ախալքալաքին ինքնավարություն շնորհելու ցանկացած տարբերակ²: Հարկ է նշել, որ ՀԿ(բ)Կ ԿԿ-ն, կարևորելով պատմա-քաղաքական տարբեր գործոններ, խնամքով նախապատրաստվել էր այդ հարցին՝ առավել նպատակահարմար համարելով Բորչալուի մի մասի և Ախալքալաքի ընդգրկումը ՀԽՍՀ կազմում՝ ելնելով հետևյալ կանխադրույթներից.

- 1) ըստ 1917 թ. Կովկասյան օրացույցի վիճակագրական տվյալների՝ Ախալքալաքում ապրում էր 82725 հայ, 10306 վրացի (որից վրացի մուսուլմաններ՝ 2877 հոգի), 901 քուրդ, 6335 մուսուլման, 7542 ռուս, 234 հրեա, այլ ազգություններ՝ 13:
- 2) Բորչալուի գավառի նախալեռնային մասը բնապատմական և տնտեսական առումով Լոռու օրգանական շարունակությունն է՝ տնտեսությամբ առավելապես կապված Լոռու հետ: Ուստի նպատակահար-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1420, թ. 15-17 (Անդրկովկասի հանրապետությունների միջև ներքին սահմանների որոշման հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճեն):

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 122-134, ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 41-53:

մար է դրանց ընդգրկումը մեկ վարչական միավորում:

- 3) Ախալքալաքի գավառը ճանապարհային հաղորդակցության տեսանկյունից առավել մեծ հարմարություններ ունի Հայաստանի կողմից, հանձին Ախալքալաք-Բոզդանովկա-Երմոլովկա-Ղըզլ-Կոչ-Ալեքսանդրապոլ ճանապարհի, որը ամբողջ ձևավորված ընթացքում բաց է մնում, այնինչ դեպի Վրաստան տանող ճանապարհը հաճախ փակվում է ձնաարգելապատնեշների հետևանքով:
- 4) Ազատ հողերին կարող են տեղաբաշխել Թուրքիայից, Կարսի մարզից և այլ տարածաշրջաններից եկած հայ փախստականներին: Փաստաթղթում նաև նշվում էր, որ Ախալքալաքի հյուսիսային ծայրամասը, որը հիմնականում բնակեցված էր վրացիներով, աննպատակահարմար էր համարվում ընդգրկել ՀԽՍՀ կազմում¹:

Հարցը հանգուցալուծվեց 1921 թ. հուլիսի 7-ի Կովբյուրոյի պլենումի նիստում, որին մասնակցում էին Ի. Ստալինը, ինչպես նաև Վրաստանի և Հայաստանի Արտաքին գործերի ժողովուրդներ Ա. Սվանիձեն, Ասք. Մոսվյանը: Վեց կողմ և մեկ ձեռնպահ քվեով որոշում կայացվեց Լոռու նախկին Չեզոք գոտին միացնել Խորհրդային Հայաստանին²: Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը որոշվեց քննարկել Վրաստանի ԿԿ Կենտրոնական կոմիտեում, որի եզրակացությունները այնուհետև պետք է լսվեին Կովբյուրոյի պլենումում³: Այս հարցի կապակցությամբ վրացական մամուլում տեղ գտած որոշ նյութեր իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ են ներկայացրել: Դրանք միանշանակ փաստում են այս խնդրի հանգուցալուծման գործում խորհրդային Մոսկվայի վարչաօրհանայական պահվածքը: Իրադարձությունների ժամանակակից Ալեքսանդր Մուշիքին ուղղակի պնդում է. «Վրաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին: Հայաստանը վերցրեց ոչ միայն Լոռվա հարավային մասը՝ Սանահինով և Հաղպատով, այլ նաև հյուսիսային մասը՝ Ախթալայով և պղնձի հանքերով:

Այս ամենը կատարվեց Ա. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ, նրա գործունեության վարչաօրհանայական մեթոդով: Հիշյալ հարցը նա ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյին ընդունել տվեց միանձնյա, այսինքն՝ փաստորեն անօրինական որոշումով: Ահա՛ այսպես, ձեռքի մի շարժումով վճռվել է այդ բարդ հարցը⁴: Ընդ որում հետաքրքիր է նշել, որ նա անգամ պնդում է, որ ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոյի պլենումը Չեզոք գոտին Հայաստանին միացնելու մասին որոշումը 1921 թ. հուլիսի 7-ին ընդունել է «1 կողմ, 1 դեմ» համամասնությամբ, մյուս անդամները քվեարկությանը չեն մասնակցել, և

¹ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 54, գ. 13, թ. 92-93:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 47, թ. 8, ֆ. 4033, ց. 2, գ. 1185, թ. 35:

³ Տե՛ս http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920//_Тойдзе Л., После 25 февраля, Тбилиси, 1990, с. 23-24:

⁴ Տե՛ս «Ձեռագիր», 1989, № 7, ճջ. 106-107 (վրացերենից թարգմ. Հր. Բայրամյանը):

հենց այստեղ վճռորոշ դեր է խաղացել Ս. Օրջոնիկիձեն: Ըստ Ա. Մուջիրիի՝ ոչ մի քվորում չի ապահովվել, որ «նույն այդ Կովկասյան բյուրոյի հայ անդամները, առհասարակ քվեարկությանը չեն մասնակցել»¹: Փոքր-ինչ այլ գունդերանգներով է Լոռվա Չեզոք գոտու հարցի հանգուցալուծումը ներկայացնում իրադարձությունների մեկ այլ ժամանակակից՝ Գերոնտի Քիքոձեն. «Վրաստանի խորհրդայնացումից հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին: Նա յուրացրեց ոչ միայն հարավային մասը, այլ նաև հյուսիսային մասը՝ Ախալալայով և Ալավերդու պղնձահանքերով:

Պարզ է, որ այս պատերազմին հայերը շատ լավ էին պատրաստվել, ուստի և հասան իրենց նպատակին, բայց պետք է ասել, որ սա ամենացավալի միջադեպերից մեկն է Վրաստանի և Հայաստանի պատմության մեջ»²:

Հուլիսի 16-ին Վրաստանի Կոմկուսի ԿԿ նախագահությունը, միանգամայն անընդունելի համարելով Խորհրդային Հայաստանի պատվիրակության առաջարկը, այդուհանդերձ հաստատեց Կովբյուրոյի որոշումը Լոռու չեզոք գոտին Խորհրդային Հայաստանին հանձնելու մասին: Ֆ. Մախարաձեն, Ս. Օրախելաշվիլին, Բ. Մոդիվանին նշել են, որ հարցը որոշված է, բայց ավելի լավ կլինեք հանրահավաք անցկացնել: Իսկ Ախալքալաքի շրջանը ՀԽՍՀ-ին զիջելու հարցում Վրաստանի Կոմկուսի Կենտկոմի նախագահությունը միանգամայն այլ դիրքորոշում ընդունեց: Ելնելով Թիֆլիսի հետ Ախալքալաքի և Խրամի (Օակլայի) շրջանների ունեցած իբր թե կայուն և անխզելի տնտեսական կապերից՝ որոշվեց մերժել Ախալքալաքի շրջանը Խորհրդային Հայաստանին միացնելու առաջարկը³: Սակայն դրանով վրացական կողմը չբավարարվեց, և սահմանագատման խնդրում հարուցեց նորանոր խոչընդոտներ՝ զանց առնելով հայ-վրացական համաձայնագրերը և Կովկասյան բյուրոյի ընդունած քաղաքական որոշումները: 1921 թ. աշնանից սկսած՝ վրացական իշխանությունները չէին խորշում անհարկի միջամտել Վորոնցովկայի և այլ շրջանների տնտեսական կյանքին, անօրինական հարկեր հավաքել: Ինչպես պարզ է դառնում Ժողտնտխորհի նախագահի պաշտոնակատար Ավատկովի գրությունից՝ ուղղված Վորոնցովկայի գավառային հեղկոմին, ՀԽՍՀ կառավարության կողմից Վրաստանի Արտգործժողկոմին 1921 թ. սեպտեմբերի 7-ին գրություն է ուղարկվում, որով ևս մեկ անգամ հիշեցվում էր, որ Վորոնցովկան Վրաստանի ԽՍՀ կազմում չէ, այդ իսկ պատճառով Վրաստանի Ժողտնտխորհը իրավունք չունի նշված շրջանի գործարանների մասին կարգադրություններ անել⁴: Սակայն, ինչպես պարզվում է Վորոնցովկայի սովբաժանմունքի պետի գրությունից, Վորոնցովկայի բնակիչները

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, թիվ 1, էջ 14-15:

³ Տե՛ս **Хармандарян С. В.**, Ленин и становление Закавказской Федерации. 1921-1923, Ереван, 1969, с. 110:

⁴ Տե՛ս ՀՍՍՀ, ֆ. 113, ց. 3, գ. 10, թ. 74:

արդեն վճռել էին Վրաստանին հարկեր չվճարել, մինչև պարզվեր, թե Վորոնցովկան ում է պատկանում¹:

Ի վերջո, 1921 թ. նոյեմբերի 6-ին Թիֆլիսում ստորագրված հայ-վրացական սահմանագծի մասին վերջնական համարվող համաձայնագրով Լոռու Չեզոք գոտին, բացառությամբ մի քանի հայաբնակ սահմանամերձ գյուղերի, վերամիավորվեց Խորհրդային Հայաստանին²: Մեր կողմից այն ստորագրեց Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, Վրաստանի կողմից այն վավերացրեց հեղկոմի նախագահ Բ. Մդիվանին: Վրացական կողմի պնդմամբ շուտով սահմանագծումը միանգամայն այլ բովանդակություն ձեռք բերեց, և մի շարք հայկական գյուղեր՝ Ջանդարը, Օփրեթը, Խոժոռնին, Բրդաձորը, Սադախուն և այլն, մնացին Վրացական ԽՍՀ սահմաններում³: Այդ սահմանագծման հիմքում ընկած էր նախկին ցարական կառավարության վարչատարածքային բաժանումը, աղավաղման էին ենթարկվել անգամ Լոռու սահմանագծի որոշ հատվածներ: Այնուամենայնիվ, որոշակի վերապահումներով հանդերձ, կարելի է եզրահանգել, որ Լոռու Չեզոք գոտին, որը ըստ Գ. Բադալյանի կատարած հաշվարկների զբաղեցնում էր շուրջ 1900 քառակուսի կմ⁴, իսկ այլ հաշվարկների համաձայն՝ ավելի, քան 1700 քառակուսի կմ, բացառությամբ հյուսիսային մասում գտնվող մի շարք սահմանամերձ գյուղերի (Իրզանչայ, Սաաթլու, Ջանդար, Աղքյորփի, Օփրեթ, Բրդաձոր, Սադախլո և այլն, որոնք կազմում էին շուրջ 200 քառակուսի կմ տարածք), դարձավ Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը⁵: Այսպիսով, Վրաստանի Խորհրդային Հանրապետության Հեղկոմի և Հայաստանի Խորհրդային Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդի միջև սահմանների մասին կայացված որոշման համաձայն՝ գծվեց հետևյալ սահմանագիծը. սկսվում էր Ուչ Թափալար սարից՝ ոլորապտույտ իջնելով արևմուտքից արևելք մինչև Օրթուլ-դաղի լեռնանցքը և Օքյուզ-դարից ուղղվում դեպի հյուսիս-արևելք: Այնուհետև թեքվելով դեպի արևելք՝ սահմանագիծը հյուսիսում էր թողնում Սադաթինսկի (Սադաթափա) լիճը և Տրոիցկոյե գյուղը, իսկ հարավում՝ Տաթոյ-Խաբաբա (Շիրակի մարզի Բավրա գյուղ), Կարմիր Խաբաբա և Դար-Քեոյ (Սարագյուղ) բնակավայրերը: Ապա սահմանագիծը հասնում էր Լեզլի-Դաղ (Աչքասար) սարը, այնուհետև լեռան գագաթով ձգվում ուղիղ դեպի Իրզանչայ գյուղը և դեպի Կուլու-դաղ, որից հետո՝ Սաաթի և Ջանդար գյուղերը, հասնում մինչև Աղքյորփի և ուղղվում դեպի Օփրեթ գյուղը, որից հետո՝ մինչև Խոժոռնի գյուղի քանդված մատուռը, Բրդաձոր գյուղը, Սադախ-

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 71-72:

² Տե՛ս նույն տեղում, գ. 116, թ. 29, գ. 55, թ. 3, 10:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս **Խաչատրյան Կ., Մուքիսյան Հ., Բադալյան Գ.**, Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, 2015, էջ 29:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 3, թ. 66-67, ց. 3, գ. 116, թ. 29:

լո կայարանը: Վերջնամասում հատելով Թափա-դաղ լեռը Խաչա-Ղալա սարից Պալոյթի-Բաշի ընկած սահմանագծի հյուսիսային մասում հասնում էր Աղբյուր անունով տեղանքին: Սույն փաստաթղթի ծանոթագրությունում արձանագրվում էր վերը բերված փաստի մասին, այն է՝ Իրգանչայ, Ջանդար, Աղբյուրփի, Օփրեթ, Խոժոռնի, Բրդաձոր, Սադախլո բնակավայրերը մնում են Վրաստանի կազմում¹:

Ժողկոմխորհի նախագահության 1921 թ. դեկտեմբերի 24-ի նիստում տրված հակիրճ հաշվետվության մեջ Արտգործժողկոմ Ասք. Մոավյանը հաստատում էր այն փաստը, որ Վրաստանի ԽՍՀ կառավարության հետ վերջնական համաձայնություն է ձեռք բերվել սահմանների հաստատման հարցի շուրջ, ըստ որի՝ ամբողջ նախկին Չեզոք գոտին և Բորչալուն անցնում են Հայաստանին²:

Այսպիսով, խորհրդային իշխանությունները սահմանագատման խնդրում գտան իրենց կողմից պարտադրված աշխարհաքաղաքական նոր իրողություններից բխող լուծում և կարծես թե դուրս եկան փակուղային կիճակից, որը կողմերին չբավարարեց, ուստի զսպված լարվածությունը պահպանվեց: 1921 թ. նոյեմբերի 6-ին՝ Թիֆլիսում հայ-վրացական սահմանագծի մասին վերջնական համաձայնագրի ստորագրումից հետո, Խորհրդային Հայաստանի և Վրաստանի միջև նոր տարաձայնություններ առաջացան: ՀԽՍՀ-ՎԽՍՀ միջպետական սահմանագծի մանրամասների ճշգրտման շուրջ ծագեց մեծ լարվածություն, քանզի վրացական իշխանությունները չբավարարվեցին հաստատագրված վիճակով և օգտվելով ՌԿ(Բ)Կ վերին օղակների ակնհայտ աջակցությունից հարցը նորից բարձրացրին: Վրացական կողմը, խախտելով նախկինում ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները, ջանք չէր խնայում Լոռու տարածքից նոր կտորներ անդամահատելու և դրանք Վրացական ԽՍՀ-ին կցելու համար: Խոսքը, բնականաբար, առաջին հերթին վերաբերում էր Լոռու Չեզոք գոտուն:

1921 թ. դեկտեմբերի 24-ին ՀԽՍՀ Արտգործժողկոմատը հեռագրում է Վրաստանի Արտաքին գործերի ժողկոմին (պատճենը՝ Վրաստանում Հայաստանի լիազոր-ներկայացուցիչ Սուրխաթյանին, ինչպես նաև Օնիկ Օհանջանյանին), որ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները Հայաստանի կազմում ընդգրկելու գործընթացը կազմակերպելու համար ներկայացուցիչ է նշանակվել Լոռու գավառի հեղկոմի նախագահ Օնիկ Օհանջանյանը, իսկ ընդունման արարողությունը տեղի կունենա Վորոնցովկայում դեկտեմբերի 27-ին³, համաձայն Թիֆլիսում Մոավյանի և Սվանիձեի միջև ձեռք բերված

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 10, 66:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 110, թ. 3:

³ Տեղին է ասել, որ դրանից գրեթե մեկ տարի առաջ Վորոնցովկայի շրջանի գյուղական ընկերության համագումարը իր 1920 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված օրինական վճռում 233 գյուղացիների անմիջական մասնակցությամբ դատապարտել էր վրացական զորքերի մուտքը

պայմանավորվածության¹: Միաժամանակ Մոսկվանը համապատասխան հեռագիր է ուղարկում Ղարաքիլիսա՝ Լոռու գավառային զինկոմ Ստեփանյանին՝ հրահանգելով Օհանջանյանի հետ մասնակցել Վրաստանի կողմից Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները Հայաստանին հանձնելու արարողությանը և ընդունել դրանք²: Կարծես թե այդ պահին ամեն ինչ ընթանում էր ըստ ձեռք բերված համաձայնության: Դեկտեմբերի 26-ին Սվանիձեից ստացվում է հեռագիր, որ Վրաստանի ներկայացուցիչներ նշանակված Պավել Ինգորովան և Գրիգորի Կիկոձեն դեկտեմբերի 27-ին կլինեն Վորոնցովկայում: Այդ օրը նրանք ժամանում են Քոլագիրան կայարանը, որտեղ հանդիսավոր ընդունելության են արժանանում տեղական հայկական իշխանությունների կողմից զինկոմիսար Ստեփանյանի գլխավորությամբ: Սակայն վրաց ներկայացուցիչների խոսքերը սառը ցնցուղ են դառնում հայկական կողմի համար. նրանք հայտարարում են, որ եկել են ոչ թե այդ շրջանները Հայաստանին հանձնելու, այլ ՀԽՍՀ-ի և ՎԽՍՀ-ի միջև սահմանները ճշգրտելու: Ընդ որում անվարան ներկայացնում են Սվանիձեի և Մաչաբեի ստորագրությամբ դեկտեմբերի 16-ին իրենց տրված մանդատները՝ որպես սահմանագիծը որոշող խառը հանձնաժողովի ՎՄԽՀ պատգամավորներ, և խնդրում կազմակերպել փոքրիկ խորհրդակցություն հանգամանքները պարզելու համար: Այդ մասին փաստում է Լոռու զինկոմիսար Ստեփանյանը ՀԽՍՀ Արտգործժողկոմի քարտուղար Մ. Խոջամիրյանի հետ ունեցած հեռագրակապում՝ հայտնելով որ իրենք ժամանակին ներկայացել են վրաց պատվիրակներին դիմավորելու՝ կատարելով Արտգործժողկոմ Ասք. Մոսկվանի հանձնարարականը³: Չերկնչելով իրենց լիազորությունները չարաշահելու փաստից՝ վրացական կողմի ներկայացուցիչները հայտարարեցին, որ իբր իրենք հարկադրված են ետ մեկնել Թիֆլիս՝ նոր հրահանգներ ստանալու համար: Դրան ի պատասխան՝ Ստեփանյանը նկատում է, որ սահմանը հստակ նշված է Ալ. Մյասնիկյանի և Բ. Մոլիվանու ստորագրած նոյեմբերի 6-ի համաձայնագրում, իսկ ինչ վերաբերում է տեղագրական մանրամասներին, ապա այդպիսիք կարելի է որոշել այն պահին, երբ նպատակահարմար լինի⁴:

Վորոնցովկա, նրանց կողմից թույլ տրված բռնությունները և գյուղացիների ունեցվածքի անհարկի բռնագրավումները: Ընդունված որոշման մեջ դատապարտելով Վրաստանի կառավարության քաղաքականությունը, այն դիտարկելով որպես ոտնձգություն Բորչալուի գավառի Չեգոք գոտու բնակչության կամքի ազատ արտահայտման և իրավունքների վրա, որը չէր եղել անգամ Նիկոլայ ցարի ժամանակ, գյուղական ընկերության համագումարը միանշանակ մերժել էր վրացական իշխանությունների անօրինական միջամտությունը Վորոնցովկայի և առհասարակ Բորչալուի գավառի Չեգոք գոտու գործերին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 82, թ. 38):

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 55, թ. 8, 11-13, 30, 31:

² Տե՛ս նույն տեղում, թ. 8, 30-32:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 16:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ.:

Հրահանգավորված լինելով՝ Ինգորոկվան և Կիկոձեն անդրդվելի են մնում և պնդում, որ իրենք լիազորված չեն և վախենում են իրենց լիազորությունները չարաշահելուց: Նրանք փարիսեցիաբար ներողություն են խնդրում, որ պետք է մեկնեն Թիֆլիս՝ համապատասխան մանդատներ ստանալու՝ հայցելով հայկական կողմի ներողամտությունը Վրաստանի Արտգործոժողկոմատի թույլ տված «թյուրիմացության» համար¹: Այդ ամենին ի պատասխան՝ ՀԽՍՀ ղեկավարությունը համառ ջանքեր է գործադրում ստեղծված իրավիճակի վրա վերահսկողությունը պահպանելու և վրաց բոլշևիկներին դիմակայելու ու տարածքային նոր կորուստներ թույլ չտալու համար: Հենց այդ նպատակով ՀԽՍՀ Արտգործոժողկոմատը ղեկտեմբերի 31-ին նորից դիմում է վրացական կողմին՝ 1922 թ. հունվարի 5-ին իր ներկայացուցիչներին ուղարկել վերոնշյալ շրջանները հանձնելու համար՝ մատնանշելով այն տեղափոխության մասին, որը թողել էին Կիկոձեն և Ինգորոկվան իբր թե մանդատների հետ կապված իրենց չհիմնավորված ետդարձով: Վրաստանի ներկայացուցիչներ են նշանակվում Ներքին գործերի ժողկոմի տեղակալ Նիկոլայ Սո. Սոկոլովսկին և Միլիցիայի գլխավոր վարչության պետ Արչիլ Լ. Պուրցելաձեն: Սվանիձեն վրացական կողմին հատուկ երկերեսանիությամբ խորամանկ մանևրի է դիմում և նախապես «խնդրում», որ խառը սահմանային հանձնաժողովի առաջարկվող նիստը հրավիրեն Թիֆլիսում հունվարի 9-ին, քանի որ նոյեմբերի 6-ի համաձայնությամբ սահմանագիծը նշված է ընդհանուր ձևով՝ ոչ մանրակրկիտ: Վրացական կողմի կարծիքով այդ սահմանագիծը մասնատում էր սահմանային գյուղերի հողահանդակները: Սվանիձեն հայտնում էր, որ ՎՍՍՀ-ի կողմից խառը հանձնաժողովի անդամներ են նշանակվում Ինգորոկվան և Կիկոձեն: Բացի այդ, Վրաստանի կառավարությունը առանց հայկական կողմի կարծիքը հաշվի առնելու՝ հանձնաժողովի աշխատավայր էր նշանակել Թիֆլիսը, պատճառաբանելով, որ սահմանային գյուղերի հողային հարցերի վերաբերյալ նյութերը գտնվում են այնտեղ: Դա խնդրի հանգուցալուծման տեսանկյունից ամենևին էլ երկրորդական հանգամանք չէր: Վրացական կողմը անցավ քաղաքական-հոգեբանական գրոհի՝ վստահ լինելով, որ սեփական տան պատերը կօգնեն սահմանավեճը իրենց օգտին լուծելու համար: Դրա հետ մեկտեղ կրկին սանձազերծված սահմանատարածքային վեճում Վրաստանի համար ավելի նպաստավոր վիճակ ստեղծելու նպատակով Սվանիձեն անհրաժեշտ համարեց ՌԽՖՍՀ ներկայացուցչի մասնակցությունը որպես հանձնաժողովի նախագահի:

1922 թ. հունվարի 1-ին Լոռու գավառային հեղկոմի նախագահի հետ ուղիղ հեռագրակապով խոսակցությունից ակնհայտ է դառնում դիվանագիտական-բանակցային լարված պայքարը Վորոնցովկայի շրջանը Խորհրդային Հայաստանին հանձնելու հարցի շուրջ: 1921 թ. դեկտեմբերի 27-ին ՀԽՍՀ

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 16-17, 33:

Արտաքին գործերի ժողկոմ Ասք. Մռավյանը Լոռու գավառային հեղկոմի նախագահ Օհանջանյանին և զինկոմ Ստեփանյանին ուղղված հեռագրում տեղեկացրել էր այն մասին, որ նրանք որպես կառավարության ներկայացուցիչներ, Արտգործժողկոմից լիազորված են մասնակցելու Վրաստանի կողմից Վորոնցովկայի շրջանը պաշտոնապես Հայաստանին հանձնելու արարողությանը¹:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ, ի պատասխան վրաց կառավարության փոփոխամիտ և խարդավալից քայլերի, ՀԽՍՀ կառավարությունը և մասնավորապես Ասք. Մռավյանը անհողորդ են և պատասխան գործողություններում աներկբա պնդում են հայկական կողմի նախկին տեսակետը և Սվանիձեին առաջարկում Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները հանձնել ՀԽՍՀ-ին: Ա. Մռավյանը հանձնման օր էր նշանակել 1922 թ. հունվարի 7-ը, իսկ վրացական նոր մոտեցումը համարում էր ուշացած և հարցի լուծումը ձգձգելու միտում: Ա. Մռավյանը հայկական կողմի նման կոշտ մոտեցումը պատճառաբանել էր այդ շրջաններում տեղական խորհուրդների և Հայաստանի խորհուրդների համագումարի ընտրությունների անցկացման անհրաժեշտությամբ²: Այդ խնդրի հետ էր կապված նաև Սուրխաթյանի հեռագիրը, որում վերջինս պարզաբանումներ էր տալիս՝ ՀԽՍՀ Արտգործժողկոմին տեղեկացնելով, որ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանների հանձնումը կարող է տեղի ունենալ հունվարի 7-ին, եթե Հայաստանի կառավարությունը համաձայնվի Վրաստանին զիջել Սադախլոյի շրջանի Լամբալո և Քերպիլի գյուղերը, ինչպես նաև Սադախլոյից դեպի արևմուտք գտնվող ևս ինչ-որ հողակտոր³:

Արձագանքելով Մռավյանի վերջին հեռագրին՝ Սվանիձեն ուղարկում է հետևյալ պատասխան հեռագիրը. «Հաստատում եմ իմ դեկտեմբերի 31-ի հեռագիրը: Վորոնցովկայի, Պրիվոլնոյի, Սադախլոյի հարցը պետք է որոշի մեկ հանձնաժողով: Հետաձգել խառը հանձնաժողովի աշխատանքը՝ աննպատակահարմար է: Նրա աշխատանքի ավարտմամբ հանձնման ժամանակ չի կարող տեղ գտնել որևիցե թյուրիմացություն»⁴: Դրան ի պատասխան՝ Մռավյանը հունվարի 6-ին հայտնում է հետևյալը. «Բաց թողնելով Սադախլոյի հարցը և համաձայնվելով սահամանագիծը ճշգրիտ հաստատելու համար խառը հանձնաժողովի ստեղծմանը, քանի որ այն ձեզ չի բավարարում, մենք այնուամենայնիվ պնդում ենք մեր պատգամավորների Վորոնցովկա մտնելու վրա՝ Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները հանձնելու համար՝ ոչ ավելի ուշ քան 7-ին կամ 8-ին, նկատի ունենալով մեզ համար տվյալ հարցի բացառիկ նշանակությունը, քանի որ ծայրահեղորեն կարևոր է ան-

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 13:

² Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 18, 51:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 18, 51:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 8 հակ., 21-22, 55-56:

հապաղ ձեռնամուխ լինել խորհուրդների ընտրություններին: Հետաձգումը գրկում է բնակչությանը հնարավորությունից ներկայացված լինել հունվարի 20-ին բացվող Խորհուրդների համագումարին: Ձեր կողմից վիճարկվող շրջանը մեր կողմից ուսումնասիրվում է և մոտակա օրերին խառը հանձնաժողովի մեր ներկայացուցիչը կմեկնի Թիֆլիս»¹: Մակայն վրաց բոլշևիկները այս անգամ չշտապեցին պատասխանել այդ հեռագրին՝ ձգտելով ավելի խճճել իրավիճակը հայ-վրացական սահմանավեճի շուրջ և խուճապ սերմանել հայկական կողմի մոտ: Պատասխանը ստացվեց ավելի ուշ, իսկ այդ ընթացքում ՀԽՍՀ ղեկավարությունը կրկին հարցապնդումով դիմեց Վրաստանի կառավարությանը: Միայն 1922 թ. հունվարի 11-ին Վրաստանից հաղորդագրություն ստացվեց, որում Սվանիձեն տեղեկացնում էր, որ հարցի լուծումը հանձնվել է Կոլբյուրոյի քննարկմանը՝ խնդրին հանգուցալուծում տալու համար²:

Այդ բանակցությունների ժամանակ Հայաստանի Արտաքին գործերի ժողովումատում բազում հաղորդագրություններ էին ստացվում Լոռու գավառային իշխանություններից վրացական իշխանությունների կողմից գործադրվող բռնությունների մասին, որոնք հավաստում էին 1921 թ. նոյեմբերի 6-ի պայմանագրից բխող սկզբունքների խախտման և մասնավորապես հավաքվող պարենհարկի խնդրում տեղ գտած սանձարձակությունների մասին: Դրա հետ մեկտեղ, Լոռու գավառային գործադիր կոմիտեի անդամ Լիսինը հաղորդել էր վրացական իշխանությունների կողմից գավառի ղեկավարության ներկայացուցիչների ձեռքակալման մասին՝ այն պատրվակով, որ վերջիններս խոչընդոտում են պարենհարկի հավաքումը: Լիսինը նաև հայտնում էր, որ Բորչալուի գավառային հեղկոմը Վրաստանի Արտգործժողովումատից ծանուցում է ստացել, որ Վորոնցովկան վերջնականապես անցնում է Վրաստանին, ուստի հայկական իշխանությունների ներկայացուցիչներին առաջարկվել է թողնել բոլոր աշխատանքները և լքել շրջանը: Հեռագրում նաև հայտնվում էր Բորչալուի գավառի բնակիչների ակնկալիքների մասին, որ հայկական իշխանությունները վճռական միջոցներ կձեռնարկեն և վերջ կտան Վորոնցովկայի շուրջ ստեղծված իրավիճակին³: Այն ժամանակ, երբ Հայաստանի Արտգործժողովումատը սպասում էր վրացական կողմի ողջամիտ մոտեցմանը և հարցի լուծման մասին սպասվող վճռին, Ջալալօղլիից Լոռու գավառային հեղկոմի նախագահ Օ. Օհանջանյանից ստացվում է հետևյալ հաղորդումը. «Երևան, Հայաստանի Արտգործժողովումատին: Համաձայն Ձեր հունվարի 12-ի հեռագրի հաղորդում եմ, որ ժամանել ենք Վորոնցովկա՝ շրջանը ընդունելու համար, Վրաստանի ներկայացուցիչները չեն ներկայացել հունվարի 13-ի նիստին: Վորոնցովկայի շրջանի բոլոր ներկայա-

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 8-9, 23, 57:

² Տե՛ս նույն տեղում, թ. 9, 12, 14, 27, 50:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 9, 24:

ցուցիչների և 18-րդ հեծելազնի հրամանատարի մասնակցությամբ որոշեցինք. «Համարել հանձնման հետագա ձգձգումը միանգամայն շրջանը կազմալուծող: Այդ պատճառով շրջանը անհապաղ պետք է կազմակերպական և վարչական տեսանկյունից կապվի ՀԽՍՀ Լոռու գավառային կազմակերպությունների հետ: Հետագայում ղեկավարվել նրանց կարգադրություններով և հրահանգներով, տեղագրական մանրամասնումը իրականացնել ԽՍՀՄ, Վրաստանի պաշտոնական ներկայացուցիչների ժամանման դեպքում: Փաստացիորեն շրջանը հունվարի 14-ին ընդունվել է՝ որպես շրջանային հեղկումի լիազոր-ներկայացուցիչ թողնելով Ա. Լիսինին, Քաղբյուրոյի անդամ՝ Դավիդյուկին, Միլիցիայի պետ՝ Ասյուտինին: Խնդրում եմ անհապաղ հաղորդել, թե ինչպես է նախատեսվում շրջանում իշխանության հետագա կազմակերպման հարցը, ձեռնամուխ լինել խորհուրդների ընտրություններին թե՛ թողնել այդ նույն հեղկումները: Գրավոր զեկուցագիրը կներկայացվի մի շաբթ հարցեր պարզելուց հետո: Լոռու Հեղկումի նախագահ՝ Օնիկ Օհանջանյան, հունվարի 15»¹: Ակնհայտ է, որ այս պայմաններում ՀԽՍՀ իշխանությունները միանգամայն նպատակաուղղված են գործել, և ձգտել են կանխել հարցի լուծման հետագա ձգձգումը և օր առաջ իրականացնել Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանների ընդգրկումը ՀԽՍՀ կազմում: ՀԽՍՀ Արտգործժողկոմատը Լոռու իշխանություններին կարգադրություն է անում նշված շրջանում Խորհուրդների համագումար հրավիրելու կապակցությամբ շտապ կազմակերպել տեղական խորհուրդների ընտրություններ:

Հարկ է ասել, որ դեռևս երկար ժամանակ կողմերը ակտիվ վիճարկում ու քննարկում են այս կամ այն բնակավայրի թե՛ մեկ և թե՛ մյուս հանրապետությանը անցնելու նպատակահարմարության և տնտեսական շահավետության հարցը: Մի շաբթ դիտարժան մանրամասների մասին տեղեկանում ենք Լոռու գավառային հեղկումի նախագահի հետ 1922 թ. հունվարի 18-ին կայացած ուղիղ հեռագրագծով խոսակցությունից: Այսպես, պարզվում է, որ վրացական կողմը, առաջ քաշելով Բորչալուի գավառի սահմանագծի փոփոխությունը, նպատակահարմար էր գտել, որ Սադախլոյի հատվածից Վրաստանին անցնի Լամբալո գյուղը: Ըստ Կովկասյան օրացույցի («Кавказский календарь»)՝ 1917 թ. այն ուներ 493 թաթար բնակիչ, իսկ Քերպիլին՝ 427 բնակիչ: Ուստի համաձայն հայկական կողմի եզրահանգման՝ Վրաստանին անցնելու անհրաժեշտությունը նրանք հիմնավորել էին նրանով, որ իբր թե՛ աշխարհագրական և թե՛ ազգագրական առումներով այդ բնակավայրերը ընդգրկվում են ոչ թե Լոռու, այլ Բորչալուի հովտի կազմում, և հոգուտ Վրաստանի լուծման պարագայում վերջինս ձեռք էր բերում Լամբալոյի հացառատ շրջանը, Սադախլո և Այրում կայարանների տեղամասերի երկաթուղագծի

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 9, 29:

մի մասը և շուրջ 75 քառ. կմ տարածք: Միաժամանակ, հայկական կողմը հաշվարկել էր նաև Սադախլոյի այդ հատվածի տնտեսական նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար և հանգել հետևության, որ Արչիխ, Աչքաձոր և մերձակա այլ գյուղերը Լամբալոյի շրջանից ստանում էին իրենց անհրաժեշտ հացը¹: Դրա հետ մեկտեղ, ըստ վերոհիշյալ վերլուծության, վարչական ծայրակետը կամ սահմանակետը Վրաստանի հետ պետք է լիներ Պալուբլի Բաշին, որը Ադրբեջանի հետ Խորհրդային Հայաստանի ազգագրական սկզբնակետն էր²: Ուստի Սադախլոյի շրջանը Վրաստանին անցնելու դեպքում Հայաստանը կորցնում էր Լամբալոյի հացառատ շրջանը, շուրջ 15 վերստ երկարության երկաթգիծ և 75 քառ. կմ տարածք՝ մոտավորապես Սադախլոյի հատվածից դեպի արևմուտք՝ մինչև Կուլուբաշ սարը ընկած սահմանը: Քանի որ գոյություն ունեցող վիճակով հարակից գյուղերի հողահանդակները կտրատվում էին մասերի, առաջարկվում էր սահմանագծի փոփոխություն: Սահմանագծի նման տարբերակով Վրաստանը ձեռք էր բերում շուրջ 350 քառ. վերստ տարածք³, որը չափազանց հարուստ էր վառելիքային և գլխավորապես շինարարական անտառանյութերով: 1) Նման զիջման պարագայում վրացիներին է անցնում Փամբակի ամբողջ հովիտը՝ ներառյալ Ալեքսանդրապոլ քաղաքը, Ջալալօղլին, Պրիվոլնոյեն, Վորոնցովկան: Բացի այդ, Լոռու նշանակալից մասը բացարձակապես զրկվում էր նաև Մդարթ գյուղի շրջանում գտնվող Էջմիածնի նախկին եկեղեցապատկան անտառային հանդակները օգտագործելու հնարավորությունից՝ ճանապարհների բացակայության հետևանքով: Ըստ հայկական կողմի՝ եթե վրացիներին հաջողվեր իր տարածքում ընդգրկել նաև Շամբլուղ բնակատեղը, ապա դա փաստացիորեն հավասարագոր էր Ալավերդու պղնձաձուլական գործարանի փակմանը, քանզի գլխավոր հանքահորերը գտնվում էին հենց այդ շրջանում⁴: 2) Զիջման պարագայում Հայաստանը կորցնում էր շուրջ 350 քառ. վերստ տարածք: Ըստ առաջարկվող սահմանագատման մեկ այլ տարբերակի՝ Սադախլոյի հատվածը վրացիներին զիջել և հյուսիսային մասում՝ Կուլուբաշ սարից մինչև Սադախլո ընկած մի շարք գյուղերի Հայաստանին անցնելու պարագայում սահմանագիծը պետք է անցներ Կուլուբաշ սարով⁵: Ընդ որում, ըստ այդ տարբերակի, Զինգին սարը, Դամիա գյուղը՝ մինչև Շումալ սարը, անցնում էին Հայաստանին, իսկ երկաթգծի երկայնքով Կոթիղ Դաղ սարից մինչև Սադախլո գյուղը՝ Վրաստանի տիրապետության տակ⁶: Ուստի ըստ նախգծվող

¹ Տե՛ս նույն տեղում, թ. 1, 69:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 1 հակ.:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 2:

սահմանագծի՝ Վրաստանին զիջվող Սադախլոյի հատվածի փոխարեն Հայաստանին էր անցնում հարուստ անտառահանդակ, որը ներառում էր երկու գյուղական համայնքներ՝ Օփրեթի մի մասը՝ առանց Ներքին և Վերին Ցերանվի գյուղերի, և Չեչկանի մի մասը, որի մեկ այլ կտորն արդեն գտնվում էր Հայաստանի կազմում¹: Հատկանշական է, որ վերը նշված համայնքների բնակչության գերակշռող մեծամասնությունը ըստ 1915 և 1917 թթ. «Կովկասյան օրացույցի» տվյալների հայեր էին, այդ թվում Աղքյորփին (606), Դարբազը (205), Բրդաձորը (104), Դամիան (547), Լիչքաձորը (533), Խոժոռնին (884) և այլն, ընդհանուր առմամբ՝ 3165 հայ²: Ամեն դեպքում, քննարկելով վրացական կողմի ներկայացրած նախագիծը, ՀԽՍՀ իշխանությունները ելնում էին այն իրողությունից, որ այդ համայնքները ժողովրդագրական տեսանկյունից շաղկապված էին Հայաստանին: Հայկական կողմը գտնում էր, որ վրացական հայեցակարգի ընդունման պարագայում Հայաստանը կորցնում էր զգալի կենսատարածք: Ըստ այդմ ենթադրվում էր, որ Լամբալոյի շրջանը հնարավոր էր զիջել միայն այն պայմանով, եթե ՀԽՍՀ տարածքում ընդգրկվեր հացառատ Դամիա գյուղի շրջանը³: Բերվող փաստաթղթում արված են ամփոփիչ եզրահանգումներ, ըստ որի ստացվում էր հետևյալ պատկերը. Սադախլոյի շրջանի փոխարեն Հայաստանին տրվեր Սադախլո-Կուլուրթաշ սարից հյուսիս ընկած շրջանը: Սահմանագատման խնդրի նման լուծումը, հիմք ունենալով պահպանելու բնակչության էթնիկական միասնությունը, ներքին տնտեսական կապերը և երկու շրջանների աշխարհագրական ամբողջականությունը, համարվում էր դիտարկվող տեղանքի օբյեկտիվ պայմաններին առավել համապատասխանող: Ինչ վերաբերում էր Սադախլոյից-Կուլուրթաշ սարը ընկած տարածքամասին, ապա ըստ հայկական կողմի այստեղ սահմանագիծը չպետք է փոխվեր, ինչպես ենթադրվում էր վրացիների կողմից ներկայացվող ջրաբաժանքի վերաբերյալ նախագծում, քանզի նման լուծումը Հայաստանին զրկում էր միակ շինարարական անտառանյութից: Բացի այդ, ՀԽՍՀ իշխանությունների դիրքորոշմամբ, եթե այդուհանդերձ Վրաստանը համաձայնվեր ճոճկանի գյուղական համայնքի մնացած մասի և Օփրեթի մի մասի Հայաստանի կազմում ընդգրկելուն, փոխարենը Վրաստանին կզիջվեր Սադախլոյի սեկտորը (1-ին տարբերակ), և այս դեպքում գործող սահմանագիծը պետք է մնար անձեռնմխելի⁴:

Այս ամենը ակնհայտորեն վկայում էր շարունակական քաղաքական մանևրումների միջոցով հայ-վրացական տարածքավեճում շահումներ ունենալու վրացական իշխանությունների ձգտման մասին, ինչն անփոփոխ

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

մնաց թե՛ մենշևիկյան հանրապետության և թե՛ Խորհրդային Վրաստանի ժամանակ:

Այս առումով վրաց պատմակեղծարար Գ. Մարխուլիան պնդում է, որ դեռևս 1922 թ. հայկական քաղաքական-կուսակցական շրջանները նոր նախագիծ են առաջարկել, ըստ որի՝ Ջավախեթիայի (Ջավախք) մեծ մասը և կամ Ախալքալաքի շրջանը պետք է միանար Բորչալուի գավառին՝ մեկ միասնական հայկական վարչական միավոր ստեղծելու նպատակով¹: Իսկ Ի. Ջավախիշվիլին եզրահանգում էր. «Պարզ է՝ այդ ծրագիրն էլ հիշյալ այդ երկու գավառների Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմաններից անջատելու և Հայաստանին միացնելու վարպետորեն մտածված առաջին քայլի նախագիծն էր, որին անպայմանորեն պետք է հետևեր նաև երկրորդը: Բավական է աչքի անցկացնել դաշնակցականների կողմից կազմված քարտեզները, և պարզ կդառնա, որ այստեղ էլ, թեև ուրիշ ճանապարհով, պայքարն ընթանում է նրանց առաջվա նպատակներն իրականացնելու համար»²: Հենց այս նկատառումները հաշվառելով՝ Գ. Մարխուլիան եզրակացնում է, որ 1923 թ. հայկական այդ փորձը ձախողվեց³: Նա պնդում է, որ դրանից հետո հայկական կողմը նորացված տարբերակներ առաջադրեց, և այդ կապակցությամբ կրկին վկայակոչում է Ի. Ջավախիշվիլուն, որը գտնում էր, որ «հայերի այս նախագիծն իրականացնելու կատարյալ անհնարինության հաստատումը ոչ մի դժվարություն չէր ներկայացնում Վրաստանի հողագործության կոմիսարիատի համար և, այսպիսով, այս նախագիծն էլ մերժվեց:

Այստեղ մենք գործ ունենք Հայաստանի համար արհեստականորեն քաղաքական տարածք ստեղծելու դաշնակցականների՝ հին քարտեզներում պատկերված պլանը իրականացնելու փորձի հետ»⁴: Ի. Ջավախիշվիլին լիովին մերժելի էր համարում հայկական կողմի ցանկացած, այդ թվում որևիցե ձևով ինքնավարության շնորհման նախագիծ. «Մի քանի խոսք Ջավախեթիային (Ջավախք – Վ. Վ.) ինքնավարություն շնորհելու և բաժանելու անհրաժեշտության իբրև թե նոր նախագծի մասին: Ամբողջ վերոշարադրյալից հետո պարզ է, թե ինչ նպատակով և որտեղից է բխում նաև այս նախագիծը: Ո՛չ աշխարհագրական, ո՛չ էլ տնտեսական պայմանները չեն փոխվել: Հապա ինչո՞վ է պայմանավորված այս իբրև թե նոր պլանը, եթե ոչ

¹ Տե՛ս **Мархулия Г. Р.**, Армяно-грузинские взаимоотношения в 1918-1920 годах: Տե՛ս Доклад И. Джавахишвили правительству Грузии, 1926, <http://iberiana.wordpress.com/armenia-georgia/1918-1920/>:

² Իվանե Ջավախիշվիլու արխիվից // Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1918-1920): Նյութերի ժողովածու: Պրակ առաջին: Կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հր. Բայրամյանը, Երևան 2001, էջ 60:

³ Տե՛ս Доклад И. Джавахишвили правительству Грузии:

⁴ Նույն տեղում: Տե՛ս նաև Իվանե Ջավախիշվիլու արխիվից // Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1918-1920), էջ 61:

այն նույն քաղաքական-տարածքային նպատակին հասնելու գործոնով: Եթե նախկին Ռուսիայի տիրապետության ժամանակ վրաց ժողովրդի շահերը Վրաստանում ոտնատակ էր արվում, և Վրաստանում եղած ազատ հողը ռուս և հայ չինովնիկների քաղաքականության օգնությամբ միայն հայերն ու ռուսները ձեռք գցեցին, մի թե հիմա էլ պետք է վրաց ժողովրդի կենսական շահերը զոհաբերվեն հայ դաշնակցականների ազգային քաղաքական նախագծերի իրականացմանը: Մա այնքան անհավատալի է, որ համոզված եմ՝ ԽՍՀՄ կառավարությունն այս նախագիծն էլ կմերժի ճիշտ այնպես, ինչպես մերժվել են այդ նույն շրջաններից բխող վերոհիշյալ նմանատիպ նախագծերը»¹:

1921 թ. նոյեմբերի 6-ին Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Հայաստանի միջև կնքվեց պայմանագիր, որը պարզորոշեց երկու հանրապետությունների միջև սահմանաբաժան գիծը, որն ըստ էության ճշգրտորեն համապատասխանում է ներկայիս սահմանագծին: Ըստ այդ պայմանագրի՝ Խորհրդային Հայաստանի կազմում կրկին ընդգրկվեց ամբողջ Հայկական Լոռու տարածքը, ներառյալ նախկին Չեզոք գոտին՝ համատիրությունը, ինչպես նաև դրանից դեպի հարավ գտնվող Լոռու տեղամասի տարածքը: Իրականում եղավ այնպես, ինչպես նկատել է Հովհ. Քաջագունին 1923 թ. հունիսի 17-ին Ս. Վրացյանին ուղղված նամակում: Ըստ նրա՝ ռազմաքաղաքական լարվածությունը հայ-վրացական հարաբերություններում 1921 թ. սկզբին այլ բովանդակություն ձեռք բերեց, իսկ սահմանագատումը այդ պահին խորհրդային իշխանությունների պարտադրմամբ որոշակի լուծում ստացավ, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հարկադրված էր «հրաժարվել» Ախալքալաքից հոգուտ Վրաստանի, իսկ Լոռին պահել իրեն. «Ցավալի ու ամոթալի էր խոստովանել, բայց փաստն այն էր, որ մենք դեռ եւս չենք յասունացած մեր վեճերը հարթելու համար, դեռ եւս հարկավոր է մի արտաքին ոյժ, արտաքին հեղինակություն՝ Անդրկովկասում միջազգային խաղաղութիւն ապահովելու համար: Այսօր այդ արտաքին ոյժը, այդ հեղինակութիւնը՝ Խորհրդային Մոսկուան է»²:

1921 թ. նոյեմբերյան համաձայնությունից հետո վրաց-հայկական սահմանագծի ուրվագծերը գործնականում անփոփոխ մնացին 90 տարուց ավելի:

¹ Իվանե Ջավախիշվիլու արխիվից //Հայ-վրացական պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1918-1920), էջ 61-62: Տե՛ս նաև Доклад И. Джавахишвили правительству Грузии: Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 476, ց. 1, գ. 6, թ. 82-111:

² Քաջագունի Յովհ., Յետ մահու: Պատմուածքներ, յուշեր, յօդուածներ, Պէյրուք, 1965, էջ 225, 227-228:

Ваник Вирабян – *Вокруг некоторых вопросов армяно-грузинского территориального спора и пограничного разграничения (февраль 1921 г. – начало 1922 г.)*

В 1921-1922 гг. в армяно-грузинском бескомпромиссном споре создалась новая ситуация. 6 ноября 1921 г. подписанным в Тифлисе и считавшимся окончательным соглашением об армяно-грузинской границе Нейтральная зона, исключая несколько населенных армянами приграничных сел, воссоединилась с Советской Арменией. По нажиму грузинской стороны, пограничное разграничение приобрело совершенно иное содержание. Ряд армянских сел – Джандар, Опрет, Хожорни, Брдадзор, Садахло и другие села остались в границах Грузии. Между Советской Арменией и Грузией возникли новые перегибы, связанные с вопросом воссоединения районов Воронцовка и Привольное с Советской Арменией, и вокруг уточнения деталей межгосударственной пограничной линии возникла напряженность, поскольку грузинские власти не удовлетворились установленным состоянием границ и, воспользовавшись внутренней очевидной поддержкой в верхних эшелонах РК(б)П, пошли навстречу новому столкновению в вопросе территориального разграничения. Грузинская сторона совершенно явным образом приняла все усилия для расчленения новых кусков с Лорийской территории с целью их соединения с Грузинской ССР.

Vanik Virabyan – *Over the Armenian-Georgian Territorial Debate and Some Demarcation Issues (February, 1921 – beginning of 1922)*

In 1921-1922, upon the Armeno-Georgian uncompromising border-territorial dispute, a new situation was created. On 6 November, 1921, the final agreement on the Armeno-Georgian border was signed in Tiflis, according to which the Lori Neutral Zone, with the exception of a few Armenian-populated border villages, reunited with Soviet Armenia. The Georgian side claimed that the demarcation of the border had got quite a different content and that a number of Armenian villages - Jandar, Opret, Khozhorni, Berdadzor, Sadakhlo, etc., should remain within the borders of Soviet Georgia. New difficulties arose between Soviet Armenia and Soviet Georgia, concerning the issue of the reunification of Vorontsovka and Privolnoyi regions with Soviet Armenia, and there was also a tension in the issue of interstate border demarcation details, as Georgian authorities were not satisfied with the presumptive situation. Hence, they took advantage of the obvious internal support of the upper circles or the Caucasian Bureau of the Russian Communist (Bolshevik) Party's Central Committee and confronted a new demarcation conflict. The Georgian side clearly made every possible effort to take new pieces of territories from Lori and annex them to Soviet Georgia.

**ԹՈՒՐՔԻԱ-ՎՐԱՍՏԱՆ-ԱՂՐԲԵՋԱՆ ԵՌԱԿՈՂՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

Բանալի բառեր – Թուրքիա, Վրաստան, Ադրբեջան, եռակողմ համագործակցություն, Հայաստան, Հարավային Կովկաս, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղի

1990-ական թթ. վերջում էներգետիկ, ապա նաև այլ ոլորտներում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի հարաբերություններում աստիճանաբար ձևավորվեց եռակողմ համագործակցության ձևաչափ, որի շրջանակներում իրագործվեցին տարածաշրջանային նշանակության մի շարք նախագծեր՝ ի դեմս Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազամուղի, մեկնարկեց Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղու շինարարությունը: Հետագայում այդ պետությունները եռակողմ համագործակցություն հաստատեցին նաև ռազմական ոլորտում՝ անցկացնելով զորավարժություններ, պաշտպանության նախարարների պարբերական հանդիպումներ: Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև նոր մակարդակի հարաբերությունների ձևավորումը առնչվում է նաև ՀՀ ազգային շահերին, ինչը քննարկման առարկա է դարձել թե՛ այդ երեք պետություններում, թե՛ Հայաստանում և թե՛ Հարավային Կովկասում շահեր հետապնդող պետություններում ու միջազգային կառույցներում:

**Տարածաշրջանային էներգետիկ և տրանսպորտային նախագծերը
Հարավային Կովկասում և Հայաստանի մեկուսացվածության խնդիրը**

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ էներգետիկ համագործակցության սկիզբը դրվեց 1990-ական թթ. վերջում, որի հիմքում ընկած էր 1999 թ. նոյեմբերի 18-ին Ստամբուլում երեք պետությունների նախագահների մակարդակով ստորագրված միջկառավարական համաձայնագիրը ԲԹՋ նավթամուղի մասին: Թեպետ այդ նավթամուղը չէր անցնում Հայաստանի տարածքով, այնուամենայնիվ ադրբեջանական նավթի արտահանման խնդիրը դեռևս պայմանագրին նախորդած քննարկումների ժամանակ որոշակիորեն առնչվում էր Հայաստանին: 1990-ական թթ. երկրորդ կեսին ադրբեջանական նավթի միջազգային շուկաներ դուրսբերման հնարավոր ուղիների շուրջ շահագրգիռ պետությունների և միջազգային նավթագա-

գային ընկերությունների միջև բանակցություններում որպես խնդրի լուծման տարբերակ դիտարկվում էր նաև Ադրբեջանի, Հայաստանի և Թուրքիայի տարածքով նավթամուղի կառուցման նախագիծը¹: Հատկանշական է, որ ըստ Ադրբեջանում Վրաստանի դեսպանության 1995 թ. գեկույցի՝ Լեռնային Ղարաբաղի և Կիպրոսի հակամարտություններում միջնորդության հարցերով ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Ջոն Մարեսկան կողմ էր այդ նախագծի իրականացմանը²:

Հաշվի առնելով ԲԹՁ նավթամուղի, ինչպես նաև ԲԹԷ գազամուղի և ԲԹԿ երկաթուղու նախագծի՝ Հայաստանի տարածքը շրջանցելու հանգամանքը՝ Թուրքիան, Վրաստանը և Ադրբեջանը միմյանց կապող տրանսպորտային և էներգետիկ նախագծերը Հայաստանում անմիջապես բացասական արձագանք գտան: 2005 թ. մայիսին՝ ԲԹՁ նավթամուղի ադրբեջանական հատվածի բացման հանդիսավոր արարողությունից հետո, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայտարարեց, որ այդ նավթամուղը կարող է խախտել ուժային հավասարակշռությունը Հարավային Կովկասում, իսկ մի քանի ամիս անց՝ 2005 թ. դեկտեմբերի 9-ին, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը, անդրադառնալով ԲԹԿ երկաթուղուն, այն անվանեց Հայաստանին տրանսպորտային մեկուսացման ենթարկելու փորձ³:

Հայաստանյան քաղաքական շրջանակներում մշտապես ընդգծվել է, որ Թուրքիան և Ադրբեջանը խոչընդոտում են Հարավային Կովկասում տարածաշրջանային տնտեսական ծրագրերին Հայաստանի մասնակցությունը և ձգտում հասնել վերջինիս մեկուսացմանը: Այս մասին դեռևս 2006 թ. մայիսի 26-ին հայտարարել էր ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը, իսկ 2014 թ. հոկտեմբերի 15-ին այդ դիրքորոշումը վերահաստատեց նաև արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը⁴:

¹ Տե՛ս Վեյնսթեյնի հոդվածը «Երևանի ժողովրդական կոնգրեսը» (2006), 21-22 հոկտեմբերի: Նաև՝ Վեյնսթեյն, «Միջին Արևելքի և Հարավային Ասիայի էներգետիկ ռեսուրսների ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա», 2007 թ., 11 հունիսի:
² Տե՛ս Վեյնսթեյնի հոդվածը «Երևանի ժողովրդական կոնգրեսը» (2006), 21-22 հոկտեմբերի:
³ Անդրանիկ Մարգարյան, ԲԹՁ-ն կխախտի ուժերի հաշվեկշիռը Հարավային Կովկասում, <http://www.panarmenian.net/arm/politics/news/13462/> (հասանելի է առ 10.01.2017 թ.):
«Միջոցառված ռուս-հայկական համագործակցությունը՝ վիճակը և հետևանքները» երկրորդ միջազգային համաժողովը Երևանում, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=1554&year=2005&month=12&day=09 (հասանելի է առ 11.01.2017 թ.):
⁴ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, երրորդ գումարման յոթերորդ նստաշրջան, սղագրություն – թիվ 50, 25 մայիսի 2006, <http://www.parliament.am/transcript.php?AgendaID=1294&day=25&month=05&year=2006&lang=arm> (հասանելի է առ 11.01.2017 թ.):
Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանի հարցազրույցը

Բացի այդ՝ վերոնշյալ նախագծերի առնչությամբ իր դիրքորոշումը Հայաստանը պայմանավորում է այն համոզմամբ, որ իր տնտեսական մեկուսացման փորձերը բացասական հետևանքներ կունենան նաև տարածաշրջանային համագործակցության հեռանկարների տեսանկյունից, ինչի մասին 2005 թ. հոկտեմբերին հայտարարել էր ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը, իսկ 2007 թ. փետրվարին՝ արտգործնախարար Վարդան Օսկանյանը¹: Այս առումով ուշագրավ է 2012 թ. նոյեմբերի 29-ին Բրյուսելում ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի 13-րդ նիստի եզրափակիչ հայտարարությունը, որն աջակցություն հայտնեց Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության զարգացմանը և տարածաշրջանի որևէ երկրի տնտեսական մեկուսացմանը միտված քաղաքականության դադարեցմանը²:

Հայաստանի դիրքորոշումը այս նախագծերի նկատմամբ հետագայում իր արտահայտությունը գտավ պաշտպանական և արտաքին քաղաքականության մի շարք հայեցակարգային փաստաթղթերում: Թե՛ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում, թե՛ ռազմական դոկտրինում և թե՛ 2011-2015 թթ. պաշտպանության ռազմավարական վերանայման փաստաթղթում ամրագրված է, որ տարածաշրջանային տնտեսական ծրագրերից Հայաստանի մեկուսացումը (կամ մեկուսացման փորձերը) ՀՀ անվտանգության արտաքին սպառնալիք է³:

Այդ նախագծերից մեկուսացված լինելու խնդիրը Հայաստանը բարձրացրել է ինչպես այլ պետությունների հետ երկկողմ հարաբերություններում, այնպես էլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Մասնավորապես՝ 2005 թ. սեպտեմբերի 6-ին Սլովենիայի արտգործնախարար Դմիտրի Ռուպելի հետ հանդիպման ժամանակ Անդրանիկ Մարգարյանն ընդգծեց, որ հիշյալ էներգետիկ-տրանսպորտային նախագծերը հակասում են ԵՄ «Ընդլայնված Եվրոպա. նոր հարևաններ» ծրագրին, որի մասնակից-

«Ռ-Էվոլյուցիա» հաղորդաշարին, http://www.mfa.am/hy/interviews/item/2014/10/15/dep_min/ (հասանելի է առ 11.01.2017 թ.):

¹ «Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացումը քաղաքական առաջնահերթություն է Հայաստանի համար», http://www.parliament.am/news.php?cat_id=1&NewsID=1454&year=2005&month=10&day=24 (հասանելի է առ 11.01.2017 թ.): Քաղաքական շահարկման հնարավոր հետևանքները, <http://www.mfa.am/hy/speeches/item/2007/02/09/vo-azg/> (հասանելի է առ 11.01.2017 թ.):

² Եզրափակիչ հայտարարության տեքստը տե՛ս «Ամփոփվեցին ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի 13-րդ նիստի արդյունքները», http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=5585&year=2012&month=12&day=03 (հասանելի է առ 11.01.2017 թ.):

³ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն, էջ 7; ՀՀ ռազմական դոկտրին, էջ 4; ՀՀ պաշտպանության ռազմավարական վերանայում 2011-2015 թթ., էջ 5:

ներից է նաև Հայաստանը¹: Սույն խնդիրները Արթուր Բաղդասարյանը բարձրացրել էր նաև Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի հատուկ ներկայացուցիչ Բրայան Ֆոլի (2005 թ. հոկտեմբեր) և ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերրեն դե Բրիշամբոյի (2006 թ. հունվար) հետ հանդիպումների ընթացքում²:

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության ծրագրերից Հայաստանում առավել մեծ քննադատություն և դժգոհություն առաջաց բերեց ԲԹԿ երկաթուղու նախագիծը: ՀՀ-ն դեմ էր Կարս-Գյումրի-Թբիլիսի երկաթուղու առկայության պայմաններում լրացուցիչ երկաթուղու կառուցմանը: Բացի այդ՝ հարկ է նկատել, որ եթե ԲԹՁ և ԲԹԷ խողովակաշարերի նախագծերի մշակման և կենսագործման գործընթացում հավասարապես ներգրավված էին այլ պետություններ (հատկապես ԱՄՆ-ը) և մի շարք նավթագազային ընկերություններ, ապա ԲԹԿ երկաթուղու նախագիծը առավելապես Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության արդյունք էր:

2005 թ. նոյեմբերի 23-ին Տիրանայում ՄՕՏՀ խորհրդարանական վեհաժողովի 26-րդ նստաշրջանի ժամանակ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանը հայտարարեց, որ ԲԹԿ երկաթուղու կառուցումը անհամերաշխություն է ՀՀ շրջափակումը վերացնելու գաղափարին և համերաշխություն Հարավային Կովկասում «իրավիճակի ապակայունացման համար նոր ականների տեղադրմանը», և կոչ արեց միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև ՄՕՏՀԿ անդամ պետություններին սատարել Կարս-Գյումրի երկաթուղու վերագործարկմանը³: Ուշագրավ է, որ սույն հարցը արծարծվել է նաև հայ-չինական բանակցությունների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախքան Ադրբեջանի կողմից ԲԹԿ երկաթուղու վրացական հատվածի (վերա)կառուցման համար Վրաստանին վարկ տրամադրելու մասին համաձայնագրի կնքումը (2007 թ. փետրվարի 7) որպես նախագծի ֆինանսավորման հնարավոր աղբյուր դիտարկվում էր նաև Չինաստանը: 2006 թ. օգոստոսի 30-ին ՀՀ-ում Չինաստանի դեսպան Յզո Սյուելյանի հետ հանդիպման ժամանակ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը հույս հայտնեց, որ Չինաստանը Հարավային Կովկասում կաջակցի միայն տարա-

¹ Պաշտոնական լրահոս, 6 սեպտեմբեր 2005, <http://www.gov.am/am/news/item/1775/> (հասանելի է առ 1.01.2017 թ.):

² «Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացումը քաղաքական առաջնահերթություն է Հայաստանի համար», http://www.parliament.am/news.php?cat_id=1&NewsID=1454&year=2005&month=10&day=24 (հասանելի է առ 11.01.2017 թ.): ՀՀ ԱԺ նախագահ Արթուր Բաղդասարյանի հանդիպումները Ավստրիայում, http://www.parliament.am/news.php?cat_id=1&NewsID=1586&year=2006&month=01&day=19 (հասանելի է առ 11.01.2017 թ.):

³ ՄՕՏՀ ԽՎ 26-րդ նստաշրջանը Տիրանայում, http://www.parliament.am/news.php?cat_id=1&NewsID=1532&year=2005&month=11&day=23 (հասանելի է առ 12.01.2017 թ.):

ծաշրջանային խաղաղության ամրապնդմանը նպաստող երկաթուղային նախագծերին¹:

ԲԹԿ երկաթուղային նախագծին Հայաստանի ղեկավարությունը բազմիցս անդրադարձավ նաև վրացական կողմի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ: 2005 թ. սեպտեմբերի վերջին Երևան կատարած այցի շրջանակներում Վրաստանի վարչապետ Զուրաբ Նոդաիդեիին նշեց, որ Վրաստանը քայլեր կձեռնարկի ՀՀ-ի համար տրանսպորտային այլընտրանքային ուղիների զարգացման, այդ թվում՝ Կարս-Գյումրի երկաթուղու վերաբացման համար՝ ընդգծելով, որ իրենց երկրում Հայաստանի դեմ ուղղված նախագծեր չեն իրականացվի²: Նախքան ԲԹԿ երկաթուղու մասին թուրք-վրաց-ադրբեջանական համաձայնագրի ստորագրումը (2007 թ. փետրվարի 7) Հայաստանը վրացական ղեկավարության հետ բանակցություններում ընդգծում էր նաև, որ Կարս-Գյումրի երկաթուղու գոյության պայմաններում աննպատակահարմար է նման ծախսատար նախագծի իրականացումը: Այդ մասին 2006 թ. հունվարի 16-ին Վրաստանի արտգործնախարար Գելա Բեժուաշվիլիի հետ մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց Վարդան Օսկանյանը³:

Վերջին հանգամանքը, ինչպես և Հայաստանի տարածքը շրջանցելու փաստը հաշվի առնելով՝ ԲԹԿ երկաթուղու նախագծի նկատմամբ բացասական դիրքորոշում որդեգրեցին նաև ԱՄՆ-ը և Եվրոպական միությունը: ԱՄՆ-ում ընդունվեց «2006 թ. Արտահանման-ներմուծման բանկի վերալիազորման ակտը», որը ԱՄՆ Արտահանման-ներմուծման բանկին արգելեց որևէ ֆինանսական աջակցություն ցույց տալ ԲԹԿ երկաթուղու նախագծին⁴: Նմանատիպ ուղերձ էր հղել նաև ԵՄ արտաքին հարաբերությունների և եվրոպական հարևանության քաղաքականության հարցերով հանձնակատար Բենիտա Ֆեռերո-Վալդները, ով 2007 թ. նոյեմբերին կոչ արեց Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին և Եվրոպական ներդրումային բանկին ֆինանսապես չաջակցել այդ նախագծին⁵:

Միաժամանակ հարկ է նկատել, որ հետագա տարիներին ԵՄ-ի դիրքորոշումը

¹ Պեկին պաշտոնական այցի հրավեր, <http://www.parliament.am/chairman.php?page=meetings&NewsID=1988&year=2006&month=08> (հասանելի է առ 12.01.2017 թ.):

² Վրաստանը կփորձի աջակցել Կարս - Գյումրի երկաթուղու վերագործարկմանը, <http://www.azatutyun.am/a/1578665.html> (հասանելի է առ 12.01.2017 թ.): Բարեկամությունը պետք է ամրապնդել կոնկրետ գործերով, [http://www.parliament.am/news.php?cat_id=1&NewsID=1384&year=%7B\\$Year%7D&month=%7B\\$Month%7D&day=%7B\\$Day%7D](http://www.parliament.am/news.php?cat_id=1&NewsID=1384&year=%7B$Year%7D&month=%7B$Month%7D&day=%7B$Day%7D) (հասանելի է առ 12.01.2017 թ.):

³ ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի պատասխանները լրագրողների հարցերին Վրաստանի ԱԳ նախարար Գելա Բեժուաշվիլիի հետ համատեղ մամուլի ասուլիսի ընթացքում, <http://www.mfa.am/hy/press-conference/item/2006/01/16/vo/> (հասանելի է առ 12.01.2017 թ.):

⁴ Export-Import Bank Reauthorization Act of 2006, Public Law 109-438, December 20, 2006, p. 10-11.

⁵ EU Urges Armenia's Inclusion in Strategic Railway Project, <http://asbarez.com/56253/eu-urges-armenias-inclusion-in-strategic-railway-project/> (հասանելի է առ 13.01.2017 թ.):

րոշումն այս հարցում նկատելիորեն փոփոխվեց: 2013 թ. հոկտեմբերի 9-ին Լյուքսեմբուրգում ԵՄ և Արևելյան գործընկերության մասնակից պետությունների տրանսպորտի նախարարների հանդիպման արդյունքում որպես Արևելյան գործընկերության տրանսպորտային ցանցի մաս Կարս-Գյումրի երկաթուղու հետ մեկտեղ ներառվեց նաև ԲԹԿ երկաթուղու նախագիծը¹: 2016 թ. հունվարին Վրաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Յանոշ Հերմանը հայտարարեց, որ այդ նախագիծը Թուրքիայի տարածքով նոր տրանսպորտային կապ կստեղծի ԵՄ-ի և Կասպից ծովի երկրների միջև²:

ԲԹԿ երկաթուղու Հայաստանի տարածքը շրջանցելու հարցի շուրջ ԵՄ-ի դիրքորոշումը թերևս առավել հստակ արտահայտվեց Եվրոպական Խորհրդարանի 2008 թ. հունվարի 17-ին ընդունած բանաձևում, որտեղ ընդգծվեց նախագծի կարևորությունը եվրոպական շուկային Հարավային Կովկասի քաղաքական և տնտեսական ինտեգրման խորացման տեսանկյունից, բայց և շեշտվեց այդ պարագայում հայկական երկաթուղիների շրջանցման հանգամանքը: Բացի այդ՝ բանաձևը կոչ էր անում տարածաշրջանի պետություններին և Թուրքիային ձեռնպահ մնալ եվրոպական հարևանության քաղաքականության սկզբունքներին հակասող և քաղաքական շարժառիթներից բխող էներգետիկ-տրանսպորտային նախագծերից³:

Տարածաշրջանային տնտեսական նախագծերին Հայաստանի մասնակցության հարցը Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում

Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տրանսպորտային և էներգետիկ համագործակցության հետ ՀՀ առնչության ուսումնասիրության նպատակով, վերոնշյալից բացի, կարևոր է անդրադառնալ նաև տվյալ հարցի շուրջ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի դիրքորոշմանը:

Զարգացնելով համատեղ նախագծեր Վրաստանի և Թուրքիայի հետ՝ Ադրբեջանը փորձում է ճնշում գործադրել Հայաստանի վրա ԼՂ հակամարտության հարցում առավելության հասնելու նպատակով: 2012 թ. սեպտեմբերի 21-ին դիվանագիտական ծառայության մարմինների 4-րդ խորհրդակ-

¹ Eastern Partnership Transport Network, http://ec.europa.eu/transport/sites/transport/files/themes/international/regional_cooperation/doc/2013-10-09-rail-and-road-ua-md-by-ge-am-az.pdf (հասանելի է առ 13.01.2017 թ.):

² Georgia has the conditions to play an increasing role as a transit country - Janos Herman, Ambassador of the European Union to Georgia, <http://caspienergy.net/en/ambassador-en/30447-georgia-has-the-conditions-to-play-an-increasing-role-as-a-transit-country-janos-herman-ambassador-of-the-european-union-to-georgia> (հասանելի է առ 13.01.2017 թ.):

³ European Parliament resolution of 17 January 2008 on a more effective EU policy for the South Caucasus: from promises to actions, <http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P6-TA-2008-0016&language=EN&ring=A6-2007-0516> (հասանելի է առ 13.01.2017 թ.):

ցության ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ Ադրբեջանը չի կարող թույլ տալ Հայաստանի մասնակցությունը որևէ էներգետիկ կամ տրանսպորտային նախագծի և կշարունակի վերջինիս նկատմամբ կիրառել մեկուսացման քաղաքականություն¹: Այն, որ Ադրբեջանը այսպիսի մոտեցումը դիտարկում է որպես ԼՂ հակամարտության հարցում հաջողության հասնելու միջոց, Իլհամ Ալիևը հստակորեն ընդգծեց 2013 թ. ապրիլին իր ելույթներից մեկում²: Ինչ վերաբերում է քննարկվող նախագծերին ՀՀ հնարավոր մասնակցության հարցին, 2013 թ. փետրվարին Ադրբեջանի տրանսպորտի նախարար Զիյա Մամեդովը ԲԹԿ երկաթուղու առնչությամբ հայտարարեց, որ Հայաստանը չի կարող օգտվել այդ երկաթուղուց, քանի դեռ չի կարգավորվել ԼՂ հակամարտությունը³: Այսպիսով, ակնհայտ է, որ քննարկվող խնդրի համատեքստում Թուրքիայի և Վրաստանի հետ եռակողմ համագործակցությունն Ադրբեջանը դիտարկում է որպես Հայաստանի մեկուսացմամբ, վերջինիս տնտեսության թուլացմամբ և արդյունքում հոգուտ Ադրբեջանի ԼՂ հակամարտության կարգավորմամբ ՀՀ ղեկավարությանը բացահայտ կերպով սպառնալու միջոց:

Թուրքիան, ըստ էության, աջակցում է Ադրբեջանի դիրքոշմանը՝ տարածաշրջանային նախագծերին Հայաստանի մասնակցության հարցը կապելով ԼՂ հակամարտության հետ, ինչի մասին 2013 թ. հուլիսին Բաքվում հայտարարել էր նաև Թուրքիայի տրանսպորտի նախարար Բինալի Յըլդըրըմը⁴: Այս հարցի շուրջ Թուրքիան իր դիրքորոշումն արտահայտել էր նաև իր առաջ քաշած «տարածաշրջանային ինտեգրված տրանսպորտային միջանցքների նախագծում», որը նախատեսում էր Թուրքիայի ակտիվ մասնակցությամբ հարավկովկասյան պետությունների (ներառյալ՝ Հայաստանի) միջև տրանսպորտային համագործակցության հաստատում⁵:

Հաշվի առնելով Վրաստանի աշխարհագրական դիրքը՝ վերջինիս դիրքորոշումը տարածաշրջանային նախագծերի շուրջ կարևոր նշանակություն ունի Հայաստանի համար Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան տրանսպորտային-էներգետիկ համագործակցության հնարավոր հետևանքների հարցի ուսումնասիրման տեսանկյունից: Ինչպես նշվեց, Վրաստանը՝ ի դեմս Զուրաբ

¹ Речь Ильхама Алиева на четвертом совещании руководителей органов дипломатической службы, <http://ru.president.az/articles/6304> (հասանելի է առ 14.01.2017 թ.):

² Речь Ильхама Алиева на церемонии сдачи в эксплуатацию нового квартала для 760 семей вынужденных переселенцев в поселке Масазыр Абшеронского района, <http://ru.president.az/articles/7696> (հասանելի է առ 14.01.2017 թ.):

³ Azerbaijan, Georgia agree on all issues over Baku-Tbilisi-Kars railway: official, <http://www.azernews.az/business/49667.html> (հասանելի է առ 14.01.2017 թ.):

⁴ Turkish Transport Minister: “Armenia can benefit from BTK project when it liberates Azerbaijan’s territories”, <http://en.apa.az/azerbaijan-economy/infrastructure/turkish-transport-minister-armenia-can-benefit-from-btk-project-when-it-liberates-azerbaijan-s-territories.html> (հասանելի է առ 14.01.2017 թ.):

⁵ Regional Integrated Transport Corridors Project: Laying a Solid Ground for Partnership, Prosperity and Peace in South Caucasus and Beyond, Presented by H. E. Ambassador Fatih Ceylan, Deputy Undersecretary of the MFA of Turkey, 2013, Ankara, p. 3-4.

Նոդաիդեի, հայտարարել էր տարածաշրջանային նախագծերում Հայաստանի ներգրավման համար այլընտրանքային տարբերակների մշակման գաղափարին աջակցելու մասին, սակայն հարկ է ընդգծել, որ «Միացյալ ազգային շարժում» կուսակցության իշխանության տարիներին Վրաստանի վարած արտաքին քաղաքականությունը զգալիորեն սահմանափակում էր այդ հնարավորությունը: Առավել ընդգծված եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման քաղաքականության, ռուս-վրացական հարաբերությունների վատթարացման (մասնավորապես 2006 թ. վրացական զինիների և հանքային ջրերի՝ ռուսական շուկա ներմուծման արգելքի սահմանումից և 2008 թ. օգոստոսին Հարավային Օսիայում տեղի ունեցած պատերազմից հետո) պայմաններում՝ Վրաստանի ղեկավարությունը առավել մեծ նշանակություն էր տալիս Թուրքիայի և Ադրբեջանի հետ իրականացվող եռակողմ նախագծերին՝ դրանք դիտարկելով որպես Արևմուտքի հետ Վրաստանի հարաբերությունների ամրապնդման և տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության թուլացման միջոց:

2012 թ. հոկտեմբերին «Վրացական երազանք» կոալիցիայի իշխանության գալուց հետո Վրաստանի արտաքին քաղաքականությունում տեղի ունեցան նկատելի փոփոխություններ: Մասնավորապես՝ հաստատվեց ռուս-վրացական հարաբերությունների կարգավորման հարցերով երկխոսության ձևաչափ՝ Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցչի և Ռուսաստանի փոխարտգործնախարարի մակարդակով, զգալիորեն վերականգնվեցին առևտրական երկկողմ հարաբերությունները: Արևմտյան վեկտորին զուգահեռ՝ Վրաստանի արտաքին քաղաքականությունում աստիճանաբար ավելի մեծ կարևորություն ձեռք բերեց Չինաստանի¹, իսկ 2015 թ. իրանական միջուկային ծրագրի շուրջ ձեռք բերված համաձայնություններից հետո՝ Իրանի հետ հարաբերությունների ակտիվացումը:

Այդ ամենի շնորհիվ Հարավային Կովկասում նախանշվեցին տարածաշրջանային համագործակցության նոր ձևաչափեր: Այս տեսանկյունից ուշագրավ է Երևանում 2015 թ. դեկտեմբերի 23-ին և 2016 թ. ապրիլի 13-ին Իրանի, Հայաստանի, Վրաստանի և Ռուսաստանի միջև հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցքի ճանապարհային քարտեզի և փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, որը հիմք դրեց Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան էներգետիկ քառակողմ համագործակցության հաստատմանը²:

¹ Այս առումով ուշագրավ է 2016 թ. հոկտեմբերի 5-ին Վրաստանի և Չինաստանի միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների հաջող ավարտը նշանավորող փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, China and Georgia Concludes FTA Negotiation Substantially, http://fta.mofcom.gov.cn/enarticle/chinageorgiaen/chinageorgiaennews/201610/33362_1.html (հասանելի է առ 15.01.2017 թ.):

² Քառակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի և Իրանի մասնակցությամբ, <http://www.minenergy.am/article/520> (հասանելի է առ 16.01.2017 թ.): Երևանում հանդիպել են Հայաստանի, Ռուսաստանի, Իրանի էներգետիկայի նախարարներն ու Վրաստանի փոխնախարարը, <http://www.azatutyun.am/a/27672612.html> (հասանելի է առ 16.01.2017 թ.):

Ի նկատի ունենալով իրանական բնական գազի նկատմամբ Վրաստանի հետաքրքրությունը, ինչպես նաև այդ գազի՝ Հայաստանի և Վրաստանի տարածքով եվրոպական շուկա արտահանելու հեռանկարը՝ էներգետիկայի մեկ այլ ճյուղում համագործակցության բարենպաստ նախադրյալներ են ստեղծվել: 2015-2016 թթ. Վրաստանի էներգետիկայի նախարար Կախա Կալաձեն և նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարել են ներմուծվող էներգակիրների աղբյուրների դիվերսիֆիկացման անհրաժեշտության մասին¹, ընդգծելով ՀՀ տարածքով իրանական գազի տարանցման հնարավորությունը: Մինչդեռ Վրաստանում Իրանի դեսպան Աբաս Թալեբի Ֆարը հայտնեց Իրանի՝ ոչ միայն Վրաստան, այլև վերջինիս տարածքով Եվրոպա գազամատակարարումներ իրականացնելու պատրաստակամության մասին²: Իրան-Վրաստան հնարավոր էներգետիկ համագործակցությանը որպես տարանցիկ երկիր մասնակցելու պատրաստակամություն է հայտնել նաև Հայաստանը³:

Այսպիսով, պարզ դարձավ, որ 2012 թվականից հետո Վրաստանի արտաքին քաղաքականությունում տեղի ունեցած փոփոխությունները որոշակի հետևանքներ ունեցան նաև Հայաստանի համար: Ընդգծելով Թուրքիայի և Ադրբեջանի հետ եռակողմ համագործակցության նշանակությունը՝ Վրաստանի ղեկավարությունը միաժամանակ կարևորեց Հարավային Կովկասում համատեղ նոր ծրագրերի անհրաժեշտությունը՝ դրանով իսկ դրականորեն ազդելով տարածաշրջանային տնտեսական նախագծերում Հայաստանի ներգրավվածության ընդլայնման հնարավորությունների վրա:

Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ռազմական եռակողմ համագործակցությունը և Հայաստանը

Պաշտպանության ոլորտում Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ համագործակցությունը ինստիտուցիոնալ կերպով սկսեց քննարկվել 2014 թվականից՝ պաշտպանության նախարարների եռակողմ հանդիպումների շրջանակում, թեպետ այդ ուղղությամբ առաջին քայլերն արվել

¹ Ivanishvili Speaks of Need to ‘Diversify’ Gas Supplies, <http://www.civil.ge/eng/article.php?id=28705> (հասանելի է առ 16.01.2017 թ.); Gazprom Meeting Ends without Agreement, <http://georgiatoday.ge/news/5428/Meeting-With-Gazprom-Ends-Without-an-Agreement> (հասանելի է առ 16.01.2017 թ.):

² Will Georgia play viral transit role connecting Iran to Europe? Russia, Iran and Azerbaijan compete to supply Georgia with natural gas, <http://agenda.ge/article/2906/eng> (հասանելի է առ 16.01.2017 թ.):

³ Իրան-Հայաստան գազատարով կոնկրետ որոշումներ չկան, բայց մենք կարող ենք. Զախարյան https://news.am/arm/news/313516.html?fb_comment_id=1134434633235527_1134501663228824 (հասանելի է առ 16.01.2017 թ.):

էին ավելի վաղ՝ ԲԹՁ նավթամուղի և ԲԹԷ գազամուղի անվտանգության ապահովման հարցի համատեքստում:

Թուրքիայի և Վրաստանի հետ թե՛ Էներգետիկ-տրանսպորտային և թե՛ ռազմական համագործակցության փաստը Ադրբեջանը փորձում է օգտագործել Հայաստանի դեմ՝ նրա վրա ԼՂ հակամարտության հարցում լրացուցիչ ճնշում գործադրելու համար: Հանուն այս նպատակի իրականացման այն առավելապես փորձում է օգտագործել պաշտպանության նախարարների պարբերական հանդիպումները, որոնց ընթացքում Հայաստանը ներկայացվում է Ադրբեջանի, Թուրքիայի և Վրաստանի համար «սպառնալիք», և ձգտում վերջիններից ստանալ քաղաքական որոշակի աջակցություն¹:

Չնայած Ադրբեջանի նմանատիպ փորձերին՝ Վրաստանի պաշտպանության նախարարների հայտարարություններում մշտապես ընդգծվել է եռակողմ ռազմական համագործակցության՝ տարածաշրջանային կայունությանն ու խաղաղությանը միտված լինելու հանգամանքը: Հաշվի առնելով, որ ռազմական ոլորտի փոխգործակցությունը կարող էր որոշակի մտահոգություններ առաջացնել Հայաստանում, 2014 թ. օգոստոսի 18-ին Նախիջևանում Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, իսկ 2015 թ. ապրիլի 2-ին Թբիլիսիում նրան այդ պաշտոնում հաջորդած Մինդիա Ջանելիձեն Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների եռակողմ հանդիպումների ժամանակ շեշտեցին, որ երեք պետությունների ռազմական համագործակցությունը ուղղված չէ որևէ պետության դեմ²: Ընդ որում՝ այդ համագործակցության՝ ՀՀ դեմ ուղղված լինելը բացառել են նաև 2008-2009 թթ. Վրաստանի պաշտպանության նախարար Վասիլ Սիխարուլիձեն³ և 2009-2012 թթ. պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Նոդար Խարշիլաձեն⁴:

Ըստ սույն հարցի առնչությամբ հայաստանյան դեկավարության կողմից արված հայտարարությունների՝ Հայաստանը ևս Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմական համագործակցությունը չի դիտարկում որպես սպառնալիք: 2014 թ. օգոստոսին ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տե-

¹ Армения продолжает предъявлять территориальные претензии к Азербайджану, Турции и Грузии – министр, <http://ru.sputnik.az/politics/20150402/301932691.html> (հասանելի է առ 18.01.2017 թ.): В Габале состоялась трехсторонняя встреча министров обороны Азербайджана, Турции и Грузии, http://azertag.az/ru/xeber/Zakir_Gasanov_Predusmatrivaetsya_podpisanie_trehstoronnego_Memoranduma_o_vzaimoponimanii_v_oblasti_oborony_mezhdu_Azerbaidzhanom_Turciei_i_Gruziei_OBNOVLENO-951719 (հասանելի է առ 18.01.2017 թ.):

² თავდაცვის მინისტრის ვიზიტი აზერბაიჯანში, <https://mod.gov.ge/c/news/defence-minister-visits-azerbaijan?lang=geo> (հասանելի է առ 18.01.2017 թ.): სამხრეთ-დასავლეთის თავდაცვის მინისტრის ვიზიტი, <https://mod.gov.ge/c/news/trilateral-defence-ministerial> (հասանելի է առ 18.01.2017 թ.):

³ Վրաստան-Ադրբեջան-Թուրքիա ռազմական համագործակցությունը չի եղել ու չի լինի Հայաստանի դեմ. Վասիլ Սիխարուլիձե, <http://www.tert.am/am/news/2016/06/17/sigharulidze/2053282> (հասանելի է առ 18.01.2017 թ.):

⁴ Հեղինակի հարցազրույցը Նոդար Խարշիլաձեի հետ, Թբիլիսի, 11 նոյեմբերի, 2016 թ.:

ղակալ Դավիթ Տոնոյանը հայտարարեց, որ Հայաստանը և Վրաստանը ունեն փոխադարձ անվտանգության շահերի լայն շրջանակ, և հենց Վրաստանի մասնակցությունը կգսպի վերոնշյալ ռազմական եռակողմ համագործակցության հակադրումը ՀՀ ազգային շահերին¹: Այս հարցը քննարկման առարկա է դարձել նաև հայ-վրացական հարաբերություններում: Մասնավորապես, 2016 թ. փետրվարի 2-ին Երևանում Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելիի հետ հանդիպման ժամանակ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը հայտարարեց, որ Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի ռազմադրոշմաբերական համագործակցությունը չի խանգարի այդ ոլորտում նաև հայ-վրացական հարաբերությունների զարգացմանը²:

Ի լրումն վերոնշյալի՝ հարկ է ընդգծել, որ Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի ռազմական համագործակցությունը բավական սահմանափակ բնույթ է կրում: Վերջինիս հիմքում, ըստ էության, ընկած է նավթի ու գազի խողովակաշարերի անվտանգության խնդիրը, որի համատեքստում դրանց պաշտպանվածության մակարդակի բարձրացման նպատակով երեք պետությունների միջև անցկացվում են ամենամյա զորավարժություններ: Այս համատեքստում, Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի կապի գրասենյակի ղեկավար Ուիլյամ Լահյուի կարծիքով Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի եռակողմ համագործակցությունը որևէ կերպ չի առնչվում ՀՀ անվտանգային շահերին³: Խողովակաշարերի անվտանգության հետ մեկտեղ որպես ռազմական համագործակցության կարևոր ուղղություն կարելի է համարել ռազմական կրթությունը և դասընթացների անցկացումը, ինչը մշտապես ընդգծվել է պաշտպանության նախարարների հանդիպումների ժամանակ: Երեք պետությունների զինված ուժերի միջև փոխգործակցության զարգացման տեսանկյունից հարկ է առանձնացնել 2012 թվականից հատուկ նշանակության ստորաբաժանումների միջև անցկացվող «Caucasus Eagle» («Կովկասյան արծիվ») զորավարժությունները:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան եռակողմ համագործակցության՝ ՀՀ-ին առնչվող նպատակների հարցում մի կողմից Թուրքիան և Ադրբեջանը, իսկ մյուս կողմից Վրաստանը ունեն տարբեր դիրքորոշումներ. եթե Ադրբեջանի և Թուրքիայի կողմից այդ համագործակցության տրանսպորտային-էներգետիկ բաղադրիչը դիտարկվում է որպես տարածաշրջանային նախագծերից ՀՀ մեկուսացման

¹ Վրաստանի հետ Հայաստանն ունի փոխադարձ անվտանգության շահերի լայն շրջանակ. Դավիթ Տոնոյան, <https://armenpress.am/arm/news/773141/vrastani-het-hayastann-unipokhadardz-anvtangutyanshaheri.html> (հասանելի է առ 18.01.2017 թ.):

² Գալուստ Սահակյանն ընդունել է Վրաստանի պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությանը, <http://www.parliament.am/chairman.php?page=meetings&NewsID=8103&year=2016&month=00> (հասանելի է առ 18.01.2017 թ.):

³ Հեղինակի հարցազրույցը Ուիլյամ Լահյուի հետ, Թբիլիսի, 16 նոյեմբերի, 2016 թ.:

միջոց, ապա Վրաստանի համար ԲԹՁ նավթամուղի, ԲԹԷ գազամուղի և ԲԹԿ երկաթուղու հետ մեկտեղ կարևոր է նաև տարածաշրջանային նշանակության այլ ծրագրերի իրականացումը, ինչն արտահայտություն գտավ 2012 թ. իշխանափոխությունից հետո Վրաստանի արտաքին քաղաքականությունում՝ դրանով իսկ դրականորեն ազդելով տարածաշրջանային ծրագրերում Հայաստանի ներգրավվածության հնարավորությունների մեծացման վրա: Բացասաբար վերաբերվելով թուրք-վրաց-ադրբեջանական համատեղ նախագծերին՝ Հայաստանը առավել ընդգծված կերպով դեմ արտահայտվեց ԲԹԿ երկաթուղու կառուցմանը և նույնիսկ քայլեր ձեռնարկեց նախագծի հետագա զարգացումը կասեցնելու նպատակով: Ինչ վերաբերում է եռակողմ համագործակցության ռազմական բաղադրիչին, կարելի է եզրակացնել, որ այն առկա մակարդակով չի սպառնում ՀՀ ազգային անվտանգությանը՝ հիմք ընդունելով համագործակցության ուղղությունները և Վրաստանի հավասարակշռող գործոնը:

Эрик Давтян – *Трехстороннее сотрудничество Турции, Грузии и Азербайджана и Армения*

В статье изучается отношение энергетического, транспортного и военного компонентов трехстороннего сотрудничества Турции, Грузии и Азербайджана с национальными интересами Армении, рассматриваются позиции трёх государств и существующие по данному вопросу разногласия. Представлены позиции Армении, США и Европейского союза, а также обсуждения данного вопроса в рамках международных организаций и в отношениях Армении с другими странами.

Erik Davtyan – *Turkey-Georgia-Azerbaijan Trilateral Cooperation and Armenia*

The article aims at researching the relation between energy, transport and military components of Turkey-Georgia-Azerbaijan trilateral cooperation and national interests of Armenia. Turkish, Georgian and Azerbaijani positions and the relating discrepancies in terms of the existing issue are investigated. The article also presents the official positions of Armenia, the US and the EU, as well as discussions on the aforementioned issue in the framework of international organizations and in the relations of Armenia with other countries.

**ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ- ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.
ՍԵՐՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՐՁ ԲԱԺԱՆՈՒՄ***

ԲԱԺԱՆՈՒՄ

Սկսած 1924 թ. գրված նամակներից, չնայած արտաքին հավաստիացումներին, արդեն նկատելի են Սյուրմեյանի և Թեքեյանի միջև առաջացող «անտարբերության եւ յոգնության» նշանները, որոնցից ամենացայտունը պատասխան նամակների ուշացումն է: Սառեցման դրդապատճառները կարող էին տարբեր լինել: Ամերիկայում Սյուրմեյանին կրթաթոշակով պետք է օգներ մի ոմն հայ գորգավաճառ, որի օգնությունը Թեքեյանն էր հայցել: Սյուրմեյանը որևէ օգնություն չի ստացել և մատնվել է ծանր զրկանքների, ստիպված է եղել ճաշարանում ամաններ լվանալ՝ օրվա չոր հացը հոգալու համար: Նյութական ու հոգեկան այդ ծանր կացությունը կարող էր մղել ոչ միայն գրականության նկատմամբ աճող անտարբերության, որի մասին վկայում է իր նամակներում Սյուրմեյանը, այլև առհասարակ գրելու, այդ թվում և նամակներ գրելու ցանկության պակասի:

Նամակագրության ընդհատումների ու նաև վերջնական դադարի պատճառ կարող էին լինել ոչ միայն միասին Հայաստան մեկնելու անհնարինությունը^{**}, այլև խորհրդայնացված Հայաստանում տեղի ունեցող քաղաքական ու ազգային սահմանափակումները և ուրեմն՝ հայրենիքին ծառայելու նրանց ծրագրերի փոփոխումը: Չէ՞ որ նման Հայաստանը չէր կարող Թեքեյանի և մանավանդ Սյուրմեյանի իդեալը լինել: Ըստ երևույթին մեծ դեր են խաղացել նաև Սյուրմեյանի ամերիկյան դաստիարակությունն ու կրթությունը, որոնց ներքո ձևավորվել է մի ուրիշ՝ ո՛չ երազանքներով լեցուն և ո՛չ էլ գոհողությունների ու զրկանքների պատրաստ նախկին «սև հող վարող» մարդը, այլ ապահով կյանքից գայթակղված արդեն «միստրացած» ամերիկացին:

* Սկիզբը տե՛ս նախորդ համարում:

** Վահան Թեքեյանը Հայաստանում եղել էր 1911 թ. և 1919 թ.: Սյուրմեյանը՝ որպես Արմաշի երկրագործական վարժարանի սան, առաջին անգամ Հայաստանում է եղել 1920 թ.: Երկրորդ անգամ Սյուրմեյանը Հայաստան է այցելել 1964 թ., երբ արդեն ճանաչված գրող էր: Երրորդ այցելությունը տեղի է ունեցել 1970 թ.:

Հնարավոր է՝ Սյուրմեյանը ազդվել է նաև Հայ կրթական հիմնադրամի կողմից տրվող (որի միջնորդը Թեքեյանն է եղել)* իրեն տրամադրված կրթաթոշակի դադարեցումից: Ուշագրավ է, որ Թեքեյանի այն առաջարկին, որ ինքը ցանկանում է Սյուրմեյանի բանաստեղծությունների գրքույկը հրատարակել, վերջինս, ի շարս այլ առարկությունների, նրան Ամերիկայից գրել է. «Ես մտերիմներու շրջանակ մը ունիմ: *Ու արդէն իսկ այս շրջանակէն հոգիս անհրաժեշտ սնունդը կ'առնէ...*»¹ (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Իր կապերը խզելով հայ կյանքի՝ հայերեն թերթերի, հայ շրջանակների, հայ գրի հետ՝ Սյուրմեյանը, հնարավոր է, դրանով նաև յուրովի «վրեժ» էր լուծում իրեն բաժին հասած դառը մանկության համար:

Սրանցից ամեն մեկը կարող էր վճռական դեր խաղալ Սյուրմեյանի՝ հայրենիքում ծառ տնկելու, ջրանցք փորելու ու այլ աշխատանքներ կատարելու ծրագրերից հրաժարման համար: Նամակագրության ընդհատման այլ հիմքեր ևս կային: 1920-ական թվականների սկզբին նա թեև գրում էր բանաստեղծություններ, սակայն նպատակ չունեի բանաստեղծ դառնալու: Այդ հարցում նրա մեջ սաղմնավորումներ եղել են հենց սկզբից, որոնց մասին նա ակնարկում է Թեքեյանին վերաբերող իր անգլերեն հոդվածում՝ նշելով, որ դեռևս Կ. Պոլսում «խաբկանք մը կ'խաղայի»՝ ձևացնելով, թե «բանաստեղծ» եմ ուզում դառնալ, մինչդեռ «Ես բանաստեղծ չեի... պետք ունեի բարեկամներու», որոնք կարենային ինձի օգնել Ամերիկա երթալու համար»²: Ուշագրավ է, որ հետագայում անդրադառնալով այս հարցին՝ Սյուրմեյանը գրել է, որ բանաստեղծ չդառնալու իր վճռի վրա ազդել է նաև Պետրոս Դուրյանի՝ թոքախտից 21 տարեկանում մահանալու իրողությունը:

Սյուրմեյանական այս «խաղը» շարունակվել է նաև հետագա տարիներին: Նույն հոդվածում նա վկայում է, թե ամեն գոհողություն «չափազանց մեծ չէր իմ ամերիկյան դաստիարակությանս համար», և որ Ամերիկայից Թեքեյանին «երբեմն նոր գրած մեկ բանաստեղծությունս կղրկեի, *պարզապես զինք հաճոյացնելու համար*»³ (ընդգծումը մերն է – Ա. Ա.):

Ամերիկյան կյանքի ընթացքում Սյուրմեյանն արդեն հասցրել էր իմանալ, որ սփյուռքաբնակ հայ գրողը «դատապարտված է հոգեկան սուկալի մենության» և ուրեմն՝ աղքատության⁴, մի բան, որ նա ոչ մի կերպ չէր հանդուրժում, և որը չէր մտնում նրա ծրագրերի մեջ: Նրա կյանքի հե-

* Թեքեյանի միջնորդությամբ Բաղդադի տիկնանց միության կողմից կրթաթոշակ է ստացել նաև Սյուրմեյանի եղբայրը՝ Օննիկ Սյուրմեյանը, որ Վիեննայի Մխիթարյանների մոտ երաժշտական կրթություն էր ստանում:

¹ Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրմէլեանին, էջ 89:

² Թեքեյան Վ., Լևոն-Զավէն Սյուրմեյան, էջ 96:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 97:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 98:

տաքրքրությունները, ինչպես գրում է իր բանաստեղծություններից մեկում, այլևս թեքվել էր դեպի «Տուներուն մէջ լուսաւոր»:

Որ Վահան Թեքեյանը այս ամենի մասին ինչ-որ կանխազգացումներ է ունեցել, վկայում են նրա նամակներում առկա ակնարկումներն ու մտավախությունները: Իր որոշ նամակներում հույս հայտնելով հանդերձ, որ «պիտի հանդիպինք նորէն իրարու», որ Սյուրմեյանն իրեն պատճառում է «մաքուր ու տաքցնող զգացում», որ «ոչինչ կայ, որ զիս կարենայ զօրացնել և սփռփել, ոչինչ քեզմէ զատ» և այլն, այնուամենայնիվ Թեքեյանը նկատել է տալիս, որ «եթէ պատահի՝ որ... դուն ալ զիս սխալ կամ գէշ հասկնաս եւ քեզ ալ կորսնցնես՝ յուսահատութիւնս անդարձ կըլլայ եւ չեմ գիտեր, թէ ի՛նչի կրնամ կառչիլ այնուհետեւ...»¹: Նման մտավախության մեկ այլ արտահայտություն Կահիրեից գրված՝ 1925 թ. հուլիսի 29-ի թվակիր նամակն է պարունակում, ուր Թեքեյանը գրում է, որ «առաջ ինձմէ պատասխան չստացած ալ կը գրէիր, մինչ հիմա, 6-7 ամիսէ ի վեր, բնական գտնել կը թուիս իրարմէ լուր չառնիլը... ու պէտք չես ունենար իմ գորովիս»²:

Իսկ 1926 թ. հունվարի 18-ի թվակիր նամակում նա գրել է. «Հիմա իսկ, այս վայրկեանիս, սրտէս ու մտքէս խօսքեր կը խուժեն գրչիս ծայրը ու կը վարանիմ զանոնք գրելու, ետ կը դարձնեմ զանոնք՝ որովհետեւ չեմ գիտեր, թէ ի՛նչպէս պիտի գտնեն քեզ, չափազանց պիտի զգացի՞ս՝ թէ *չափազանց անտարբեր պիտի մնաս անոնց հանդէպ*»³ (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*):

«Չափազանց անտարբեր պիտի մնաս...»: Եվ սա այն դեպքում, երբ Թեքեյանը այնքան էր հավատացել ու վստահել նրան, ապրել մեծ մի ոգևորություն, որի մասին անգամ մի ամբողջ բանաստեղծություն՝ «Մաթէ համրիչը», գրել «Ձաւէնիս» ընծայական-մակագրությամբ, իր նամակներից մեկում գրել. «... դուն ունենալով այդ երկուքը՝ հպարտութիւն եւ խոնարհութիւն, կամքի ու խելքի հետ միասին, եղած ես տարիքիդ ամենագեղեցիկ մէկ տիպարը՝ *որմէ տարբերը չեմ փափաքիր եւ աւելին չեմ երեւակայեր*»⁴ (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*):

Իսկ ինչ ասել Թեքեյանի այն ջանքերի մասին, որոնք նա կատարել է Սյուրմեյանի բանաստեղծությունների «Լույս զվարթ» գիրքը 1924 թ. Փարիզում⁵՝ հեղինակի տպագիր ու անտիպ գործերը հավաքելու, խմբագրելու, իր խոսքով ասած՝ «հպումներ» կատարելու⁶, առաջաբան գրելու և իր հաշվին

¹ Նամականի, էջ 252:

² Նույն տեղում, էջ 280:

³ Նույն տեղում, էջ 291:

⁴ Նույն տեղում, էջ 273:

⁵ Ժողովածուն ունեցել է նաև վերահրատարակություններ՝ Նիւ Եորք, 1950, Նյու Յորք, 1972, Երևան, 2014:

⁶ Այդ առթիվ, օրինակ, Սյուրմեյանը 1924 թ. նոյեմբերի 22 թվակիր իր նամակում գրում է. ««Ցայգայինին վրա երևի շատ տանջվեցար զայն իր այժմյան ներկայանալի ձևին վերածելու

տպագրելու գործում: Թեքեյանի խանդավառությունը այնքան մեծ է եղել, որ գրքի «Յառաջաբանում» Թեքեյանը Սյուրմեյանին բնութագրում է ոչ ավել, ոչ պակաս, քան «արդեն իսկ իր ինքնությւնը ունեցող բանաստեղծ-արուեստագետ»¹: Թեքեյանը նաև իր նամակներում է գերազնահատում Սյուրմեյանի գրած բանաստեղծությունները. օրինակ՝ նա գրում է, որ դրանք «ամենէն գեղեցիկ, հարուստ, յուզիչ եւ կատարեալ քերթուածներէն են, որոնք կը ճանչնամ թէ հայերէնի եւ թէ ֆրանսերէնի մէջ»²:

Սյուրմեյանի վերոհիշյալ գիրքը, որը ամփոփում է 21 բանաստեղծություն, ևս վերնագրվել է Թեքեյանի կողմից՝ նկատի ունենալով հայկական եկեղեցիներում վաղ առավոտյան երգվող շարականի անվանումը, որը, ըստ Թեքեյանի մեկնության, պատշաճում է նաև հեղինակի գրական մուտքին, և որը զարմանալի մի գուգադիպությամբ արտահայտում էր նաև Սյուրմեյանի մոր անունը՝ Չվարթ:

Վերոհիշյալ բարձր գնահատումները, իհարկե, գալիս էին Սյուրմեյանի նկատմամբ տաճած սիրուց, քանի որ այդ գործերի մեծ մասը, եթե չհաշվենք մի քանի բանաստեղծություններ՝ «Կռուի երթ», «Փափագ», ուր զգալի է մեծարենցյան շունչը, «Իրիկունը նավուն վրա» և առանձին պատկերներ, քիչ գեղարվեստական արժեք ունեն և լոկ փաստական դեր են խաղում: Ավելի հասուն տարիքում՝ 1924 թ. գրած «Ասացուածք ծառ տնկելու առթիւ» բանաստեղծությունը, որն առաջին անգամ տպագրվել է «Պայքար» թերթում՝ Ջաւեն Գեղունեան ստորագրությամբ, այս գրքի միակ արժեքավոր ու մնայուն գործն է, որը և առանձնահատուկ ուշադրության է արժանացել Թեքեյանի կողմից. «Կարդացի եւ օրօրուեցայ, ծառի մը պէս, անոր նուագէն, անոր ծածանքէն»: Մեծ բանաստեղծը նաև ուշագրավ բացահայտումներ է կատարել՝ նշելով, թէ «վերնագիրը դրած ատենդ եթէ Ջարեանին մտածած ես (նկատի ունի Կոստան Ջարյանի՝ 1922 թ. լույս ընծայած «Օրերի պսակը» գրքի «Ասածուածներ» շարքը – *Ա. Ա.*), մարմինը հետզհետէ լեցուած պահուն, գիտակից կամ անգիտակից խորհուրդի մէջ, ես քիչ մը գտնուած եմ... մեղադրանք մը պէտք չէ տեսնես այս ըսածիս մէջ, բանաստեղծութեան մը համար, որուն ամբողջութիւնը դուն ես ամբողջովին, խորքով եւ ձևով»:

Տէր, օրհնէ՛ ծառն այս մատղաշ: Ես կը տնկեմ զայն ահա

Փխրուն եւ սեւ հողին մէջ ուր պապերըս կը պառկին.

Ես՝ անոնց թոռը հսկայ, այս հողին տէրն եմ կրկին,

Ու արեւուն տակ կ'աճիմ, անունն իրենց շուրթիս վրայ:

Թեքեյանը նաև դիտողություններ է արել բանաստեղծության մի քանի կետերի մասին, մասնավորապես երրորդ տան երկրորդ տողի վերաբերյալ՝

համար, այլապես որքան որ ես կհիշեմ, իմ բուն գրվածքս այնքան արժեքավոր չէր, որքան հիմա կտեսնամ զայն հատորիկին մէջ» (Թեքեյան Վ., նշվ. աշխ., էջ 106):

¹ Սիւրմէլեան Լ. Զ., Լոյս գուարթ, Բ տպագրություն, Նյու Յորք, 1950, էջ 91:

² Նամականի, էջ 267:

նշելով, որ «Երկիրն իմ քար ու գիր է, որուն ես թոռն եմ վայրի» ձևակերպումը ունի անհաջող վերջաբառ՝ *վայրի*՝ մանավանդ բանաստեղծության «սքանչելի վերջին տողին մոտ», որը գալիս է կրոնական պաշտամունքի ուժեղ կնիքը դնելու քերթվածին¹:

Այդ բառի վերաբերյալ հարկ է ասել, որ բառագտագործումը գալիս է մի կողմից դեռևս 1923 թ. հունվարի 22-ի՝ Վ. Թեքեյանին ուղղված նամակում արտահայտված մի ձևակերպումից. «Հիմա նպատակս է «մեծնալ մաքրությամբ, ուժով ու ավելցած շնորհներով» (չակերտների մեջ առնված խոսքը Թեքեյանինն է – *Ա. Ա.*), որպեսզի վաղը վայրի ձիեր հեծնող տղու մը նման կանգնիմ առջև զինվորի մը նման...»²: Մյուս կողմից՝ Թեքեյանը «Լույս գվարթի» իր «Ցառաջաբանում» գրում է, որ նախկինում գրված և իրեն ուղղված նամակներից մեկում Սյուրմեյանը ինքն իր մասին գրել է. «Հիմա ես կատաղի տղայ մըն եմ»³, որը այս բանաստեղծությունում ձևակերպված «որուն ես թոռն եմ վայրի» տողի ոչ այնքան հեռու տարբերակն է:

Թեքեյանի նուրբ աչքից չի վրիպել բանաստեղծության առաջին տան մեջ մեկ հանգի պակասը և երկրորդ տան մեջ մեկ ավելորդ հանգի առկայությունը: Թեքեյանը դրվատական խոսքեր է ասել նաև «Վերջին աղոթք» բանաստեղծության վերաբերյալ, որը Սյուրմեյանը գրել է դեպի Ամերիկա գնալիս նավի մեջ. // «Այս իրիկուն իմ հոգիս եկեղեցի մ'է հրսկայ // Պատարագէն վերջ թափուր...»: Թեքեյանը երբեմն շրջանցել է իր զգայական մոտեցումները Սյուրմեյանի գրածների վերաբերյալ և հանդես եկել որպես անկողմնակալ գրադատ: Նրան ուղղված որոշ նամակներ ցույց են տալիս, որ Թեքեյանը չի հավանել Սյուրմեյանի այս կամ այն բանաստեղծությունը, տողը, պատկերը, ընտրած բառը: Այսպես՝ 1923 թ. մարտի 6 թվակիր նամակում, օրինակ, նա գրում է. «Ոտանաւորիդ երկրորդ variante-ն (տարբերակը – *Ա. Ա.*) ալ առի. առաջինէն շատ տարբեր չէ... քեզի պիտի յանձնարարեմ, որ առայժմ ճիգ չընես բանաստեղծութիւն գրելու»⁴: Թեքեյանը խորհուրդ է տալիս «արձակ նօթեր, յուշագիրի պէս բան մը» գրել, մի բան, որը, որքան էլ զարմանալի թվա, հետագայում հենց համբավ բերեց Սյուրմեյանին:

Թեքեյանի և Սյուրմեյանի նամակագրությունը, որը նրանց հարաբերությունների միակ միջոցն էր, եթե չհաշվենք լուսանկարների փոխանակման մի քանի դեպքերը և դրամական փոխանցումները, աստիճանաբար ավելի ու ավելի ընդհատումներով է ընթանում: Ավելին՝ այդ նամակներում նվազում է մանավանդ ոգևորության ու հավատի այն ոգին, որ թևածում էր նախկինում: 1924 թ. հունվարի 20-ին Փարիզից գրած իր նամակում Թեքեյանը մտահոգություն է հայտնում, թե «կը կարծեմ թէ կը մոռնաս, պիտի մոռնաս, պիտի

¹ Նամականի, էջ 256-257:

² Թեքեյան Վ., Լևոն-Չավեն Սյուրմեյան, էջ 101:

³ Վահան Թեքեյանի նամակները Լևոն Չավեն Սյուրմեյանին, էջ 89:

⁴ Նամականի, էջ 223:

չփնտռես նամակս ու զիս», և ապա հարց տալիս. «Որքա՞ն պետք ունիս ինձի...»¹:

Թեքեյանի կյանքում 1925 թվականը ամենադժվար տարիներից մեկը եղավ: Կ. Պոլսում մահացավ նրա մայրը, Ալեքսանդր Միասնիկյանն ու Արտաշես Կարինյանը, ինչպես նշեցինք, ելույթներ ունեցան Թեքեյանի դեկավարած կուսակցության և նրա դեմ, մի շարք հիվանդությունների բարդացման պատճառով նա դժկամությամբ է իրականացնում «Արեւի» խմբագրապետությունը, ամիսներ շարունակ նամակներ չի ստանում նաև Սյուրմեյանից: «Կը մեծնաս,- գրում է Թեքեյանը 1925 թ. հուլիսի 29 թվակիր իր նամակում,- գուցե մեծցեր ես արդէն, զարհուրելիօրէն»²: Նույն թվականի նոյեմբերի 8-ին գրած նամակում Թեքեյանը նորից ու նորից է խոսում Սյուրմեյանի նկատմամբ ունեցած իր սիրո ու հավատի մասին՝ գրելով, թե կյանքին մոտենալու «յոյսը տուիք դուն ինձի»: Բայց նույն նամակի շարունակության մեջ Թեքեյանը չի վարանում նաև ասելու. «Բացի վերջին նամակդ թուականը օգոստոս 17-ն է, աւա՛ղ- եւ առաջին էջին վրայ հանդիպեցայ. «Որքան դժուար է ինձի համար նամակ գրել քեզի: ... Նամակները զիս ուղղակի կը ջղայնացնեն»: Իմ արդարացումս, ճշդիւ»³:

Այսպես, Թեքեյանին նամակ գրելը Սյուրմեյանի համար այլևս «դժուար» ու «ջղայնացնող» մի բան էր դարձել:

Մի քանի ամիս հետո, 1926 թ. հունիսի 24 թվակիր նամակում Թեքեյանը Սյուրմեյանին գրել է. «Ինձի դէմ նեղցած ըլլալդ ... անկէ կը հասկնամ, որ ամիսներէ ի վեր դուն ալ չես գրեր այլևս, չես լուր տար»⁴:

Ու չնայած Թեքեյանի հորդորին՝ «ամենասիրելի Ջավէնս, մոռցիր քու՝ Պոլսէն մեկնումէդ ի վեր մեր յարաբերութեանց մէջ այս ամենաերկար ընդհատումը ... եւ շուտով, շուտով գրէ ինձի»⁵, Սյուրմեյանի գրքի վաճառքը ձեռնարկելուն և դրամ ուղարկելուն, բարերարի դիմանը՝ նպաստելու համար հիվանդանոցում պառկած Սյուրմեյանի նյութական ու բարոյական ապաքինմանը, նոր նամակ ստանալու սպասումներին, այն հույսին, թե «անզլիերէնի թարգմանուած քանի մը քերթուածները կստանաս» (որոնք իհարկէ չթարգմանվեցին և չուղարկվեցին), Սյուրմեյանի անտարբերությունը մնում է անհողողող:

Մարդ որքան դժբախտ պիտի լինի, որ այսքանից հետո դեռ շարունակի հավատալ: Թեքեյանը շարունակել է սրտով կապված մնալ իր հոգևոր զավակի հետ, շարունակել մտաբերել ու հավատալ Սյուրմեյանի նախկին հավաստիացումներին ու այն խոսքերին, թե իր ուղարկած նամակների «մի

¹ Նամականի, էջ 260:

² Նույն տեղում, էջ 280:

³ Նույն տեղում, էջ 284:

⁴ Նույն տեղում, էջ 294:

⁵ Նույն տեղում, էջ 295:

բառը հոգիիս մեջի «պարապները» կլցնի», թե «հիացումով ու ժպիտով կշինիմ աչքիս առջև բարի պատկերդ», թե «երկու «Զավակս»-ները» ինձի այնքան ուժ կուտան», թե «հացին չափ պահանջ մըն է ինձի համար քոյ նամակները», թե «ես մեկն եմ, որ չփոխվիր», թե «օրեօր ավելի կբուրեղանա հոգիս, Հայաստանի մեջ ծառ տնկելու և արոք բռնելու կարոտս օրեօր կմեծնա», թե «Ես կատեմ նաև կյանքը, որ դուրս է մեր պապերուն հողերեն», թե «ես շատոնց է, որ զինվոր գրած եմ ինքզինքս գործիդ ու անունիդ պահպանման»: Եվ ամենակարևորը. «Պահեցեք այս թուղթերը որպես մուրհակ ու եթե իմ կյանքս չըլլայ այն, ինչ որ այսքան ատեն կկրկնեմ՝ վառեցեք թուղթերս և հիշատակս ալ միասին»¹:

1926 թ. սեպտեմբերի 4-ի թվակիր նամակում Թեքեյանը թեև կասկած է հայտնում Սյուրմեյանի՝ իրեն նամակ չգրելու վերաբերյալ, սակայն նորից է հավատացնում նրան, որ «ոչինչ զիս կրնայ անջատել, հեռացնել»: Այսուհանդերձ այս նամակը վերջինն է, որ գրվել է Թեքեյանի կողմից: Սյուրմեյանը նույն թվականի հուլիսի 6-ից հետո արդեն ընդմիջտ դադարել էր Թեքեյանին նամակ գրել: Եվ սա այն դեպքում, երբ Թեքեյանը այս ընթացքում շարունակում էր ապրել իր կյանքի «սեւամաղձ» շրջանը: «Ես շատ մենակ եմ, – գրել է Թեքեյանը վերոհիշյալ նամակում, – ես կատարելապես դժբախտ կ'զգամ ինքզինքս: Ո՛չ մեկ affection (գորով), ո՛չ մեկը՝ որուն կարենամ վստահիլ»²:

Բարեբախտաբար քիչ չեղան այն երիտասարդները, ովքեր Թեքեյանին շրջապատեցին ու հավատարիմ գտնվեցին նրա հետագա կյանքի ընթացքում: «Զարմանալի է թափօրը Թեքեյանի տղոց, – գրում է Շահնուրը Թեքեյանին նվիրված իր «Ոսկիե կշիռը» հոդվածում, – գուրս բանաստեղծը կը շրջապատե ուշադիր գուրգուրանքով եւ եղբայրական ազնուագոյն սերով: Անոնք իրն են, ինք զանոնք»³:

Ցավալին այն է, որ Թեքեյանը միայն հոգեպես չէ, որ ընկճված էր: Վատացել էր նաև նրա առողջությունը, հաճախակի էին դարձել շնչարգելությունները: Բայց ամենասարսափելին նրա «առողջ» աչքի* վիճակն էր, որն այլևս առողջ չէր ու դադարել էր լավ տեսնելուց:

Ճակատագրի քմահաճույքով Թեքեյանը հենց այս դժվարին շրջանում (1925 թ.) գրեց իր ամենազմայլելի, խոր ու ողբերգական բանաստեղծություններից մեկը՝ «Մեկ հատիկս» խորագրով:

¹ Այս ամենը տե՛ս **Թեքեյան Վ.**, Լևոն-Զավեն Սյուրմեյան:

² Նամականի, էջ 297:

³ **Շահնուր Շ.**, Լրագրական էջեր, Երևան, 2016, էջ 147:

* Հասարակական կյանքում ու մամուլում կուսակցական բուռն պայքարի համար հակառակորդ կուսակցությունը 1916 թ. սեպտեմբերի 7-ին քինախնդրորեն մահափորձ էր կատարել Թեքեյանի դեմ, որի պատճառով նա զրկվել էր իր աջ աչքից:

Իմ մէկ հատի՛կս... օ՛հ ինչպէ՛ս սիրտըս վըրադ կը դողայ՝
Երբ կը տեսնեմ քեզմով քեզ.
Քու արցունքո՛վըդ քեզի կը պաղատիմ ես հիմա՝
Որ դուն ալ զիս չըլըքես...:

Խոսելով այս բանաստեղծության մասին՝ Շահան Շահնուրն իր վերոհիշյալ հոդվածում գրում է. «Հագուադէպ ախտ մը կը սպառնար մարել «Մէկ հատիկ»ին լոյսը: Փոխադրուեցաւ հիվանդանոց (Օթէլ Տիէօ): Հրապարակելով Կեդրոնականի իր սաներէն երիտասարդ մը, որ կը շարունակէր իր ուսումը, օրապահիկը շահելով հանդերձ: Այս պատուական հայորդին*...որդիական սիրով կառչեցավ հիւանդի սնարին: ...Թէքէեան խորունկ սփոփանք քաղեց իր այս երիտասարդ բարեկամին հոգածու վերաբերումէն: Երիտասարդը հիւանդանոց կը փութար ամէն օր, առանց բացառութեան»¹: Շահնուրն այդ երիտասարդի մասին գրում է, որ նա աշխատատեղում բռնկված հրդեհի պատճառով այրվել է, և ինքը մամուլում («Պայքար» օրաթերթում) պետք է տեղեկություն որոնի նրա մասին: Իսկ հուղարկավորությանը մասնակցած Թեքեյանի մասին վկայում է. «Ինք կը մնար շշմած, անէացած: Երկու ձեռքերը պարզած էր դէպի առաջ, օգնութիւն հայցելու ձեռով եւ իր դէմքը առած էր մեղրամումի գոյն»²:

Մի բան ակնհայտ է. Թեքեյանը այդ «սողոց» մեջ փնտրել ու գտել է իր իսկ իսկությունը, և այդ երիտասարդների մի մասը հանձին Թեքեյանի գտել է իր որբության մխիթարանքը և հովանավորին: Թեքեյանը, ինչպես գրում է Արշամ Տատրյանին ուղղված իր նամակներից մեկում, ինքը «հեռու էր դրամատեր ըլլալէ» և սակայն իր սուղ միջոցներից օգնում էր շատերին:

Նորից հարցնենք՝ ինչն էր պատճառը, որ խզվեցին Թեքեյանի ու Սյուրմեյանի՝ այնքան մեծարված հոր ու փայփայված զավակի հարաբերությունները:

Մեկնությունները տարբեր են եղել նաև գրական շրջանակներում:

Սյուրքահայ գրող, խմբագիր, Վ. Թեքեյանի նախկին սան, մտավորական Պետրոս Զարոյանը այս խնդրին անդրադարձել է շատ ավելի կտրուկ: Բեյրութում լույս տեսնող «Անի» ամսագրում 1952 թ. տպագրած իր «Վահան Թէքէեան այնպէս՝ ինչպէս ճանչցայ զինք» հոդվածում խոսելով կյանքի ընթացքում Թեքեյանի հիասթափությունների մասին՝ «ապահովաբար խոշորագոյնը» նա համարում է Սյուրմեյանից կրածը. «Կը մտածիմ ընդվզումով ու ցասմամբ: Որովհետեւ ... Վահան Թէքէեան, իր ազնուական ասպետի կառոյցով, կրնար չդրդիլ իր հիմերէն՝ դասալքութեանց մեծագոյնին հանդէպ: Երբ

* Թեքեյանի կյանքում այդպիսի մի նվիրյալ հոգի էլ եղավ բանաստեղծ Ժագ Հակոբյանը, ով Թեքեյանի կյանքի վերջին տարիներին անմնացորդ հոգատարություն ու սեր ցուցաբերեց քերթողի նկատմամբ:

¹ Շահնուր Շ., էջ 148-149:

² Նույն տեղում, էջ 149:

մանավանդ այդ դասալքությունը կու գար մեկէն, որուն վրայ կեդրոնացուցած էր իր բովանդակ հաւատքը: Ինքզինք անոր մէջ ու անով իրագործուած եւ ամբողջացած տեսնելու աստիճան:

Վահան Թեքէեան չարաչար խաբուեցաւ Պրն. Լեւոն Զաւէն Սյուրմէլէեանէն»¹:

Այնուհետև Պ. Զարոյանը գրում է, որ ինքը պիտի մերժեր անունն անգամ տալ «պարոնի մը», եթէ այն կապված չլինէր Թեքէյանի անվան հետ. «Կապ՝ գոր շահագործեց այնքա՛ն շուկայիկ վարպետութեամբ»²:

Պ. Զարոյանը իր վերոհիշյալ հոդվածում մեջբերում է Թեքէյանին գրած Սյուրմէլյանի՝ 1923 թ. հունվարի 22-ի թվակիր նամակից մի ամբողջ հատված՝ շեշտելու համար վերջինիս ուրացումը ինչպես իր ծրագրերից, այնպես էլ իր հավաստիացումներից. «Բարեկամ ամերիկացիները հոս ինձի կըսեն, թե ես կփոխվիմ անպայման, անպայման «կամերիկանամ»: Ըստ իրենց, որ երեք ամերիկացի չեն կրնար զիս նվազագույն չափով «փոխել», բայց ես կրնամ երեք ամերիկացի հայ ընել»: Այս տողերը իհարկե հաստատումն են ոչ այնքան ուրացման, որքան փաստումն այն բանի, որ Սյուրմէլյանը իրոք «ամերիկանանում» էր, իրոք փոխվում որպես երագող և դառնում հաշվի մարդ, որի վկայություններից են Թեքէյանին գրած նրա այն խոստովանությունները, թե Ամերիկա գնալու գլխավոր նպատակը... «իր առողջության հարցն էր», և կամ՝ «առհասարակ Զավենը՝ անկախ մարդ մը եղած» է, և կամ՝ «երկար ժամանակվա համար ինձմե երկար նամակ, ընթերցում կամ ոտանավոր մի պահանջե», մեկ այլ դեպքում էլ գրում, որ աղքատի, որբի, Պոլսի Զավենի պես ինքը այլևս չի ուզում ապրել: Տպագրվել և վճարվել՝ ահա այն նոր երագանքը, որ սկսում է գայթակղել Սյուրմէլյանին, ահա նրա նոր կյանքի հետաքրքրություններն ու բովանդակությունը: Ամերիկյան անհոգ կյանքն ու ապահով ապրելակերպը, որի մեջ, շնորհիվ իր անգլիագիր գրությունների, քիչ-քիչ մտնում էր Սյուրմէլյանը, լայն հնարավորություններ էր պարզում նրա առջև, որի համեմատ, իրոք, ոչինչ էր կյանքի այն կիսաքաղց ընթացքը, որում հայտնվելու էր ինքը, եթե շարունակեր հայերեն գրել ու ստեղծագործել: Իսկ այդ մասին Թեքէյանին գրել նշանակում էր դավաճանել կրկնակի և, ինչպես ասված է «Աստվածաշնչում», «ուրանալ՝ դեռ աքաղաղը չկանչած»:

Այն, որ Ավետիս Սանճյանը Լոս Անջելեսում տպագրած իր «Վահան Թեքէեան. նամականի» գրքի ծանոթագրությունների բաժնում նշում է, թե Սյուրմէլյանն իրեն ասել է, որ Թեքէյանին չգրելու պատճառը իր հիվանդությամբ նրան չանհանգստացնելն է եղել, պարզապես չի համապատասխանում իրականությանը:

¹ «Անի», 1952, հունվար, էջ 37:

² Նույն տեղում, էջ 487:

1926 թ. տարեսկզբին Սյուրմեյանին գրած Թեքեյանի նամակից երևում է, որ նա լավատեղյակ է եղել նրա հիվանդությանը, անգամ գոտեպնդել է նրան և հույս հայտնել, որ նա պիտի շարունակի գրել՝ հենց Թեքեյանին ավելի անձկության և «անհանդուրժելի զգայնությամբ» չմատնելու համար¹: Անգամ եթե ընդունենք, որ Սյուրմեյանը իրոք չի ցանկացել իր հիվանդությամբ ավելորդ հոգս պատճառել Թեքեյանին, ակամայից հարց է առաջանում, հապա ինչու նա չգրեց իր ապաքինվելուց՝ 1929 թ.-ից հետո:

Բայց պատահեց այնպես, որ տասնամյակներ անց Սյուրմեյանը հանկարծ իրեն «պզտիկ» զգաց Թեքեյանի նամակների առջև: Դժվար է ասել հասկացա՞վ, թե՞ զիտակցեց, որ ինքը «արժանի չէր անոնց»²:

Ինքը՝ Սյուրմեյանը, իրենց բաժանման վերաբերյալ որևէ խոսք չի ասում: Վ. Թեքեյանի մասին գրած իր անգլերեն հոդվածում* հասնելով այդ հարցին՝ նա բավարարվում է՝ գրելով միայն, թե «ատիկա ուրիշ պատմություն է»: Բայց Սյուրմեյանը դրանից առաջ խոսում է Թեքեյանի «Ոչ մեկ բարեկամ» բանաստեղծության մասին, որը ներփակ նամակով իրեն էր ուղարկել Թեքեյանը, ուր, ի շարս այլ մտքերի, կարդում ենք նաև հետևյալ տողերը. «Օ՛հ, գա՛լ դէմ առ դէմ // Ու անցնի՛լ՝ առանց երբեք իրարու // Քիչ մ՛ըսփովի, նեցուկ կամ յոյս ըլլալու»: Արդյո՞ք այդ «նեցուկի» կամ «յույսի» հետզհետե խամրող կրակները չէին նաև, որ մարելու էին փոխադարձ բարեկամության բորբոքված ջահերը:

Կարելի է և պետք է հարցնել. իսկ Սյուրմեյանի՝ անգլերենով ստեղծած հայանպաստ ստեղծագործությունն էր... Մի՞ թե հարկ է զանց առնել նրա՝ 1945 թ. տպագրված «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք»** և 1950 թ. տպագրած «98.6» վեպերը, 1964 թ. հրատարակած «Սասնա ծռերի» անգլերեն թարգմանությունը (այստեղ ստորագրել է Լևոն Սյուրմեյան՝ առանց Ջավենի), 1968 թ. տպագրած «Անմահական խնձորները» հայկական ժողովրդական հեքիաթների ընտրանին, 1968 թ. հրատարակած «Վիպագրության տեխնիկա, չափ և խենթություն» գրականագիտական, արվեստաբանական, լեզվաբանական աշխատությունն ու բազում հրապարակագրական հոդվածներ:

¹ Նամականի, էջ 291:

² Տե՛ս Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Զաւէն Սիւրմէյանին, էջ 12, Սյուրմեյանի «Առաջաբանը»: Այդ գրքում զետեղված է նաև Ջ. Սյուրմեյանի «Լույս զվարթ» ժողովածուն, որը գրքի երկրորդ հրատարակությունն էր: Բ. Նուրիկյանի այս նախաձեռնությամբ որոշված էր գրքից առաջացած հասույթը հատկացնել Վահան Թեքեյանի անունով հիմնադրամ ստեղծելուն, որը պիտի զբաղվեր սփյուռքահայ գրողների քաջալերանքով:

* Տե՛ս «Մովետական գրականություն» ամսագրում տպագրված հոդվածը:

** Սյուրմեյանը առաջին անգամ ազգային ու քաղաքական կարևոր արժեք ներկայացնող այս գրքի շապիկի վրա է իր Ջավեն Սյուրմեյան անվանը ավելացրել Լևոն անունը, որը նրա գոհված մորեղբոր անունն է, և ով, ինչպես գրում է նամակներից մեկում, իր «ամենէն շատ սիրած ազգականն էր» ու «վերջին ապրող տղամարդը» իր մոր՝ Տիրատուրյանների գերդաստանից:

րը: Բնականաբար՝ ոչ: Բայց դա արդեն այլ խոսակցության նյութ է, կարևոր և գնահատելի հայ գրականության պատմության համար, որը մեկ այլ կողմից է պարզում այն իրողությունը, որ սփյուռքի քառուղիներում գնալով պակասում են հայերեն թերթեր ու գրքեր թե՛ հրատարակողները և թե՛ ընթերցողները, որ անգամ տաղանդավոր հայ ստեղծագործողները «պարզ ապրուստի մը պետքերուն կարօտ են»: Այս իսկ պատճառով գուցե մեղադրելի չէ Սյուրմեյանի հեռացումը հայ գրականությունից, ով, ինչպես հետագայում պիտի գրեր, իրեն «շատ խոնարհ» պիտի զգար հայ գրի ու գրականության առջև, քանի որ հենց հայ գրողին է վերապահված բորբոք պահելու մեր մշակույթի կրակները օտար ափերին: Թեև այս հարցում ևս մերժելի տեսակետ է ցուցաբերել Սյուրմեյանը: Մեր հողվածում արդեն հիշատակված «Վահան Թեքեանի նամակները Լեւոն Ջաւէն Սիւրմէլեանին» գրքի իր առաջաբանում նա գրում է, որ պետք է շահել «կռիւր Հայ Հոգիին», բայց անմիջապես ավելացնում. «Չենք կրնար դիմադրել պատմութեան ընթացքին: Ուշ կամ կանուխ՝ պիտի կորսնցնենք մեր լեզուն, բայց փրկելու ենք Հայ Հոգին: Պետք է որ պահենք մեր եկեղեցին, մեր երաժշտութիւնը, մեր գրականութիւնը, ի հարկին թարգմանութեամբ, կամ անգլերէնով»¹ (Յի՛ց – Ա. Ա.): Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են, քանի որ առանց մեր լեզվի հայ հոգի չի կարող լինել և չի կարող պահպանվել աշխարհի և ոչ մի լեզվով:

Այդուհանդերձ, մեզ հետաքրքրողը մեր հողվածում եղել է մինչև այդ վեպերն ու ժողովածուները ստեղծող Սյուրմեյանն ու նրա կյանքի այն հատվածը, որը կապված է մեր գրականության մեծագույն դեմքերից մեկի՝ Վահան Թեքեյանի հետ:

1926 թ. հունվարի 18 թվակիր իր նամակում Թեքեյանը Սյուրմեյանին տեղեկացրել է, որ ինքը օգնել է ևս հինգ որբի՝ ընդունվելու Կահիրեում բացված Պերպերյան գիշերօթիկ վարժարան, ովքեր արդեն «կը հաւտան սիրոյ» և պիտի կարողանան իրենք ևս սիրել կյանքը, հույս հայտնել, որ այդ որբերը իր մասին պիտի մտածեն «իբրեւ մէկու մը, որ բախտին դէմ բախտ եղաւ իրենց», ու ինքը, երբ մենակ է մնում, հարց է տալիս իրեն.

Հաշուեյարդար. ի՞նչ մնաց, կեանքէն ինձի ի՞նչ մնաց,

- Ինչ որ տրւի ուրիշին, տարօրինա կ'ա՛յն միայն:

Թեքեյանը նամակը վերջացրել է՝ կոնկրետացնելով իր խոսքը՝ այս անգամ ուղղված Սյուրմեյանին. «- Եւ ինչ որ քեզի կուտամ իբրեւ մտածում եւ իբրեւ զգացում, ինձի կը մնայ ամբողջովին...»²:

Այդպես ամբողջովին Թեքեյանին մնացին նաև Սյուրմեյանի հասցրած բաժանումն ու վիրավորանքը: Սա է բուն ճշմարտությունը: Ճշմարտություն, որը շատ տխուր է:

¹ Վահան Թեքեանի նամակները Լեւոն Ջաւէն Սիւրմէլեանին, էջ 16:

² Նամականի, էջ 292-293:

Չնայած խզումին՝ Ամերիկայում բնակվող Սաթենիկ Կրեկորիին ուղղված՝ 1944 թ. հունիսի 20 թվակիր նամակում Թեքեյանը մեծահոգաբար հետաքրքրվել է Լ. Ջ. Սյուրմեյանով, հարցրել, թե արդյոք նա թղթակցում է Սյուրմեյանի հետ. «Եթե այո՝, ըսե՛իք, որ իր յաջողություններով ուրախ եմ ու պիտի ուրախանամ նաեւ իր մէկ երկտողովը»¹:

Այսպէս, ամեն բանից վեր, Թեքեյանն ունեցել է նաև մեծ հոգի, որը նրա ամբողջ կյանքի ընթացքում բաբախեց նաև ուրիշների համար՝ լինեն նրանք օտարներ, գրական առաջին քայլերն անող երիտասարդներ, թե ծածկ ու աշխատանք չունեցող որբեր: Չավեն Սյուրմեյանի հետ հարազատություն ստեղծելուն զուգընթաց ու նրանից բաժանվելուց հետո ևս Թեքեյանը նյութական աջակցություն է ցուցաբերել և կամ բարեկամություն արել մեր գրականության մի շարք նշանավոր դեմքերի հետ, որոնցից հատկապէս հարկ է նշել Արշամ Տատրյանի, Գեղամ Ֆեներճյանի, Շահան Շահնուրի, Պետրոս Ջարոյանի, Վահե Վահյանի, Վահե Հայկի, Ջարեհ Ռրբունու, Անդրանիկ Անդրեասյանի ու շատ այլոց անունները:

Նրանց բոլորից, ինչպէս ինքն է խոստովանում, Թեքեյանը փոխադարձ հարգանք է ստացել, մանավանդ ուրախացել նոր ուժերի ասպարեզ գալով. «Եթե կայ բան մը, որ կրնայ ինձի իրական սփոփանք եւ սիրոյ երկարաձգում ըլլալ՝ ատիկա երիտասարդ սրտերու մէջ գտած արձագանքս է»²:

Ցավոք, այդ ամենի մէջ եղավ ու մնաց մի անամոք սպի, որը, թվում է, ոչ մի սփոփանք այդպէս էլ չունեցավ:

Սույն հոդվածով մենք չենք ցանկացել հետին թվով, տարիների հեռավորությունից ստանձնել դատավորի դեր և արդարացնել կամ մեղադրել կողմերից որևէ մեկին: Մենք հակված չենք եղել նաև ասելու, թե Սյուրմեյանի կյանքի երկրորդ մասը նվազ արժեքավորման է արժանի իր կյանքի առաջին մասի պատճառով: Ընդհակառակը, անգլիագիր Սյուրմեյանը անուրանալի և կարևոր դեր խաղաց իր գեղարվեստական արձակով, որն օտար ընթերցողներին ճանաչելի դարձրեց մի կողմից մեր ազգային ճակատագրին, մյուս կողմից մեր գրական ու հոգևոր մշակութային արժեքներին, որը եկավ հաստատելու գրողի այն խոսքը, թե «չկա յ մե՛ կը, որ հայ լեզուն սիրէ ինձմէ աւելի խորապէս: Բայց ես կը հաւտամ աշխատանքի բաժանումին: Եւ կրնամ որպէս ամերիկեան գրող աւելի՛ մեծ չափով ծառայել իմ ժողովրդիս ու անգլերէն գրելով՝ չեմ դադրիր հայ գրող մը ըլլալէ»³:

Բայց կա փաստը. փաստը բարեկամության և փաստը բաժանման: Հետևաբար երևույթը նաև ճանաչողական արժեք ունի՝ և ինքնին հետաքրքրական է թե՛ մարդկային հոգեկան փոխհարաբերությունների տեսակետից և

¹ Նույն տեղում, էջ 479:

² Նույն տեղում, էջ 355:

³ Տե՛ս Սիրմեյանի Յառաջաբան // Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Ջաւէն Սիրմեյանին, էջ 17:

թե՛ գրական-մշակութային առումով, քանի որ խզման պատճառի (կամ պատճառների) վերհանումը ստույգ է դարձնում Թեքեյան և Սյուրմեյան անհատների ոչ այնքան հոգեբանական ու անձնական շփումները, որքան ազգային մտածողության ու հետաքրքրությունների նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումները իրենց կյանքի որոշակի շրջափուլում:

Արշուն Աვაգյան – *Vahan Tekeyan – Levon Zaven Syurmelyan: тесная дружба и безвозвратное расставание*

В статье представлена история дружбы и расставания двух армянских писателей Вагана Текеяна и Левона Завена Сюрмеляна в 1920-х гг. Основываясь на переписке двух писателей, рецензиях и других материалах, написанных друг о друге, а также на некоторых имеющихся в литературоведении оценках и трактовках, автор показывает, что на взаимоотношения Текеяна и Сюрмеляна оказали влияние как литературные, общественные и гражданские мысли, так и сугубо личные качества и черты характера, которые, с одной стороны, способствовали укреплению между ними дружбы, а с другой – явились препятствием для ее продолжения.

Artsrun Avagyan – *Vahan Tekeyan – Levon Syurmelyan: Close Friendship and Irrevocable Parting*

The article presents the history of friendship and parting of two Armenian writers - Levon Zaven Syurmelyan and Vahan Tekeyan during 1920s. Relying on the letters, literary reviews and other materials written to each other, as well as on some literary-critical estimates and interpretations, the author shows that literary, social and political thoughts, as well as personal traits and characteristic features of the two writers had an impact on the relationship between Tekeyan and Syurmelyan, which on the one hand promoted the establishment of friendship between them, and were an obstacle for the continuation of that friendship, on the other hand.

ԱՐԻՍՏՈՏԵԼԸ ԵՎ XVII ԴԱՐԻ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր – փիլիսոփայական միտք, զարգացում, թուլացած ավանդույթ, վերականգնում, հասարակական-քաղաքական կյանք, «Մետաֆիզիկա»

Հայ փիլիսոփայության պատմության վաստակաշատ մասնագետ Մեն Արևշատյանը, տասնամյակներ առաջ ամփոփելով հայ փիլիսոփայության պատմության մեջ Արիստոտելի խաղացած բացառիկ դերի մասին իր խոսքը, իրավացիորեն եզրակացրել է. «V դարից մինչև XVIII դարի վերջը, որ ժամանակահատվածի հայ փիլիսոփաների հայացքների, նրանց թողած ժառանգության և առհասարակ երկրի հոգևոր մշակույթի պատմության մեջ խաղացած դերի մասին էլ խոսելու լինենք, պետք է շեշտենք, որ բոլոր շրջաններում էլ Արիստոտելի ժառանգությունը միշտ կարևոր դեր է խաղացել նրանց հայացքների ձևավորման գործում և որպես կանոն նպաստել գիտական մտքի շրջանակների լայնացմանը և կրոնաաստվածաբանական մտքի ծավալապաշտական միտումների սահմանափակմանը»¹:

Ի հաստատումն վերը ասվածի, սույն հոդվածում կփորձեմ ընդհանուր գծերով ներկայացնել այն վիթխարի դերը, որ խաղացել է Արիստոտելի փիլիսոփայական ժառանգությունը XVII դարում ինչպես հայ փիլիսոփայության թուլացած* ավանդույթների վերականգնման, այնպես էլ նոր շրջանի մտածողության ձևավորման գործընթացներում: Սակայն նախքան բուն ասելիքին անցնելը հարկ էմ համարում ուշադրություն հրավիրել մի շատ կարևոր հանգամանքի վրա, առանց որի հաշվառման ըստ էության անհնար է ճիշտ հասկանալ ինչպես Արիստոտելի խաղացած անուրանալի դերը նոր շրջանի հայ փիլիսոփայության ձևավորման պատմական գործընթացում, այնպես էլ վերջինիս առանձնահատկությունները:

Բանն այն է, որ ինչպես արևմտաեվրոպական իրականության մեջ, այնպես էլ Հայաստանում XVII դարում խիստ կարևորվում էր անցյալի փիլիսո-

¹ Արևշատյան Ս., Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը // Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը (հոդվածների ժողովածու), պատ. խմբ. Գ. Հ. Գրիգորյան, Երևան, 1980, էջ 25:

* Թեև մինչ այժմ այդց նման գործածել էմ «ընդհատված ավանդույթներ» հասկացությունը (տե՛ս Միրզոյան Հ. Ղ., XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 126-150), բայց Առաքել Դավրիժեցու կոթողային երկի մանրագնին քննությունից պարզվում է, որ այսուհետ ճիշտ կլինի խոսել ոչ թե ընդհատված, այլ «թուլացած ավանդույթների» մասին:

փայլական ժառանգության վերագնահատության ու վերաիմաստավորման հարցը: Բայց եթե անցյալի մտածողների հանդեպ Արևմուտքում հաճախ դրսևորվում էր հախուռն-ժխտողական վերաբերմունք, ապա այլ էր պատկերը հայ իրականության մեջ: Պատճառն այն է, որ միանգամայն տարբեր ձևով էր տեղի ունեցել նրանցից յուրաքանչյուրի՝ հին աշխարհից միջնադարին անցումը. եթե Արևմուտքում քրիստոնեական եկեղեցին իր գոյության առաջին դարերում, Կ. Մարքսի արտահայտությամբ, «սրբեց երկրի երեսից հին քաղաքակրթությունը, հին փիլիսոփայությունը»¹, ապա պատմական մի շարք հանգամանքների բերումով այդ անցումն Արևելքում, ի մասնավորի Հայաստանում, տեղի ունեցավ անհամեմատ ավելի սահուն ու անցավագին: Անցման գործընթացի այդ էական տարբերությունը պայմանավորեց զարգացման հետագա ընթացքի տարբերությունը: Ըստ այդմ, ողջ միջնադարում արևմտաեվրոպական իրականության մեջ Արիստոտելը դարձել էր յուրատեսակ կուռք, պաշտամունքի առարկա, ուստի ոչ ոք իրավունք չունեւր մտածելու այլ կերպ, քան նա, կամ ինչպես ընդունված էր կոչել՝ «Փիլիսոփան»: Քանի որ այս վիճակը հատկապես Վերածննդի դարաշրջանում մեծապես խանգարում էր գիտական ու փիլիսոփայական մտածողության զարգացմանը, ուստի նոր շրջանի փիլիսոփայության սկզբնավորողները, գրեթե առանց բացառության (Ֆ. Բեկոն, Ռ. Դեկարտ, Պ. Գասենդի և այլք), իրենց սրբազան պարտքը համարելով պայքարել միջնադարյան սխոլաստիկայի դեմ, իբրև կանոն, թիրախ էին դարձնում միջնադարի մեծագույն հեղինակություն Արիստոտելի ուսմունքը, երբեմն տուրք տալով ծայրահեղության՝ հախուռն մերժում էին այն²:

Այլ էր պատկերը հայ իրականության մեջ. այստեղ Արիստոտելը ողջ միջնադարում թեև ուներ մեծ հեղինակություն, բայց և այնպես հայ մտածողներն իրենց չէին զրկել «փիլիսոփայելու իրավունքից» (Պ. Գասենդի)³: Ճիշտ հակառակը, սկզբից ի վեր հայ իմաստասերները Արիստոտելի հանդեպ տածած հարգալից վերաբերմունքի հետ միասին դրսևորել են քննադատական մոտեցում՝ յուրացրել ու զարգացրել նրա փիլիսոփայական և հատկապես տրամաբանական ուսմունքը: Ասվածի լավագույն վկայությունն է թեկուզ և այն փաստը, որ եթե Արևմուտքում Բոնեցիուսից հետո մինչև XII դ. Արիստոտելի ամբողջ ժառանգությունից հայտնի էին միայն «Կատեգորիաներ» և «Յադագս մեկնութեան» երկերը, ապա հայ իրականության մեջ դրանցից

¹ **Маркс К. и Энгельс Ф.**, Сочинения, т. 7, М., 1956, с. 360. Ի դեպ՝ մեզանում ևս քրիստոնեության ընդունման ընթացքում մեծ վնաս հասցվեց անցյալից ժառանգված մշակույթին, բայց չմոռանանք, որ Արևմուտքում դրան գումարվեցին նաև բարբարոսների արշավանքների պատճառած ավերածությունները:

² Տե՛ս օրինակ՝ **Бэкон Ф.**, Сочинения, т. 2, М., 1972, с. 37, 41 կն:

³ Տե՛ս **Гассенди**, Аристотелики напрасно лишили себя от свободы философствования // «Вопросы философии», 1958, № 4:

բացի՝ շրջանառել է նաև Բոնեցիուսի ժամանակակից Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտելի ի վերլուծականն» տրամաբանական բարձրարժեք աշխատությունը, որտեղ հեղինակը, շատ դեպքերում հակադրվելով Արիստոտելին, էապես զարգացրել ու հարստացրել է նրա տրամաբանական ուսմունքը: Արիստոտելի փիլիսոփայական ժառանգության քննադատական յուրացման ու զարգացման ավելի քան հազարամյա այս փորձն է հենց պայմանավորել XVII դ. հայ իմաստասերների զուսպ ու զգուշավոր վերաբերմունքը թե՛ Արիստոտելի և թե՛ անտիկ ու միջնադարյան մյուս մտածողների հանդեպ: Ըստ այդմ, ի տարբերություն դարի արևմտաեվրոպական մտածողների՝ հայ իմաստասերները չեն դրսևորում հակաարիստոտելյան հախուռն-ժխտողական վերաբերմունք, այլ, շարունակելով նախորդ դարերից ժառանգած փորձը, մի կողմից կրկնում ու զարգացնում են նրա այս կամ այն դրույթը, իսկ մյուս կողմից՝ մեղմորեն քննադատում ու մերժում նրա ուսմունքում իրենց նկատած սխալներն ու անճշտությունները:

Չայ մշակույթի պատմությունից հայտնի է, որ Տաթևի դպրոցի վերապաց թռիչքից հետո պատմական խիստ անբարենպաստ պայմանների հետևանքով հայ մշակույթը, հետևաբար և փիլիսոփայական միտքը, ապրում է խոր անկում, որը տևում է մինչև XVII դարի առաջին տասնամյակները: Բարեբախտաբար, դարասկզբին համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում գիտության և մշակույթի զարգացման համար, որից, անշուշտ, անմասն չի մնում փիլիսոփայական միտքը: Դեռ ավելին, հենց փիլիսոփայությունն է դառնում այն փրկողակը, որի շնորհիվ հայ մշակույթը կարողանում է նախ՝ վերականգնել անցյալի թուլացած ավանդույթները, իսկ ապա՝ դարի երկրորդ կեսին հաղորդակից դառնալ արևմտաեվրոպական գիտամշակութային նվաճումներին: Ահա հենց այստեղ է, որ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության հետ միասին օգնության են գալիս նաև Արիստոտելի աշխատությունները: Նկարագրելով հայ փիլիսոփայական մտքի թուլացած ավանդույթների վերականգնման տանջալից գործընթացում Մելքիսեթ Վժանեցու մատուցած անուրանալի ծառայությունը՝ դարի ակնավոր պատմագիր Առաքել Դավրիժեցին փաստում է, որ նա «գիտող եղև. «Սահմանացն», «Պորփիրին», «Ստորոգութեան», «Պերիարմենիասին», «Աշխարհացն», «Առաքինութեան», «Վերլուծականին»¹:

¹ **Առաքել Դավրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 315: Ի դեպ՝ «Վերլուծականին» ասելով Դավրիժեցին նկատի ունի ոչ թե Արիստոտելի «Անալիտիկա» երկը, որը հայերեն չի թարգմանվել, այլ դրա առաջին գրքի 4 գլուխների մասին Դավիթ Անհաղթի գրած մեկնությունը: Ինչ վերաբերում է «Աշխարհացն» և «Առաքինութեան» գրքերին, ապա նկատի ունի սխալմամբ Արիստոտելին վերագրված «Յադագս աշխարհաց» և «Յադագս առաքինութեանց» երկերը: Վերջինս սկսվում է «Գովելի են գեղեցիկքն և պարսաւելի գարշելիքն» նախադասությամբ, ուստի երբեմն այն կոչում են նաև «Գովելի»:

Հետագայում, զբաղվելով մանկավարժական գործունեությամբ, Մելքիսեթ Վժանեցին իր սաներին փիլիսոփայություն է դասավանդում նույն աշխատությունների հիման վրա, որոնցով ինքն էր ուսանել: Առաքել Դավրիժեցին, պատմելով 1631 թ. Էջմիածնում Մելքիսեթի ուսուցչական գործունեության մասին, գրում է, որ «յորժամ միաբանեալ եղբարքն եկին առ Մելքիսեթ վարդապետն, և սկսան դաս առնուլ, նախ՝ զքերականութիւնն դաս առին, զկնի նորա զ«Սահմանքն» սկսան, և ապա զՊորփիրն, զ«Ստորոգութիւն», զ«Պերիարմենիասն», զ«Աշխարհացն», զ«Գովելին» զկնի սոցա ամենեցուն զամենայն ազգաց տօմարսն»¹:

Ուշագրավ է, որ Մելքիսեթ Վժանեցու սաներից Սիմեոն Ջուղայեցին, ուսուցչի մահից տարիներ անց նույն Էջմիածնի միաբաններին դասավանդելով փիլիսոփայություն, օգտվել է նրա փորձից՝ «ետ դաս,– ասված է 1639 թ. Ոսկան Երևանցուն գրված մի նամակում,– զքերականն, զՊորփիրն, զՍտորոգութիւնքն եւ զՊերիարմենիաս, յԱրարածքն եւ զՊօղոսի Երրայեցոց թուխթն»²:

Ինչպես տեսնում ենք, վերը բերված սկզբնաղբյուրային բոլոր վկայություններում պարտադիր հիշատակվում են Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Յադագս մեկնութեան» երկերը: Իսկ դա նշանակում է, որ դրանք կարևոր դեր են խաղացել վաղուց ի վեր թուլացած հայ փիլիսոփայական մտքի անցյալի ավանդույթների վերականգնման գործում, որը, ավարտվելով 40-ական թվականների սկզբին, հիմք ու պատվանդան է ծառայում դարի երկրորդ կեսում փիլիսոփայական մտքի բուռն զարգացման համար: Նշենք նաև, որ թուլացած ավանդույթների վերականգնման գործընթացի վերջին և վերընթաց զարգացման փուլի առաջին խոշոր դեմքը դառնում է Սիմեոն Ջուղայեցին, որը ոչ միայն յուրացնում ու վերականգնում է մեզանում արիստոտելյան փիլիսոփայության, ի մասնավորի նրա տրամաբանական ուսմունքի կենդանի ոգին, այլև նրա ճանաչողության տեսության, հոգեբանության, գիտությունների դասակարգման մատերիալիստական-սենսուալիստական միտումները՝ շատ դեպքերում զարգացնելով ու հարստացնելով դրանք նոր դրույթներով և արգասավոր գաղափարներով: Ասվածի լավագույն վավերացումը գտնում ենք դարի առաջին կեսի հայ մեծագույն մտածող Սիմեոն Ջուղայեցու փիլիսոփայական ժառանգության և հատկապես «Գիրք տրամաբանութեան» գլուխգործոց աշխատության մեջ, որը XVIII դ. ունեցել է երկու տպագրություն (Կ. Պոլիս, 1728, 1794) և մինչև XIX դարակիզբ եղել է հայկական դպրոցներում տրամաբանության ամենատարածված դասագիր-

¹ Նույն տեղում, էջ 317:

² «Բազմավեպ», 1967, թիւ 6-8, էջ 133:

քը: Ավելին, XVIII դարակեսին այն թարգմանվել է վրացերեն և լայնորեն օգտագործվել վրաց մտածողների կողմից¹:

Իր աշխատության վերջում Սիմեոն Ջուղայեցին համեստաբար նշում է, որ ինքը նախագաղափար է ունեցել Արիստոտելի տրամաբանական աշխատությունները, որոնց բովանդակությունը շարադրել է մայրենի լեզվով, որպեսզի դուրսի դարձնի հայ ընթերցողի գործը, քանզի «շարադրութիւն իմն անցեալ ի լեզուէ իմեքէ յայլ իմն լեզու՝ տարաձայնութիւն ինչ ըստ շարադրութեանն երևի»²:

Թեև Սիմեոն Ջուղայեցին նշում է, որ ինքը պարզապես վերաշարադրել է Արիստոտելի տրամաբանական ուսմունքը, բայց մանրագնին քննությունից պարզվում է, որ, հետևելով Դավիթ Անհաղթի՝ մեզանում արմատավորած սկզբունքին, նա ոչ միայն կրկնում է Արիստոտելի այս կամ այն դրույթը, այլև շատ դեպքերում դրսևորելով ստեղծագործական մոտեցում՝ կատարում է առաջընթաց քայլ ինչպես տրամաբանական, այնպես էլ գոյաբանական, իմացաբանական, հոգեբանական և այլ հարցերում: Կփորձեմ կանգ առնել դրանցից առավել կարևորների վրա:

1. Ինչպես գիտենք, հայ իրականության մեջ Դավիթ Անհաղթն առաջին անգամ Արիստոտելի հետևությամբ գոյի հարցը քննարկել է հետևյալ չորս տեսանկյունից. «Եթե՞ է, և զի՞նչ է, և որպիսի՞ ինչ է, և վասն՞ էր է»³:

Ետանհաղթյան հայ փիլիսոփայության (ոչ միայն) մեջ այս հարցերը ավանդաբար պահպանվել են մինչև Գլաձորի և Տաթևի դպրոցի ներկայացուցիչները, մինչդեռ Սիմեոն Ջուղայեցին, տրամաբանության ուսումնասիրությունն սկսելով այդ նույն հարցերի քննությամբ, դրսևորում է ստեղծագործական մոտեցում և կարևորում միայն երկրորդ և երրորդ հարցերը՝ գիտակցաբար մի կողմ թողնելով առաջինը և վերջինը: Ըստ այդմ նա գրում է. «Եւ թէպէտ բազումք են տեսակք հարցման, սակայն պիտոյանան մեզ այժմ զինչէն և որպիսի ինչէն, որ ասին զայնցանէ, որոց գոլն խոստովանեալ է: Քանզի ի հարցանելն զի՞նչ է, կամ որպիսի՞ ինչ է, յայտ առնէ, թէ գիտեմ զգոլն, բայց ոչ գիտեմ, թէ զի՞նչ է կամ որպիսի՞ ինչ է: Եւ զանագանին այսոքիկ ի միմեանց, քանզի՝ զինչէն հարցանէ զամեննին ոչ գիտացեալն, իսկ որպիսի ինչէն հարցանէ զանագանութիւնս գիտացեալ իրին»⁴: Ներկա դեպքում հատկապես արժեքավոր է այն, որ նոր և նորագույն շրջանների արևմտաեվրոպական փիլիսոփաներից շատերի նման գերազանցապես կարևոր

¹ Այդ մասին տե՛ս **Каландаришвили Гр.**, Очерки по истории логики в Грузии, Тбилиси, 1952, 1955:

² **Սիմեոն Ջուղայեցի**, Գիրք տրամաբանութեան, Կ. Պոլիս, 1728, էջ 233:

³ **Դավիթ Անյաղթ**, Սահմանք իմաստասիրութեան, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 2:

⁴ **Սիմեոն Ջուղայեցի**, Գիրք տրամաբանութեան, էջ 2-3:

րում է ոչ թե գոյաբանական, այլ իմացաբանական հարցերը: Ոչ պակաս ուշագրավ է այն, որ իբրև նոր շրջանի հայ փիլիսոփայական մտքի սկզբնավորող՝ Ջուղայեցին այլևս չի կարևորում Արիստոտելից եկող «վասն է ր է» հարցը, որով փաստորեն փորձում է մերժել բնության զարգացման մասին նպատակաբանական պատկերացումը:

2. Գաղտնիք չէ, որ դեռևս Արիստոտելի ժամանակ բուռն վեճերի առարկա էր տրամաբանության և փիլիսոփայության փոխհարաբերության հարցը: Անձամբ Արիստոտելը տրամաբանությունը չէր համարում ինքնուրույն գիտություն, այլ այն դիտում էր գիտության համար որպես գործիք: Այդ է պատճառը, որ նրա հետևորդները, զարգացնելով ուսուցչի տեսակետը, նրա տրամաբանական բոլոր աշխատությունները միավորեցին «Օրգանոն» ընդհանուր վերնագրի տակ: Ընդհակառակը, ստոյիկյանները տրամաբանությունը հայտարարեցին ոչ թե լոկ գործիք, այլ փիլիսոփայության մաս, այսինքն՝ փիլիսոփայական գիտություն: Քննարկելով այս հարցը՝ Միմեոն Ջուղայեցին իրավացիորեն փորձում է համադրել հակադիր տեսակետները՝ տրամաբանությունը հայտարարելով թե՛ ճշմարտության ձեռքբերման գործիք և թե՛ փիլիսոփայական գիտություն: Տրամաբանությունը, գրում է նա, «որ է բանական գիտութիւն, է կերպ գիտելոյ զիրս, զի առարկութեամբ գտանին անձանօթքն»¹, բայց որովհետև բանականության ուսմունասիրությամբ զբաղվում են թե՛ փիլիսոփայությունը և թե՛ տրամաբանությունը, հետևաբար «տրամաբանութիւնն է մասնիկ իմաստասիրութեան, այսինքն՝ մասն մասին իմաստասիրութեան»²:

3. Եթե, ինչպես ընդունված է մասնագիտական գրականության մեջ, Եվրոպայում տրամաբանությունն իմացաբանությունից ու քերականությունից սահմանազատելու և ինքնուրույն գիտություն դարձնելու ուղղությամբ առաջին լուրջ քայլը կատարել են Պոր Ռոյալի յանսենյան միաբանության անդամներ Նիկոլը և Առնոն 1662 թ. հրատարակած «Տրամաբանություն կամ մտածելու արվեստ» դասագրքում, ապա հայ տրամաբանական մտքի պատմության մեջ նույնպիսի փորձեր կատարվում են ավելի վաղ՝ նույն դարի 40-ական թվականներին, հանձինս կաթոլիկ քարոզիչ Կդեմես Գալանոսի «Քերական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ» (Հռոմ, 1645) և Միմեոն Ջուղայեցու վերը հիշատակված «Գիրք տրամաբանութեան»³ աշխատությունների:

¹ Նույն տեղում, էջ 163:

² Նույն տեղում:

³ Մանրամասն տե՛ս Միրզոյան Հ., Միմեոն Ջուղայեցի, Երևան, 1971:

Ի դեպ՝ թեև Կղեմես Գալանոսը ևս տրամաբանության իր դասագիրքը գրել է Արիստոտելի տրամաբանության ակնհայտ ազդեցությամբ, բայց և այնպես շատ հարցերում դրսևորել է Սիմեոն Ջուղայեցուց միանգամայն տարբեր մոտեցում¹:

XVII դ. սկսված նոր շրջանի հայ փիլիսոփայական մտքի ձևավորման գործընթացի վրա Արիստոտելի ունեցած ազդեցությունը հասկանալու համար հարկ է թեկուզ հարևանցի կանգ առնել նրա գլուխգործոց երկի՝ «Մետաֆիզիկայի» հայերեն թարգմանության և մեկնության հանգամանքների վրա: Փիլիսոփայապատմական գրականությունից վաղուց հայտնի է², որ մինչև XVIII դարավերջ Արիստոտելի այդ երկը շրջանառել է միայն հունարեն, արաբերեն և լատիներեն, իսկ եվրոպական ազգային լեզուներով՝ անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն, տպագրվել է համապատասխանաբար՝ 1801, 1824, 1840 թվականներին: Համեմատության համար նշենք, որ «Մետաֆիզիկայի» ռուսերեն ամբողջական թարգմանությունը լույս է տեսել միայն 1934 թ.³: Եվ ահա պարզվում է, որ դեռևս XVII դարակեսին հայերենը դարձել է չորրորդ լեզուն, որով հնչել է Արիստոտելի գլուխգործոց երկը, ընդ որում այն թարգմանվել է լատիներենից և իր տեսակի մեջ փաստորեն առաջինն է եղել: Ավելին, հայ մշակույթի մեծ երախտավոր Ստեփանոս Լեհացին ոչ միայն թարգմանել է այն, այլև երկու տարբերակով գրել է «Լուծմունք» վերնագրով հատուկ աշխատություն, որում արծարծված գաղափարներն ու դրանց տրված պատասխաններն այսօր ևս չեն կորցրել իրենց թարմությունն ու այժմեականությունը: Օրինակ՝ մեկնելով «Մետաֆիզիկայի» XIII գրքի առաջին գլուխը՝ հայ մեկնիչը շատ հստակ գրել է. «Ուսումնական էակք թեպետ են ի զգալիս, և ոչ են անջատեալք ի նիւթոյ ըստ գոլոյն, սակայն ըստ բանի են անջատեալք ի նիւթոյ, գոր օրինակ՝ գիծ, կամ եռանկյինին թեպետ ոչ լինին առանց նիւթոյ, սակայն կարես գնոսա ըմբռնել աննիւթաբար»⁴:

Շնորհիվ Ստեփանոս Լեհացու թարգմանության և մեկնության՝ արիստոտելյան խորհմաստ գաղափարները լայն տարածում են գտել XVII-XVIII դդ. հայ փիլիսոփայության մեջ: Ճիշտ է, մինչև այդ նույնպես հայ առանձին մտածողներ (օրինակ՝ Դավիթ Անհաղթը) իրենց երկերում դիպվածաբար վկայակոչել են «Մետաֆիզիկայի» ինչ-ինչ գաղափարներ, մինչդեռ Ստեփանոս Լեհացու թարգմանության և մեկնության շնորհիվ՝ XVII դարավերջից դրանք ստանում են լայն տարածում ու նոր հնչողություն: Օրինակ՝ XVII-XVIII դդ. ականավոր մտածող Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին, որ նամա-

¹ Մանրամասն տե՛ս **Միրզոյան Հ. Ղ.**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն:

² Տե՛ս «Արիստոտել» // «Философская энциклопедия», т. 1, М., 1960:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Մերոպ Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. թիվ 10032, էջ 127 բ:

կագրական կապեր է ունեցել Լեհացու հետ¹, դրսևորում է «Մետաֆիզիկայի» գաղափարների քաջ իմացություն. քննարկելով սուբստանցի գոյության հարցը բերում է հունական փիլիսոփաներից շատերի (Թալեսից մինչև Պլատոն) տեսակետը ու եզրակացնում, որ «այսոցիկ ամենեցունց լուծումն Արիստոտելէս միայն շարժոյն ամենայնի ասաց գոլ սկիզբն, որպէս և ասացն *յերկոտասան գիրսն ի Մեթաֆիզիկայն, յեօթներորդ պրակն*, գոյ ինչ գոլովն անշարժ, շարժէ և ցանկալին և իմանալին շարժէ գոչ շարժեալն, և դարձեալ գոյ ինչ շարժոյ, ինքն անշարժ գոլով ներգործութեամբ էակ և ոչինչ կերպիւ ներընդունի այլազգ ունել և զայլս ամենայն նա շարժէ և *յութն ասէ* և զի շարժեալն հարկիւ յայլմէ շարժի և նախկին շարժոյն անշարժ գոյ ըստ ինքեան և շարժութիւն յաւիտենական ի յաւիտենականէն շարժի և *դարձեալ ասէ հարկ* է զի իւրաքանչիւր ի շրջագայութեանցս այսոցիկ շարժեացի յանշարժ ըստ ինքեան և յաւիտենական գոյացութենէն և թէ շարժոյն մշտակալ և նախկին գոյ քան զշարժեալն և *դարձեալ թէ բանիւ և գործով մի է նախկին շարժոյ էակն անշարժ*»² (այս և հետագա ընդգծումները իմն են – Հ. Մ.): Սկզբանապատճառը, գրում է Հովհաննես Ջուղայեցին, պետք է լինի մեկը, որովհետև եթէ լինի մեկից ավելի սկզբնապատճառ, ապա «ի հարկէ ելոյր ներհակութիւն յսկզբունս և ներհակն ի ներհակէն ապականի, զի ասէ Արիստոտել ի Մեթաֆիզիկայն, զի ներհակն է ապականիչ ներհակին»³:

Եթէ այսօր դժվար, գրեթէ անհնար է ճիշտ հասկանալ և գնահատել նոր շրջանի հայ փիլիսոփայության ձևավորման գործընթացում արիստոտելյան փիլիսոփայության խաղացած դերը, ապա ոչ պակաս դժվար է գնահատել նաև արիստոտելյան ժառանգության յուրացման ու տարածման գործում XVII դարի հայ իմաստասերների և հատկապես Ստեփանոս Լեհացու մատուցած ծառայությունը: Ուստի դույզն-ինչ հասկանալու համար հարկ էմ համարում վկայակոչել Արիստոտելի գլուխգործոցի մասին արտահայտված բազմաթիվ կարծիքներից համաշխարհային փիլիսոփայության պատմության քաջագիտակ Վ. Ֆ. Ասմունսի հետևյալ միտքը. «Եվ այնուամենայնիվ այդ գիրքը զարմանալի ու անկրկնելի է: Ապշեցնում են հարցերի ընդգրկման լրիվությունն ու լայնությունը, ձևակերպման վարպետությունն ու ճշգրտությունը: Այդ գրքով դարեր շարունակ փիլիսոփայություն են ուսանել Արևելքի ու Եվրոպայի ժողովուրդները: Ով ուսումնասիրել է այդ գիրքը, նա ուսումնասիրել է բուն փիլիսոփայությունը, մտել նրա խորքերը, պայքարել նրա դժվարությունների և հակասությունների դեմ, բարձրացել նրա գազաթներն

¹ Այդ մասին տե՛ս **Միրզոյան Հ. Ղ.**, Հովհաննես Մրքուզ Ջուղայեցի, Երևան, 2001, էջ 42:

² **Յովհաննէս Ջուղայեցի**, Գիրք սրբազնագործութեան, Մ. Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. թիվ 1935, էջ 385 ա-385 բ:

³ **Յովհաննէս Ջուղայեցի**, Համառօտ աստուածաբանութիւն, Մ. Մաշտոցի անվ. մատենադարան, ձեռ. թիվ 7063, էջ 31 գ: Ի դեպ՝ սկզբնապես ձեռագրի մեկ էջը չի ունեցել էջահամար, ուստի վերաէջակալելուց հետո ստացվել են 31 ա, բ, գ, դ էջեր:

ու տառապել նրա սահմանափակությամբ: Արիստոտելը մարդկության ճշմարիտ ուսուցիչն է»¹: Մեզ մնում է հավելել, որ XVII դ. հայ ականավոր մտածող Ստեփանոս Լեհացին մեկն է Արիստոտելի այն տաղանդավոր հետևորդներից, ովքեր տարբեր դարերում ու տարբեր երկրներում ուժերի գերագույն լարումով կարողացել են ոչ միայն մշտապես անմար պահել Մեծն Ստագիրացու վառած փիլիսոփայական ջահը, այլև տարածել վերջինիս լույսը՝ լուսավորելու համար մարդկային նորանոր սերունդների հոգին ու միտքը:

Վերը հիշատակված Հովհաննես Մրքուզ Ջուղայեցին դրսևորել է ոչ միայն Արիստոտելի «Մետաֆիզիկայի», այլև տրամաբանական երկերի քաջ իմացություն, որոնցից լայնորեն օգտվել է իր փոքրածավալ, բայց անչափ արժեքավոր «Համառոտ տրամաբանութիւն»² աշխատությունն ստեղծելիս՝ մի շարք հարցերում զարգացնելով ուսուցչի տրամաբանական ուսմունքը: Օրինակ՝ հակադրվելով ավանդական տրամաբանության մեջ արմատավորված այն պատկերացմանը, որ դեդուկտիվ մտահանգման առաջին ձևի եղանակներում նախ դրվում է մեծ նախադրյալը՝ Ջուղայեցին, ընդհակառակը, առաջին տեղում դնում է փոքր նախադրյալը՝ բացատրելով, որ «սանդուխտն ներքնոյն էլանեն ի վեր: Եւ ոչ են ներհակք, այլ զնոյնս ցուցանեն, թէպէտ հուսկ և յառաջ»³:

Ավելին, ծանոթ լինելով իր ժամանակի տրամաբանական գիտության նորագույն նվաճումներին՝ ընդունում է նաև դեդուկտիվ մտահանգման չորրորդ ձևը, որն առաջադրել էին 1662 թ. հրատարակված «Տրամաբանություն կամ մտածելու արվեստ» մեծարժեք գրքի հեղինակներ Ա. Առնոն և Պ. Նիկոլը:

Վերջապես, Հովհաննես Ջուղայեցու տրամաբանական երկը նշանավոր է նաև այն բանով, որ փորձում է համատեղել արիստոտելա-արևմտյան և պարսկա-արաբական տրամաբանական մտքի նվաճումները: Ընդ որում, նա դա անում է միանգամայն գիտակցված ու նպատակադրված ձևով: Ըստ այդմ գրում է. «Ձի թէպէտ բազումք յոգնակի են բացատրեալ զեղանակս հաւաքաբանութեանն քառից ձևոց, այլ էս անարժանս ըստ բացերնելոցն արաբացւոց և պարսից յօրինեցելոցն կամիմ կազմել զձևս և զկանոնս քառից էլոց ձևոցն եղանակ»⁴:

Հարկավ, այսքանով չի սահմանափակվում նոր շրջանի հայ փիլիսոփայական և ընդհանրապես տեսական մտքի զարգացման գործում Արիստոտել-

¹ Асмус В., Метафизика Аристотеля // Аристотель, Сочинения, т. 1, М., 1976, с. 49-50.

² Ի դեպ՝ հեղինակի կենդանության ժամանակ (1711 թ.) այն հրատարակվել է Ամստերդամում և հայկական դպրոցներում օգտագործվել որպես տրամաբանության դասագիրք:

³ **Յովհաննես Ջուղայեցի**, Համառոտ տրամաբանութիւն // «ԲԵՀ», 1992, թիվ 1, էջ 116:

⁴ **Յովհաննես Ջուղայեցի**, Տրամակացութիւն ճշմարտութեան, Երուսաղեմի սրբոց Յակոբեանց միաբանության մատենադարան, ձեռ. թիվ 655, էջ 454:

լի խաղացած դերը, քանզի ոչ պակաս մեծ է եղել նաև նրա ազդեցությունը հայ հոգեբանական մտքի վրա: Թե որքան կարևոր էին հոգու և մարմնի կապի ու փոխհարաբերության հարցերը մեզ հետաքրքրող դարաշրջանում ինչպես մեզանում, այնպես էլ արևմտաեվրոպական իրականության մեջ, այդ մասին իմ տեսակետը հայտնել եմ վաղուց¹, ուստի տեղի սղության պատճառով այստեղ չեմ ցանկանում ծանրանալ դրանց վրա, բայց, օգտվելով պատեհ առիթից, կցանկանայի փաստել այդ կապակցությամբ XVII դարի հայ իրականության մեջ արտահայտված մի տեսակետ, որն արժեքավոր է ոչ միայն հայ, այլև համաշխարհային մտքի պատմության տեսակետից: Պարզվում է, որ XVII դարի հայ հասարակական-քաղաքական ականավոր գործիչ, ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցին, իր մեծարժեք «Կտակում»² արծարծելով աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերության հարցը, ի գիտություն հավատացյալ հոտի, սևով սպիտակի վրա գրել է, որ ինչպես *«մարմինն է կառավարիչ հոգւոյն եւ հոգին մարմնոյն կատարէ զկամս Աստուծոյ եւ թողութիւն մեղաց եւ զկատարումն ամենայն բարեգործութեանց, նոյնպէս է հոգեւորական գործ եւ եկեղեցական կարգ եւ սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ: Ոչ միայն քրիստոնէից է այս, այլազգեաց եւ կռայաշտիցն եւս էր, զի այնքան նահատակք, որ վասն սիրոյն Քրիստոսի նահատակեցան, կռայաշտք թագաւորքն վասն իւրեանց օրինացն խափանման վրէժխնդիր եղեն»*³:

Հոգու և մարմնի փոխհարաբերության այսօրինակ մեկնաբանությունը միանգամայն նոր, ավանդական պատկերացմանը տրամագծորեն հակադիր տեսակետ էր ոչ միայն հայ, այլև համաշխարհային մտքի պատմության մեջ: Առավել ևս, որ այդպես մտածողը ոչ թե աշխարհական գործիչ էր կամ շարքային հոգևորական, այլ ամենայն հայոց կաթողիկոս:

Նոր շրջանի հայ փիլիսոփայության ձևավորման ընթացքի վրա Արիստոտելի ազդեցությունը լիովին ու ճիշտ պատկերացնելու համար հարկ էմ համարում հավելել նաև, որ դարավերջին հայ մտածողներն սկսում են առդիմել Արիստոտելին ոչ միայն գիտական ու փիլիսոփայական որոշակի հարցեր քննարկելիս, այլև հասարակական կյանքի երևույթները բացատրելիս, հասարակության զարգացման ուղիներն ու հեռանկարները նշագծելիս:

Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք գտնել 1693 թ. մայիսի 1-ին Նոր Ջուղայում տեղի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների անունից տպագրված համախոսականում, որը, ուղղված լինելով Մայր աթոռ ս. Էջմիածնի միաբանության անդամներին ու արևելահայ հավատացյալ հոտի հոգևոր

¹ Տե՛ս **Միրզոյան Հ. Ղ.**, XVII դ. հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, էջ 227-256:

² Տե՛ս **Խաչիկյան Լ.**, Աշխատություններ, հ. Ա, Երևան, 2012, էջ 433-442:

³ Նույն տեղում, էջ 433:

առաջնորդներին, իրավամբ կարելի է համարել նոր շրջանի հայ հասարակական-քաղաքական հավաքական մտքի առաջին հասուն արգասիքներից մեկը¹: Համախոսականի հեղինակները, ամենախիստ ձևով դատապարտելով ամենայն հայոց կաթողիկոս Նահապետ Եղեսացու, թող ներվի ասել, բիրտ ու ինքնագլուխ գործունեությունը, տասներկու կետերով ներկայացնում են իրենց պահանջները, որոնցից շատերն այսօր ևս չեն կորցրել իրենց թարմությունն ու այժմեականությունը: Նրանում ի մասնավորի կարդում ենք. «Տասներորդ. արանց տգիտա՛ց և անվարժի՛ց մի՛ տայցե՛ պատիւ եպիսկոպոսական և իշխանութիւն վարդապետական. քանզի նոքա որ ունին ջան և աշխատասիրութիւն ուսման. տեսանելով զայլս թարց ջանից և աշխատանաց ընկալեալ զպատիւ եպիսկոպոսութեան. և զաստիճան վարդապետութեան. և նոքա յուսահատեալ խափան լինին ի բարի յառաջադիմութենէ. և մնայ ազգս ի մէջ անգիտութեան խաւարի՛ յաղագս անընտրութեան. ըստ արիստոտէլի որ ասէ. եթէ կամիս բարեկարգութիւն տան. ընտրեա զլուսն ի վատթարէն. և զվաստակաւորն յանջանէն. և ըստ իմաստնոյն թէ՛ զփառս իմաստունք ժառանգեցեն»²:

Վերջապէս, նոր շրջանի հայ փիլիսոփայության ձևավորման գործընթացում Արիստոտէլի անձը դարձել է ամենագետության ու ամենիմացության չափանիշ ու իդէալ, այս կամ այն մտածողի բազմահարուստ գիտելիքներն ու կարողությունները գնահատելու իսկական էտալոն: Հովհաննէս Մրքուզ Ջուղայեցու կրթասիրությունը, աշխատասիրությունն ու կուտակած բազմաբնույթ գիտելիքները գնահատելու և ընթերցողին հասկանալի դարձնելու համար կենսագիր Խաչատուր Ջուղայեցին նշում է, թե «այնքան արդէօք բարգաւաճեալ պերճացաւ, մինչ զի կարեմ ասել թէ՛ ոչ եղև ընդհատ քան զերանելին Ոսկերբերան, և *առաւել քան զԱրիստոտէլ*»³: Հարկավ նա ընկնում է ծայրահեղության մեջ և իր հերոսին ըստ էության վեր է դասում Արիստոտէլից, բայց ներկա դեպքում դա չէ կարևորը, այլ այն, որ եթէ XVIII դարի երկրորդ կեսում, երբ նա գրում էր իր երկը, հայ իրականության մեջ հոգևոր ուսյալության չափանիշը մնում էր Հովհան Ոսկերբերանը, ապա աշխարհիկ գիտելիքներ ունենալու առավելագույն սահմանը մնում էր Արիստոտէլը:

Եզրափակելուց առաջ կցանկանայի հավելել հետևյալը. ինչպէս տեսանք, հայ փիլիսոփայական մտքի զարգացման նախորդ շրջանների նման Արիստոտէլը կարևոր դեր է խաղացել նաև նոր շրջանի հայ փիլիսոփայական մտքի ձևավորման (XVII-XVIII դդ.) գործում, բայց չպետք է մոռանալ նաև, որ ի պատասխան այդ ամենի՝ երախտագետ հայ ժողովուրդը ոչ պակաս կարևոր դեր է խաղացել նրա տեսական ժառանգության յուրացման,

¹ Ամբողջ փասթաթուղթը և դրա արժևորումը տե՛ս **Միրզոյան Հ.**, Հայ գրքի և գրատպության պատմության փիլիսոփայական անդրադարձներ, Երևան, 2015, էջ 245-285:

² Նույն տեղում, էջ 283:

³ **Խաչատուր Ջուղայեցի**, Պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 204:

պահպանման ու տարածման գործում: Հիշենք, որ նրա առանձին երկերի հայերեն թարգմանությունները, լինելով ժամանակագրորեն ավելի հին, քան դրանց՝ մեզ հասած հունարեն բնագրերը, կարող են օգտակար լինել ինչ-ինչ ճշգրտումներ կատարելու համար, իսկ առանձին դեպքերում հանդես են գալիս որպես միակ սկզբնաղբյուր: Օրինակ՝ Թեոն Ալեքսանդրացու նշանավոր «Ճարտասանություն» երկի հայերեն թարգմանությամբ են պահպանվել Արիստոտելի հոչակավոր «Պոետիկա» աշխատության վերջին չորս գլուխները:

Այո՛, շատ ճիշտ է ասված, որ ի տարբերություն նյութական արժեքների՝ մշակութային արժեքների սպառումը ոչ թե պակասեցնում, այլ հավելում ու հարստացնում է դրանք: Ավելի քան մեկուկես հազարամյակ զբաղվելով Արիստոտելի բազմաբնույթ ժառանգության սպառմամբ՝ մեր ժողովուրդը ըստ էության պահպանել, հարստացրել ու զարգացրել է այն:

Грачик Мирзоян – *Аристотель и армянская философия XVII века*

Влияние Аристотеля на развитие армянской философской мысли продлилось вплоть до конца XVIII в. В статье раскрываются формы и особенности этого влияния в XVII столетии. Показано, что в первой его половине общеизвестные труды Аристотеля по логике способствовали восстановлению ослабленных в прошлом традиций армянской философской мысли, а во второй – переведённая на армянский язык и прокомментированная «Метафизика» послужила стимулом для становления армянской философии Нового времени. Более того, на конкретных примерах продемонстрировано, что к концу века армянские мыслители ссылались на Аристотеля не только при анализе научных и философских вопросов, но и вскрывая явления социально-политической жизни либо намечая пути и перспективы развития общества.

Hrachik Mirzoyan – *Aristotle and XVII Century Armenian Philosophy*

The influence of Aristotle on the development of Armenian philosophical thought lasted until the end of the XVIII century. The present article makes an attempt to reveal the forms and features of this influence in the XVII century. Accordingly, it is shown that Aristotle's well-known works in logic contributed to the restoration of the weakened traditions of Armenian philosophical thought in the first half of the XVII century, and the translation and interpretation of «Metaphysics» into Armenian served as a stimulus for the formation of the Armenian philosophy of modern times in the second half of the XVII century. Moreover, the author also states that by the end of the XVII century Armenian thinkers referred to Aristotle not only in analyzing scientific and philosophical issues, but also for revealing the phenomena of social and political life or outlining the ways and prospects for the development of society.

**ՏԵՔՍՍԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ԿՈՐՅՈՒՆ**

Բանալի բառեր – Մանուկ Աբեղյան, Դանիել Եպիսկոպոս, Կորյուն, ծաղկեցուցանել, գյուտ, գտնել, նորոգ, տեքստ

Լեզվի տեքստային դրսևորումները իրականության պատկերը ներկայացնելուն զուգընթաց նաև փորձում են կրճատել իրենց և այդ իրականության միջև անընդհատ առաջացող անջրպետը:

Պատմագրական փաստերի պակասի պատճառով Մովսես Խորենացին ստիպված դիմեց կոլեկտիվ ստեղծագործությունների՝ բանահյուսական տեքստերի օգնությանը, բայց, մեր խորին համոզմամբ, պատմիչն այդ տեքստերում՝ բանաստեղծություն, առասպել և այլն, ամեննին էլ պատմագրական փաստերի ճշգրտություն չէ, որ փնտրում էր. նա նախ պատմության ճշմարտացիություն էր որոնում, այլապես կանտեսեր առասպելներն ու գողթան երգերը: Անհատական և բանահյուսական տեքստերի միջև եղած տարբերություններից մեկն այն է, որ առաջիններում ճնշող նշանակություն ունեն փաստերը, մինչդեռ կոլեկտիվ տեքստը քանակով անբավարար փաստերի միջև ընկած դատարկ տարածությունը փորձում է լրացնել ճշմարտացիությամբ և տրամաբանականությամբ: Անհատական տեքստերը կարող են հարուստ լինել փաստերով, բայց սուբյեկտիվ «տրամաբանության» պատճառով այդ փաստերը կարող են հեռու լինել ճշմարտությունից ու ճշմարտացիությունից: Կոլեկտիվ տեքստերը առավել մեծ թվով անհատների, սերունդների վերահսկողության շնորհիվ ճշմարտացիության մեծ պաշար են ամբարում: Այսպիսով՝ ճշմարտությանն ավելի մոտ լինելու համար նախապատվությունը պետք է տալ ոչ թե պատմիչին, այլ ասացող-բանաստեղծին, այսինքն՝ ավելի շատ բանահյուսական, քան պատմագրական տեքստին: Ցավոք, հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձություններից մեկի՝ գրերի ստեղծման խնդրի վերաբերյալ պահպանվել է ականատես-անհատի հեղինակած մեկ տեքստ՝ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը: Իսկ թե որքան է վերջինիս պարունակած տեղեկությունների միջանկյալ տարածքում եղած ճշմարտացիության աստիճանը, փորձենք պարզել՝ քննելով այդ տեքստի տրամաբանականությունը: Արդյունքի հասնելու համար նախ անհրաժեշտ է այդ տեղեկություններն ընկալել տվյալ տեքստի գուտ լեզվախոսքային իրողությունների հյուսվածքում՝ կատարելով լեզվաբանական, հոգեբանական,

տրամաբանական վերլուծություններ, այնուհետև այդ ընկալման օգնությամբ տրամաբանել նաև այն պատմական իրադարձությունը, որի մասին «սյուբյեկտիվորեն» խոսում է հիշյալ տեքստը: Տեքստի լեզվաբանական ուսումնասիրությունն ըստ էության «միավորում է լեզվաբանական, հոգեբանական ու տրամաբանական մոտեցումները տեքստի վերլուծության մեջ՝ դիտելով տեքստը իր միավորների (նախադասությունների) կապակցության արտահայտության միջոցների ու բովանդակության պլանների միասնության մեջ»¹:

Առանց շփոթելու լեզվատեքստային և պատմական իրողությունները՝ մենք փորձելու ենք քննել, թե տվյալ իրադարձությունը պատմող տեքստից տեքստային իրականությունից, ինչպես պետք է տրամաբանել՝ հասկանալու համար պատմական իրականությունը:

Եթե նկատի ունենանք, որ հիմնախնդրի վերաբերյալ տեղեկություններ ենք ստացել ոչ թե միջնորդավորված ճանապարհներով, այլ ուղղակի Մեսրոպ Մաշտոցի աշակերտից՝ Կորյունից, որ անմիջական մասնակիցն է եղել պատմական տվյալ դրվագի, ապա թվում է՝ գոնե այսպես ասած փաստերի ճշգրտության վերաբերյալ ոչ մի կասկած չպետք է առաջանար: Սակայն հիմնախնդրի փաստական կողմին վերաբերող տարակարծությունների հիմքեր կան, և, ցավոք, դրանց պատճառը ոչ թե հիշյալ միջնորդավորված ճանապարհներով մեզ հասած տեքստերն են, այլ գրի մասին ուղղակիորեն պատմող Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը: Դրան թերևս նպաստել է նաև այն, որ Կորյունն իր աշխատությունը երանելի ուսուցչի կյանքի ու մահվան մասին գրել է տասնյակ տարիներ անց այն թվականից, որը պաշտոնական տեսակետը համարում է հայ գրերի գյուտի տարի՝ 405 թ.:

Կորյունի վարքագրության տեքստային-փաստական, տեքստային-հոգեբանական ու տեքստային-տրամաբանական քննությունների կարիքն իրոք կա նաև այն պատճառով, որ Կորյունը խոստովանում է, որ «...մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացս **վասն յուշ արկանելոյ** միայնագործ հոգայի...»², այսինքն՝ ինքը հիշելու համար մտքերի խորհրդի մեջ էր, այսինքն՝ ոչ թե առիթը ներկայացել է, և ինքն էլ պարզապես հիշում է, այլ իրադարձություններն ու դեպքերը միտքը գցելու՝ արկանելու համար բավականին մեծ ջանքեր է գործադրում («միայնագործ հոգայի...»): **Հոգայ** բառի առաջին իմաստն է՝ «մտածմունքի մեջ ընկնել, տխրել, մտատանջվել, հոգսերից ճնշվել»³: Նման

¹ Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Երևան, 2008, էջ 42:

² Կորյուն, Վարք Մաշտոցի, բնագիրը՝ ձեռագրական ընթերցվածներով, թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մանուկ Աբեղյանի, Երևան, 1990, էջ 70: Այնուհետև սույն գրքից կատարվող մեջբերումների հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով համապատասխան էջը:

³ Խաչատրյան Լ., Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013, էջ 213:

սկիզբը ստիպում է Կորյունի տեքստին վերաբերվել մշտառկա զգուշավորությամբ:

Անուշադրության չպետք է մատնել նաև նույն տեղում Կորյունի՝ «**մատենանշան ծաղկեցուցանելու**» (էջ 70), այսինքն՝ նաև գեղեցկացնելու, զարդարելու մտադրության խոստովանությունը: «**Ծաղկեցուցանելու**» հոգեբանական ատաղձը տվյալ դեպքում տեղեկացվածության պակաս է ենթադրում, և կասկած է առաջանում, որ ի սկզբանե նման մտադրության առկայությամբ Կորյունն իր հաղորդած փաստերը գուցե երբեմն, գուցե և հաճախ կարող էր գեղեցկացնել, ծաղկեցնել, այսինքն՝ հեռացնել ճշգրտությունից:

Վարքագրության 5-րդ գլխի տեքստում պատմվում է աստվածային գործի՝ քրիստոնեության տարածման միաբանների խորհուրդ ժողովելու մասին, ինչի արդյունքը պետք է լիներ «**ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել**» (էջ 90): Բառացի՝ պետք է խորհրդի հավաքվելին **հայ ազգի նշանագրերը գտնելու** նպատակով, քանի որ **գիւտ** բառը գրաբարում նախ նշանակում է «1. գտնուելը՝ կորած կամ փնտրած իրի: 2. Հնարք, ճարտարություն: 3. Դիպուածով՝ աշխատութեամբ կամ հնարագիտութեամբ գտնուած՝ յայտնաբերուած բան»¹: **Գիւտ** բառի՝ **գտնելու, աշխատանքով հայտնաբերելու** մեջբերված իմաստներն են գործում Կորյունի տեքստի տրամաբանական շարունակության մեջ. «Բազում հարցուփորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց» (էջ 90): Ասել է թե հայ ազգի գրերը **գտնելու** (և ոչ թե **գյուտարարության** համար) միաբանյալները զբաղվեցին, աշխատեցին՝ շատ հարցուփորձեր անելով, քննությամբ ու փնտրտութեամբ, շատ նեղություններ կրելով: Ի՞նչ «**հարցուփորձի**», ի՞նչ «**քննութեան**» ու փնտրտութեամբ - չարչարանքի մասին է խոսքը: Հարցուփորձով, փնտրելով **գյուտ չես անի, այլ կգտնես**: Համենայնդեպս, **հարցուփորձ** բառը և երևույթը ոչ մի կապ չունեն գիտական հայտնագործության հետ, մանավանդ երբ դա անում է ոչ թե անհատը, այլ մարդկանց խումբը: Կորյունը գրում է և խոստովանում, որ իրենց փնտրած (**խնդրելի**) բանի մասին երանելիները հայտնում են Վռամշապուհ արքային: Իսկ թե ինչու են երանելի հոգաբարձուները փնտրտութի, հարցուփորձի մասին հայտնում նաև արքային, այլ խնդիր է: Համենայնդեպս, արքան ինչ-որ բանի տեղյակ է կամ պետք է որ տեղյակ լինի, և Կորյունի տեքստի հաջորդ հատվածն ապացուցում է դա. «Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ, որոյ, յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս աղիարեւոց հայերէն լեզուի» (էջ 90):

Անշափ կարևոր մի դիտարկում. հայ հին նշանագրերի վերաբերյալ Վռամշապուհ արքայի հաղորդած տեղեկության մասին պատմող տեքստա-

¹ **Ղազարեան Ռ.**, Գրաբարի բառարան, Երևան, 2000, հ. 1, էջ 330:

յին հատվածում պահի բացառիկության և արքայի ու երանելիների ներաշխարհում այդ պահին նկատվող սովորական հոգեվիճակի միջև վիճակային-հոգեբանական բացահայտ անհամապատասխանություն կա. **«բազում հարցուփորձի և քննութեան զանձինս պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ»**-ով փնտրածի հանկարծահայտությունը երանելիների հոգիներում որևէ զարմանք, ուրախություն, ոգևորություն չեն առաջացնում. նրանք հայտնում են Վռամշապուհին, որ իրենք հայ **նշանագրերը գտնելուն են ուզում հասնել**, ու այդ ժամանակ էլ՝ **«յայնժամ»**, արքան նրանց պատմում է մի ասորի եպիսկոպոս ազնվական մարդու մասին: Ստացվում է, որ Դանիելը **հանկարծ** է գտել հայ նշանագրերը, և տպավորությունն այն է, որ հանկարծակի գտածը Վռամշապուհի համար ամենևին էլ անակնալ, նույնիսկ ոգևորող չի եղել, կարծես արքան վաղուց է իմացել դրա մասին, և երբ դիմել են իրեն, ինքը տեղեկացնում է: Կորյունի տեքստն է այսպիսին. արքան հանգիստ, շատ խաղաղ **«յայնժամ»**, որ կարծես նաև **«դե, որ այդպես է»** է նշանակում, **«յայնժամ պատմեր նոցա** (եթե կարիք կա՝ այդ դեպքում.- Թ. Տ.) **վասն առն...»** (էջ 90) և այլն:

Ամեն ինչից երևում է, որ Դանիելի մոտ եղած գիրն անսպասելիորեն չի ազդել հայոց արքայի վրա, նա այդ փաստը նույնիսկ կարծես իր հիշողության «դարակների խորքերում» պահած ունեցել է, ու թվում է՝ պարզապես ինչ-որ բանով երանելիներին օգնելու համար է պատմում Դանիելի մասին: Առիթը ներկայացել է, և արքան պատմում է՝ «պատմեր», ու ոչ թե ասում կամ հայտնում. արքայի այս հանդարտ, պատմողական կեցվածքը վկայում է գոնե արքային անակնկալի չբերող, Մաշտոցից առաջ եղած հայ գրի մասին. Դանիելի գտածը Վռամշապուհի համար նորություն չի եղել:

Կորյունն իր տեքստն այսպես է շարունակում. «Ապա առեալ երանելի հոգաբարձուացն զյանկարծագիտ խնդրելին, հայցելին ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արծարծել մարթասցեն» (էջ 92): Մ. Աբեղյանն այս **«յանկարծագիտ»**-ը այսպես է բացատրում՝ «...զյանկարծագիտ», այսինքն՝ Դանիելի պատահաբար գտած նշանագրերը (էջ 11): Գուցե, իրոք, Դանիելը հայ գրերը հանկարծ է գտել, սակայն իմաստն ավելի խորն է. երանելի հոգաբարձուները ստացել են **«խնդրելին»**, **«յանկարծագիտ խնդրելին»**, այսինքն՝ այն, ինչը փնտրված (գրաբարում **խնդրել**-ը նաև **փնտրել**-ն է) է եղել ու հանկարծակի գտնվել է: Այսինքն՝ Դանիելը ոչ թե հանկարծակի ինչ-որ բան է գտել, այլ այն, ինչը որ ընդհանրապես որոնվել է: Հաստատ, «խնդրելին» Դանիելը չէ, որ փնտրել էր գտնելու համար, փնտրել էին հայ քրիստոնյա երանելիները, ու **«յանկարծագիտ խնդրելին»** արտահայտության առաջին բառը Դանիելի, իսկ երկրորդը երանելիների հետ է շաղկապվում: Ու կարևոր մի նրբերանգ. փնտրում են հայտնի՛ն, եղա՛ծը, որը, սակայն, կորել է: Այսինքն՝ երանելի հոգաբարձուները գիտեն, թե ինչ են փնտրել: Հեթանոս մեհյանների սպասավոր քրմերն արդեն չկային, և, ցավոք, ոչնչացվում էր այն ամենն, ինչ հեթանոսական էր, մեհենական գիր ու գրականությունը ևս: Այն-

պէս որ, Դանիելի մոտ եղած հայ գրերը միայն այդ պահին չէ, որ **փնտրված**՝ խնդրելի են եղել, դրանք ոչ միայն խնդրելի, այլև հետապնդելի են եղել, ու հայոց արքայի այն խոսքը, թե Դանիել անունով եպիսկոպոսը հանկարծ է գտել հայ հին նշանագրերը, պարզապէս խուսափելու միջոց է քրիստոնյա հայրերի հավանական այն հարցի պատասխանից, թե եթե ոչ թե հանկարծ, այլ միշտ էլ իմացել ես հեթանոսական (անհավատության) գրերի տեղի մասին, ինչու՞ մեզ չես հայտնել: Բայց այս անգամ կարծես թե հին հեթանոս գիրը **խնդրելի** է եղել ոչ թե ոչնչացման նպատակով, այլ իրենց կրոնը տարածելու:

Ուրեմն՝ հին գրերը ո՛չ արքայի համար էին «հանկարծագրուտ», որովհետև Վռամշապուհը վաղուց գիտեր դրանց մասին, ո՛չ էլ երանելիների համար էին անակնկալ, քանի որ փնտրված էին:

Մ. Աբեղյանը, սակայն, այս տրամաբանությունից խուսանավելու համար **խնդրելի**-ն աշխարհաբարի է վերածում իր մյուս՝ ուզել իմաստով, ինչը, մեր կարծիքով, ճիշտ չէ թեկուզև ոճի տեսակետից. տվյալ դեպքում ավելի տրամաբանական է գտնել փնտրածը, որոնածը, քան ցանկացածը, ուզածը: Մենք Կորյունի ենթատեքստում պնդում ենք **խնդրելի** բառի **փնտրած, որոնած** իմաստը, որպեսզի ապացուցենք, որ երանելի հոգաբարձուների համար գրերի խնդիրը միայն ցանկության, ուզելու քարացած հոգեվիճակի մեջ չէ, այլ փնտրտութի, որոնման կոնկրետ գործողության: Այս հանգամանքն ավելի իրական է դարձնում Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերի՝ ինչ-որ ժամանակ գործածված, կիրառված լինելու փաստը, ավելի է արժեքավորում դրանք: Հայ քրիստոնյա հայրերն անպայմանորեն իմացել են, որ հեթանոսական շրջանում այդ գրերն իրոք ծառայել են հայ մշակույթին: Եվ երանելիների՝ Կորյունի հաջորդ տողերում աչքի զարնող գործնականությունը (դրանք միանգամից կիրառելու մտադրության առումով) փաստում է, որ նրանք չէին էլ մտածում, թե հին նշանագրերը գուցե հնարավոր չէ գործածել: Դատելով այն հանգամանքից, որ երանելի հոգաբարձուները անմիջապէս գործի են անցնում՝ գիրը սովորեցնելու համար արքայից մանուկներ խնդրելով, խոսում է այն վստահության մասին, որ իրենց ձեռքին հայերեն նշանագրերն են, և, փաստորեն, որևէ բարդություն, խնդիր չկա դրանք օգտագործելու համար. հենց Հաբելից ստանում են նշանագրերը, միանգամից, միայն պարզապէս տեղեկանալով, ինչպէս գրում է վարքագիրը, անցնում են դրանք սովորեցնելուն: Կորյունը, համենայնդեպս, չի ասում, թե նրանք սկսեցին սովորել բերված գրերը, որպեսզի իրենք էլ մանուկներին սովորեցնեն. «Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել» (Էջ 92): Տեքստի շարունակությունը ևս խնդրահարույց է. ...«ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել, որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ երանելին հասանէր, և իբրև ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք տանէր: Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս

հայերէն լեզույն, մանավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին ելս խնդրէին ժամանակս ինչ» (էջ 94): Փաստորեն, Մաշտոցը, որ հելլենական կրթություն ուներ և աշխատում էր արքունի դիվանատանը որպէս կրթյալ, ուսյալ մարդ և Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերը բազմաթիվ աշակերտների է սովորեցնում՝ այդ գործում հասնելով վարդապետության, ուսուցչապետի, քարոզչի աստիճանի, ամբողջ երկու տարի, ըստ Կորյունի բնագրի, գլխի չի ընկնում, որ գրերը չեն բավականացնում հայերենի ինչ-ինչ կապերի համար: Պետք է ասել, որ այս **ամս երկու**-ն տարակարծությունների առիթ է դարձել շատ հայագետների համար՝ Մ. Չամչյան, Մ. Օրմանյան, Հր. Աճառյան, Հ. Մանանդյան, Մ. Աբեղյան, Ս. Քոլանջյան և այլք: Եթէ, ինչպէս Կորյունի բնագրում է, Դանիելի մոտից նշանագրերը բերվել են Վռամշապուհի հինգերորդ տարում, և երկու տարի էլ դրանք ուսուցանվել են, ապա տրամաբանական չէ, որ Վռամշապուհի նույն հինգերորդ տարում Մաշտոցը նոր որոնումներ ձեռնարկեր. չէ՞ որ երկու տարի հետո չէր կարող Վռամշապուհի նույն հինգերորդ տարին լինել: Երկու **հինգերորդ**-ներից մեկը, փաստորեն, բնագրային սխալ է: Մեր կարծիքով՝ այս հարցում ճիշտ է Աճառյանի տեսակետը. «Միսալն առաջացել է հետևյալ կերպ: Կորյունի ձեռագրում գրված է եղել երդ (համառոտագրված և առաջին տառի վրա պատվի նշանով), որ բնականաբար պիտի կարդացվեր «երրորդ»: Մի խեղճ գրիչ, վրան պատիվ դրած ե-ը թվանշան համարելով՝ կարդացել է հինգերորդ: Մնացյալը պահել է ճիշտ նախկին ձևով, առանց անդրադառնալու, թե 5+2 չի տալ 5»¹: Մակայն Աճառյանը կարծում է, թե Դանիելի մոտից բերված նշանագրերի պակասությունը երկու տարվա ընթացքում նկատելը Մաշտոցին նույնիսկ պատիվ է բերում, քանի որ շատ ժողովուրդներ իրենց գրերի պակասությունները հասկացել են միայն հազարամյա գործածությունից հետո: Մեր կարծիքով, սակայն, փաստն ինքնին, մեղմ ասած, չի կարող դրական հնչողություն ունենալ Մաշտոցի համար, եթէ, իհարկե, չլինի այլ մեկնաբանություն: Դանիելի մոտից բերված նշանագրերի՝ Կորյունի մատնանշած թերությունը պետք է բացահայտվեր դրանք կիրառելու առաջին իսկ օրից, շաբաթից, որովհետև հնարավոր չէ սովորեցնել մի բան, որը հնարավոր չէ սովորել: Ըստ երևույթին՝ այստեղ զգալ է տալիս Կորյունի տեքստի շարադրանքի և շարադրանքի նյութի ժամանակային հեռավորությունը. այստեղ է, որ **տեքստի և իրականության** (որ տվյալ պահին է) **«հորիզոնական» փոխհարաբերության խնդիրը** ինքնաբերաբար հանգում է նաև **տեքստի և ժամանակի «ուղղահայաց» փոխհարաբերության խնդրին**: Մաշտոցի աշակերտի տեքստը մի պարբերության մեջ տրամաբանականության այնպիսի հարցեր է հարուցում, որոնք ստիպում են կասկածել

¹ Աճառյան Հ., Մերոպ Մաշտոց // «Էջմիածին», 1955, թիվ 2, էջ 14:

հենց շարադրանքի փաստական անվերապահությանը: Եթե բերված այբուբենի մեջ ինչ-որ բան այն չի եղել, ապա խոսքը, թերևս, համեմատաբար ավելի անկարևոր բաներին պետք է վերաբերեր, որպեսզի ընդունենք այն փաստը, որ լեզվի մեջ հմուտ Մաշտոցը երկու տարի չի նկատել դա և երանելի հոգաբարձուների հետ Դանիելի մոտից բերված այբուբենը սովորեցրել է բազմաթիվ աշակերտների, սովորեցրել ամենուրեք: Գիտնականներից ոմանք (Իսահակ Հարությունյան¹) փորձեցին գրաբարյան *աւ*-ը ներկայացնել որպես բնագրային թերություն. իբր, ոչ թե *աւ* է եղել, այլ *աւիս*, այսինքն՝ երկու ամիս են սովորեցրել հին այբուբենով: Սակայն բնագրային նման սպրդման ոչ մի հիմք չկա՝ բացի ենթադրությունից: Իսկ այն հանգամանքները, որ հիշյալ նշանագրերով սկսել են սովորեցնել բազում մարդկանց և **ամենայն ուրեք**, որ այդպիսով Մեսրոպը վարդապետության աստիճանի է հասել, ստիպում են մտածել, որ **սիւղոբա**-կապերին առնչվող թերություններն այնքան էլ էական ու վճռորոշ չեն եղել: Այս տրամաբանությամբ փրկվում է Մաշտոցի հեղինակությունը. Դանիելի մոտից բերված այբուբենն աչքի չի զարնել էական թերությամբ, այլապես Մեսրոպն անպայման վաղ կարձանագրեր դա: Իսկ եթե այդ այբուբենն էական թերություններ չուներ, արժե՞ր այն մի կողմ դնել:

Մ. Աբեղյանն իր «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը» ուսումնասիրության մեջ անընդհատ փորձում է վանել, շրջանցել, մերժել այն գաղափարը, թե Դանիելի մոտից բերված գրերն իրոք հին հայկական այբուբենն է եղել: Ցավոք, պատվելի հայագետը այդ նպատակին հասնելու համար շրջում է նաև Ղազար Փարպեցու տեքստը՝ «**մանաւանդ թե գոն նշանագիրք հայերէն լեզույս**» (էջ 15): Մ. Աբեղյանը *թե*-ն դարձնում է *էթե* (մանավանդ *էթե* կան հայերենի նշանագրեր), որպեսզի մերժի ըստ Փարպեցու՝ Մաշտոցի մտորումը, թե մանավանդ կան հայերեն լեզվի նշանագրերը, որոնցով «հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զոգիս արանց և կանանց...»: Փարպեցին, ինչպես ասում են, սևով սպիտակին գրում է, որ շատ ժամանակ Մաշտոցը մտածում էր, թե ասորերենով հնարավոր չէ քարոզել, համոզել, և այդ պատճառով նրա անձը «**փղձկացեալ**», այսինքն՝ տխուր էր, վշտահար, «**մանավանդ թե գոն նշանագիրք հայերէն լեզույս**» (մանավանդ որ կան հայերենի նշանագրերը), որոնցով հնարավոր է («**հնար է**») «**շահել զոգիս**»: Մեկ այլ տեղ Փարպեցին գրում է, թե Մաշտոցն աստվածային շնորհով կամեցել է «**կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս տառիցն**» (էջ 15), այսինքն՝ Մաշտոցը ցանկացել է կարգավորել վաղնջագույն ժամանակ գրված տառերի շարագրերը: Մ. Աբեղյանը պնդում է (և ճիշտ է անում), թե Փարպեցու խոսքը Դանիելի մոտից բերված տառերի մասին է, բայց այստեղ էլ հակասության մեջ է ընկնում հենց Կորյունի հետ, որովհետև Մաշտոց-

¹ Տե՛ս **Հարությունյանց Ի.**, Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 170:

ցի աշակերտի տեքստից երևում է, որ ուսուցչապետը պարզապես հրաժարվել է Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերից: Ու եթե այդ կարևոր կապ-**սիւղոբաները** չեն բավարարել այնքան, որ բերված գրերից հրաժարվելու անհրաժեշտություն է առաջացել, ապա ինչու՞ է Մաշտոցը սկսել դրանք կարգել-կարգավորել: Մ. Աբեղյանն ինքն էլ, կարծես այնքան էլ չհավատալով իր փաստարկներին, այնուամենայնիվ ստիպված գրում է. «**Այս ամենով, հարկավ, չի մերժվում, որ Մեսրոպյան գրերից առաջ փորձած լինեին գրել կամ նույնիսկ գրած լինեին որևէ բան հայերեն լեզվով, բայց այլ լեզուների նշանագրերով**» (էջ 16):

Մ. Աբեղյանը կարծես ամեն կերպ ուզում է միմյանցից հեռացնել Դանիելի մոտից բերված հայ հին, վաղնջագույն տառերն ու այն այբուբենը, որը հետո, ըստ ընդունված տեսակետի, Մաշտոցն է հայտնագործել: Երբ դրանք նույնացնում ենք, ամեն ինչ զուլալվում է: Բերված տեքստային հատվածների տրամաբանությունն ասում է, որ Մաշտոցը բացահայտել է Դանիելի մոտից բերված հայկական հին նշանագրերի հնչույթային տիրույթները, ըստ դրանց դասակարգել է, նորոգել վաղնջագույն հայերեն նշանագիր-տառերը:

Տրամաբանականության առումով անհասկանալի է նաև հետևյալ տեքստային հատվածը. Կորյունն ասում է, որ հիշյալ խնդրի համար Մաշտոցը արքայի հրամանով մանկանց մի դաս է վերցնում և իր հետ տանում ասորիների քաղաքները. «Վասն որոյ (ստեղծված իրավիճակից էլք փնտրելու համար - Թ. Տ.) առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Մահակայ... խաղայր գնայր...» (էջ 94): Արդյո՞ք նոր գրեր ստեղծելու համար Մաշտոցն իր հետ աշակերտներ պետք է տաներ: Դժվար թե: Ուրեմն՝ ճամփորդության նպատակն այլ է եղել. աշակերտներին Մաշտոցն իր հետ տարել է, որպեսզի, թերևս, կատարելագործեն օտար լեզուների իմացությունը՝ թարգմանություններ կատարելու համար: Ուրեմն՝ Մաշտոցը վստահ է եղել, որ գրերի խնդիրն անպայման հաղթահարելի է, և շուտով թարգմանական գործի հերթն է հասնելու: Ասել է թե՛ կապերի-սիւղոբաների խնդիրն այնքան էլ դժվար հաղթահարելի չի եղել, և Դանիելի մոտից բերված այբուբենի թերությունը, պակասությունը գոնե այնքան ոչ էական են եղել, որ թույլ է տվել այն ուսուցանել երկու ձիգ տարի: Ասել է թե, հակառակ Աբեղյանի, Փարպեցու գրքում Մաշտոցի մտորումը (մանավանդ որ կան՝ **գոն**, հայերենի նշանագրեր) պետք է եղած լինի հաստատական իմաստով և ոչ թե ենթադրական («եթե»):

Արժե ուշադրություն հրավիրել Կորյունի «հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի» տեքստային հատվածի վրա:

Մ. Աբեղյանը **նորոգ**-ը աշխարհաբարացրել է **նոր** իմաստով: Ինչու՞: Բնականաբար սա վրիպում չի կարելի համարել, որովհետև Մ. Աբեղյանը **նոր**-ի և **նորոգ**-ի իմաստային նրբերանգները քաջ է գիտակցել: Յավոք, մեծ հայագետը նախատրամադրվածություն է ունեցել, թե Մաշտոցը բոլորովին նոր գրերի ստեղծող է ու **նորոգ**-ը **նոր** է աշխարհաբարացրել: Ճիշտ է, **նորոգ**-ն

ունի և՛ նոր, և՛ նորոգված, և՛ ստույգ, անվրեպ, ճիշտ իմաստները, սակայն Կորյունի տեքստից թելադրվող տրամաբանությունը, կարծում ենք, պահանջում է նորոգ-ի ստույգ, ճիշտ, անվրեպ¹ իմաստները: Այս վերջին երեք իմաստներն ավելի ներդաշնակ են Կորյունի տեքստում եղած տեղեկությունների միջոցով մեր առաջադրած տրամաբանությանը. Մաշտոցը կարողացել է ճիշտ, ստույգ, անվրեպ նորոգել Դանիելի մոտից բերված նշանագրերը: Աբեղյանի կարծիքով, սակայն, Մաշտոցը բոլորովին նոր գրեր է ստեղծել:

Կրկին անդրադառնանք տեքստային այս հատվածին. «Իսկ իբրև ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզույն, մանավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային...»: Աբեղյանն աշխարհաբարացրել է՝ «Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերէն լեզվի սիւղոբաները - կապերն ամբողջությամբ արտահայտելու համար, մանավանդ որ նշանագրերն էլ իսկապէս ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին, - ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ մի էլք էին փնտրում դրան» (էջ 94-95): Մեծ հայագետը կոպիտ սխալ է թույլ տալիս՝ արձանագրելով, թե «Կորյունի գրածից իմացվում է միայն, որ այդ նշանագրերը բավական չեն եղել հայերէնի համար, բավական չեն եղել մանավանդ այն պատճառով, որ այլ ուրիշ (կամ՝ ուրիշների) դպրությունների են եղել, այն էլ մոռացության տրված («թաղեալք») և նորից հիշված («յարուցեալք»): Ուրեմն՝ այդ տառերը հատկապէս հայերէնի համար չեն հորինված եղել» (էջ 12): Կորյունն ասում է՝ ուրիշ դպրություններից թաղված են եղել, Աբեղյանը, բնագիրը ճշգրիտ թարգմանելով իսկ, իր տեսական աշխատության մեջ, սակայն, ցավոք, պնդում է, որ գրերն «այլ ուրիշ ազգերի դպրության են եղել», այսինքն՝ պատկանել (էջ 13): Մ. Աբեղյանը երկրորդ անգամ է միտվածորեն մեկնաբանում տեքստային պարզ հատվածը և դա անում է, որպէսզի Մաշտոցին վերագրի միանգամայն նոր այբուբենի ստեղծումը և ոչ թե Դանիելի մոտից բերված հայկական հին նշանագրերի **ստույգ, ճիշտ, անվրեպ** վերծանումն ու նորոգումը:

Գրերի խնդիրը քննող յուրաքանչյուր լուրջ հեղինակ դրան անքակտելիորեն շաղկապել է մեր ժողովրդի պատմության քաղաքական խնդիրը:

Հայերս 301-ին չէ, որ քրիստոնյա դարձանք: Մենք երդվյալ քրիստոնյա չէինք նաև դրանից 100 տարի հետո: Իսկ այդ ընթացքում Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև և կորցրեց անկախ պետականությունը (387 թ.): Վտանգ առաջացավ, որ ժողովուրդը ժամանակի ընթացքում կարող է ուժվել և վերանալ: Ինչ-որ մի բան էր անհրաժեշտ հային,

¹ Տե՛ս «Նոր բառգիրք հայկագեան լեզուի», Երևան, 1979, հ. 2, էջ 446, **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944, հ. Գ, էջ 480:

որպեսզի կարողանար ոտքի կանգնել: Դա ինչ-որ մի նոր, հզոր հոգևոր ներուժ պետք է լիներ, որը կուտակելու նախապայմաններից ամենակարևորն էլ եղավ քրիստոնեությունը: Հեթանոսական հավատը հոգեբանական նման նախահիմքեր, ներուժ ստեղծել չէր կարող: Հեթանոս մարդը իր շուրջը կատարվող երևույթները պատճառաբանում էր գլխավորապես ու միայն աստվածների **կամքով**. Անահիտը ցանկանա՝ կինը կպտղավորվի, չցանկանա՝ չի պտղավորվի, Նարն ուզենա՝ ծովը չի ալեկոծվի, ու ձկնորսությունը կհաջողվի, իսկ եթե չուզենա, ծովը կալեկոծվի, ու ձկնորսությունը կձախողվի... Այլ կերպ՝ երևույթների, իրողությունների պատճառահետևանքային կապը հեթանոս մարդը փնտրում է իր անձից դուրս, հետևաբար՝ նա չի մտածում, որ ինքն էլ ինչ-որ ձևով կարող է ընթացք տալ իրերին ու իրադարձություններին: Քրիստոնեությունը մի ուսմունք է, որ մարդուն **կամքի ազատություն** է շնորհում, այսինքն՝ մարդը դժոխք կընկնի թե դրախտ՝ կախված է իրենից, այն բանից, թե ինչպես (արդա՞ր, թե՞ մեղավոր) կանցկացնի իր երկրային ժամանակը: Այսինքն՝ քո ճակատագիրը, ըստ քրիստոնեության, դեռևս ոչ թե աստծու կամ աստվածների ձեռքին է, այլ առայժմ, նախևառաջ՝ քո: Նույնը՝ ժողովրդի պարագայում, որևէ ժողովրդի լավ (դրախտ) կամ վատ (դժոխք) վիճակը, ըստ քրիստոնեական մտածողության, կախված է նախևառաջ հենց իրենից: Հայերիս անհրաժեշտ էր հավատ «դրախտի» հեռանկարի նկատմամբ: Որպեսզի ազգի մեջ այնպիսի հոգեբանություն արմատակալեր, թե իր ճակատագիրը նախևառաջ հենց իրենից է կախված, անհրաժեշտ եղավ հոգեկերտվածքի վերափոխություն՝ քրիստոնեական մտածողության, բայց, առաջին հերթին, հոգեբանության օգնությամբ, քանի որ խոսքը քրիստոնեական կրոնի մասին չէ, այլ նախ հավատի: Որպեսզի հայը մտածեր, որ դեռ ինքը կարող է պայքարել իր տեսակի հարատևման համար, և որ դեռ իր ձեռքին է սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորությունը, մեր քաղաքական առաջնորդները որոշեցին ազգի մեջ նման հոգեբանություն ներարկել: Եվ «Աստվածաշնչի» թարգմանությունն էլ մեզ նախ դրա՝ համար պետք եղավ: Եվ հենց թարգմանելու համար էր, որ առաջացավ գրի կարիքը: Ահա թե ինչու խիստ օրինաչափ է, որ հենց այդ ժամանակ, հենց հայոց արքան ինքը և կաթողիկոսը գլխավորեին այդ գործը: Ինչ խոսք, պարզ է, որ Վռամշապուհի, Մահակ Պարթևի, Մեսրոպի մեծագույն ծառայությունը Հայաստանին ու հայ ժողովրդին ոչ թե տառեր ստեղծելն է, այլ նախևառաջ այն իմաստուն կռահումն ու դրա իրականացումը, որ ժողովրդին անհրաժեշտ է մի այնպիսի հոգեբանական նկարագիր, որը նրա յուրաքանչյուր անդամին մտածել տա, թե ազգի ճակատագիրը կախված է նաև իրենից, և ամեն հայ ինչ-որ քայլ կատարի այդ ուղղությամբ: «Աստվածաշնչի» հայագիր թարգմանությունը ժողովրդին տալն էր ապահովելու դա: Ահա, համատոտ սա է եղել հայերիս՝ քրիստոնեության ընդունման իրական մղումների ընդհանուր հայտարարն ըստ մեզ: Ահա թե ինչու ոչնչով չի նսեմանա Մեսրոպ երանելու կերպարը, եթե վերջապես պարզվի, որ նա ոչ մի այբուբեն էլ չի ստեղծել, այլ

նախաքրիստոնեական մեր մշակույթի փշրված բաժակում մնացած վերջին կաթիլը՝ վաղնջագույն գիրն է *ստույգ, ճիշտ, անվրեպ* լրացրել, դասավորել և վերակենդանացնելով՝ վերստեղծել: Իսկ սա քիչ չէ Մաշտոցին սրբերի շարքը դասելու համար:

Մեկ ուրիշ ոչ պակաս կարևոր դիտարկում. և՛ գրերը բերելը, և՛ դրանցով կրթելը տեղի են ունենում **արքայական հրամանով**: Կորյունի տեքստային շարադրանքից ենթադրվում է, որ Հաբելն ըստ երևույթին հայաստանցի չէ: Նա ապրում է հայոց աշխարհից դուրս և *մերձավորն* է ասորի Դանիելի, ուստի՝ Վռամշապուհը երևի թե չպետք է կարողանար նրան հրամայել ու դիմել հրովարտակով, իսկ Հաբելը հնարավոր է և չփութար, չշտապեր: Բայց «Հաբելին զայն լուեալ, փութանակի հասանէր առ Դանիէլն, և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց» (էջ 92):

Ի՞նչ իշխանություն է ունեցել Վռամշապուհը մի մարդու նկատմամբ, որն իր երկրի տիրություն չի ապրել, և ինչու՞ Դանիելի մոտ եղած հայ նշանագրերին հատկապես Վռամշապուհն է տեղյակ:

Հարցն իրոք դժվար է գաղտնագրեծել Կորյունի տեքստի տիրություն: Պետք է մտածել, որ Հաբելը, այնուամենայնիվ, եղել է Վռամշապուհ արքայի հրամանների ենթակայության ներքո և հավանաբար հայ է եղել, մանավանդ հստակորեն կատարում է հայոց արքայի հրովարտակը: Հաբելի անձին առնչվող տեքստային հատվածի տրամաբանությունը ևս խոսում է մեր այն ենթադրության օգտին, որ հայ արքայական տոհմը՝ մասնավորապես Վռամշապուհը, նրա նախորդները, 301 թ. հետո ամենայն հավանականությամբ միշտ էլ տեղյակ են եղել հայ հին նշանագրերի գտնվելու վայրին, ավելին՝ այդ նշանագրերը պահվել են գաղտնիության պայմաններում ու անպայման **միայն արքայական հրաման-հրովարտակներն են գործել դրանց առնչությամբ**: Ամենայն հավանականությամբ՝ Մաշտոցից առաջ Հայաստանում եղած հայ գիրը բարձր դասի մենաշնորհն է եղել՝ արքայական տոհմի և կրոնավորների (խոսքը, իհարկե, առաջին հերթին հեթանոսական հավատքի քրմերի մասին է) և հետո միայն ինչ-ինչ առումներով՝ քրիստոնեության սպասավորների: Թերևս այս պատճառով էլ իմաստ չունի Դանիելի մոտից բերված հայ հին նշանագրերի նմուշներ փնտրել, օրինակ, արձանագրությունների տեսքով՝ քարերի վրա, հեթանոսական տաճարների որմերին, այլուր: Իսկ թե գիրն ինչու էր բարձր դասի մենաշնորհը, պարզ է. այն գիտելիքի, կրթության կրողն էր, իսկ գիտելիքը, կրթությունը, զարգանալու մենաշնորհը, իրոք, բարձր դասին են եղել թեկուզև այն պատճառով, որ օգտագործվել է իշխելու համար:

Կորյունի տեքստի կարևոր հատվածը գրքի վերնագիրն է՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշթոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» (էջ 70): Տրամաբանությունը ստիպում է հարցնել, թե ինչու հայ գրերի գյուտի, այդ հայտնագոր-

ծուրթունքը կատարող (ըստ ընդունված տեսակետի) մարդու գործունեության մասին պատմող գրքի վերնագիրը վերջինիս ոչ թե այբուբեն ստեղծող, այլ միայն **թարգմանիչ** է անվանում: Վերնագրի տեքստում հիշատակվում են անգամ Մաշտոցի վարդապետական աստիճանը, տեքստային այդ կարևոր, կարելի է ասել գլխավոր հատվածում չի անտեսվում նրա նույնիսկ կրտսեր աշակերտի նույն աստիճանը: Իսկ Մաշտոցը միայն թարգմանիչ ու երանելի սուրբ վարդապետ է անվանվում: Գրքի վերնագիրը մանավանդ այն ժամանակներում ողջ գրքի բովանդակությունը ներառող տեքստային կարևոր միավոր է եղել: Իսկ Կորյունի գրքի վերնագրի մեջ, փաստորեն, բացակայում է Մաշտոցի՝ հայոց գրերի ստեղծող լինելու մասին տեղեկությունը: Ուրեմն՝ այս փաստը ևս պետք է դնել այն տրամաբանական շղթայի մեջ, որ առաջ ենք քաշում. հայ գրի սկզբին վերաբերող պատմական իրականության և Կորյունի վարքագրության տեքստային իրականության միջև որոշ անհամապատասխանությունները տրամաբանվում են այն ենթադրությամբ, որ **այսօրվա մեր այբուբենը, ըստ էության, հայոց հին գիրն է՝ Դանիելի մոտից վերստին տուն բերված:**

Тадевос Тоноян – *Текстуальная и историческая реальность: Кориюн*

Об одном из самых важных событий в истории армянского народа – создании алфавита – сохранился только один текст, написанный очевидцем: «Житие Маштоца» Кориюна. Степень соответствия информации, содержащейся в «Житии Маштоца», исторической реальности может быть выявлена исключительно в канве текстуальных реалий посредством их лингвистического, психологического и логического анализа. Проблема «горизонтальных» взаимоотношений текста и реальности неуклонно приводит и к проблеме «вертикальных» связей времени и текста. Текст ученика Маштоца вызывает логические вопросы, заставляющие засомневаться в фактической объективности изложенного и предположить, что алфавит современного армянского языка, по сути, – древнее армянское письмо, сохранившееся у Даниэля и возобновленное Маштоцем.

Tadevos Tonoyan – *Textual and Historical Reality: Koryun*

Only one text has been preserved written by a witness, Koryun – “The Life of Mashtots” regarding the issue of creation of the alphabet, which was one of the most important events in the history of Armenia. The degree of compliance of textual information with the historical reality of the text can be revealed within textual reality through linguistic, psychological, logical analysis of the text. The problem of the «horizontal» relationship of the text and reality is automatically reduced to the “vertical” relationship of the text and time. The text of Mashtots’s pupil raises such logical issues, which raise doubts on the factual unconditionality of the writing and make us assume that the present day Armenian alphabet is, in fact, the old Armenian alphabet, which was brought back home from Daniel.

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ, ԱՐՄԵՆ ԲՈՒՌՆՅԱՆ,
ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ, ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԵՐԻ
ՏԱՐԱԾԱԿԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ***

Թաղման ծեսը դասվում է ծեսերի այն խմբին, որոնց օգնությամբ հասարակությունը հավաստում է իր անդամի անցումը որակական մի մակարդակից մյուսին: Բնականաբար, այս բարդ գործընթացը ներառում է մի շարք գործոններ՝ հոգևոր-պաշտամունքային, սոցիալական, ժողովրդագրական և այլն: Այսինքն՝ իրական տարածության մեջ ստեղծվում է երևակայական, սրբազան գոտու մի կղզյակ, որը ստանում է իր վերացական՝ դիցաբանական հիմնավորումը¹:

Թաղման ծեսի նյութական դրսևորումները կարելի է դիտարկել երեք փոխկապակցված մակարդակներում՝ 1. թաղումային հուշարձան (որն ընդգրկում է բուն թաղումը), 2. թաղումային համալիր (վեր- և արտադամբարանային կառույցներն ու կոթողները) և 3. թաղումային խումբ (որտեղ ընդգրկված են դամբարանադաշտերը և դրանց բաղադրատարրերը)²: Թաղման ծեսի ամբողջական ուսումնասիրությունը հնարավոր է այս բոլոր բաղադրատարրերի քննության պարագայում:

Թաղումային խմբերի բնորոշման նպատակով կարելի է առանձնացնել երկու հարցադրում՝ դամբարանադաշտերի տեղադրությունը բնական և մարդածին միջավայրի տարբեր ոլորտներում և ներքին կառուցվածքը (դամբարանների բաշխվածություն, ենթախմբերի, ճանապարհների, պաշտամունքային կառույցների առկայություն):

Եթե նեոլիթ-էնեոլիթյան դարաշրջանի Հայաստանում դամբարանները տեղադրված են կացարանների հատակի տակ, ապա սկսած վաղ բրոնզից, պայմանավորված ուրբանիզացիայով և լանդշաֆտի սեզմենտացման (աշխարհիկ և սրբագործված առանձին միջավայրերի առաջացման) գործընթա-

* Հ. Ավետիսյանի, Ա. Բորիսյանի, Ա. Գնունու աշխատանքը իրականացվել է ՀՀ գիտակետ-կոմիտեի «Հնագույն Մյունիքի մեգալիթյան մշակույթը. Ժամանակագրության, տարածույթի, գործառույթի և ինքնության խնդիրներ» 15T-6A349, Լ. Մկրտչյանի՝ «Բրոնզեդարյան Հայաստանի աշտարակատիպ կառույցները» թեմաների շրջանակներում:

¹ Տե՛ս **Элиаде М.**, Священное и мирское, М., 1994, с. 20:

² Տե՛ս **Ольховский В.**, Погребально-поминальная обрядность в системе взаимосвязанных понятий // «Советская археология», 1986, № 1, с. 65-76:

ցով, ձևավորվում են դամբարանադաշտեր¹: Դրանք տեղադրված են լինում բնակավայրին կից (հմմտ. օր.՝ Նորաբակ, Ծովակ, Կարճաղբյուր²) կամ հեռու (Այրք-2, Ծովակ-2, Արծվանիստ³, Հարժիս-Դարաբաս, Նազելի, Սև լիճ⁴): Վերջիններիս թվում ուշագրավ են արհեստական սրբազործված տարածքներում գտնվողները (հմմտ. Մուրադ թափայի և Նազելիի դամբարանադաշտերը), որտեղ նախկինում կերտվել են ժայռապատկերներ, որոնց մի մասն օգտագործվել է որպես կրոնլեխի քարեր⁵. Ժայռապատկերների համատեքստում է գտնվում նաև Վանքի Դուռ-2 դամբարանադաշտը⁶:

Դամբարանադաշտերի տեղագրությունը

Դամբարանադաշտերի տեղադրման հիմնախնդիրը լայնորեն քննարկվում է ժամանակակից հնագիտության մեջ⁷: Որպես կանոն շեշտվում է բնական միջավայրի կարևոր դերը դամբարանադաշտերի տեղադրության պարագայում⁸: Քննարկվող տարածքում հնարավոր է գատել դամբարանադաշտերի տեղադրության մի քանի եղանակ:

Բլրի գագաթ. Բլրի գագաթին կամ ընդհանրապես բարձրադիր վայրերում դամբարանադաշտերի տեղադրությունը պայմանավորված էր տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգում բարձունքի սրբազործմամբ⁹: Դամբարանադաշտերի այսօրինակ տեղադրությունն փաստագրված է Ծովինարում¹⁰, Այրքում, Արծվանիստում¹¹, Թանահատում և Ախլաթյանում¹²: Այս

¹ Տե՛ս **Мельник В.**, Погребальная практика и погребальный обряд, «Краткие сообщения института археологии АН СССР», вып. 201, М., 1990, **Գևունի Ա.**, Հայաստանի քաղաքագոյացման հիմնահարցերի շուրջ // «Վեմ», 2010, թիվ 4, էջ 110:

² Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin I, The Southern Shores, Documenta Asiana VII, Roma, 2002, p. 72, 98, 124, 154:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 116, 125, 138, 144, 147, 157:

⁴ Հետազոտությունը՝ Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան, Ա. Գևունի:

⁵ Հետազոտությունը՝ Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան, Ա. Գևունի, Գ. Սարգսյան:

⁶ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 138:

⁷ Տե՛ս **Williams H.**, The Archaeology of Death, Memory and Material culture, In: **Williams H.** (ed.), Archaeologies of Remembrance: Death and Memory in Past Societies, New York, 2003, p. 14:

⁸ Տե՛ս **Baleriaux J.**, Where do Rivers Dive? Giving Meaning to Subterranean Rivers in Ancient Greek Thought, «Abstracts of the Conference, Sacred Landscapes: Creation, Manipulation & Transformation, 5th-7th May», London, 2014 <http://viasacra.org.uk/abstrakts/>. **Cummings V.**, Building for Memory, in: Williams H. (ed.), Archaeologies of Remembrance, p. 26:

⁹ Տե՛ս **Գրիգորեան Ա.**, Ալիշանի բնապաշտական և խորհրդարանական ընկալումները // «Բազմավեպ», 2014, թիվ 1-2, էջ, 18-25: Հմմտ. **Токарев С.**, Ранние формы религии, М., 1990, с. 603-608, **Апполодор**, Мифологическая библиотека, М., 2004, 3, XIV, 7:

¹⁰ Տե՛ս **Լալայեան Ե.**, Նոր Բայազետ կամ Գեղարքունիք, նախապատմական շրջան // «Ազգագրական հանդես» (այսուհետև՝ «ԱՀ»), գիրք XV, Թիֆլիս, 1907, էջ 180:

¹¹ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 116:

¹² Տե՛ս **Հասրաթյան Մ.**, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 168:

համատեքստում առանձնահատուկ պետք է հիշատակել Սառնակունք գյուղից ոչ հեռու՝ Նազելի լեռան շրջակայքում, ծ. մ. 3200 մ կոնաձև բարձրության վրա գտնվող քարահողային լիցքով դամբարանները¹: Կոնաձև բլուրների գագաթներին են տեղադրված նաև Սպիտակաջուր I և Շրվականի դամբարանադաշտերը ԼՂՀ Քաշաթաղի շրջանում²: Նույն երևույթն ամենայն հավանականությամբ առկա է Փոքր Մասիսի գագաթին, որտեղ հայտնաբերվել են այսպես կոչված «հսկաների դամբարանները»՝ ծ. մ. մոտ 3900 մ բարձրության վրա³:

Բլրի լանջ. Դամբարանադաշտերը հաճախ տարածվել են նաև բլրի լանջերին, ինչն ակնհայտ է Կերենի, Անգեղակոթի, Աղվանիի, Ջոջ Դարի⁴, Քանազեղի⁵, Գեստակ Բուլաղի և Խազախաչի⁶ դամբարանադաշտերում: Դամբարանադաշտի տեղադրությունը լանջերին կամ դարավանդներին կարող էր պայմանավորված լինել գագաթին բնակատեղիի առկայությամբ: Այսպիսի երևույթ հավաստված է Ծովակի ամրոցին կից դամբարանադաշտում, որը տեղադրված է բլրի լանջին գտնվող բնական ամֆիթատրոնի վրա⁷, (հմմտ. նաև Խնձորեսկի և Շաղատի դամբարանադաշտերը)⁸: Բլրի լանջին կամ դարավանդին են տեղադրված նաև Ուջանի հյուսիսային

¹ Հետազոտությունը՝ Ն. Ավետիսյան, Ա. Բորիսյան, Ա. Գնունի, Գ. Սարգսյան:

² Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ.**, Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը, Երևան, 2015, էջ 88:

³ Տե՛ս Протоколы подготовительного комитета V археологического съезда в Тифлисе, М., 1879, с. 32, 39, 49: Փոքր Մասիսի գագաթին գտնվող կառույցների մասին առաջին հաղորդումներից է Ֆ. Պարրոտը նկարագրելով 1-2 մ. տրամագծով քարե շրջաններ: Սակայն նա, հենվելով այստեղ գտնված XIII դ. արաբատառ արձանագրությունների, ինչպես նաև տեղացի հայ բնակչության հաղորդումների վրա, այս կառույցները վերագրում է համեմատաբար ուշ մինչև իսկ իր ժամանակաշրջաններին (**Պարրոտ Ֆ.**, Դորպատից՝ Արարատ, Երևան, 1990, էջ 98): Նույն տեղեկություններն է XX դարի սկզբին հաղորդում Ա. Իվանովսկին, որը, սակայն, ձեռնպահ է մնում այս կառույցները թվագրելուց (**Ивановский А.**, По Закавказью // «Материалы по археологии Кавказа», т. VIII, М., 1911, с. 34): Մ. Թաղիադյանը գրում է հսկա քարերով կառուցված շինությունների մասին (**Թաղիադյան Մ.**, Ուղևորություններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, 1975, էջ 51): Հայր Ղ. Ալիշանը առաջարկում է զանազանել այս երկու տիպի՝ (մեծ և փոքր) կերտվածքները, վերջիններիս համար հնարավոր համարելով ուշ թվագրումը, իսկ մեծերի առումով, ինչպես և Մ. Թաղիադյանը հիշատակում է «օղուզի (հսկայի) գերեզման» ժողովրդական բնորոշումը (**Ալիշան Ղ.**, Այրարատ, բնաշխարհի Հայաստանեայց Վեներտիկ, 1890, էջ 486-487): Վերջին տարիներին հրապարակված լուսանկարները հաստատում են դամբարանադաշտի գոյության վարկածը (**Գրիգորեան Ա.**, նշվ. աշխ., էջ 25):

⁴ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 90:

⁵ Տե՛ս **Արեշյան Գ.**, Պահպանական պեղումներ Քանազեղում, «ՀԽՍՀ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ», Երևան, 1981, էջ 2:

⁶ Տե՛ս **Լալայեան Ե.**, նշվ. աշխ., էջ 184-186:

⁷ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 98:

⁸ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 89:

մասում՝ Բքոյի գեղ տեղամասից մինչև Չյանբերդ ձգվող դամբարանները¹:

Սարահարթ. Դամբարանադաշտերը կարող են գտնվել նաև սարահարթերին: Այսպես, ընդարձակ սարահարթի վրա են Արվականի², Նորավանի, Մոզի³, Ծղուկի, Ելփինի⁴ Սևասարի, Մուրադ թափայի, Այլադի⁵, Շահումյանի⁶ դամբարանադաշտերը: Հարթ հրվանդանաձև գագաթի վրա են տեղադրված Քանագեղի⁷ և Բերդիկի⁸ դամբարանադաշտերը:

Ճանապարհ և կիրճ. Առավել հազվադեպ դամբարաններն ի հայտ են գալիս հնագույն ճանապարհների կամ կիրճերի երկայնքով: Նման մի դեպք է արձանագրված Դարբանդի դամբարանադաշտում⁹:

Ջրային ավազան. Ջրային ավազանի առկայությունը մեծ դեր է խաղում դամբարանադաշտերի տեղադրության պարագայում: Այսպես, գետահովտում էր տեղադրված Գետաբակի դամբարանադաշտը: Դամբարանադաշտեր էին տեղադրված նաև Խաչենագետի և Վարանդայի գետահովիտներում¹⁰: Երկու գետերի՝ Արծվաջրի և նրա վտակ Սառնաջրի միջագետքում են գտնվում Երկու ջուր դամբարանադաշտը, Աստղաձոր և Աշթիչի գետերի ափերին՝ Վանքի դուռ 2 և Լեռնակերտ¹¹, Գավառագետի ափին՝ Մրթթի ձոր դամբարանադաշտը¹²: Միսիանի և Ախլաթյանի դամբարանադաշտերը տեղադրված են Որոտանի և նրա վտակ Այրիի աջ ափին¹³: Սևանա լճի նախկին ցամաքային գծի երկայնքով են ձգված Ադիամանի, Ծովինարի, Ծովակ 2 դամբարանադաշտերը, ընդ որում՝ առավել մեծ դամբարանները կենտրոնացած են հենց լճի ափին¹⁴: Նույն տրամաբանությամբ են տեղադրված նաև Մեծ Ալ լճի ավազանի դամբարանադաշտերը: Այստեղ ևս առավել մեծ դամբարանաբլուրները գտնվում են լճափին: Հարկ է նշել դրանցից մեկը, որի վրա

¹ Հետազոտությունները՝ Լևոն Մկրտչյան:

² Տե՛ս **Գնունի Ա., Խաչատրյան Գ.**, Նորահայտ հուշարձաններ Աղավն գետի վերնահոսանքում, «Հուշարձան», Զ, Երևան, 2010, էջ 55-56:

³ Տե՛ս **Xnkikyan O.**, Syuniq during Bronze and Iron Ages Barrington, 2002, p. 58:

⁴ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 90-91:

⁵ Հետազոտությունը՝ Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան, Ա. Գնունի, Գ. Սարգսյան:

⁶ Պեղումները՝ Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Ա. Թադևոսյան:

⁷ Տե՛ս **Արեշյան Գ.**, նշվ. աշխ., էջ 2:

⁸ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 89:

⁹ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 114:

¹⁰ Տե՛ս **Ивановский А.**, նշվ. աշխ., էջ 88, 146, 153:

¹¹ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 138, 157, 193:

¹² Տե՛ս **Փիլիպոսյան Ա.**, Պեղումներ Սևանի կոլեկտորի Նորատուսի հնավայրում // ՀՀ-ում 1989-1990, թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1991, էջ 31:

¹³ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բոբոխյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 94:

¹⁴ Տե՛ս **Լալայեան Ե.**, Նոր Բայագետ կամ Գեղարքունիք, նախապատմական շրջան // «ԱՀ», գիրք XIV, Թիֆլիս, 1906, էջ 32, 37, **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 116-114:

դրված էր ձկնակերպ վիշապաքար: Դամբարաններ են հաստատագրված նաև Սև լճի ափամերձ շրջանում¹: Ըստ ճանապարհորդների հաղորդումների՝ Փոքր Մասիսի գագաթին գտնվող դամբարանները տեղադրված էին լճափնյա շրջանում²:

Դամբարանադաշտերը կարող են տեղադրված լինել նաև ջրբաժանների երկայնքով: Այդպես են Շուռնուխի³ և Կերենի⁴ դամբարանադաշտերը:

Դամբարանադաշտի սահմանազատման խնդիրը

Բնական միջավայրը հաճախ ընկալվել է որպես դամբարանադաշտի խորհրդանշական սահման: Միննույն ժամանակ բնական սահմանը կարող էր ընդգծվել նաև պարսպաշարով: Այսպես, Բերդիկում դամբարանադաշտը եզերող ձորակի երկայնքով կառուցված է կիկլոպյան պարիսպ, որը փակվում է արևելքում⁵: Երկշար պարսպաշարով հյուսիսային կողմից սահմանազատվում է նաև Շահումյան-Նորակերտի երկրորդ դամբարանադաշտը (Էջմիածնի տարածաշրջան)⁶: Չորաց քարերում դամբարանադաշտը եզերող սահմանը ընդգծված է մենհիրների շարքով:

Եթե թվարկված օրինակներում արհեստական սահմանը միայն ընդգծում է բնականը, ապա Կապանի Շահումյանի դամբարանադաշտում այն հանդես է գալիս որպես ինքնուրույն գործոն: Պեղումների ընթացքում բացահայտվել է միաշար պարիսպ, որը եզերում է դամբարանադաշտը հյուսիսային և հյուսիսարևելյան կողմից⁷:

Որոշ դեպքերում որպես դամբարանադաշտի խորհրդանշական սահման կարող էր ընկալվել նաև ամրոցի պարսպագիծը, ինչպես արձանագրված է Օռվակ և Օռվինար ամրոցներում⁸: Ղ. Ալիշանը նշում է, որ թաղումները հաճախ տեղադրում էին պարիսպների վրա, ինչի պատճառով պարիսպների բուրգերը հաճախ անվանվում էին «մահարձան»: Այս համատեքստում հարկ է նշել Այրքի կիկլոպյան ամրոցի աշտարակին կից կառույցը, որը պայմանականորեն անվանվում է «միջանցքային դամբարան»⁹:

Սահմանազատման յուրատեսակ եղանակ է հայտնի Ծիծեռնավանքի ամրոցում, որի արևմտյան պարսպի արտաքին եզրին՝ դեպի դամբարանա-

¹ Հետազոտությունները՝ Հ. Ավետիսյան, Ա. Բորիսյան, Ա. Գնունի, Գ. Սարգսյան:

² Տե՛ս **Օնցիկեան Ա.**, Արարատ-Կովկաս, հ. I, Ֆրեզնո, 1917, էջ 143:

³ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 89:

⁴ Տե՛ս **Гнуня А.**, Новонайденный могильник в предгорьях Сюника // «Археология, этнология и фольклористика Кавказа», Тбилиси, 2011, с. 87:

⁵ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 89:

⁶ Հետազոտությունները Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան:

⁷ Տե՛ս **Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորիսյան Ա., Սարգսյան Գ.**, նշվ. աշխ., էջ 100:

⁸ Տե՛ս **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 98, 147:

⁹ Տե՛ս **Ալիշան Ղ.**, Հին Հաւատք կամ հեթանոսական կրոնք Հայոց, Վենետիկ, 1910, էջ 444, **Biscione R., Hmayakyan S., Parmegiani N.**, նշվ. աշխ., էջ 87:

դաշտ տանող ճանապարհին, գոհասեղան էր տեղադրված¹: Ուջանում Մոտկանի ամրոցից հյուսիս-արևմուտք տարածվող դամբարանադաշտը զատված է հարթակ-դարավանդներով, որոնք ավարտվում են աշտարակով և գոհասեղանով²:

Այս առումով մեծապես կարևորվում է դեպի դամբարանադաշտ տանող ճանապարհը, որը յուրատեսակ սահմանային անցում է, և ապահովում է այս ու այն աշխարհների միջև անցումը և երկբևեռ աշխարհի միասնությունը³: Այսպես, պետք է հիշատակել փաստորեն ուղենիշային ճանապարհ հանդիսացող քարաշարը, որը կապում էր Բերդիկի բնակատեղին և դամբարանադաշտը⁴: Էջմիածնի տարածաշրջանի Շահումյան-Նորակերտ հատվածում հարավ-հյուսիս ուղղվածությամբ արահետը, որի մի հատվածը ժայռափոր էր, կապում էր երկու դամբարանադաշտերը, որոնք իրարից առանձնանում էին ոչ բարձր բլրաշարով⁵:

Դամբարանադաշտերի կառուցվածքը

Դամբարանների տեղադրությունը: Այսօր կարելի է զատել դամբարանների տեղադրության երկու եղանակ՝ շարքերով և վերից վար (Կերեն, պեղումները՝ Ա. Գնունու): Շարքերով են տեղադրված Զագալուի, Պատշարի⁶, Նոյեմբերյանի Հարսնաքարի հողեր կոչվող դամբարանադաշտերը⁷: Լիսագորի դամբարանադաշտում դամբարանները շարքով բարձրանում էին բլուրն ի վեր՝ դեպի աշտարակատիպ շինություն⁸: Դամբարանները կարող էին տեղադրված լինել նաև վերից վար սկզբունքով: Այս եղանակը դիտարկվում է Կերենի դամբարանադաշտում, որտեղ առավել վաղ դամբարանի խցի պատը, փաստորեն, հենապատ էր ուշ դամբարանի համար⁹:

Դամբարանադաշտի միջուկի ձևավորումը. Կենտրոնը (միջուկը), փաստորեն, յուրատեսակ առանցք է, որի շուրջ ձևավորվում է սրբազործված տարածքը: Կենտրոնի դեր կարող էին խաղալ բնական տեղանքի տարրերը: Այսպես, Ծակ քարի և Խազախաչի դամբարանադաշտում այդպիսի կենտրոնի դեր էր խաղում անցքով ժայռը, որի շուրջ էլ տեղակայված էին դամբարան-

¹ Տե՛ս Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 100:

² Հետազոտությունները՝ Լ. Մկրտչյան:

³ Տե՛ս Невская Л., Семантика дороги и смежных представлений в погребальном обряде, Семантика текста, М., 1980, с. 230:

⁴ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյան, Ա. Գնունի:

⁵ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյան, Ա. Գնունի, Լ. Մկրտչյան:

⁶ Տե՛ս Լալայեան Ե., Նոր Բայազետ կամ Գեղարքունիք... // «ԱՀ», գիրք XV, էջ 186, նույնի՝ Նոր Բայազետ կամ Գեղարքունիք... // «ԱՀ», Գիրք XIV, էջ 6, 11:

⁷ Տե՛ս Չիլինգարյան Ս., Հարսնաքարի հողեր դամբարանադաշտը // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, թիվ 10, էջ 60:

⁸ Հետազոտությունները՝ Գ. Սարգսյան:

⁹ Տե՛ս Ավետիսյան Հ., Գնունի Ա., Բորոխյան Ա., Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 90:

ները¹: Ձոջ դարում և Գավառում թաղումային կառույցները կենտրոնացված են քարանձավի շուրջ²:

ստուգումը կատարում էր Մսեր Մսերյանցը: Հայոց լեզվի գիտելիքների ստուգման պատասխանատվությունը դրվել էր Մկրտիչ Էմինի վրա: Մեկ այլ ուշագրավ հանգամանք էր, որ ռուսերենի գիտելիքները խորացնելու համար սովորողներին առաջարկվել են Մմիոնովի հեղինակությամբ ռուսաց լեզվի դասագրքերը, որոնք պարտադիր են եղել նաև տեղի ռուսական դպրոցների համար: Փաստորեն, Լազարյան ճեմարանի առաջինից երրորդ դասարանների սաները պետք է ուսանեին ռուսական դպրոցների սովորողների համար նախատեսված դասագրքերով: Այսինքն՝ որևէ տարբերություն չի դրվել ռուսական դպրոցների աշակերտների և Լազարյան ճեմարանում ուսանողների միջև, թեպետ ռուսերենը նրանց համար մայրենի լեզու չէր: Ճիշտ է, այս հանգամանքը գուցե և զաղութատիրական երանգ ունի, սակայն քանի որ Արևելյան Հայաստանը փաստացի գտնվում էր Ռուսական կայսրության կազմում, ուստի ռուսերենի իմացությունը բավականին օգտակար կլիներ նրանց հետագա ծառայության ընթացքում: Չմոռանանք նաև, որ ռուսերենի թույլ իմացությունը կամ գրեթե անտեղյակությունը հայ բնակչության համար շատ խնդիրներ է ստեղծել, իսկ ռուս պաշտոնյաները ճարպկորեն օգտագործել են այդ հանգամանքը ի վնաս հայերի:

Նույն կերպ թվաբանությունը ուսանելիս Լազարյան ճեմարանի սովորողները պետք է առաջնորդվեին ռուսական դպրոցների առաջին-երկրորդ դասարանների համար նախատեսված Բուսսեյի, երրորդ դասարանում՝ Պերևոզչիկովի հեղինակած դասագրքերով: Փաստորեն, այստեղ ևս տարբերություն չի դրվել հայկական և ռուսական կրթություն ստացող աշակերտների միջև: Ավելին, այս սկզբունքն էր գործում նաև երկրաչափության, պատմության և ֆրանսերենի դասավանդման պարագայում, որտեղ ևս օգտագործվում էին ժամանակի հայտնի մասնագետների հեղինակած դասագրքերը: Ավելացնենք նաև, որ Լազարյան ճեմարանի սովորողների համար նախատեսված այս կանոնները պարտադիր էին բոլոր ազգությունների երեխաների համար: Այդ նկատառումներից ելնելով՝ Լազարյան ճեմարանի ղեկավարությունը սերտ համագործակցում էր Թիֆլիսի, Երևանի, Էջմիածնի, ինչպես նաև Ռուսաստանի հայաշատ քաղաքներ՝ Նոր-Նախիջևանի, Թեոդոսիայի, Աստրախանի և մյուս վայրերում գործող հայկական ուսումնարանների հետ, խնդրում, որ դիմորդները նախապես իրագեկ լինեն ճեմարանի կանոններին:

Կանոնագրքում հստակ պարտավորություններ էին սահմանված նաև ծնողների համար, որոնք ճեմարանի ընդունելության կանոններում ներկայացված էին առանձին հոդվածներով: Ի դեպ, սովորողների ընդունելության համար պարտադիր պայման էր նաև Մոսկվայում ապրող և իրենց համար երաշխավոր հանդիսացող ազգականի կամ բարեկամի առկայությունը: Եվ, վերջապես, սաների համար ևս մեկ սահմանափակում գոյություն ուներ. այն ուսանողները, ովքեր տարբեր պատճառներով ի վիճակի չեն եղել ավարտել ուսուցման ամբողջական դասընթացը կամ ավարտել են ընդամենը մեկ

դասընթաց, հետագայում գրկվում էին *Ճեմարանում* անվճար ուսուցում ստանալու իրավունքից: Կանոնակարգի 7-րդ կետը սահմանում էր նաև, որ այս և այլ նմանատիպ պատճառներով ուսումը ընդհատած սովորողների ծնողները պետք է պարտավորագիր գրեին նաև այն մասին, որ ճեմարանի ամբողջական դասընթացը չավարտելու պարագայում պարտավորվում էին սեփական միջոցների հաշվին լուծել հետդարձի ճանապարհաձախարհ: Կանոնագրքում հավելյալ պարտավորություն էր նախատեսվում ճեմարանի հոգևոր բաժնի ունկնդիրների համար. ծնողները պարտավորվում էին հետագայում չդիմել ճեմարանի ղեկավարությանը իրենց զավակներին հայկական եկեղեցիներում ծառայության անցնելու խնդրանքով:

Անկասկած, Լազարյան ճեմարանի անվճար ուսուցման համակարգ ընդունվելու համար սահմանված կանոնները արդարացի էին և նպաստավոր պայմաններ էին ստեղծում հիմնավոր և խոր գիտելիքներ ստանալու համար: Կանոնագիրքը հստակ պատասխանում է նաև այն հարցին, թե որտեղ էր թաքնված Լազարյան ճեմարանում ստացած խոր գիտելիքների գաղտնիքը: Պակաս կարևոր չէր նաև կանոնագրքում սոցիալական դրության շեշտադրումը: Այդ տեսակետից, կարծում ենք, որ դրանում տեղ գտած շատ դրույթներ օգտակար և կիրառելի կլինեն ներկայիս մեր կրթական հաստատությունների անվճար ուսուցման համակարգի համար. ի վերջո՝ կրթական բնագավառում կարևորը ոչ միայն գիտելիքներ հաղորդելն է, այլև այդ գիտելիքների յուրացումը և կրթության սոցիալական բաղադրիչի ապահովումը:

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՆՈՆՔ
ՎԱՍՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՅ ՁՐԻԱՎԱՐԺ ՈՐԴԵԳԻՐՔԸ
Ի ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

ԿԱՆՈՆՔ

Վասն ընդունելոյ Լազարեան ձրիավարժ որդեգիրքը, Հոգևորական և Նախակրթական բաժինների աշակերտքը:

Կառավարութիւնն Լազարեան Ճեմարանի Արևելեան լեզուաց հարկաւոր է համարում հասուցանել ՚ի գիտութիւն Ռուսաստանի մէջ բնակուող հայոց, որք ցանկան իւրեանց որդիքը կամ ազգականքը տեղաւորել ՚ի թիւս, ա. Լազարեանց ձրիավարժ որդեգրաց, բ. Հոգևորական, և գ. Նախակրթական բաժինների աշակերտաց, թէ՛ այսուհետև ուրիշ կերպով չեն կարող մանկունք ընդունիլ ՚ի յիշատակեալ կարգս ձրիավարժ աշակերտաց, բայց միայն՝ պահպանելով հետագայ պայմանքը և կանոնքը, որք են.

Ա. Խնդիր տալոյ ժամանակին վասն ընդունելոյ ՚ի թիւս այնպիսի աշակերտաց՝ պարտական է յարակցել վկայական թուղթքը վասն ծննդեան և մկրտութեան, վասն պատուաստի ծաղկի, վասն կոչման ծնողաց, և վասն չքաւորութեան. Իսկ հարկատու անձինք՝ բաց յայսմանէ պարտական են առաջի առնել վկայական թուղթքը արձակման յիւրեանց հասարակութեանց:

Բ. ՚Ի Ճեմարան մտանողաց ի սկզբան անդ ուսումնական տարւոյն պահանջուում են հետևեալ տեղեկութիւնքն.

Վասն մտանելոյ յառաջին դասատուն. ՚ի Կրօնական ուսմանց՝ կանոնադոյն աղօթքներ, Հանգանակ Հաւատոյ, և տասնաբերայ պատու իրեանք Աստուծոյ: Կարդալ և գրել Հայերէն, Ռուսերէն և Գաղղիաերէն: Չորս առաջին կանոնկք թուարանութեան (четыре первые действия арифметики):

Վասն մտանելոյ յերրորդ դասատուն. ՚ի Կրօնական ուսմանց՝ Համառօտ Քրիստոնէական վարդապետութիւն: ՚Ի Հայոց լեզուէ՝ գլխաւոր ձևքն փոփոխական մասանց բանի, ձևք հոլովմանց անուանց և դերանուանց, և խոնարհմանց կանոնաւոր բայից: ՚Ի Ռուսաց լեզուէ՝ Քերականութեան սկզբունք: ՚Ի Գաղղիական լեզուէ՝ Ձևք խոնարհմանց (բայից), ՚ի Թուարանութենէ՝ այն կանոնքն՝ որ կոչուում են Именнованные числа, простые и десятичный дробь. Յաշխարհագրութենէ՝ Ընդհանուր տեսութիւն (Общий обзор).

Վասն մտանելոյ յերրորդ դասատուն, ՚ի Կրօնական ուսմանց՝ Սրբազան Պատմութիւն Աւետարանի: ՚Ի Հայոց լեզուէ՝ առաջին մասն քերականութեան: - ՚Ի Ռուսաց լեզուէ՝ առաջին մասն քերականութեան: ՚Ի Գաղղիական լեզուէ՝ առաջին մասն քերականութեան, գլխավոր կանոնք Համաձայ-

նութեան, թարգմանութիւն դիրքիմաց հատուածոց: - Ի Մատենատիկայէ՝ ամբողջ թուաբանութիւն: Համառօտ ընդհանուր Պատմութիւն:

Վասն մտանելոյ՝ ՚ի չորրորդ դասատուն. ՚ի Կրօնական ուսմանց՝ Առակախօսութիւնք Քրիստոսի, և Պատմութիւն Նահապետաց, Մարգարէից, Առաքելոց և այլոց երևելի անձնաց, քաղեալք ՚ի Հին և Նոր Կտակարանաց: Ի Հայոց լեզուէ՝ Համաձայնութիւն: Ի Ռուսաց լեզուէ՝ Համաձայնութիւն: Ի Գաղղիական լեզուէ՝ մանրամասն տեղեկութիւն Համաձայնութեան: Թարգմանութիւն ՚ի Գաղղիական լեզուէ՝ ՚ի Ռուս: Ի Մատենատիկայէ՝ մանրամասն տեղեկութիւն զթուաբանութենէ (Подробное знание арифметики). Յերկրաչափութենէ (из геометрии) մինչ ցայն մասնը՝ որ կոչուում է Пропорциональные линии. Ընդհանուր պատմութիւն, Ռուսաց պատմութիւն համառօտ: Աշխարհագրութիւն Եւրոպիոյ.

Ծանօթ. Վերոյիշեալ տեղեկութիւնքն չեն պահանջըրում յայն աշակերտաց, որք ցանկան մտանելու ՚ի Նախակրթական բաժինը, որոյ մէջ ընդունուում են մանկունք յ8 տարեկանէն մինչ ց10 տարեկան, առանց հարցաքննութեան:

Դասական մատեանք.

Ա. Կրօնական ուսմանց. Հաւատապատում՝ Մ. Սսերյանց: Քրիստոսապատում՝ նոյն հեղինակի: Առակառօսութիւնք Քրիստոսի ՚ի Քրիստոսապատում՝ տետրակէն. Նոյն հեղինակի: Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ. Նոյն հեղինակի:

Բ. Հայոց լեզուի. Քերականութիւն Հայկական լեզուէ: Մ. Էմին

Գ. Ռուսաց լեզուի. Смирнова. Учебник русского языка, курс первый: Վասն առաջին դասատան, курс второй վասն երկրորդ դասատան, և վասն երրորդ դասատան Практическая русская грамматика, часть III.

Դ. Մատենատիկայի. Վասն առաջին դասատան Руководство к арифметике Буссе, часть I; վասն երկրորդ դասատան того же руководства часть II; վասն երրորդ դասատան Перовщикова. Гимназический курс чистой Математики, часть III, Геометрия.

Ե. Աշխարհագրութեան. Ободовский. Всеобщая география; учебная книга.

Զ. Պատմութեան. Վասն երկրորդ դասատան՝ Берте. Всеобщая история в рассказах для детей; վասն երրորդ դասատան՝ Руководство к первоначальному изучению Русской истории Устрялова.

Է. Գաղղիական լեզուի. Վասն առաջին և երկրորդ դասատանց՝ Firmin. Le guide de l'enfance ou cours pratique de la langue française à l'usage des commerçants; վասն երրորդ դասատան՝ Noël et Chapsal, abrégé de la grammaire française.

Ը. Միայն այն հայազգի մանկունքն կարող են ընդունուիլ ՚ի վերոյիշեալ յերիս կարգս ձրիավարժ աշակերտաց ճեմարանի. որք պատրաստուած են համաձայն վերոյգրեալ ցուցակի: Վասն հաստատապէս հասանելոյ այս նպատակիս՝ Կառավարութիւնն ճեմարանի դիմում է այսու առ տեղական ուսումնարանս Հայոց, որք գտնուում են ՚ի Տիփլիս, յԵրևան, յԷջմիածին, ՚ի

Նոր նախիջևան, ՚ի Թեոդոսիա, յԱստրախան և յայլ քաղաքս, խնդրելով, որ քննեն համաձայն Ճեմարանի ցուցակին զկոչուած աշակերտացուքը (կանդիդատքը) ՚ի մասին ունելոյ նոցա ըստ բաւականին այն հմտութիւնքը, որք պահանջըւում են վասն մտանելոյ չորս դասատանց միոյն մէջ: Վասն որոյ

Դ. Ծնողք այն կանդիդատից՝ որք պիտի հաշուին ՚ի թիւս ձրիավարժ որդեգրաց, պարտական են, յետ ստանալոյ գրաւոր վճռագիրը ՚ի Կառավարութենէ Ճեմարանի, յառաջ քան զուղևորիլը զնոյն կանդիդատ ՚ի Մոսկվա, ներկայացուցանել զնոսա ՚ի նախաքննութիւն յիշեալ ուսումնարանաց մէջ, և չուղարկել զնոսա ՚ի Ճեմարան քանի որ չեն ստացած յուսումնարանաց այն բաւարար վկայութիւնքը, զորս պարտական են նոքա առաջի առնել Ճեմարանի Կառավարութեան յետ հասանելոյ ՚ի Մոսկվա: Առանց այս վկայականաց ո՛չ որ իրաւունք մտանելու ՚ի թիւս ձրիավարժ որդեգրաց Ճեմարանի:

Ե. Կոչուած կանդիդատքն ՚ի հաշիւ ձրիավարժ որդեգրաց յիշեալ երից կարգաց, յետ հասանելոյ ՚ի Մոսկվա, ուրիշ կերպիւ չեն կարող ընդունիլ ՚ի Ճեմարան, եթէ ո՛չ երաշխաւորութեամբ Մոսկվայի մէջ գտանուող անձին, այսինքն՝ ազգականի կամ բարեկամի, որ գրով կը պարտաւորուի ընդունիլ նմա արձակուիլ ՚ի Ճեմարանի վասն օրինաւոր պատճառաց յառաջ քան զաւարտելն զուսման ընթացքը:

Զ. Որպէս ձրիավարժ աշակերտաց՝ թէ նոքա, որք կարձակուին ՚ի Ճեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման ընթացքը, և թէ նոքա, որք կաւարտեն զուսման ընթացքը, ո՛չ ինչ դրամական օգնութիւն ստանալու չեն վասն վերադառնալոյ ՚ի հայրենիս: Եւ այսու պատճառաւ:

Է. Երբ որ կը մտանեն նոքա ՚ի Ճեմարան, նոցա ծնողքն կամ ազգականքն պարտական են միւս վկայականաց հետ ՚ի միասին առաջի առնել նոյնպէս գրաւոր պարտաւանդութիւն, որ եթէ պատահի իւերանց որդւոց կամ ազգականաց արձակուիլ ՚ի Ճեմարանէ յառաջ քան զաւարտելն զուսման ընթացքը կամ յետ այնորիկ՝ վասն որպիսի և իցէ՝ պատճառաց, ինքեանք ծնողքն կամ ազգականքն՝ ունին իւերանց վերայ առնուլ զճանապարհական ծախքը, իսկ՝ որք կըրցանկան զիւրեանց որդիքը կամ ազգականքը, տալ ՚ի շարս աշակերտաց Հոգևորական Բաժնի, նոքա՝ բաց յայնմանէ, պարտական են առաջի գրաւոր պարտաւանդութիւն, թէ ինքեանք երբէք անհանգիստ առնելու չեն զՃեմարանի կառավարութիւնը խնդիրներով վասն ազատ կացուցանելոյ զիւրեանց որդիքը կամ ազգականքը ՚ի ծառայելոյ Հայոց եկեղեցիներում, հոգևոր դպրոցներում և Առաջնորդական ատեաններում:

Ը. ՚Ի շարս ձրիավարժ Լազարեան որդեգրաց ընդունուում են առաւելապէս չքաւոր **Հայ ազնուականաց** որդիքն:

Москва, 1860.- в типографии лазаревского института восточ. язык.

Айказ Оганесян – *Заслуживающий внимания документ из архива Лазаревых*

В архиве Лазаревых (фонд 108, дело 96, хранящееся в Матенадаране имени Месропа Маштоца) наше внимание привлекла книжка, помещенная в этом деле. Она была напечатана на армянском и русском языках и называлась «Правила о приеме бесплатных воспитанников в Лазаревский институт восточных языков». В статье анализируются правила и условия приема на бесплатное обучение Лазаревского института, констатируется, что эти правила не только были справедливы в своей основе, но и создавали благоприятные условия для основательного обучения и приобретения глубоких знаний в Лазаревском институте. В статье также дается ответ на вопрос о том, в чем заключается секрет глубоких знаний в Лазаревском институте. Не менее важным было также акцентирование социального положения учащихся.

Haykaz Hovhannisyan – *A Notable Document from the Lazarev Archive*

Our attention was attracted by a book found in the Lazarev archive (fund 108, case 96), which is kept in the Matenadaran after Mesrop Mashtots. It was printed in the Armenian and Russian languages and is called “Rules for the Free Admission of Pupils to the Lazarev Institute of Oriental Languages”. The article analyzes the rules and regulations for the admission to the free-of-charge education in the Lazarev Institute; it is stated that these rules were not only fair in their basis, but also created favorable conditions for a thorough education and for gaining a profound knowledge in the Lazarev Institute. The article also reveals the secret of gaining a profound knowledge in the Lazarev Institute. Equally important was also the emphasis on the social status of students.

Վանիկ Վիրաբյան, Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 830 էջ

Փաստ է, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հայ ժողովուրդը ևս մեկ անգամ ենթարկվեց տարածաշրջանում միաժամանակ ծագած աննախադեպ ու բազմաբնույթ փորձությունների: Դրանց թվում զարգացումների ներքին հակասականությամբ առանձնացան հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում ծավալված գործընթացները, որոնց լուսաբանման է նվիրված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանիկ Վիրաբյանի գրախոսվող մենագրությունը: Վստահաբար կարելի է արձանագրել, որ այն ամենահաջող փորձերից է՝ խնդրո առարկա ժամանակահատվածում սույն կնճռոտ հիմնահարցի լուսաբանման ճանապարհին: Շարադրված է գիտական և տեսական պատշաճ մակարդակով, բաղկացած է նախաբանից, յոթ գլխից, ամփոփումից, անձնանունների, տեղանունների, ինչպես նաև օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկերից:

Հետամուտ լինելով ծավալված գործընթացների բացահայտմանը՝ Վ. Վիրաբյանը մանրակրկիտ լուսաբանել է հայ-վրացական ռազմաքաղաքական փոխհարաբերություններում պատմական իրավիճակի թելադրանքով պայմանավորված որոշակի հիմնախնդիրների ծագման և հետագա զարգացման ընթացքը 1918-1921 թթ.: Մենագրությունն ունի արդիական հնչեղություն թե՛ գիտական և թե՛ գործնական ու կիրառական առումներով: Հայաստանի երրորդ Հանրապետության վարած արտաքին քաղաքականության տարբեր ոլորտներում և հատկապես տարածաշրջանային հարևանների հետ հարաբերություններում տեղ գտած հիմնախնդիրները ինչ-որ չափով ժառանգաբար հասել են մինչև մեր օրերը: Անտարակույս հարկ է նաև նկատել, որ այսօր, երբ իր անկախ պետականությունը կերտող հայ ժողովրդի առջև ծանոթում են հարևանների հետ հրատապ լուծումներ պահանջող բազմաբնույթ խնդիրներ, անհրաժեշտություն են Վ. Վիրաբյանի քննարկած ժամանակահատվածում նրանց հետ փոխհարաբերություններում հայկական կողմի դրական փորձի, ինչպես նաև սխալների և վրիպումների վերհանումն ու գիտական վերլուծությունը:

Օգտագործելով մեծ քանակությամբ արխիվային նորահայտ վավերագրեր և տպագիր սկզբնաղբյուրներ՝ փաստաթղթերի ժողովածուներ, ժամանակակիցների հուշագրություններ, մամուլի հրապարակումներ, ինչպես

նան հայերեն և օտարալեզու գիտական գրականություն՝ հեղինակին հաջողվել է սույն թեման ենթարկել պատմաքննական վերլուծության և առանձնացնել ու համակարգել գլխավոր հարցերը, գիտական հանրությանը ներկայացնել պատմագիտական նորույթ պարունակող աշխատություն:

Վ. Վիրաբյանի ուշադրությունից չեն վրիպել պատմակեղծարարներ Գուրամ Մարխուլիայի, կանադացի կովկասագետներ Է. Անդերսենի և Գ. Էզզեյի՝ Լոռի-Ախալքալաքի, Բորչալուի տարածքային պատկանելության խնդրում առաջադրած ստահող, գիտական առումով միանգամայն հիմնագուրկ տեսակետները:

Գրախոսվող աշխատության մեջ գիտական պատշաճ մակարդակով հեղինակը ներկայացրել է 1918 թ. դեկտեմբերյան ռազմական բախմանը նախորդած ժամանակահատվածում հայ-վրացական դիվանագիտական առճակատման պատճառները, սահմանային-տարածքային վիճարկման առարկա դարձած հիմնախնդիրները: Նա պատմաքննական գնահատական է տվել այն հարցերին, թե ինչու, այնուամենայնիվ, երկու դրկից երկրների կառավարություններին գործնականում չհաջողվեց սկզբունքային համաձայնության գալ և կանխել չարաբաստիկ, անդրկովկասյան երկու պետությունների համար ծանրագույն տնտեսաքաղաքական հետևանքներ առաջացրած այդ պատերազմը: Վ. Վիրաբյանը հարուստ արխիվային փաստաթղթերի և այլ վավերագրերի ուսումնասիրությամբ հանգում է այն եզրակացության, որ հայ-վրացական դիվանագիտական հակամարտության անմիջական շարունակությունը վրացական իշխանությունների և զորամասերի սանձարձակություններն էին Լոռվա հայկական գյուղերում, հատկապես Ուզունլար-Օծունի դեպքերը, որոնք վերաճեցին ապստամբության: Նա կարծում է, որ հենց դրանք դարձան հայ-վրացական պատերազմի ազդակն ու դրդապատճառը: Վ. Վիրաբյանի բավականին համոզիչ փաստարկմամբ՝ ՀՀ կառավարությանը չհաջողվեց խուսափել իր համար խիստ անցանկալի պատերազմից, քանզի հայկական կողմի խաղաղասիրական ռազմավարությունը բախվեց Վրաստանի անզիջում և կոշտ դիրքորոշմանը: Ստեղծված փակուղային ռազմաքաղաքական իրավիճակում, երբ սպառվեցին պատերազմը կանխելու բոլոր խաղաղ միջոցները, Դրոն հարկադրված էր զորք մտցնել Լոռի՝ հայկական բնակչությանը պաշտպանելու մտադրությամբ (էջ 62-312):

Հետազոտության հիմնական անվիճելի գիտական նորույթը քննարկվող պատմական ժամանակահատվածում իրենց անկախությունը նոր վերագտած Հայաստանի և Վրաստանի միջև 1918 թ. թեկուզ և կարճատև, սակայն հետևանքների առումով տարածաշրջանային էական փոփոխությունների պատճառ դարձած, հայ-վրացական 1918 թ. դեկտեմբերյան երկշաբաթյա պատերազմի նախօրեին, զինված առճակատման ընթացքում և դրանից հետո երկու երկրների բարդ ու խճճված ռազմաքաղաքական հարաբերությունների մանրամասն ու ամբողջական լուսաբանումն է: Ուսումնասիրությունը սկսելով ռուսական կայսրության փլուզումից և անդրկովկասյան

անկախ պետականությունների ստեղծումից՝ Վ. Վիրաբյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել այդ պատերազմի ծագման պատճառների և ընթացքի մանրակրկիտ վերլուծությանը, որոնց թվում առանձնացրել է Անտանտի դաշնակից երկրների՝ Հայաստանի տարածաշրջանում ծավալած գերազանցապես շահամետ ու սադրիչ գործունեությունը: Նա վկայակոչում է բազմաթիվ վավերագրեր, որոնք փաստում են վրացական կողմի նախահարձակ լինելու հանգամանքը այդ հակամարտության ժամանակ (էջ 313-469):

Հեղինակը արժևորել է նաև հայ և վրաց քաղաքական ուժերի, կուսակցությունների, խորհրդարանների դիրքորոշման խնդիրները պատերազմին և խաղաղությանն առնչվող հարցերում: Վկայակոչելով բազմաթիվ փաստեր՝ նա եզրահանգում է, որ եթե Հայաստանում իշխել են խաղաղասիրական և պատերազմի արհավիրքի կանխման ձգտումները, ապա վրացական խորհրդարանում ռազմատենչ ելույթները գործնականում անհնարին են դարձրել երկու կողմերի միջև ցանկալի համաձայնության ձեռքբերումը սահմանազատման և արդեն սկսված ռազմական բախման կանխարգելման խնդրում: Հետևանքները հայտնի են. Լոռու Չեզոք գոտու ստեղծում և հակամարտության հետագա խորացում թե՛ տնտեսական և թե՛ դիվանագիտական ոլորտներում (էջ 469-511):

Անդրադառնալով հայկական կողմի համար հաղթական պատերազմի արդյունքներին՝ հեղինակը նկատում է, որ վիճելի տարածքային հարցերը հաշտության համաձայնագրի կնքումից հետո ևս մնացին անփոփոխ գերազանցապես Հայաստանի Հանրապետության դաշնակից Անտանտի երկրների և Մեծ Բրիտանիայի սեփական շահերի սպասարկմանը միտված գործելակերպի հետևանքով: Տարածաշրջանում անգլիական ազդեցության տարածման նպատակով Հայաստան-Վրաստան ռազմաքաղաքական հարաբերություններում մշտապես բարդություններ ստեղծելուն միտված բրիտանական ռազմավարությունը թույլ չտվեց Հայաստանին սահմանային-տարածքային հարցերի լուծման հիմնախնդրում ունենալ քիչ թե շատ շոշափելի արդյունքներ (էջ 511-556, 574-594):

Վ. Վիրաբյանը, համակողմանիորեն ուսումնասիրելով նախ միջհամայնքային, իսկ այնուհետև հայ-վրացական միջպետական դիվանագիտական, ռազմաքաղաքական հարաբերությունները, դրանցում երկու կողմերի քաղաքական տարբեր ուժերի որդեգրված սկզբունքներն ու խնդրո առարկա հիմնահարցով պայմանավորված գործընթացներում նրանցից յուրաքանչյուրի դերակատարությունը, ժամանակագրական հաջորդականությամբ լուսաբանել է Լոռու Չեզոք գոտու, Բորչալուի և Հայաստանի ու Վրաստանի սահմանատարածքային սահմանազատման խնդիրների հետ սերտորեն առնչվող Ջավախքի, Ախալքալաքի, Արդահանի գավառների պատկանելության շուրջ ընթացող ռազմաքաղաքական հակամարտության տարաբնույթ զարգացումները (էջ 594-625):

Մենագրության շահեկան առանձնահատկություններից է, որ հեղինակը սեփական ժողովրդի պատմության՝ հարուստ իրադարձությունները մատու-

ցում է գիտական օբյեկտիվության խստիվ պահպանմամբ, հակամարտող կողմերի դիրքորոշումների, տեսակետների անկողմնակալ վերլուծությամբ և համադրմամբ: Աշխատանքին ուրույն գիտական որակ է հաղորդում նաև այն, որ քննարկվող հիմնահարցի առնչությամբ անդրկովկասյան երկու հարևան նորանկախ պետությունների իշխանական բարձրագույն օղակների իրականացրած քաղաքականությունը լուսաբանված է հնարավորինս ստվարածավալ փաստական նյութի հիման վրա:

Վ. Վիրաբյանը համոզիչ կերպով հիմնավորել է այսպես կոչված վիճելի տարածքների հարցում վրացական իշխանությունների վարած ոչ կառուցողական, անթաքույց նվաճողական բնույթը: Փաստերի վերլուծության շնորհիվ նա հաստատել է այն տեսակետը, որ չնայած Վրաստանի և Ադրբեյջանի միջև մասնավորապես տարածքային հարցերում առկա էին լուրջ հակասություններ, այդուհանդերձ հատկապես տարածքային սահմանազատման հարցերում նրանք միշտ՝ գաղտնի թե բացահայտ, միասնաբար էին գործում հայերի դեմ (էջ 557-573):

Քննարկվող հիմնահարցի մեկնաբանությունը նա իրականացրել է միայնակ սերտորեն փոխկապակցված երկու գլխավոր հարթություններում ծավալված գործընթացների լուսաբանմամբ: Առաջինը երկու դրկից նորանկախ պետությունների՝ գերազանցապես իրադարձությունների սրբնթաց զարգացումներով ուղեկցվող փորձություններին ինչ-որ կերպ դիմագրավելու նպատակով պարտադրված քայլերի լուսաբանում-վերլուծությունն է: Հիմնավորված է, որ այդ հարթությունում, որը ձևավորվել էր ժողովրդական կամ ավելի ճիշտ՝ երկու ժողովուրդների միջհամայնքային դիվանագիտության՝ վաղ ժամանակներից գոյություն ունեցած կարծրատիպերի մակարդակով իրականության ըմբռնման հենքի վրա, զարգացումները կրում էին համեմատաբար մակերեսային բնույթ և գերազանցապես հիմնված էին ազգային շահերի ոչ լիարժեք ընկալումների վրա: Հեղինակը հիմնավորում է, որ նման մոտեցումը հատկապես հատուկ էր վրացական կողմին, որն անգամ բացառեց ՀՀ կողմից առաջարկվող սահմանավեճի լուծման փոխզիջումային տարբերակները և լարվածությունը պահպանեց ընդհուպ մինչև երկու հանրապետությունների խորհրդայնացումը և Լոռու վերամիավորումը մայր հայրենիքին՝ ՀԽՍՀ-ին, 1921 թվականին:

Վ. Վիրաբյանը հիմնավորել է նաև, որ հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների բնույթը, ընթացքն ու լուծման հնարավոր տարբերակները կանխորոշող գործընթացները ավելի խորքային էին, իսկ դրանց դերակատարները բացառապես արտաքին ուժերն էին, գլխավորապես մեծ տերությունները, որոնց թվում իր ակտիվությամբ Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Գերմանիային չէր զիջում ամեն գնով երբեմնի կայսրության վերականգնմանը ձգտող Խորհրդային Ռուսաստանը: Վերջինիս ձեռնարկած նպատակային և հետևողական գործողությունների հանդեպ, ինչպես ապացուցեցին հետագա գործընթացները, անդրկովկասյան նորաթուխ պետու-

թյունները կատարելապես անգոր գտնվեցին:

Անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին՝ Վ. Վիրաբյանը փաստում է, այն հավուր պատշաճի ուշադրության չարժանացավ Հայաստանի առաջին Հանրապետության իշխանությունների կողմից, որոնք հնարավորություն չունեցան հետևողական գործնական քայլեր ձեռնարկելու խնդրին հայանպաստ լուծում տալու ուղղությամբ:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության նկատմամբ թուրքական կրկնվող ոտնձգությունների պատճառով, ինչպես նաև Վրաստանի հաղորդակցական ուղիներից օգտվելու հնարավորությունները չնվազեցնելու նպատակով Հայաստանի համար չափազանց կարևոր էր Վրաստանի Հանրապետության հետ հնարավորինս բարիդրացիական հարաբերությունների պահպանումը: Հեղինակը հիմնավորել է, որ ջավախքահայության հարցը թերևս առավել ակնհայտորեն, քան հայ-վրացական տարածքային մյուս խնդիրները և մասնավորապես Բորչալուի հիմնահարցը, դարձավ Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանման ժամանակի պահանջի պատանդը:

Բազմապլան հետազոտության մեջ քննարկված է նաև 1920 թ. հայ-վրացական ռազմապաշտպանական հնարավոր դաշինքի հարցը: Վ. Վիրաբյանը շեշտում է, որ դա ի սկզբանե մեռելածին գաղափար էր, քանզի Վրաստանին և այդ հարցում նրան արդեն միացած մուսավաթական Ադրբեջանին նման դաշինքի ստեղծումը նախ և առաջ անհրաժեշտ էր Հայաստանի Հանրապետության դաշնակցին՝ Դենիկինի կամավորական բանակին դիմակայելու նպատակով: Նա փաստերի համադրմամբ պաշտպանում է այն տեսակետը, որ ստեղծված պայմաններում Հայաստանը բնականաբար պետք է մերժեր նման ըստ էության հակառուսական ճակատ ձևավորելու գաղափարը (էջ 625-657):

Վ. Վիրաբյանի աշխատանքը եզրափակվում է Առաջին հանրապետությունից խորհրդային ժամանակահատվածին անցման շրջանի իրողությունների պատմաքննական վերլուծությամբ: Նա վերհանում է նոր, բոլշևիկյան ռազմավարության հիմքերը և Լոռում ապստամբության կազմակերպման կամ հրահրման գործողությունները, որոնք ձեռնառու եղան ՀԽՍՀ իշխանությունների համար տարածքային վեճը լուծելու առումով: Բոլշևիկյան Մոսկվան Լոռվա սահմանավեճը և հայ-վրացական բախումնալից ռազմաքաղաքական իրավիճակը շաղկապեց իր կողմից պարտադրված խնդրի հանգուցալուծման՝ Վրաստանի անհապաղ խորհրդայնացման հետ, ինչն ի վերջո հանգեցրեց այդ պահին Լոռու հարցը հոգուտ Հայաստանի վճռելուն:

Կարծում ենք, որ Վ. Վիրաբյանի երկար տարիների անխոնջ աշխատանքի արգասիք այս մեծածավալ մենագրությունն իր արժանի տեղը կգտնի հայ պատմագիտության մեջ: Այն լուրջ և արժեքավոր ներդրում է Հայաստանի առաջին Հանրապետության և Խորհրդային Հայաստանի առաջին տարիների պատմության ուսումնասիրության ասպարեզում:

ԷՂՈՒԱԼԴ ՊՈՂՈՍՅԱՆ

Անի Սարգսյան, Ալեքսանդր Սաֆարյան, Լուսինե Սահակյան,
Օսմաներենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 324 էջ

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոսները Հայաստանում առաջին անգամ հրատարակել են օսմաներենի դասագիրք, որը հնարավորություն է ընձեռում թե՛ ուսանողներին և թե՛ թուրքագետներին տիրապետել այդ լեզվին: Օսմաներենի կարևորությունը հայրենական թուրքագիտության համար դժվար է գերազնահատել, քանզի հայ ժողովրդի պատմության մի զգալի ժամանակաշրջանն ուղղակիորեն առնչվում է Օսմանյան կայսրության պատմությանը:

Օսմաներենի իմացությունը կարևոր է հատկապես Հայոց ցեղասպանության ավելի խոր և համակողմանի ուսումնասիրության համար, քանի որ օսմանյան արխիվներում պահվում են տասնյակ հազարավոր փաստաթղթեր, որոնք առնչվում են Արևմտյան Հայաստանի պատմությանը, մասնավորապես օսմանյան տարբեր վարչակարգերի պարբերաբար իրականացրած կոտորածներին և ցեղասպան քաղաքականության կարևոր դրվագներին:

Ա. Սարգսյանի, Ալ. Սաֆարյանի և Լ. Սահակյանի հեղինակած դասագիրքը շարունակում է օսմաներենի ուսումնասիրության այն ավանդույթը, որը հայ իրականության մեջ հիմնադրել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը¹: Այն գիտական, ինչպես նաև ուսուցողական բացառիկ աշխատանք է, որը նախատեսված է ուսանողներին օսմաներենի հնչյունական, քերականական, բառային համակարգերի առանձնահատկությունները հնարավորինս պարզ ու մատչելի մատուցելու համար:

Գրախոսվող դասագիրքը՝ որպես ինքնուսույց, օգտակար կարող է լինել նաև համապատասխան մասնագետների համար: Ներածությունում հեղինակները մանրամասն և հանգամանալից ներկայացնում են օսմաներենի բնույթը՝ այն բնորոշելով որպես թուրքերեն, արաբերեն ու պարսկերեն կենդանի լեզուների «համակցություն»: Դասընթացն ընդգրկում է երեսուներկու դաս, որոնք աչքի են ընկնում կառուցվածքային համաչափությամբ. յուրաքանչյուր դաս բաղկացած է երկու բաժնից, որոնցում հեղինակները նախ ներկայացնում են օսմաներեն այբուբենի գրության և արտասանության կանոնները, քերականական գործառույթները, այնուհետև հեղինակներն ամե-

¹ Տե՛ս **Փափազյան Ա.**, Օսմաներենի ձեռնարկ (քերականություն և ընթերցանություն), Երևան, 2012:

նայն հետևողականությամբ, նյութի համակողմանի ուսումնասիրությամբ, արաբերենի և պարսկերենի քերականությունների համադրությամբ շարադրում են օսմաներենի քերականությունը: Յուրաքանչյուր դասի վերջում գետեղված են տվյալ քերականության յուրացումն ամրապնդող և ըստ էության թեման ամփոփող վարժություններ, ինչպես նաև համառոտ բառացանկեր, ինչը կարևոր է որպես ուսուցման մեթոդ, քանզի այս կերպ սովորողի ուշադրությունն ուղղակիորեն հրավիրվում է դասի առանցքային կետերի վրա:

Դասագրքի օգտագործումն առավել հարմարավետ է դարձնում օսմաներեն-հայերեն ուսումնական բառարանի ընդգրկումը, որը, անտարակույս, հեղինակների արժանիքներից է: Հավելվածում ամփոփված են տարբեր դարաշրջանների արձակ և չափածո տարաբնույթ ստեղծագործություններ, մասնավորապես Բաքիի, Նեղիմի, Մեհմեդ Էմինի, Ջիյա Գյոքալփի, Յահյա Քեմալի բանաստեղծություններից: Դասավանդման բազմամյա փորձ ունեցող հեղինակները, փաստորեն, ուսուցման դիդակտիկ մեթոդի յուրատեսակ կիրառմամբ հնարավորություն են ընձեռել ծանոթանալ թուրքական գրականության լավագույն նմուշներին բնագրերով:

Հարկ է շեշտել նաև Ա. Սարգսյանի, Ալ. Սաֆարյանի և Լ. Սահակյանի դասագրքի հանրամատչելի ոճը. նյութը շարադրված է պարզ լեզվով, ոչ միայն ակադեմիական ճշգրտություն, այլև դյուրընկալ ձևակերպումներով:

Եզրափակելուց առաջ փաստենք, որ գրախոսվող դասագիրքը լեզվաբանական գիտական լուրջ և արժեքավոր աշխատանք է, որն առանձնանում է իր բարձրորակությամբ՝ թե՛ դասընթացի կորիզն ամփոփող գործնական առաջադրանքների և թե՛ մատուցվող նյութի տեսական շարադրանքի հղկվածության ու տրամաբանական հաջորդականության առումներով:

*ԼԻԼԻԹ ՄԱՖՐԱՍՅԱՆ
ԱՆՈՒՇԻԿ ՄԱՐՏԻՆՈՍՅԱՆ*

Վահան Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները (1171-1260), Երևան, «Տիր», 2017, 265 էջ

Վերջին տարիներին նկատելի է հայագետների և առհասարակ արևելագետների, ինչպես նաև անգամ եվրոպական միջնադարյան պատմության մասնագետների հետաքրքրության բուռն աճը Կիլիկյան Հայաստանի պատմության նկատմամբ: Այս խրախուսանքի արժանի միտումի վառ արտահայտություններից է Կիլիկյան Հայաստանի և Մերձավոր Արևելքի առավել ազդեցիկ ու հզոր ուժերից մեկի՝ Այյուբյան սուլթանությունների ռազմաքաղաքական փոխհարաբերությունների հանգամանակից ուսումնասիրությունը, որը հետևողականորեն իրականացնում է պատմական գիտությունների դոկտոր Վահան Տեր-Ղևոնդյանը:

Ժամանակագրական առումով նրա սույն մենագրությունն ընդգրկում է շուրջ ինը տասնամյակ: Ընդ որում, այդ ժամանակաշրջանն այնքան հազեցած է բախտորոշ իրադարձություններով, որ ապագայում ևս բազմիցս գրավելու է հետազոտողների սևեռուն ուշադրությունը: Նշված տասնամյակները համընկնում են Կիլիկյան Հայաստանի առավել հզորության փուլին, ուստի տեղի ունեցած իրադարձությունները հայկական գիտակցության մեջ ներկայանում են որպես քրիստոնեական ու մուսուլմանական աշխարհների բախման դրսևորումներ՝ Այյուբյան սուլթանության և հայոց թագավորության մասնակցությամբ: Ըստ հեղինակի՝ մեր կողմից միանգամայն ընդունելի եզրահանգման, Այյուբյանների և Կիլիկիայի տիրակալների առճակատումները իրենց արտահայտությունն են գտել անգամ մեր նոր ժողովրդական վեպում՝ «Սասնա ծռեր»-ում: Տեղին է նաև նրա դիտարկումն առ այն, որ Այյուբյանների հետ առնչությունների երկրորդ կարևոր միջավայրը Հայաստանի հարավային, մասնավորապես Տուրուբերանի և Վասպուրականի գավառներն էին, որտեղ տարածված են եղել «Սասնա ծռեր»-ի վաղ պատումները (էջ 246): Ի դեպ՝ մեր նոր դուցազնական վեպի այն դրվագները, որոնք պահպանվել են Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզարական» երկի՝ Շահ-Արմեններին վերաբերող հատվածներում, իրենց ակնհայտ զուգահեռներն ունեն էպոսի XIX-XX դարերում գրառված պատումներում: Հետևաբար զարմանք չպետք է հարուցի այն փաստը, որ Շահ Արմեններին հաջորդած Այյուբյաններին կարող ենք համարել Մսրա Մելիքի կերպարի համար նախատիպ ծառայած պատմական իրական գործիչներ:

Վ. Տեր-Ղևոնդյանի մենագրությունը թեև նվիրված է դասական միջնադարին, սակայն նրա առաջադրած բազմաթիվ հարցադրումներ զարմանալիորեն մերօրյա հնչեղություն ունեն: Բազմաբևեռ աշխարհաքաղաքական

իրադրությունը հարկադրել է Կիլիկյան Հայաստանի քաղաքական շրջանակներին երբեմն միակ հնարավոր և ճիշտ քայլերով ելք գտնել օրհասական պահերին: Պատմական այդ փորձը բազում ուսանելի կողմեր ունի, հետևաբար՝ Վ. Տեր-Ղևոնդյանի աշխատության արդիականությունը և կարևորությունը որևէ կասկած չի հարուցում: Իր առաջին գրքի¹ հրատարակությանը հաջորդած ավելի քան երկու տասնամյակի ընթացքում, երբ հեղինակը ծավալել է դիվանագիտական ու պետական գործունեություն, նա շատ ավելի խորամուխ է եղել տարածաշրջանային խնդիրներում, ուստի արդեն ի վիճակի է համարժեք գնահատական տալ պատմական խորքային գործընթացներին ու երևույթներին:

Միանգամայն արդարացված ենք համարում նրա հայեցակարգային մոտեցումները զուտ մասնագիտական հարցերում: Առաջին հերթին նկատի ունենք սկզբնաղբյուրներին դիմելու և դրանց տվյալները քննարկելու մեթոդաբանությունը: Մենագրության սկզբնաղբյուրային հենքը չափազանց հարուստ է: Հեղինակը, որին հասու են բազմալեզու և բազմաբնույթ երկեր, հանգել է համոզիչ արդյունքների: Առավել քան արդյունավետ են եղել լիարժեք և կարևորագույն՝ արաբական ու հայկական սկզբնաղբյուրների կատարյալ իմացությունը և միջնադարին հատուկ, գրեթե գաղտնագրված տեքստերը բնագրով ընթերցելու և վերլուծելու հմտությունը: Անշուշտ, հայկական սկզբնաղբյուրները երբևիցե ուշադրության պակաս չեն զգացել և բազմիցս քննարկվել են Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված պատմագիտական ուսումնասիրություններում: Վերջին հաշվով հայ մասնագետներին, թեկուզև թարգմանությունների միջոցով, հասու են եղել նաև արաբալեզու սկզբնաղբյուրները: Գաղտնիք չէ, որ Կիլիկյան Հայաստանի պատմության առանձին հարցերին վերաբերող տեղեկությունները ի մի բերելու առումով հսկայական աշխատանք է կատարվել հատկապես վերջին տասնամյակներում: Արժանին մատուցելով հայ և օտար մասնագետներին՝ այնուամենայնիվ կարելի է փաստել, որ գերիշխող իրողություն է միջնադարյան աշխատություններից մեջբերվող վկայությունների պարզ գույքադրումը: Սակայն սկզբնաղբյուրների տեղեկությունների թեկուզև լիակատար ի մի բերումը և համադրումը դեռևս առաջընթաց ապահովելու գրավական չեն: Պատմագիտական քննությունն է հնարավորություն ընձեռում լուսաբանելու վիճելի հարցերը: Ուստի, արձանագրելով աղբյուրագիտության բնագավառում Վ. Տեր-Ղևոնդյանի կարողությունները, միաժամանակ հարկ է ընդգծել տարբեր աշխատությունների տվյալները մանրագնին վերլուծության ենթարկելու և մեծ մասամբ անառարկելի եզրահանգումներ կատարելու նրա վարպետությունը:

¹ Տե՛ս **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի երկրները 1145-1226 թվականներին, Երևան, 1994:

Թեմայի ընտրությունը ի սկզբանե հեղինակին պարտադրել է Այյուբյանների և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերություններին անդրադառնալիս ուրվագծել տարածքային առումով վիթխարի համապատկեր և հաշվի առնել Արևելքի ու Արևմուտքի պատմության միմյանց շաղկապված բազմաթիվ հիմնահարցեր: Մենագրության որոշ մասերի խորագրերն անգամ (օրինակ՝ «Կիլիկիան Ֆրիդրիխ Շիկամորուսի և Սալահ ադ-Դինի հակամարտության կիզակետում», «Լևոն Ա-ի դիվանագիտական ջանքերն ընդդեմ Տրիպոլիս-Հալեպ-Բկոնիա հակակիլիկյան դաշինքի (1208-1209): Ալ-Մալիք ալ-Ադիլի միջամտությունը», «Միս-Հալեպ գինակցությունն ընդդեմ Բկոնիայի սուլթանության և Անտիոք-Տրիպոլիսի կոմսության») միանգամայն բավարար են՝ ցույց տալու համար մարտահրավերների այն համալիրը, որի դիմագրավմանն էին լծվել Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, նրանց հաշվարկները հիմնված են եղել քաղաքական սթափ ու իրատեսական գնահատականների վրա, և հայոց կաթողիկոսաբանն ու արքունիքը, որպես կանոն, գործել են ներդաշնակ: Փոխհամաձայնեցված գործողությունները և դիվանագիտական ջանքերը հատկապես արտահայտվել են խաչակրաց երրորդ արշավանքի (1189-1192) տարիներին, երբ Կիլիկիայի հայերի համար իրոք մեծ էր Սալահ ադ-Դին և խաչակիրներ հակամարտության մեջ ներգրավվելու և անխուսափելի կորուստներ կրելու վտանգը:

Տպավորիչ է մուսուլմանական աշխարհի իմացությունը, որը Վ. Տեր-Ղևոնդյանը դրսևորում է տարածաշրջանի տարբեր մուսուլմանական պետական կազմավորումների միջև շահերի բախումը և խոր հակասությունները բացահայտելիս: Փաստերի և տվյալների վերլուծությունը նրան հնարավորություն է ընձեռել պարզաբանել կիլիկյան արքունիքի դիվանագիտական հաջողությունները, որոնց շնորհիվ հայոց արքաները կարողացել են օգտվել գորեղ մուսուլման տիրակալների՝ առաջին հայացքից արտասովոր թվացող բարյացակամ միջամտությունից: Նման դեպքերում Վ. Տեր-Ղևոնդյանը հանգամանալից քննության է ենթարկում այն ներքին դրդապատճառները, որոնք թելադրել են, օրինակ՝ Եգիպտոսի Այյուբյան սուլթան ալ-Ադիլին, նույնիսկ ճնշում գործադրել մուսուլման հարևանների նկատմամբ՝ հօգուտ Կիլիկիայի հայոց թագավորության:

Հեղինակը խստորեն պահպանում է պատմականության սկզբունքը և հստակորեն առանձնացնում Եգիպտոս-Կիլիկյան Հայաստան փոխհարաբերություններում դիտվող բոլոր տեղաշարժերն ու շրջադարձերը՝ ըստ ժամանակաշրջանների: Ընդ որում՝ նա մշտապես լուսաբանում է այն դրդապատճառները, որոնք պայմանավորել են տարբեր պետությունների ուժերի հարաբերակցության փոփոխությունները, անդրադառնում հակամարտող կամ դաշնակցող կողմերի նպատակադրումներին և ձգտումներին: Ուստի զարմանալի չէ, որ նա անգամ դաշնակցային է դիտարկում այն փոխհարաբերու-

թյունները, որոնք իրավացիորեն որպես թշնամական է բնութագրել նախորդ ժամանակահատվածին անդրադառնալիս:

Վ. Տեր-Ղևոնդյանը հաշվի է առել մասնագիտական հարուստ գրականությունը, որն անշեղորեն ընդլայնվում է հատկապես վերջին տարիներին: Դիտելի հանգամանք է, որ օգտագործված գրականության զգալի մասը լույս է տեսել ոչ վաղ անցյալում կամ մեր օրերում: Դա հատկապես նկատելի է օտար լեզուներով գրականության պարագայում, առավել ևս, որ, հայերեն և ռուսերեն գրքերից բացի, աչքի են զարնում եվրոպական երեք գլխավոր լեզուներով լույս տեսած աշխատությունները: Շարունակելով օգտագործված գրականության թեմայով դիտարկումը՝ նշենք, որ դրվատանքի արժանի երևույթ է մենագրության բոլոր մասերում գիտական էթիկայի չափանիշների օրինակելի պահպանումը: Հեղինակը բարեխղճորեն վկայակոչում է պատմագիտական բազում աշխատություններ, ըստ արժանվույն գնահատում իրեն նախորդած պատմաբանների վաստակը: Հեղինակի հարգալից վերաբերմունքը վերաբերում է ոչ միայն վաստակաշատ ու ճանաչված հետազոտողներին, այլև բոլորովին վերջերս ասպարեզ ելած պատմաբանների նոր սերնդի ներկայացուցիչներին:

Բարձր գնահատելով Վ. Տեր-Ղևոնդյանի մենագրությունը և ընդգծելով նրա գիտական արժանիքները՝ հարկ ենք համարում, սակայն, անդրադառնալ նաև այնպիսի խնդիրների, որոնց լիաժեք լուսաբանությունը միայն կնպաստեր դրա բարելավմանը: Այսպես՝ ուշադրությունը սևեռելով ուսումնասիրության հիմնահարցի վրա՝ նա նվազ չափով է քննարկել Իկոնիայի սելջուկյան սուլթանության և Այյուբյանների պետությունների փոխհարաբերությունները: Ցանկալի կլինի, սակայն, որ հետագայում նա հատուկ ուսումնասիրությամբ անդրադառնար նաև տարածաշրջանի այդ երկու գլխավոր մուսուլմանական ուժերի բարդ ու հակասական առնչություններին: Խնդիրն այն է, որ Իկոնիան և Եգիպտոսը բախվում էին ոչ միայն Միջերկրական ծովի արևելյան ափերին, այլև Հյուսիսային Միջագետքում ու Հարավային Հայաստանում: Ավելին, արաբական սկզբնաղբյուրները բավականաչափ տվյալներ են հաղորդում նաև Վրացական թագավորության և Եգիպտոսի սուլթանության կապերի մասին, ընդ որում հարաբերություններում դիտվող ելևէջները ևս պայմանավորված էին այդ պետությունների միջև ընկած Իկոնիայի սելջուկների հետ հակասություններով:

Վ. Տեր-Ղևոնդյանի մենագրությունը, անշուշտ, նվիրված է ռազմաքաղաքական և դիվանագիտական պատմության լուսաբանմանը, և նրան ավելի մեծ պահանջներ ներկայացնելու որևէ իրավունք մենք չունենք: Այնուամենայնիվ, տնտեսական փոխհարաբերություններին և առևտրական կապերին որևէ ձևաչափով չանդրադառնալն անխուսափելիորեն հարցեր է առաջ բերում: Ժամանակագրական առումով անմիջականորեն հաջորդող դարաշրջանի՝ 1266-1375 թվականների՝ մամլուքներ-Կիլիկիայի հայեր փոխհարաբերություններում տնտեսական հիմնահարցերը առավել քան նկատելի դեր

էին կատարում, հետևաբար դրանց ակունքները պետք է փնտրենք Այյուբյանների ժամանակաշրջանում, ինչի մասին հարկ էր գոնե որոշ կարծիքներ հայտնել:

Մի նկատառում ևս. թերևս առաջին հերթին հայ հետազոտողներից է կախված Սալահ ադ-Դինի և նրա նախնիների ծագման հարցի լիարժեք լուսաբանումը, ուստի նպատակահարմար կլիներ, որ Այյուբյանների տոհմակունքներին նվիրված հատվածում Վ. Տեր-Ղևոնդյանն արծարծեր այս հիմնահարցը բոլոր՝ էթնիկական, տարածքային, սոցիալական կտրվածքներով:

Գրախոսվող մենագրությունում կա որոշակի թերասուցություն, ուստի հարկ ենք համարում որոշ դիտարկումներ կատարել: Անշուշտ, Վ. Մինորսկու հանրահայտ հետազոտության¹ հրատարակությունից հետո Սալահ ադ-Դինի նախնիների կապը տարածքային առումով Դվինի շրջակայքի հետ որևէ կերպ չի վիճարկվում, առավել ևս հստակ է Այյուբյանների քրդական արմատների հարցը: Սակայն այդ տոհմի վաղ սերունդների սոցիալական պատկանելության խնդիրը շարունակում է օրակարգում մնալ: Մմբատ Սպարապետը Սալահ ադ-Դինի հորը և հորեղբորը համարում է «Քուրդ շինականի որդիք»², իսկ Վարդան Արևելցին նշում է, որ «յառաջ Ուստյո էր անուն նորա՝ որդի Էուբի, առն տառապելոյ Դունացոյ, որ եւ ի մեծանալն կոչեցաւ Սալահադին»³: Հայ պատմիչներից Սամուել Անեցին ավելի հեռուն է գնում և պնդում, որ առաջին Այյուբյանները «վասն աղքատութեան» հեռանալով Դվինից՝ «եկին ի Միջագետս եւ գնացեալք ի Թլրիթ մըտին փայտակիր»⁴: Այս բնութագրումները, այնուամենայնիվ, կասկած են հարուցում, քանի որ հեղինակները շեշտը դնում են Այյուբյանների վաղ ներկայացուցիչների ունեցվածքային կացության վրա, բայց չեն լուսաբանում սոցիալական պատկանելության հարցը: Աղքատը, շինականը և փայտակիրը յուրօրինակ բնութագրումներ են, որոնք կոչված են ընդգծելու տոհմի նախնիների պատկանելությունը հասարակության ստորին շերտերին: Սակայն միևնույն հեղինակների կոնկրետ ցուցումները ավելի արժեքավոր են, առավել ևս եթե զուգահեռներ ենք անցկացնում դարձյալ հայկական միջավայրում գործունեություն ծավալած քուրդ Շադդադյանների հետ: Սալահ ադ-Դինի վաղ շրջանի ժամանակակից Սամուել Անեցին տեղյակ է, որ նշանավոր ռազմական գործչի հորեղբայր Շիրքուհը «էր այր իմաստուն եւ սուլտանն (Հալեպի տիրակալ Նուր ադ-Դինը – Հ. Մ.) արար գնա զօրապետ եւ առաքեաց ի Սսր»⁵: Մմբատ Սպարապետի տեղեկությունը այն մասին, որ Սալահ ադ-Դինի

¹ Տե՛ս **Minorsky V.**, *Studies in Caucasian History*, London, 1953.

² Տե՛ս **Մմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 194-195:

³ **Վարդան Արևելցի**, Պատմութիւն տիեզարական, Մոսկվա, 1861, էջ 171-172:

⁴ **Սամուել Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 217:

⁵ Նույն տեղում, էջ 217-218:

հայրը և հորեղբայրը «ճորտացան Նուրբունին Հալպայ տիրոջն»¹, ևս ցույց է տալիս, որ առաջին Այյուբյանները եղել են վարձկան ռազմիկներ, որոնք պատրաստ էին ծառայության մեջ մտնել՝ «ճորտանալ», և գործունեության ասպարեզ փնտրել օտար ափերում: Հետևաբար, XII դարում Այյուբյաններն անցել են X-XI դարերում Շաղղաղյանների հաղթահարած ճանապարհով: Այսպիսով կարելի է խոսել ոչ թե Սալահ ադ-Դինի ու նրա նախնիների մասին հայկական սկզբնաղբյուրներում պահպանված ստույգ հաղորդումների մասին (առկա վկայություններում աչքի են զարնում տարբեր բնույթի անճշտություններ), այլ առաջին հերթին հարկ է անդրադառնալ Այյուբյանների վաղ ներկայացուցիչների այն կերպարին, որն ուրվագծում են հայ հեղինակները:

Այս դիտողությունները, որոնք շատ ավելի ցանկություններ են, չեն ստվերում, հարկավ, Վ. Տեր-Ղևոնդյանի ուսումնասիրության արժանիքները: Ակնհայտ է, որ նա իրականացրել է մանրակրկիտ աշխատանք, արաբական բնագրերից թարգմանել ու մեջբերել բազմաթիվ արժեքավոր հաղորդումներ, հանգել համոզիչ եզրակացությունների: Հաճախ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված ծավալուն նյութերն ու հմտալից քննությունները, նորույթներն ու ճշգրտումները, շահեկան դիտարկումները հիմք են տալիս արձանագրելու, որ սույն մենագրությունն ուշագրավ ներդրում է ոչ միայն հայագիտության, այլև արևելագիտության ասպարեզում:

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

¹ Մմբատ Մպարապետ, էջ 194-195:

Армянский вопрос на Кавказе. По материалам российских архивов и изданий 1724-1914 гг. Санкт-Петербург, «Вестник», 2011, т. 1: 1724-1904 гг., 713 с.; т. 2: 1905-1906 гг., 614 с.; т. 3: 1906-1914 гг., 345 с.¹

Հայկական հարցը Կովկասում: Ըստ ռուսական արխիվների և 1724-1914 թթ. հրատարակությունների նյութերի, Մանկտ-Պետերբուրգ, «Վեստնիկ», 2011, հ. 1, 1724-1904 թթ., 713 էջ, հ. 2, 1905-1906 թթ., 614 էջ, հ. 3, 1906-1914 թթ., 345 էջ

Историко-информационная война против соседних государств и народов для утверждения величия Азербайджана в регионе состоит из трех уровней: информационный, концептуальный и смысловой (метафизический). Информационный уровень нацелен на искажение фактов, где зачастую используются любительские представления; концептуальный уровень направлен против основных положений армянской истории и на построение альтернативной истории; смысловой уровень заключается в подмене понятий, фактов и событий, он нацелен на достижение победы над противником в сфере мифотворчества.

Деятельность азерпропа осуществляют разные структуры. Одной из влиятельных является общество «Европа-Азербайджан» в Лондоне (2006), издающее журнал «Visions of Azerbaijan». Офисы общества представлены в Баку, Париже, Берлине, Брюсселе, Страсбурге и Стамбуле. Деятельность в европейских странах организована по разным направлениям: документальные фильмы, петиции, фотовыставки; освещение карабахской проблемы и образа жизни переселенцев, издание книг на разных языках². Осуществляется работа с депутатами английского парламента. По словам председателя общества Тале Гейдарова, работа отличается эффективностью: если в начале деятельности о нагорно-карабахском конфликте знали «менее 50%» членов парламента Англии, то к 2015 г. – «более 85%». В Азербайджан приглашаются весомые представители СМИ, целенаправленно ведется работа против армянского лоббизма.

На научной стезе ударным проектом стало издание рецензируемого сборника документов. В феврале и апреле 2011 г. состоялись презентации сборника в Лондоне и в Баку. Лейтмотив: «Достоверный источник в мировых библиотеках»³. Используются информационные ресурсы для представления узловых основ сборника.

¹ Армянский вопрос на Кавказе. По материалам российских архивов и изданий 1724-1914.pdf-[http:// search.rsl.ru/ru/record/01004947469](http://search.rsl.ru/ru/record/01004947469)

² Состоялось мероприятие по случаю 10-летия TEAS и журнала «Visions of Azerbaijan». - [http:// vesti.az/news/286269#ad-image-0](http://vesti.az/news/286269#ad-image-0)

³ В Баку состоялась презентация трехтомника «Армянский вопрос» на Кавказе. По материалам российских архивов и изданий».- <http://www.trend.az/azerbaijan/society/1865225.htm>

Подход составителей сборника	Реальное значение
1. Отсутствует «точное» описание Армянского вопроса.	1. Существуют три основных подхода.
2. Сборник – «основной источник» Армянского вопроса на Кавказе.	2. Избирательный подход к источникам для составления мифической истории Кавказа.
3. «Достоверный источник».	3. Сомнительный источник.
4. Систематическое переселение армян на Кавказ в России.	4. Армянское переселенчество как фактор политики.
5. Сверхзначимость публикуемых документов.	5. Практическая известность и искажение источников.
6. Цель документов – распространение «истины об армянах».	6. Известность армян с архидревних времен.
7. «Геноцид армян» над азербайджанцами в 1905-1906 гг.	7. Векторная конфронтационность интересов.

Определяющим для узловых основ сборника является указ Президента Азербайджанской Республики Гейдара Алиева «О геноциде азербайджанцев» от 26 марта 1998. В нем говорится об расчленении Азербайджана Гюлистанским и Туркманчайским договорами 1813 и 1828 гг., создании «армянским меньшинством» Армянской области, осуществлении геноцида над азербайджанцами в «оккупированных территориях»: бывших ханствах Еревана, Нахичевана и Карабаха и проч. Все это связано с самоопределением армян Нагорного Карабаха¹.

В презентациях указаны ряд особенностей издания. Прежде всего публикация сборника на трех языках – английском, русском и азербайджанском, призванных «научно обосновать агрессию армян»². Цель публикуемых документов, по словам Тале Гейдарова, заключается в распространении «истины об армянах». В этом направлении, якобы, помогли грифы «секретности» и «сверхсекретности» материалов архивохранилищ³.

Дан постулат мифотворчества азерпропа: «В сборнике впервые в мировом историкиоведении в качестве основной проблемы выдвинут «армянский вопрос» на Кавказе»⁴. На лондонской презентации 6 февраля 2011 г. инициатор сборника д.и.н. Керим Шукюров, подводя итог двухлетнему «кропотливому» труду, заявил: «Это основной источник, взятый из архивов России. Все документы системно подготовлены для издания, по сей день мы исследовали материалы на

¹ Указ Президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев. – 1905.a.az/ru

² **Тале Гейдаров:** «Мы пытались противостоять вековой пропаганде армянского лобби». - <http://vesti.az/news/286458>

³ В Баку состоялась презентация ...- <http://Тале Гейдаров: «Мы пытались противостоять вековой пропаганде армянского лобби». - http://vesti.az/news/286458.trend.az/azerbaijan/society/1865225.htm>

⁴ В Лондоне издан трехтомник «Армянский вопрос» на Кавказе. 1724-1914.- http://ru.apa.az/azerbaydjan_skaaya_diaspora/v-londone-izdan-trehtomnik-armyanskij-vopros-na-kavkaze-1724-1914-rossijsk

10 тыс. страниц, 2000-страничный материал издан в трех томах. Точного описания армянского вопроса нет, но, собрав материалы и правильно их систематизировав, Азербайджан добьется того, что его позиция будет понята. Издание этой книги, подтверждающей систематическое переселение армян на Кавказ во времена Российской империи, поддерживает позицию Азербайджана в связи с Нагорным Карабахом»¹.

В этом заявлении привлекают три положения – «нет точного определения Армянского вопроса», нет представления Армянского вопроса на Кавказе, нет понимания автохтонности армян в регионе для обоснования аннексионистской политики относительно Нагорно-Карабахской Республики (Арцах). Утверждение об отсутствии точного определения Армянского вопроса – от лукавого. В энциклопедии «Армянский вопрос» он определяется как комплекс политических проблем армянского народа: 1) воссоздание Армянской государственности в формате Восточного вопроса; 2) составная часть международной дипломатии великих держав; 3) национально-освободительное движение западных и восточных армян, сопрягаемое с Геноцидом армян, достижение исторической справедливости. Внутри каждого подхода есть свои направления и соответствующая историография на разных языках².

